ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ»
ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀՀ ԿԳՄՍՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Հրատարակվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիական խորհրդի երաշխավորությամբ
Լրատվական գործունեության իրականացնող՝
«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ, գրանցման վկայական
222.210.1449896՝ տրված 04.07.2025թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29
Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,
Էլեկտրոնային փոստ՝ githratarakutyunner@gmail.com
Հեռ. 010-77-15-24
Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար
Լ. Դավթյան:
Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
«ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС МВД РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»
научно-методический журнал
«ЗАЩИТНИК ЗАКОНА»
Издается по рекомендации Академического совета
Образовательного комплекса МВД Республики Армения

СООТВЕТСТВУЕТ ТРЕБОВАНИЯМ, ПРЕДЪЯВЛЯЕМЫМ КОМИТЕТОМ
ПО ВЫСШЕМУ ОБРАЗОВАНИЮ И НАУКЕ МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ И КУЛЬТУРЫ РА К ПУБЛИКАЦИЯМ ОСНОВНЫХ ПОЛОЖЕНИЙ И РЕЗУЛЬТАТОВ
ДИССЕРТАЦИЙ, А ТАКЖЕ РАЗЛИЧНЫМ НАУЧНЫМ ПУБЛИКАЦИЯМ

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова, 29
Официальный сайт: www.edupolice.am
Электронная почта: githratarakutyunner@gmail.com
Тел: 010-77-15-24
Ответственный за выпуск номера: ответственный секретарь Лилит Давтян

FOUNDER AND PUBLISHER
“EDUCATIONAL COMPLEX OF THE MINISTRY OF INTERNAL AFFAIRS
OF THE REPUBLIC OF ARMENIA” STATE NON-PROFIT ORGANIZATION
“BULWARK OF LAW”
Scientific and Methodological Journal
Approved by the Academic Council of the Educational Complex
of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

COMPLIES WITH THE STANDARDS FOR PERIODICAL SCIENTIFIC PUBLICATIONS
APPROVED BY THE HIGHER EDUCATION AND SCIENCE COMMITTEE OF THE RA MINISTRY
OF EDUCATION, SCIENCE, CULTURE, AND SPORT AND MEETS THE CRITERIA
FOR PUBLISHING THE MAIN THESES OF DISSERTATION PAPERS

Address: 0004, Yerevan, 29 Admiral Isakov Avenue
Official website: www.edupolice.am
E-mail: Githratarakutyunner@gmail.com
Tel.: 010-77-15-24
Issue Manager, Executive Secretary: L. Davtyan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր, ի.գ.թ., դոցենտ ***Մանուկ Մուրադյան,***

Գլխավոր խմբագրի տեղակալ – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտահետազոտական և նորարարությունների գծով աշխատանքները համակարգող պրոռեկտոր ***Էմիլ Մարգարյան,***

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժնի առաջատար մասնագետ ***Լիլիթ Դավթյան:***

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտոր, ի.գ.թ., դոցենտ ***Միսակ Մարկոսյան,***

Իրավաբանական գիտությունների դոկտոր ***Գրիգոր Բաղիրյան,***

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ ***Գագիկ Գրիգորյան,***

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետ, ի.գ.թ., դոցենտ ***Արտակ Մնացականյան,***

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պետ, ի.գ.թ., դոցենտ ***Արտակ Հովհաննիսյան,***

ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչության պետ, ի.գ.թ. ***Ռուսլան Մարանդյան,***

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ ***Ռաֆիկ Խանդանյան,***

ՀՀ վարչական դատարանի նախագահ, ի.գ.թ. ***Կարեն Զարիկյան,***

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ. ***Ջոն Հայրապետյան,***

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պայմանագրային դասախոս, ի.գ.թ., դոցենտ ***Դավիթ Թումասյան,***

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր ***Աշոտ Խաչատրյան,***

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյան,

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. ***Հովհաննես Քոչարյան,***

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր ***Օլեգ Բուլգակով,***

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ ***Ալեքսանդր Պարադնիկով,***

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր ***Մակսիմ Բավսուն,***

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ ***Անդրեյ Անիսին:***

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор - ректор Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент ***Манук Мурадян***

Заместитель главного редактора - проректор по научно-исследовательской и инновационной работе Образовательного комплекса МВД РА ***Эмиль Маргарян***

Ответственный секретарь - ведущий специалист отдела научных исследований, инноваций и развития образования Образовательного комплекса МВД РА ***Лилит Давтян.***

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА

Проректор по координации учебной работы Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент ***Мисак Маркосян***

Доктор юридических наук ***Григор Бадирян***

Начальник полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, полковник полиции,кандидат юридических наук, доцент ***Гагик Григорян***

Начальник отдела организации, контроля и обеспечения непрерывного образования Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент ***Артак Мнацаканян***

Заместитель начальника полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент ***Артак Ованнисян***

Начальник Юридического управления МВД РА, кандидат юридических наук ***Руслан Марандян***

Судья Апелляционного административного суда РА, кандидат юридических наук, доцент ***Рафик Ханданян***

Председатель Административного суда РА, кандидат юридических наук ***Карен Зарикян***

Судья Уголовного суда общей юрисдикции РА г.Ереван, кандидат юридических наук ***Джон Айрапетян***

Преподаватель кафедры уголовного права и уголовного судопроизводства полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА на договорной основе, кандидат юридических наук, доцент ***Давид Тумасян***

Советник председателя Конституционного суда РА, Заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор ***Ашот Хачатрян***

Ректор Академии юстиции, доктор юридических наук, профессор ***Сергей Аракелян***

Заслуженный юрист РА, кандидат юридических наук ***Ованнес Кочарян***

Первый заместитель начальника Краснодарского университета МВД России, генерал-майор полиции, доктор технических наук, профессор ***Олег Булгаков***

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент ***Александр Парадников***

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юридических наук, профессор ***Максим Бавсун***

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, доктор философских наук, доцент ***Андрей Анисин***.

EDITORIAL BOARD

Editor-in-Chief: ***Manuk Muradyan****,* Rector of the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, PhD in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: ***Emil Margaryan****,* Vice-Rector for Scientific Research and Innovation Affairs, Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

Executive Secretary: ***Lilit Davtyan****,* Leading Specialist at the Division of Scientific Research, Innovation and Educational Development, Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

EDITORIAL BOARD MEMBERS

Misak Markosyan*,* Vice-Rector for Academic Affairs, Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, PhD in Law, Associate Professor

Grigor Badiryan*,* DSc in Law

Gagik Grigoryan*,* Head of the Police Training Unit, Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, PhD in Law, Associate Professor, Police Colonel

Artak Mnatsakanyan, Head of the Division of Academic Process Organization, Monitoring and Lifelong Learning, Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, PhD in Law, Associate Professor

Artak Hovhannisyan*,* Head of the Chair of Criminal Law and Criminal Procedure, Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, PhD in Law, Associate Professor

Ruslan Marandyan*,* Head of the Legal Department of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, PhD in Law

Rafik Khandanyan*,* Judge of the Administrative Court of Appeal of the Republic of Armenia, PhD in Law, Associate Professor

Karen Zarikyan*,* President of the Administrative Court of the Republic of Armenia, PhD in Law

John Hayrapetyan*,* Judge of the Criminal Court of General Jurisdiction of Yerevan, Republic of Armenia, PhD in Law

David Tumasyan, Contract Lecturer at the Chair of Criminal Law and Criminal Procedure of the Police Training Unit, Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, PhD in Law, Associate Professor

Ashot Khachatryan*,* Adviser to the President of the Constitutional Court of the Republic of Armenia, Honored Lawyer of the Republic of Armenia, DSc in Law, Professor

Sergey Arakelyan*,* Rector of the Academy of Justice, DSc in Law, Professor

Hovhannes Kocharyan*,* Honored Lawyer of the Republic of Armenia, PhD in Law

Oleg Bulgakov*,* First Deputy Head of the University of Krasnodar of the Ministry of Internal Affairs of the Russian Federation, DSc in Economics, Professor, Police Major General

Aleksandr Paradnikov, Deputy Head of the Academy of Management of the Ministry of Internal Affairs of the Russian Federation, PhD in Law, Associate Professor, Police Major General

Maksim Bavsun*,* Deputy Head for Scientific Affairs, University of Saint Petersburg of the Ministry of Internal Affairs of the Russian Federation, DSc in Law, Professor, Police Colonel

Andrey Anis*,* Deputy Head of the Chair of Theory and Methodology of State Administration, Academy of Management of the Ministry of Internal Affairs of the Russian Federation, DSc in Philosophy, Associate Professor

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՄԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ.....8

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԱՈՒՐԱ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԶՄԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԵԼՅԱՏԻՎԻԶՄԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....21

ԿՈՉՈՒԲԱԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ
ՔՆՆԻՉԻ ԿՈՂՄԻՑ ԲԼԵՖԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑ.
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....40

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ.....55

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
LEX BENIGNITATIS ԿՈՒԼԻԶԻՈՆ ԿԱՆՈՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....88

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ
ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....100

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՄԲԱՏ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....113

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳՈՌ, ԻՍՊԻՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ, ՓՈՓԻԿՅԱՆ ՄԱՐԻՆԱ
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԱԴԻԳՄԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....126

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ.....138

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱՐԵԿ , ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԳՈՐԾԻՔ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....148

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԱՄԻՆԵ
«ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՕՏԱՐՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ
ՀԱՑՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....163

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇՈՏ
«ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՈՒ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....171

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ
ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐԺՈՒՄ,
ԹԵ՞ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՏԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՐՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ.....191

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՅԿ
ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾԱԳՈՂ ՎԵՃԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....202

АВАГИМЯН ВЛАДИМИР
ОБЩИННАЯ ПОЛИЦИЯ МИНИСТЕРСТВА
ВНУТРЕННИХ ДЕЛ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПЕРЕОСМЫСЛЕНИЕ И РЕФОРМА.....220

БАБАХАНЯН АЗАТ
АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ПАТРУЛЬНОЙ СЛУЖБЫ ПОЛИЦИИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ.....227

БОЛДЫРЕВ СЕРГЕЙ
ПРАВООХРАНИТЕЛЬНЫЕ ОРГАНЫ В ОБЕСПЕЧЕНИИ
ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ.....232

КЕЛЕБЕРДА НИНА
МЕЖКУЛЬТУРНАЯ КОМПЕТЕНТНОСТЬ И ИНКЛЮЗИВНОСТЬ
КАК ФАКТОРЫ ЭФФЕКТИВНОСТИ ПОЛИЦЕЙСКИХ РЕФОРМ
В МНОГОНАЦИОНАЛЬНЫХ ОБЩЕСТВА.....240

МОКЕЕВ СЕРГЕЙ, ДОСТОВ КИРИЛЛ
ИСПОЛЬЗОВАНИЕ 2D- И 3D- МОДЕЛИРОВАНИЯ ПРИ ОБУЧЕНИИ КУРСАНТОВ
ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ВУЗОВ МВД ТАКТИКО-СПЕЦИАЛЬНОЙ ПОДГОТОВКЕ.....250

РАХМАДЖОНЗОДА РИФАТ
УКРЕПЛЕНИЕ ДОВЕРИЯ КАК СТРАТЕГИЧЕСКИЙ ВЫЗОВ РЕФОРМЫ МИЛИЦИИ.....258

ШИНКЕВИЧ МАРГАРИТА
НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ РАССМОТРЕНИЯ ДЕЛА ОБ АДМИНИСТРАТИВНОМ
ПРАВОНАРУШЕНИИ, СОВЕРШЕННОМ ИНОСТРАННЫМ
НЕСОВЕРШЕННОЛЕТНИМ ГРАЖДАНИНОМ,
ПРИ НЕВОЗМОЖНОСТИ УЧАСТИЯ ЗАКОННЫХ ПРЕДСТАВИТЕЛЕЙ.....264

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ԹՈՒՄԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի քրեական իրավունքի և
քրեական դատավարության ամբիոնի դասախոս,
ՀՀ արդարադատության ակադեմիայի դասընթացավար, ի.գ.թ., դոցենտ
DOI: *10.63925/18294847-2026.blj22-01*

Ամփոփագիր: Դատապարտյալի իրավական կարգավիճակը, լինելով քրեակատարողական իրավունքի անկյունաքարային ինստիտուտներից մեկը, ոչ միայն ազդում է դատապարտյալների իրավունքների և ազատությունների ապահովման, պարտականությունների շրջանակի պարզման, իրավունքների ողջամիտ սահմանափակումների իրականացման, այլ նաև արդյունավետ վերասոցիալականացման վրա՝ հանդիսանալով վերասոցիալականացման նախապայման: Հոդվածում ներկայացվում են դատապարտյալի իրավական կարգավիճակի այն առանձնահատկությունները, որոնք պետք է հաշվի առնել վերասոցիալականացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիմնաբառեր. դատապարտյալի իրավունք, դատապարտյալի իրավական կարգավիճակ, վերասոցիալականացում, վերասոցիալականացման միջոց, անհատականացման սկզբունք:

«Լինել ազատ, նշանակում է ոչ միայն ազատվել սեփական կապանքներից,
այլև ապրել՝ հարգելով այլոց ազատությունները:»
Նելսոն Մանդելա

Վերասոցիալականացումն անձին՝ որպես սոցիալական կյանքի ակտիվ և անկախ անդամի, հասարակություն վերադարձնելու բարդ, բազմաշերտ և տևական գործընթաց է, ինչը ենթադրում է սոցիալական կապերի վերականգնում կամ նորերի ստեղծում, հուզական վիճակի համապատասխան մակարդակի ձեռքբերում կամ կայունացում և այլ գործընթացների կազմակերպում կամ ապահովում:

Վերասոցիալականացումն առաջին անգամ է կիրառվում ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ ՔՕ) և ՀՀ քրեակատարողական օրենսգրքում (այսուհետ՝ ՔԿՕ) որպես պատժի նպատակ, և այն փոխարինել է նախկինում կիրառվող «ուղղել» եզրույթը: Փոփոխությունը լոկ ձևական բնույթ չի կրել, այն ունեցել է բովանդակային խորքային տարբերություն, որը, ցավոք, միատեսակ չի ընկալվել թե՛ մասնագետների, թե՛ իրավակիրառողների, թե՛ հասարակության լայն շրջանակների կողմից:

Ինչպես արդարացիորեն նշում են մասնագետները. «Վերասոցիալականացումը, ընդհանուր առմամբ, իր մեջ ներառում է նաև ուղղումը, բայց արդեն «սոցի-

ալականացման», «պատժի ազատմանը պատրաստվելու», «սոցիալական օգտակար գործունեությանն ընդգրկվելու», «հասարակությունում սոցիալական ադապտացման» նշանակության տեսանկյուններից»[1]:

Դատապարտյալների վերասոցիալականացման հիմնախնդիրը միջճյուղային է և կարգավորվում է ոչ միայն քրեակատարողական իրավունքով, այլ նաև իրավաբանական և ոչ իրավաբանական գիտություններով՝ քրեական իրավունքով, կրիմինալոգիայով, հոգեբանությամբ, սոցիալական աշխատանքով, սոցիոլոգիայով, մանկավարժությամբ և այլն:

Մասնագիտական գրականության մեջ վերասոցիալականացումը ներկայացվում է որպես անձի մտավոր և հուզական վերափոխմանն ուղղված գործընթաց, որն իր մեջ ներառում է հոգեբանական, կրթական-ստեղծագործական, իրավաբանական, աշխատանքային, առողջապահական, մարզական համալիր երկարատև միջոցառումներ, որոնք ուղղված են դատապարտյալի մոտ ձևավորելու պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ դիրքորոշումներ, հմտություններ և պատրաստակամություն[2]:

Վերասոցիալականացում հասկացությունը կիրառվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ իմաստով՝ այն պատիժը կրելուց հետո՝ հետպատժյա ժամանակաշրջանում, իրականացվող սոցիալական գործընթաց է, երբ իրացվում են անձի որակական փոփոխություններ, հայացքների և դիրքորոշումների փոփոխություն, որոնք արտահայտվում են իրավահպատակ վարքագծում: Լայն իմաստով՝ վերասոցիալականացումը փաստացի սկսվում է դատապարտյալի՝ քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ ՔԿՀ) հայտնվելու առաջին օրվանից և շարունակվում պատժի կրման ողջ ընթացքում, որը պատժի կրման վերջին շրջանում ՔԿՀ-ի վարչակազմի կողմից իրականացվում է ավելի ինտենսիվ[3]:

Ազատությունից զրկումը, առավել ևս՝ երկարաժամկետ ազատազրկումը, ենթադրում է սոցիալական հմտությունների կորուստ: Իհարկե, առկա բարդությունների խնդիրն անլուծելի չէ, և այստեղ անձի վերասոցիալականացումն ստանում է կարևորագույն դերակատարում, եթե այդ գործընթացն սկսվում է անձի՝ ՔԿՀ-ում հայտնվելու օրվանից: Քրեակատարողական համակարգերի կենսագործունեության առաջին հիմնասյունը հետևյալն է. պատժի, մասնավորապես՝ ազատազրկման, առաջին իսկ օրվանից անձի հետ տարվող աշխատանքներն ուղղվում են նրա՝ պատժից ազատման նախապատրաստելուն, սոցիալական վերականգնմանն ու վերասոցիալականացմանը: Այսինքն՝ այդ գործընթացն սկսվում է միջամտությունների, ներազդման մեթոդների ամբողջությունը կիրառելով՝ ուղղված անձի կորսված ունակությունների և հմտությունների վերականգնմանը, ինքնուրույն սոցիալ-կենցաղային գործունեությամբ

---

[1] Տե՛ս **Рыбак М.С.** Ресоциализация осужденных к лишению свободы: проблемы теории и практики/ 2-е изд., испр. и дополн. Саратов: Изд-во ГОУ ВПО «Саратовская государственная академия права», 2004, էջ 31:

[2] Տե՛ս **Հովակիմյան Հ., Մուղդուսյան Ա.** Դատապարտյալների վերասոցիալականացման հասկացության հայեցակարգը// Արդարադատություն, 2021, N 1 (53), էջ 90:

[3] Տե՛ս **Արզումանյան Ս., Գրին Է.** Իրավաբանական հոգեբանություն. Երևան, 2004, էջ 415:

զբաղվելուն, և դրա արդյունավետության գրավականն է ՔԿՀ-ի կարանտինային բաժանմունքում նրան վերաբերող փաստաթղթերի ճիշտ ու ամբողջական լրացումը՝ ներառյալ իրավական կարգավիճակի պարզումը:

ՀՀ ՔԿՕ-ի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերասոցիալականացման և դրական վարքագծի ձևավորման նպատակով աշխատանքը դատապարտյալի հետ համագործակցությամբ և նրա ակտիվ մասնակցությամբ իրականացվող գործունեություն է՝ ուղղված դատապարտյալի սոցիալական վերաինտեգրմանը և վերականգնմանը: Դատապարտյալի դրական վարքագծի ձևավորումը մարդու, հասարակության, օրենքի, պետության, համակեցության կանոնների և հասարակությունում ընդունված այլ արժեքների հարգմանը, պաշտպանությանն ու պահպանությանն ուղղված վերաբերմունքի ձևավորմանը, ամրապնդմանը կամ կայունացմանն ուղղված աշխատանքների ամբողջականությունն է, որը պետք է հանգեցնի իրավահպատակ վարքագծի ձևավորմանը:

Նախկին ՔՕ-ում և ՔԿՕ-ում կիրառվող «ուղղում» եզրույթը սահմանում էր ուղղումը՝ որպես մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորում, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանում՝ դատապարտյալի առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով: Այսինքն՝ նախկին օրենսդրությունում կիրառվող «ուղղում» եզրույթը «մասնակի ներառվում է» ներկայիս օրենսդրությամբ կիրառվող «դրական վարքագիծ» եզրույթում, ինչը տրամաբանական է, քանի որ դատապարտյալի դրական վարքագծի ձևավորման համար հարգալից վերաբերմունքը ոչ միայն հենասյունային է, այլ նաև կողմնորոշիչ՝ հետագա աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Սակայն դրական վարքագծի ձևավորումը դեռ բավարար չէ վերասոցիալականացումը փաստելու համար:

Վերասոցիալականացման և դրական վարքագծի ձևավորման աշխատանքների բովանդակությունը բխում է դատապարտյալի անձնային ու վարքային փոփոխություններից և հիմնվում նրա՝ սոցիալական գնահատման արդյունքում բացահայտված ռիսկերի և կարիքների վրա: Ավելին, այս ամբողջ գործընթացը պետք է հիմնվի ՀՀ ՔԿՕ-ի 7-րդ հոդվածով նախատեսված՝ պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքի վրա:

ՀՀ ՔԿՕ-ի 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատումն[4] իրականացվում է՝ հաշվի առնելով՝

---

[4] ՀՀ ՔԿՕ-ի 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման կարգը պետք է սահմանվեր ՀՀ արդարադատության նախարարի հրամանով: ՀՀ արդարադատության նախարարի 2025 թվականի հունվարի 10-ի N 9-Լ հրամանի երրորդ ուղղության 1.1 նպատակային չափանիշի համաձայն՝ դատապարտյալների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքի ներդնում ՔԿՀ-ներում՝ հաստատված Արդարադատության նախարարի հրամանով պետք է իրականացվեր 2024 թ-ի 4-րդ եռամսյակում, սակայն նման իրավական ակտ դեռ ընդունված չէ: Նշված իրավակարգավորումները մասնակի կարգավորված են ՀՀ արդարադատության նախարարի 2024 թվականի հուլիսի 2-ի «Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, անհատական կազմը, վերասոցիալականացման աշխատանքների գնահատման մեթոդները և չափանիշները հաստատելու մասին» N 380-Ն հրամանով:

1) պատժի տեսակը,

2) կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,

3) դատապարտյալի անձը,

4) պատժի կատարման ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի առանձնահատկությունները,

5) դատապարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցանքին,

6) պատժի ժամկետը,

7) պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ:

Չնայած ՀՀ ՔԿՕ-ն հատուկ չի ամրագրում, սակայն, վերը նշված հանգամանքներին զուգահեռ, վերասոցիալականացման համար կարևորվում է դատապարտյալի իրավական կարգավիճակի ուսումնասիրությունը, քանի որ վերասոցիալականացման նպատակով կատարվող աշխատանքները երբեմն դառնում են անիրատեսական՝ ելնելով դատապարտյալի իրավունքների ու ազատությունների առանձնահատկություններից կամ դրանց սահմանափակումներից, մասնավորապես՝ ՔԿՀ-ում: Հետևաբար, ճիշտ անհատական աշխատանք կազմակերպելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել դատապարտյալի այն իրավունքների, ազատությունների ու պարտականությունների շրջանակը, որոնցով նա օժտված է, և որոնք հիմք կհանդիսանան նրա վերասոցիալականացումն արդյունավետ կազմակերպելու համար:

ՀՀ ՔԿՕ-ի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի իրավունքներն ու պարտականություններն իրականացնելիս չպետք է խախտվեն պատիժների կատարման կարգն ու պայմանները, ինչպես նաև այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այսինքն՝ դատապարտյալների իրավունքների և պարտականությունների իրականացումը փաստացի ենթադասվում է պատժի կատարման կարգին ու պայմաններին, ինչը նույնպես կարող է դժվարացնել դատապարտյալի վերասոցիալականացումը:

Դատապարտվելու պահից փոփոխվում է անձի կարգավիճակը, քանի որ սահմանափակվում են նրա որոշ իրավունքներ և ազատություններ, իսկ որոշներից նա ընդհանրապես զրկվում է, և հակառակը, նա ձեռք է բերում որոշակի նոր իրավունքներ և պարտականություններ, որոնք բնորոշ են իր նոր կարգավիճակին[5]: Դատապարտյալի իրավական կարգավիճակը նույնպես ընկալվում է լայն և նեղ իմաստով: Լայն իմաստով այն ընկալվում է որպես դատապարտյալի վիճակ, որը կարգավորվում է իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով՝ պատիժը կատարելիս[6]: Հարկ է նշել, որ քրեակատարողական իրավունքի տեսությունը ելակետային է ընդունում դատապարտյալի իրավական կարգավիճակի լայն իմաստը:

---

[5] Տե՛ս **Թումասյան Դ. Ա.** ՀՀ քրեակատարողական իրավունք: Ընդհանուր մաս: Ուսումնական ձեռնարկ/ ՀՀ ոստիկանության կրթահամալիր.- Եր.: Լիմուշ, 2022, էջ 23:

[6] Տե՛ս **Малинин В. Б.** Уголовно-исполнительное право: курс лекций. М., 2011, էջ 92:

Հանրահայտ է, որ դատապարտյալի իրավական կարգավիճակը նրա սահմանադրական, քաղաքացիական, հատուկ իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունն է, որը որոշում է նրանց կարգավիճակը և կարգավորվում քրեական, քրեակատարողական և իրավունքի այլ ճյուղերի նորմերով՝ նշանակված պատիժը կրելու ընթացքում: Այն ներառում է ինչպես մարդու ընդհանուր իրավական կարգավիճակը, այնպես էլ պատժի կոնկրետ տեսակից բխող հատուկ իրավական կարգավիճակը, ինչպես նաև օրինականության և իրավական պաշտպանության երաշխիքները:

Հետևաբար, ակնհայտ է, որ դատապարտյալի իրավական կարգավիճակն անձի հատուկ իրավական կարգավիճակի տեսակ է, որը ներառում է կոնկրետ անձի անհատական իրավական կարգավիճակը[7]:

Դատապարտյալի իրավական կարգավիճակը որոշելու հիմքում ներառվում են երեք ելակետային դրույթ՝

1) մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ և սահմանադրական ու այլ օրենքներով.

2) քրեակատարողական օրենսդրությամբ և պատժի կատարմանը վերաբերող այլ նորմատիվ իրավական ակտերում նախատեսված իրավունքներ, ազատություններ և սահմանափակումներ,

3) դատապարտյալների հետ վարվելակերպի միջազգային չափանիշներով նախատեսված իրավունքներ և կանոններ[8]:

Այս ամենը հնարավորություն է ընձեռում տարանջատել դատապարտյալի իրավական կարգավիճակի 4 հիմնական տեսակ, որոնք փոխկապակցված են և լրացնում են միմյանց՝

1) ընդհատուր կարգավիճակ – այն իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունն է, որը բնորոշ է մարդուն և քաղաքացուն, այսինքն՝ բոլորին բնորոշ իրավական կարգավիճակն է՝ առանց խտրականության, որը դատապարտյալի դեպքում էապես սահմանափակվում է,

2) հատուկ կարգավիճակ - այն իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունն է, որը բնորոշ է բոլոր դատապարտյալներին՝ անկախ պատժատեսակից, և հաճախ այս կարգավիճակը փոխկապակցված է նաև դատվածության հետ, օրինակ՝ աշխատանքի կամ ծառայության սահմանափակումներ, շրջանառության մեջ սահմանափակված առարկաների ձեռքբերման արգելք և այլն,

3) առանձնահատուկ կարգավիճակ – այն իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունն է, որը բնորոշ է կոնկրետ պատժատեսակին, օրինակ՝ տուգանքի դատապարտված անձն ունի պարտականություն անհապաղ և

---

[7] Տե՛ս **Минязева Т. Ф.** Проблемы правового статуса личности осужденных в Российской Федерации. Автореф. дис. … д-ра юрид. наук. М., 2001, էջ 21:

[8] Տե՛ս Уголовно-исполнительное право России: теория, законодательство, международные стандарты, отечественная практика конца XIX — начала XXI века: Учебник для вузов/ Под ред. д. ю. н., проф. **А. И. Зубкова.** - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма, 2006, էջեր 21-22:

ամբողջությամբ վճարել տուգանքի գումարը, իսկ տուգանքն անհապաղ և ամբողջությամբ վճարելու անհնարինության դեպքում՝ միջնորդությամբ դիմել դատարան (տրամաբանական է, որ նման պարտականություն չունեն այլ պատժատեսակների դատապարտյալները), և յուրաքանչյուր պատժատեսակի դատապարտված անձ ունի այդ պատժատեսակին բնորոշ իրավունք կամ պարտականություն,

4) անհատական կարգավիճակ – կոնկրետ դատապարտյալի իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունն է, որը կարող է տարբերվել այլ դատապարտյալների իրավական կարգավիճակից (անգամ նույն պատժատեսակի դատապարտված անձանց դեպքում)՝ հաշվի առնելով կոնկրետ դատապարտյալի առանձնահատկությունները, նրա մասնակցությունն ինքնագործ միավորումներին, նրա նկատմամբ կիրառված տույժի և խրախուսանքի միջոցներն ու անհատական այլ հանգամանքներ, օրինակ՝ խրախուսանքի տեսակ է բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալի զբոսանքի ժամանակի ավելացումը մինչև երկու ժամ՝ մեկ ամիս ժամկետով, այսինքն՝ ի տարբերություն նույն պայմաններում պատիժը կրող այլ դատապարտյալների՝ մեկ ամսվա ընթացքում կոնկրետ դատապարտյալը զբոսնելու է ոչ թե 1 ժամ, այլ՝ 2:

Հարկ է նշել, որ անհատական կարգավիճակը պետք է բխի օրենքով նախատեսված՝ իրավունքների, ազատությունների և պարտականությունների շրջանակի փոփոխությունից, հակառակ դեպքում՝ այն կվերաճի կամայականության, անհիմն արտոնություններ տրամադրելուն, դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման, չարաշահման և այլ բացասական երևույթների: Օրինակ՝ անթույլատրելի է դատապարտյալներից մեկին կամայականորեն տալ արտոնություն քնել «վե՛ր կաց» հրամանից հետո, կամ դասընթացների մասնակցության վկայական տրամադրելն այն դատապարտյալին, ով չի մասնակցել դասընթացներին, կամ դատապարտյալին առանց իրավական հիմքերի զբոսանքի ժամկետի երկարացումը, կամ խցում պահելու դեպքում խցի դուռը չփակելը և այլն: Թվարկված «արտոնություններից» մի քանիսն ակնհայտ հանցավոր են և պետք է արժանանան համապատասխան իրավական գնահատականի:

Դատապարտյալի հետ առնչվող բոլոր մասնագետները պարտավոր են հաշվի առնել վերը նշված 4 իրավական կարգավիճակներն իրենց մասնագիտական գործունեությունն արդյունավետ, օրինական և օբյեկտիվ իրականացնելու համար և հաշվի առնեն կոնկրետ դատապարտյալի կոնկրետ իրավունքները, ազատությունները և պարտականությունները նրա մասնակցությամբ տարբեր միջոցառումներ պլանավորելիս ու կազմակերպելիս: Բացառություն չեն նաև վերասոցիալականացումը և այդ գործընթացում ներգրավված մասնագետները՝ հոգեբանները, սոցիալական աշխատողները, իրավաբանները, մանկավարժները, բժիշկները և այլն:

ՀՀ ՔԿՕ-ի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալի հետ տարվող վերասոցիալականացմանը և նրա դրական վարքագծի ձևավորմանը նպաստող աշխատանքներն իրականացվում են անհատական, խմբային և մասնագիտական միջամտության, այդ թվում՝ հոգեբանության, սոցիալական աշխատանքի, սոցիալական

մանկավարժության գիտականորեն և փաստահեն ապացուցված մեթոդներով և ձևերով:

Մինչ խմբային միջամտությանն անցնելն առավելապես ցանկալի է դատապարտյալի հետ անհատական աշխատանքների իրականացումը, դատապարտյալի անձի ճանաչումը, նրա իրավական կարգավիճակի պարզումը, դրանից ելնելով՝ հնարավոր ու թույլատրելի միջոցառումների, ճիշտ մոտեցումների, մեթոդների և ձևերի ընտրությունը: Անհատական վերասոցիալականացման միջամտության հաջողությունը կախված է մասնագետների իրավական, սոցիալական և հոգեբանական տեղեկացվածության աստիճանից:

ՀՀ ՔԿՕ-ի 20-րդ հոդվածի 2-րդ մասը, հստակեցնելով դատապարտյալների վերասոցիալականացման հիմնական միջոցները, առանձնացնում է դրանցից մի քանիսը, մասնավորապես՝

1) պատժի կատարման կարգն ապահովելը.

2) վերականգնողական ծրագրեր իրականացնելը.

3) անչափահասների հետ դաստիարակչական (մանկավարժական) աշխատանքներ իրականացնելը.

4) դատապարտյալներին աշխատանքով ապահովելը.

5) ընդհանուր, մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալը.

6) մասնագիտական պատրաստումը և վերապատրաստումը.

7) արտաքին աշխարհի հետ կապն ապահովելը:

Վերասոցիալականացման աշխատանքի կազմակերպման և դատապարտյալի օգտակար զբաղվածության ապահովման համար պատիժ կատարող հիմնարկում և մարմնում նախատեսվում են համապատասխան պայմաններ, այդ թվում՝ լսարանային և կրթական տարածքներ, մարզասրահներ, գրադարաններ, աշխատանքային զբաղվածության գոտիներ և այլ հնարավորություններ:

Նման պայմանների ապահովումն ուղիղ համեմատական է դատապարտյալի անհատական կարգավիճակի հետ՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչ առարկաներ նա կարող է ունենալ իր մոտ, որքան է նրա համար տարբեր նյութերի կամ միջոցների հասանելիությունը, դրանց ծավալը և այլն: Օրինակ՝ բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալի համար հասանելի չեն լինի այն միջոցառումները, որոնք պետք է կազմակերպվեն ՔԿՀ սահմաններից դուրս՝ նրա միանձնյա մասնակցությամբ, քանի որ ՀՀ ՔԿՕ-ով նրանց, առանց պահախմբի կամ ուղեկցորդման, ՔԿՀ սահմաններից դուրս տեղաշարժն արգելված է:[9] Կամ այն

---

[9] ՀՀ ՔԿՕ-ի 86-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ առանց պահակախմբի կամ ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս գտնվելու թույլտվություն կարող է տրամադրվել միայն դրական վարքագիծ դրսևորող դատապարտյալին՝ պատժի ժամկետի առնվազն մեկ քառորդը կրելուց հետո: Առանց պահակախմբի կամ ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս տեղաշարժվել չի թույլատրվում տվյալ քրեակատարողական հիմնարկում վեց ամսից պակաս ժամկետով պատիժ կրողներին, չհանված կամ չմարված տույժեր ունեցող դատապարտյալներին, անվտանգային գոտու խիստ պայմաններում գտնվողներին, պատժի կատարման ընթացքում դիտավորյալ հանցագործությունների համար դատապարտյալներին, ռեցիդիվի դեպքում, ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց:

հանգամանքը, որ յուրաքանչյուր դատապարտյալ ունի կրթության իրավունք, որը կրկին էական նշանակություն ունի վերասոցիալականացման համար, բացարձակ է: Սակայն, օրինակ, դրսեկության ձևով կարող են իրականացվել դատապարտյալի հանրակրթությունը և մասնագիտական կրթությունը՝ բացառությամբ անչափահաս դատապարտյալների, ինչը ենթադրում է, որ անչափահաս դատապարտյալների դեպքում կազմակերպվելու է բացառապես ստացիոնար կրթություն:

Վերասոցիալականացման կազմակերպման և դատապարտյալի օգտակար զբաղվածության ապահովման համար պայմանները կարող են փոփոխվել անգամ պատժի կրման ընթացքում՝ հաշվի առնելով անհատական գնահատման արդյունքները, ինչն իրականացվում է մասնագիտացված հանձնաժողովի կողմից՝ կրկին հաշվի առնելով դատապարտյալի իրավական կարգավիճակը:

ՀՀ ՔԿՕ-ն առանձնացված նախատեսում է դատապարտյալների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալն ունի 17 իրավունք, իսկ 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 8 պարտականություն: Իհարկե, ՀՀ ՔԿՕ-ում ամրագրված՝ դատապարտյալների իրավունքների և պարտականությունների ցանկը սպառիչ չէ: Ավելին, նշված իրավունքների և պարտականությունների ցանկում կան այնպիսիններ, որոնք բնորոշ են դատապարտյալի հատուկ իրավական կարգավիճակին, իսկ կան այնպիսիք, որոնք բնորոշ են դատապարտյալի առանձնահատուկ իրավական կարգավիճակին, ինչից ելնելով՝ անհրաժեշտ է դրանց հստակ տարանջատումը:

Այսպես, դատապարտյալի հատուկ իրավական կարգավիճակին բնորոշ են ՀՀ ՔԿՕ-ով նախատեսված հետևյալ իրավունքները՝

1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով գրավոր և բանավոր տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, պատժի կատարման կարգի և պայմանների, դիմումներ և բողոքներ ներկայացնելու կարգի մասին, ինչպես նաև իր վերաբերյալ մշակված տեղեկության մասին, բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տվյալների.

2) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի աշխատակիցների կողմից իր նկատմամբ հարգալից վերաբերմունքի.

3) իր անվամբ և ազգանվամբ կոչվելու.

4) մտքի, խղճի և կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության: Այս իրավունքն իրականացվում է՝ չխախտելով պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի ներքին կանոնակարգը, ինչպես նաև չսահմանափակելով այլ անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները.

...9)[10] սոցիալական ապահովության, այդ թվում՝ ընդհանուր հիմունքներով, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կենսաթոշակներ և պետական նպաստներ ստանալու.

---

[10] Կետերի համարակալումը ներկայացված է ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան:

10) իրավաբանական օգնություն ստանալու.

11) օրենքով նախատեսված կրթություն ստանալու.

12) քաղաքացիաիրավական գործարքների մասնակցելու.

13) նույնականացման քարտ ստանալու՝ «Նույնականացման քարտերի մասին» օրենքով սահմանված կարգով.

14) դրամական փոխանցումներ, հանձնուքներ և ծանրոցներ ստանալու և ուղարկելու.

...16) անձնական ընդունելության խնդրանքով պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի ղեկավարին, այդ հիմնարկի կամ մարմնի գործունեության նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմիններ դիմելու.

17) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով պատիժ կատարող հիմնարկ կամ մարմին, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ և կուսակցություններ, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ դիմելու: Դատապարտյալի դիմումները և բողոքները գրաքննության ենթակա չեն:

Իսկ ՀՀ ՔԿՕ-ով նախատեսված հետևյալ իրավունքները բնորոշ են դատապարտյալի առանձնահատուկ իրավական կարգավիճակին, քանի որ, ինչպես դա բխում է դրանց բովանդակությունից, ոչ բոլոր պատժատեսակների դեպքում են կիրառելի՝

...5) առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալու առողջության համար բավարար սննդային արժեք ունեցող սննդամթերք, բժշկական օգնություն (առաջնային, մասնագիտացված, շտապ և անհետաձգելի), հոգեբանական կամ հոգեթերապևտիկ օգնություն, ինչպես նաև դատապարտյալի ցանկությամբ իր դրամական միջոցների հաշվին զննվելու իր ընտրած բժշկի կողմից.

6) հանգստի, այդ թվում՝ բացօթյա զբոսանքի, մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի.

7) անվտանգության ապահովման: Դատապարտյալը բացառիկ դեպքերում կարող է պահվել առանձնացված՝ պաշտպանական նպատակով՝ իր, իսկ կանխարգելիչ նպատակով՝ այլ անձանց կամ քրեակատարողական հիմնարկի անվտանգությանն ու ապահովությանն սպառնացող վտանգի դեպքում.

8) արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ (տեսազանգեր), օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և զանգվածային լրատվության միջոցներից.

...15) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի աշխատակիցների միջոցով սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու:

Վերջին 5 իրավունքները կիրառելի չեն ազատությունից զրկելու հետ չկապված

պատիժների դեպքում, իսկ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դեպքում՝ ունեն իրենց առանձնահատկությունները՝ ելնելով պատժատեսակից:

Դատապարտյալի իրավունքներն ու պարտականությունները կարող են տարբերակվել՝ հիմք ընդունելով եզրափակիչ դատական ակտով նշանակված պատիժը, պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի տեսակը և սահմանված ներքին կանոնակարգը, ինչպես նաև դատապարտյալի նկատմամբ կիրառված խրախուսանքի և տույժի միջոցները: Ավելին, պատժի կատարման ընթացքում դատապարտյալի իրավական վիճակը կարող է փոփոխվել՝ կախված նրա վարքագծից և անհատական գնահատման արդյունքից:

Նույնական է մեկնաբանությունը նաև դատապարտյալների պարտականությունների առնչությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է, որ ցանկալի է ՀՀ ՔԿՕ-ում դատապարտյալների իրավունքները և պարտականությունները տարանջատել ըստ խմբերի՝ բոլոր դատապարտյալների համար բնորոշ՝ անկախ պատժատեսակից, և առանձին պատժատեսակների դատապարտյալների համար՝ սահմանելով առանձին հոդվածներում:

Այս համատեքստում կոնկրետ պատժատեսակների դատապարտյալների իրավունքների շրջանակի ուսումնասիրումը կհանգեցնի նրանց անհատական կարգավիճակի ճշգրտման ու դա հաշվի առնելով՝ նրանց ռիսկերի ու կարիքների գնահատման, որի հիման վրա կկազմվի վերասոցիալականացման անհատական ծրագիրը: Համանման վերասոցիալականացման անհատական ծրագրեր ունեցող դատապարտյալների դեպքում դրանց իրականացումը հնարավոր կլինի նաև խմբային եղանակով:

Այսինքն՝ դատապարտյալի իրավական կարգավիճակի հստակեցումը հնարավորություն կընձեռի մասնագետներին ճիշտ պլանավորել ու կազմակերպել վերասոցիալականացման գործընթացը՝ այն դարձնելով վերահսկելի ու կառավարելի, դրանով դատապարտյալի իրավական կարգավիճակի հստակեցումը դիտարկելով որպես նրա արդյունավետ վերասոցիալականացման նախապայման:

Հետևաբար, դատապարտյալի իրավական կարգավիճակի առանձնահատկությունների ուսումնասիրումը, որոնք պետք է հաշվի առնել վերասոցիալականացման արդյունավետությունը բարձրացնելու համար, սկսվում է դատապարտյալի իրավունքների ու պարտականությունների շրջանակի պարզմամբ, դրանց իրացման ընթացքում առաջացող խոչընդոտների բացահայտմամբ, դրանց վերացնելուն ուղղված գործուն քայլերի մշակմամբ և կոնկրետ դատապարտյալի վերասոցիալականացման ամբողջական շղթան ու դրա իրատեսական արդյունքները պատկերացնելով:

Նման մոտեցումն ապահովում է ոչ միայն վերասոցիալականացման միջոցառումների իրատեսականությունը, այլ նաև տնտեսում է մարդկային ռեսուրսները և ժամանակը: Իսկ նման մոտեցման կարևոր նախապայման է իրավագիտակցության բարձրացումը և վերապատրաստումները քրեակատարողական համակարգում՝ թե՛ աշխատողների, թե՛ դատապարտյալների շրջանում:

Եզրակացություն. Ամփոփելով հոդվածը՝ կարելի է դուրս բերել հետևյալ բանաձևը. «Վերասոցիալականացումը կլինի արդյունավետ, եթե դատապարտյալը մասնակցում է այնպիսի վերասոցիալականացման միջոցառումներին, որոնց իրականացումը, դրանցում նրա ներգրավումը կամ մասնակցությունը չի խոչընդոտվում նրա անհատական իրավական կարգավիճակով: Այսինքն, չկա որևէ իրավական սահմանափակում վերասոցիալականացման այս կամ այն միջոցառմանը մասնակցելու կամ գործողությունը կատարելու համար:»:

Հետևաբար, ՔԿՀ-ներում օպերատիվ, անվտանգության ապահովման և այլ ստորաբաժանումների աշխատողները, հստակ գիտակցելով վերասոցիալականացման առաջնահերթությունը, պետք է սերտ համագործակցեն սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանման աշխատողների հետ՝ պատժի նպատակն արդյունավետորեն իրականացնելու համար: Իսկ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանման աշխատողներն իրենց հերթին պարտավոր են բարձրացնել իրենց իրավական գիտելիքները, դատապարտյալի վերասոցիալականացումն օբյեկտիվ կազմակերպելու համար:

УТОЧНЕНИЕ ПРАВОВОГО СТАТУСА ОСУЖДЕННОГО КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ДЛЯ ЭФФЕКТИВНОЙ РЕСОЦИАЛИЗАЦИИ

ТУМАСЯН ДАВИД
преподаватель кафедры уголовного права и уголовного процесса Образовательного комплекса МВД РА,
преподаватель Академии юстиции РА, к.ю.н., доцент

Аннотация: Правовой статус осуждённого, являясь одним из основополагающих институтов уголовно-исполнительного права, влияет не только на обеспечение прав и свобод осуждённых, определение круга их обязанностей, реализацию обоснованных ограничений их прав, но и на эффективность ресоциализации, являясь необходимым предусловием её реализации. В статье рассматриваются особенности правового статуса осуждённого, которые необходимо учитывать для повышения эффективности ресоциализации.

Ключевые слова: права осуждённого, правовой статус осуждённого, ресоциализация, меры ресоциализации, принцип индивидуализации.

CLARIFICATION OF THE LEGAL STATUS OF A CONVICTED PERSON AS A NECESSARY CONDITION FOR EFFECTIVE RESOCIALIZATION

DAVID TUMASYAN
Lecturer at the Chair of Criminal Law and Criminal Procedure, Police Training Unit of the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, Lecturer at the RA Academy of Justice, PhD in Law, Associate Professor

Abstract. The legal status of a convicted person is one of the fundamental institutions of penitentiary law. It affects not only the provision of convicted persons' rights and freedoms, the definition of their duties and the imposition of reasonable restrictions on their rights, but also the effectiveness of their resocialization being a necessary precondition for its implementation. The article examines the features of the legal status of convicted persons that must be taken into account to improve the effectiveness of resocialization.

Key words: rights of a convicted person, legal status of a convicted person, resocialization, resocialization measures, individualization principle.

Օգտագործված գրականության ցանկ

1. Рыбак М.С. Ресоциализация осужденных к лишению свободы: проблемы теории и практики/ 2-е изд., испр. и дополн. Саратов: Изд-во ГОУ ВПО «Саратовская государственная академия права», 2004, էջ 31:

2. Հովակիմյան Հ., Մուղդուսյան Ա. Դատապարտյալների վերասոցիալականացման հասկացության հայեցակարգը// Արդարադատություն, 2021, N 1 (53), էջ 90:

3. Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն. Երևան, 2004, էջ 415:

4. Թումասյան Դ. Ա. ՀՀ քրեակատարողական իրավունք: Ընդհանուր մաս: Ուսումնական ձեռնարկ/ ՀՀ ոստիկանության կրթահամալիր.- Եր.: Լիմուշ, 2022, էջ 23:

5. Малинин В. Б. Уголовно-исполнительное право: курс лекций. М., 2011, էջ 92:

6. Минязева Т. Ф. Проблемы правового статуса личности осужденных в Российской Федерации. Автореф. дис. … д-ра юрид. наук. М., 2001, էջ 21:

7. Уголовно-исполнительное право России: теория, законодательство, международные стандарты, отечественная практика конца XIX — начала XXI века: Учебник для вузов/ Под ред. д. ю. н., проф. **А. И. Зубкова.** - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма, 2006, էջեր 21-22:

Հոդվածը գրախոսվել է 07.07.2026թ.
Ներկայացվել է տպագրության 14.07.2026թ.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԶՄԻ[1] ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԵԼՅԱՏԻՎԻԶՄԻ[2] ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԱՈՒՐԱ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
DOI: 10.63925/18294847-2026.blj22-02

Ամփոփագիր. Սույն հոդվածում վերլուծվում է, որ միջազգային իրավունքի ժամանակակից դոկտրինայում[3] մարդու իրավունքների էվոլյուցիան, սկսած 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) ընդունումից, անխզելիորեն կապված է մի լրջագույն հիմնախնդրի հետ. արդյո՞ք այդ իրավունքներն ունեն համընդհանուր (ունիվերսալ) կիրառելիություն, թե՞ դրանց բովանդակությունը պետք է համապատասխանեցվի տեղական մշակութային համատեքստին: Հեղինակն ընդգծում է, որ չնայած Մարդու իրավունքների միջազգային բիլլին[4] ստեղծել է պարտադիր նորմերի համընդհանուր համակարգ, տարբեր մշակութային, կրոնական և տնտեսական ավանդույթներ ունեցող պետությունները պատմականորեն ցուցաբերել են և շարունակում են ցուցաբերել դիմադրություն դրանց անփոփոխ կիրառմանը:

Աշխատանքի նպատակն է վերլուծել ունիվերսալիզմի և ռելյատիվիզմի դոկտրինալ բախումը ժամանակակից գլոբալ իրավահամակարգում և առաջարկել «Հարաբերականության Շերտայնության Մոդելը»՝ որպես արդի հիմնախնդրի իրավական հաղթահարման գործիքակազմ:

---

[1] Ունիվերսալիզմ**,** աստվածաբանական ու փիլիսոփայական հասկացություն, որտեղ որոշ գաղափարներ ունեն համընդհանուր կիրառություն ու կիրառելիություն: Հասկացության բացատրությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://shorturl.at/xXVGe: Իրավական ունիվերսալիզմը հայեցակարգ է, ըստ որի՝ մարդու հիմնարար իրավունքները բնական են, բացարձակ և հավասարապես կիրառելի բոլոր մարդկանց նկատմամբ ողջ աշխարհում՝ անկախ նրանց ազգային, կրոնական կամ մշակութային պատկանելությունից:

[2] Մշակութային ռելյատիվիզմն այն մոտեցումն է՝ ըստ որի գաղափարներն ու բարոյական արժեքները պետք է ընկալվեն իրենց սեփական մշակութային համատեքստում և չպետք է դիտարկվեն այլ մշակույթի չափանիշներով: Այն հաստատում է բոլոր տեսակետների հավասար հիմնավորվածությունը և ճշմարտության հարաբերական բնույթը, որը սահմանված է անհատի կամ իր մշակույթի կողմից: Հասկացության բացատրությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/fkunbm:

[3] **Դոկտրին** կամ **դոկտրինա** (լատ. doctrina՝ ուսմունք, սովորեցում, docere՝ սովորեցնել), մի շարք սկզբունքների, համոզմունքների, ուսմունքների կամ տեսական համակարգերի ամբողջություն է:

[4] **Մարդու իրավունքների միջազգային բիլլը** (անգլ.՝ *International Bill of Human Rights*) միջազգային իրավական փաստաթղթերի համակարգի ոչ պաշտոնական անվանումն է, որը հիմք է հանդիսանում ժամանակակից միջազգային մարդու իրավունքների պաշտպանության ողջ համակարգի համար: Այն բաղկացած է ՄԱԿ-ի կողմից ընդունված հետևյալ հիմնարար երեք փաստաթղթերից. 1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ՄԻՀՀ), 2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ), 3. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՏՍՄԻՄԴ): Տեղեկատվությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/yssnsg:

Բանալի բառեր. Բնական իրավունքի դոկտրին, մշակութային ռելյատիվիզմ, դոկտրինալ սինթեզ, իրավակիրառ պրակտիկա, հռչակագիր, Միջազգային Բիլլ, կոնցեպտուալ շրջանակ, առաջնահերթության թեզ, նախադեպային ուսումնասիրություն:

Ներածություն. Միջազգային իրավական դոկտրինայում մարդու իրավունքների համընդհանուր բնույթի և մշակութային առանձնահատկությունների բախումը շարունակում է մնալ գլոբալ իրավահամակարգի ամենասուր հիմնախնդիրներից մեկը: Այս հակամարտությունը հաճախ հանգեցնում է նրան, որ տարբեր վարչակարգեր տեղական սովորույթներն ու կրոնական դոգմաներն օգտագործում են որպես վահան՝ հիմնարար ազատությունների կոպիտ խախտումները քողարկելու համար: Արդյունքում՝ միջազգային հանրությունը պարբերաբար բախվում է իրավական երկակի ստանդարտների և համակարգային ճգնաժամի հետ: Հետևաբար, արդիական անհրաժեշտություն է դառնում այնպիսի նոր տեսական մոտեցումների կիրառումը, որոնք հստակ կսահմանազատեն համընդհանուր պարտադիր նորմերն ու մշակութային ճկունության սահմանները:

Հետազոտություն.

1. Ունիվերսալիզմի դոկտրինալ առանցքը. Բնական իրավունքի ժառանգություն և անբաժանելիություն

Համընդհանրության (Universality) հայեցակարգը հիմնվում է այն աքսիոմատիկ[5] գաղափարի վրա, որ մարդու իրավունքները բխում են բնածին մարդկային արժանապատվությունից (Inherent Dignity): Ըստ այդմ՝ իրավունքները գոյություն ունեն մշակույթներից, ավանդույթներից կամ պոզիտիվ օրենքներից անկախ. դրանք բացարձակ են և կիրառելի բոլորի համար:

Միջազգային իրավունքի տեսանկյունից համընդհանրությունը հիմնված է բնական իրավունքի ժառանգության վրա: Անհատն իրավունքներն ստանում է ոչ թե պետության կողմից շնորհման կամ մշակութային պատկանելության արդյունքում, այլ պարզապես մարդ լինելու կենսաբանական և բարոյական փաստի ուժով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն (ՄԻՀՀ)[6] իր նախաբանում և 1-ին հոդվածում հստակ ամրագրում է այս թեզը՝ նշելով, որ բոլոր մարդիկ ունեն «բնածին արժանապատվություն և հավասար ու անօտարելի իրավունքներ»: Հետևաբար, իրավունքների էությունը չի կարող դառնալ տեղական սովորույթների շուրջ քաղաքական «բանակցությունների» առարկա:

Մարդու իրավունքների միջազգային բիլլի[7] (ՄԻՀՀ, ՔՔԻՄԴ, ՏՍՄԻՄԴ) ընդունմամբ

---

[5] Աքսիոմատիկ (հունարեն՝ *axiōma*—արժանահավատ, անվիճելի դրույթ) նշանակում է՝ Հիմնված աքսիոմների (ելակետային դրույթների, ենթադրությունների կամ սկզբունքների) վրա, որոնք ընդունվում են առանց ապացույցի, քանի որ ակնհայտ են կամ ծառայում են որպես հենք տեսության կառուցման համար:

[6] Տեղեկատվությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/cxvcwm :

[7] ՄԱԳ-ի պաշտոնական բացատրություն, սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://surl.li/kmtbgb:

ունիվերսալիզմն ստացավ պարտադիր իրավաբանական ուժ: Պայմանագրերը վավերացրած պետությունները պարտավոր են ապահովել դրանցում ամրագրված իրավունքները՝ առանց որևէ խտրականության կամ մշակութային վերապահումների՝ բացառությամբ բուն դաշնագրերով ուղղակիորեն թույլատրվածների:

Ավելին, իրավական դոկտրինայում համընդհանրությունը սերտորեն կապված է իրավունքների անբաժանելիության սկզբունքի հետ, որը միավորում է մարդու իրավունքների բոլոր երեք սերունդները.

* I Սերունդ: Քաղաքացիական և քաղաքական ազատություններ,
* II Սերունդ: Տնտեսական, սոցիալական և մշակութային երաշխիքներ,
* III Սերունդ: Կոլեկտիվ և համերաշխության իրավունքներ:

Այս սերունդները փոխկապված են. մեկ սերնդի իրավունքները մյուսին հակադրելը կամ մեկը մյուսի հաշվին զոհաբերելը հակասում է համակարգային իրավաբանությանը: Համընդհանրության դիրքորոշումն աներկբա է. մարդու իրավունքները չեն կարող չեղարկվել կամ նվազեցվել ազգային նորմերով:

2. Մշակութային ռելյատիվիզմի մարտահրավերը և դրա աղբյուրները

Մշակութային հարաբերականությունը (*Cultural Relativism*) պնդում է, որ մարդու իրավունքների իմաստը, առաջնահերթությունը և իրացման մեթոդները պետք է պայմանավորված լինեն տվյալ հասարակության պատմամշակութային և կրոնական համատեքստով: Այս ուղղության կողմնակիցները (հատկապես ոչ-արևմտյան իրավական համակարգերի ներկայացուցիչները) առաջադրում են չորս հիմնական ռադիկալ փաստարկ.

1. Արևմտյան ծագման թեզ (Մշակութային իմպերիալիզմ)- կա տեսակետ, որ Միջազգային Բիլլի հիմքում ընկած են բացառապես Եվրոպական Լուսավորության դարաշրջանի[8] անհատակենտրոն գաղափարները: Անհատի իրավունքների բացարձակ գերակայության պարտադրումը ողջ աշխարհին դիտարկվում է որպես արևմտյան «իրավական իմպերիալիզմ»:

2. Արժեքային տարբերություններ և համայնքային գերակայություն- ասիական կամ աֆրիկյան ավանդական հասարակություններում առաջնային է համարվում Համայնքի, Ընտանիքի կամ Կլանի դերը: Այս համատեքստում անհատի շահն ստորադասվում է սոցիալական ներդաշնակությանն ու կայունությանը: Այս

---

[8] Լուսավորչական դարաշրջան (Լուսավորություն), 17-րդ և 18-րդ դարերի եվրոպական մտավոր շարժում, որի ընթացքում Աստծուն, բանականությանը, բնությանն ու մարդկությանը վերաբերող գաղափարները միաձուլվեցին մի աշխարհայացքի մեջ, որն ստացավ Արևմուտքի լայն համընդհանուր հավանությունը և հեղափոխական տեղաշարժեր առաջացրեց արվեստում, փիլիսոփայության և քաղաքականության մեջ: Լուսավորական մտքի առանցքում բանականության օգտագործումն ու փառաբանումն էր՝ այն ուժը, որի միջոցով մարդիկ հասկանում են տիեզերքը և բարելավում սեփական վիճակը: Այդ ժամանակաշրջանի հայտնի մտածողներից են Ջոն Լոկը, Վոլտերը, Մոնտեսքյոն և Ժան-Ժակ Ռուսոն:

«Բրիտանիկա» հանրագիտարանի (Encyclopædia Britannica) պաշտոնական կայքից, սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/lIBXI :

գաղափարախոսությունն իր իրավական կապիտալիզացիան ստացավ 1993 թ. Բանգկոկի Հռչակագրում[9], որտեղ ասիական պետություններն ընդգծեցին տարածաշրջանային յուրահատկությունների և պատմական նախապատմության հաշվառման անհրաժեշտությունը:

3. Կրոնական փաստարկներ (Իսլամական իրավակարգի մոդելը)- իսլամական իրավունքի համատեքստում մարդու իրավունքների հայեցակարգը սահմանափակվում է աստվածային հայտնությամբ: Այս մոտեցման վառ դրսևորումն է 1990 թ. Կահիրեի Իսլամական Հռչակագիրը[10], որի համաձայն՝ մարդու բոլոր իրավունքներն ու ազատությունները ենթակա են իսլամական Շարիաթի սկզբունքներին, ինչն ուղղակի հակասության մեջ է մտնում ՄԻՀՀ-ի հետ՝ հատկապես դավանանքի ազատության և գենդերային հավասարության հարցերում:

4. Տնտեսական առաջնահերթության թեզ- Զարգացող երկրների դոկտրինալ պնդմամբ՝ II սերնդի իրավունքները (պարենային անվտանգություն, տնտեսական զարգացում) պետք է գերակայեն I սերնդի (քաղաքական ազատություններ) նկատմամբ, քանի որ քաղաքական ազատությունը զուրկ է իրավաբանական և կենսական բովանդակությունից սովի և ծայրահեղ աղքատության պայմաններում:

3. Ռելյատիվիզմի քննադատությունը և դրա քաղաքական շահարկումները

Միջազգային իրավունքի դոկտրինալ մեծամասնությունը խստորեն քննադատում է ռելյատիվիզմը՝ ցույց տալով, որ այն հաճախ ծառայում է որպես քաղաքական պատրվակ (*pretext*) իրավախախտումներն արդարացնելու համար: Հիմնական հակափաստարկները հանգում են հետևյալին.

*** Մարդկային արժանապատվության ժխտման անթույլատրելիություն.**

Որևէ մշակութային կամ կրոնական առանձնահատկություն չի կարող իրավաբանորեն արդարացնել այնպիսի արձանագրված խախտումներ, ինչպիսիք են խոշ-

---

[9] Բանգկոկի հռչակագիրը (պաշտոնական անվանումը՝ Final Declaration of the Regional Meeting for Asia of the World Conference on Human Rights կամ ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթերում՝ Report of the Regional Meeting for Asia of the World Conference on Human Rights) 1993 թվականի ապրիլի 2-ին ընդունված տարածաշրջանային կարևորագույն փաստաթուղթ է: Այն ընդունվել է Ասիական տարածաշրջանի պետությունների նախարարների և ներկայացուցիչների կողմից՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում կայացած հանդիպման ժամանակ, որը նախապատրաստական փուլ էր մարդու իրավունքների 1993 թվականի Վիեննայի համաշխարհային կոնֆերանսի համար:

Այն սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է **ՄԱԿ-ի** պաշտոնական **Թվային գրադարանի** (UN Digital Library) հարթակում՝ https://shorturl.at/37Xcl , իսկ պաշտոնական թարգմանությունն անգլերենով հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/dtZ8i:

[10] Կահիրեի Իսլամական հռչակագիրը մարդու իրավունքների վերաբերյալ (ընդունված 1990 թ. և թարմացված 2020 թ. ԻՀԿ-ի կողմից) ստեղծվել է որպես Արևմտյան համընդհանուր չափանիշների այլընտրանք՝ մարդու իրավունքներն ու ազատությունները դիտարկելով բացառապես Իսլամական շարիաթի նորմերին ու սկզբունքներին համապատասխան:

Մինեսոտայի համալսարանի Մարդու իրավունքների գրադարան (1990 թ. բնօրինակ տարբերակն անգլերենով), սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/pQm3Z:

տանգումները, ստրկությունը, ապարտհեյդը[11] կամ կյանքի իրավունքի կամայական զրկումը:

*** Ավտորիտար էլիտաների պաշտպանություն.**

Մշակութային ռելյատիվիզմը հաճախ գործիք է իշխող քաղաքական էլիտաների ձեռքին՝ ներքին այլախոհությունը ճնշելու, մարդու իրավունքների պաշտպաններին լռեցնելու և սեփական իշխանությունը լեգիտիմացնելու համար՝ «ազգային յուրահատկության» քողի ներքո:

*** Գենդերային սիստեմատիկ խտրականություն.**

Ռելյատիվիզմի ամենացավոտ դրսևորումը կանանց իրավունքների ոլորտում է: Ավանդույթի ուժով փորձ է արվում արդարացնել կանանց հանդեպ խտրական պրակտիկաները (բռնի ամուսնություններ, կրթության սահմանափակումներ), ինչն ուղղակիորեն խարխլում է ՄԻՀՀ-ի հավասարության հիմնարար սկզբունքը:

4. Դոկտրինալ սինթեզ[12]. 1993 թ. Վիեննայի հռչակագրի ճգնաժամը և նոր իրավական գործիքակազմը.

1993 թվականի հունիսի 25-ի՝ Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովում ընդունված Վիեննայի հռչակագիրը[13] փորձեց հաշտեցնել այս երկու բևեռները:

Հռչակագրի 5-րդ հոդվածը սահմանեց. *«Թեև ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունների, ինչպես նաև տարբեր պատմական, մշակութային և կրոնական հիմքերի նշանակությունը պետք է հաշվի առնվի, պետությունների պարտականությունն է՝ անկախ իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգերից՝ խրատել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները»*:

Այս ձևակերպումն ստեղծեց տեսական պատնեշ՝ արգելելով մշակութային յուրահատկությունը վերածել իրավունքների նվազեցման պատրվակի, սակայն 21-րդ դարի աշխարհաքաղաքական իրականությունը ցույց է տալիս, որ Վիեննայի հռչակագիրը գործնականում մտել է խոր ճգնաժամի փուլ: Այսօր մշակութային ռելյատիվիզմը

---

[11] Ապարտեիդ (անգլ.՝ apartheid). մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ռասայական սեգրեգացիայի, խտրականության և ճնշման քաղաքականություն, որ ընդհուպ 20-րդ դարի 90-ականները Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարությունն իրականացնում էր բնիկ աֆրիկացիների և ոչ եվրոպացի այլ բնակչության նկատմամբ: Ապարտհեյդը բնորոշվում է որպես սպիտակամորթների՝ ավտորիտար քաղաքական մշակույթի վրա հիմնված գերիշխանություն, որը պետական մակարդակով խրախուսում էր հարավաֆրիկյան բանտու ժողովրդի և ոչ սպիտակամորթ այլ բնակչության նկատմամբ սանձազերծված հալածանքները:

[12] Դոկտրինալ սինթեզը (լատ. *doctrina* — ուսմունք և հուն. *synthesis* — միավորում, համադրություն) տարբեր տեսական հայացքների, իրավական կամ փիլիսոփայական դոկտրինների (ուսմունքների) միավորումն ու համադրումն է մեկ ամբողջական, համահունչ համակարգի մեջ:

[13] Վիեննայի հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը 1993 թվականին ընդունված պատմական միջազգային փաստաթուղթ է, որը վերահաստատել է մարդու իրավունքների համընդհանրության սկզբունքը և հիմք դրել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձր հանձնակատարի պաշտոնի ստեղծմանը:

Պաշտոնական հղումը (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ) սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով https://surl.li/tmqumy :

քաղաքականացվել է այն աստիճանի, որ ավտորիտար և տոտալիտար վարչակարգերի կողմից օգտագործվում է որպես գործիք՝ մարդու իրավունքների բոլոր երեք սերունդների ամբողջական հերքման, իրավական սուբյեկտայնության ոչնչացման և ներքին անպատժելիության մթնոլորտ ձևավորելու համար: ՄԱԿ-ի և միջազգային հանրության մեխանիզմները հաճախ ցուցաբերում են «արհեստական կուրություն»՝ քաղաքական շահերից կամ իրավական անզորությունից ելնելով:

Այս իրավաքաղաքական համատեքստն ամբողջացնելու և համընդհանուր պատկերն ավելի ակնառու դարձնելու համար ստորև ներկայացվում է միջազգային իրավունքի տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող որոշ պետությունների և տարածաշրջանների համեմատական աղյուսակը, որտեղ մշակութային, ազգային կամ կրոնական յուրահատկության պատրվակով գործում է իրավական երկակի ստանդարտը.

Սուբյեկտ/ Տարածաշրջան	**Իրավական ստատուսը ՄԱԿ-ում** Վավերացրել է հետևյալ Մարդու իրավունքների հիմնական պայմանագրերը.	**Փաստացի իրավախախտումները («Ավանդույթի» քող)**	**Միջազգային հանրության «Արհեստական կուրության» պատճառը**
Հայաստանի Հանրապետություն (առանձին համայնքներ /ազգային փոքրամասնություններ)	ՄԱԿ-ի լիիրավ անդամ պետություն, միջազգային կոնվենցիաների սուբյեկտ: ɔ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR): Միացել է 1993 թվականի սեպտեմբերի 5-ին (որպես իրավահաջորդ՝ հիմքում ունենալով ԽՍՀՄ-ի կողմից ստանձնած պարտավորության: ɔ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICCPR): Միացել է 1993 թվականի հունիսի 23-ին (իրավահաջորդությամբ): ɔ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա: (CEDAW) Միացել է 1993 թվականի սեպտեմբերի 13-ին: ɔ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC): Վավերացվել է 1993 թվականի հունիսի 23-ին: ՀՀ-ն վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ:	-Երեխաների (այդ թվում՝ մանկահասակ և դեռահաս աղջիկների) վաղ կամ հարկադիր ամուսնությունների դեպքեր որոշ համայնքներում (օրինակ՝ եզդիական կամ որոշ գյուղական համայնքներում), որոնք հաճախ կատարվում են չգրանցված (կրոնական կամ սովորութային) ձևով՝ շրջանցելով ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված նվազագույն տարիքային շեմը: -Ընտանեկան բռնության համակարգային դրսևորումներ, կանանց նկատմամբ խտրականություն, հասարակության մեջ արմատացած պատրիարքական կարծրատիպեր («ընտանեկան գաղտնիք» կամ «ներքին հարց» լինելու պատրվակով), ինչպես նաև ատելության խոսքի և անհանդուրժողականության դրսևորումներ՝ հաճախ արդարացվող «ազգային-բարոյական ավանդույթների» պաշտպանությամբ:	«Ներքին հասարակական կամ համայնքային ինքնավարության» և «ազգային-կրոնական առանձնահատկությունների չմիջամտելու» սխալ ընկալումը պետական մարմինների կողմից. խնդիրը հաճախ բնութագրվում է որպես «համայնքի ներքին ավանդույթ», ինչը հանգեցնում է իրավապահների և սոցիալական ծառայությունների լռելյայն անգործությանը: Անվտանգային մշտական մարտահրավերների քողի տակ պետությունը համակարգային խնդիրների բարձրաձայնումը սխալմամբ որակում է որպես պետական դիմադրողականությունը թուլացնող գործոն: Արդյունքում՝ «ավանդական ընտանիքի» մասին պատրանքային պատկերացումները պահպանելու նպատակով գենդերային անհավասարությունն ու խոցելի խմբերի պաշտպանությունը միտումնավոր մղվում են երկրորդ պլան՝ զրկվելով անհետաձգելի իրավական լուծումներից:

Աֆղանստան	⊂ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր – վավերացվել է 1983 թ. հունվարի 24-ին: ⊂ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր – վավերացվել է 1983 թ. հունվարի 24-ին: ⊂ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (CERD) – վավերացվել է 1983 թ. հուլիսի 6-ին: ⊂ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 2003 թ. մարտի 5-ին: ⊂ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա (CAT) – վավերացվել է 1987 թ. ապրիլի 1-ին: ⊂ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1994 թ. մարտի 28-ին: ⊂ Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (OPCAT) – վավերացվել է 2018 թ. ապրիլի 17-ին:	Թալիբանի ռեժիմի կողմից գենդերային ապարտհեյդի սահմանում, կյանքի և առողջության պահպանման իրավունքների խախտումներ, աղջիկների կրթության, խոսքի ազատության, ազատ տեղաշարժի արգելք, մանկահասակների հարկադիր ամուսնություններ և այլն:	Թալիբանի դե ֆակտո իշխանության իրավական ճանաչումը ՄԱԿ-ի կողմից օգտագործվում է որպես պատրվակ՝ կոշտ հարկադրանքից խուսափելու համար:
Եմեն	⊂ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR) – վավերացվել է 1987 թ. փետրվարի 9-ին: ⊂ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICCPR) – վավերացվել է 1987 թ. փետրվարի 9-ին: ⊂ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (CERD) – վավերացվել է 1972 թ. հոկտեմբերի 18-ին: ⊂ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 1984 թ. մայիսի 30-ին: ⊂ Խոշտանգումների դեմ կոնվենցիա (CAT) – վավերացվել է 1991 թ. նոյեմբերի 5-ին: ⊂ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1991 թ. մայիսի 1-ին: ⊂ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (CRPD) – վավերացվել է 2009 թ. մարտի 26-ին:	Ամուսնության նվազագույն տարիքի բացակայություն. 9-13 տարեկան երեխաների (առավել հաճախ աղջիկ երեխաների) զանգվածային հարկադիր ամուսնություններ:	Անվտանգության խորհրդի անդամների կողմից ճգնաժամին զուտ տարածաշրջանային հակամարտության (Իրան-Սաուդյան Արաբիա) պրիզմայով նայելը:

Սոմալի	c Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 2015 թ. հոկտեմբերի 1-ին: c Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիա – վավերացվել է 1956 թ. հուլիսի 1-ին:	Աղջիկ երեխաների 98%-ի ենթարկում սեռական թլպատման,/[14] «իգական սեռական թլպատում» տերմինը (անգլերեն՝ *Female Genital Mutilation*)/ (FGM), որը որակվում է որպես խոշտանգում: Ռելյատիվիստները պնդում են, որ սա «մշակութային ծես է»՝ անցման արարողություն (initiation rite), որը սոմալիական աղջկան դարձնում է «կին» և «պատվավոր անդամ» հասարակության մեջ:	«Ձախողված պետության» սինդրոմ. աշխարհի առաջնահերթությունը ծովահենության դեմ պայքարն է, այլ ոչ երեխաների իրավունքները:
Մյանմայի Հանրապետությունում *(Ռոհինջա փոքրամասնություն)*	c Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 1984 թ. մայիսի 30-ին: c Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1991 թ. մայիսի 1-ին: c Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR) (վավերացվել է 2017 թ.)	ՄԱԿ-ի զեկույցներում Ռոհինջա էթնիկ խումբը հիմնականում ներկայացվում է որպես բռնությունների և զանգվածային հալածանքների զոհ Մյանմարի կառավարական ուժերի կողմից: Մյանմարում ռոհինջա մուսուլման երեխաների զանգվածային սպանությունները տեղի են ունեցել Մյանմարի զինված ուժերի լայնածավալ «մաքրման գործողությունների» ժամանակ, որոնք ուղեկցվել են անդնդախոր դաժանություններով, այդ թվում՝ նորածինների և անչափահասների կոտորածներով, ողջ-ողջ այրելով և հարկադիր տեղահանմամբ:[15]	Մյանմարը Չինաստանի համար ունի կենսական նշանակություն, քանի որ այն ապահովում է անմիջական ելք դեպի Հնդկական օվկիանոս: Դրա վառ օրինակն են Չինաստան-Մյանմար տնտեսական միջանցքը, նավթամուղերն ու գազամուղերը, որոնք թույլ են տալիս Պեկինին շրջանցել Մալակկայի նեղուցը և էներգակիրներ ներկրել անմիջապես Մյանմարի նավահանգիստներով: Որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ՝ Չինաստանը պարբերաբար օգտագործում է իր վետոյի իրավունքը կամ սպառնում է կիրառել այն՝ կանխելու համար Մյանմարի ռազմական ռեժիմի (ջունտայի) դեմ ուղղված որևէ կոշտ քանաձև

[14] **ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (UNICEF)** – Պաշտոնական զեկույց, սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://surli.cc/ofregq:

[15] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին ներկայացված պաշտոնական զեկույց (A/HRC/39/64). սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://surl.li/qbtary :

Չինաստան *(Ույղուրական փոքրամասնություն)*	Վավերացրել է ○ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա (CRC) – վավերացվել է 1992 թ. մարտի 2-ին: ○ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (CEDAW) – վավերացվել է 1980 թ. նոյեմբերի 4-ին: ○ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիա (CAT) – վավերացվել է 1988 թ. հոկտեմբերի 4-ին: ○ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CERD) – վավերացվել է 1981 թ. դեկտեմբերի 29-ին: ○ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICESCR) – վավերացվել է 2001 թ. մարտի 27-ին:	Սինցզյանում ույղուր երեխաների բռնի անջատում ընտանիքներից և պետական ճամբարներում ուծացում (ասիմիլյացիա): Չինաստանի իշխանությունները զանգվածային կալանավորումների, թվային հսկողության և բռնի ձուլման քաղաքականության են ենթարկում Սինցզյանի ույղուրական փոքրամասնությանը՝ նպատակ ունենալով արմատախիլ անել անջատողականությունը և վերահսկել ռազմավարական տարածաշրջանը:	Չինաստանի տնտեսական և քաղաքական գերիզոր ազդեցությունը, ինչը կաթվածահար է անում ՄԱԿ-ի ցանկացած սանկցիոն մեխանիզմ:

4.2. Նախադեպային ուսումնասիրություն Աֆղանստանի օրինակով

Վերը նշված համակարգային աղյուսակի ամենացայտուն և ողբերգական ժամանակակից դրսևորումներից մեկն Աֆղանստանի շարունակական նախադեպն է՝ «Թալիբան» վարչակարգի ներքո: Այստեղ, երբ կրոնական իրավունքը (Շարիաթը[16]) դադարել է լինել անձնական հոգևոր կողմնորոշիչ և վերածվել է պետական-քաղաքական տոտալիտար գործիքի, վարչակարգը բացահայտորեն անտեսում է (*jus cogens) միջազգային համընդհանուր պարտադիր նորմերի* սահմանագծերը: «Իսլամական և ազգային արժեքների» քողի տակ արդարացվող բռնություններն ու ճնշումները հաջորդաբար ոչնչացնում են մարդու իրավունքների բոլոր երեք սերունդները՝ սկսելով անհատական քաղաքացիական ու քաղաքական ազատություններից, շարունակելով սոցիալ-տնտեսական ու մշակութային երաշխիքներով և ավարտելով համայնքային ու հավաքական զարգացման իրավունքներով: Մասնավորապես՝

Ա. I Սերունդ. Կյանքի, առողջության իրավունքի և խոշտանգումների արգելքի խախտումներ

Այս մակարդակում ռեժիմն ուղղակիորեն ոտնահարում է միջազգային իրավունքի բացարձակ նորմերը՝ ֆիզիկական բռնությունը վերածելով պետականորեն խրախուսվող ինստիտուտի:

---

[16] Շարիաթը (արաբերեն՝ - «ուղի, ճանապարհ») իսլամական կրոնահիրավական համակարգ է, որը սահմանում է մուսուլմանների կյանքի բոլոր ոլորտները՝ կրոնական պաշտամունքը, բարոյական նորմերը, ընտանեկան հարաբերությունները, սոցիալական կյանքն ու դատական համակարգը: Այն հիմնված է չորս հիմնական աղբյուրների վրա. Ղուրան, Սուննա, Իջմա, Կիյաս**:**

(Ընդհանուր բացատրություն իսլամական իրավունքի, պատմության և կիրառման վերաբերյալ) սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://tinyurl.com/3ysda5fk :

*** Լեգիտիմացված խոշտանգումներ և ֆիզիկական պատիժներ.** Ռեժիմի «Առաքինության խթանման և արատների կանխարգելման» օրենսդրական ակտերով[17] ոստիկանությանը պաշտոնական իրավունք է տրված կանանց ենթարկել ֆիզիկական պատիժների, այդ թվում՝ հանրային մտրակահարության (ընդհուպ՝ 50 մտրակի հարված) և քարկոծման՝ «չընդունված» հագուստ կրելու, առանց տղամարդ ուղեկցորդի տնից դուրս գալու կամ հանրային վայրում ձայնը բարձրացնելու համար: Սա խոշտանգման ուղղակի դրսևորում է, որը հիմնավորվում է կրոնական նորմով:

*** Կյանքի և անձնական անձեռնմխելիության զրկում.** Բացահայտորեն վերականգնվել է դատական կարգով իրականացվող քարկոծումը (*stoning*) մինչև մահ՝ ամուսնական անհավատարմության կամ ռեժիմի սահմանած բարոյական նորմերը խախտելու համար, ինչը կյանքի բնական իրավունքի խախտման սարսափելի դրսևորում է:

*** Տեղաշարժի և խոսքի ազատության բացարձակ սահմանափակում.** Կանանց արգելված է տեղաշարժվել առանց «մանրամի» (ամուսնու կամ արյունակից տղամարդու) և խոսել հանրային վայրերում այնպես, որ իրենց ձայնը լսելի լինի անծանոթներին, ինչն անձնական ազատության ամբողջական սահմանափակում է:

Բ. II Սերունդ. Տնտեսական, սոցիալական և կրթական իրավունքների կազմաքանդում

*** Կրթության իրավունքի իսպառ արգելում.** Աղջիկներին պաշտոնապես արգելված է 6-րդ դասարանից հետո հաճախել դպրոց և ստանալ բարձրագույն կրթություն: Ռեժիմն այս մշակութային ռեյսատիվիզմը հիմնավորում է նրանով, որ կրթական համակարգը պետք է «մաքրվի արևմտյան ազդեցությունից»: Իրականում սա զրկում է անհատին իր մտավոր ու հոգևոր ներուժի զարգացման բնական հնարավորությունից:

*** Աշխատանքի և տնտեսական ինքնուրույնության արգելք.** Կանանց արգելված է աշխատել պետական, հասարակական և բիզնես ոլորտներում: Կանանց աշխատելու և տնտեսական ինքնուրույնության իրավունքից զրկելով՝ ռեժիմը նրանց դատապարտում է բացարձակ կախվածության ու խոցելիության՝ գործնականում նրանց վերածելով տղամարդու «սեփականության»:

*** Առողջապահության իրավունքի սահմանափակում.** Քանի որ կանանց արգելված է դիմել տղամարդ բժիշկների, իսկ կին բժիշկների պատրաստումը կրթական արգելքի պատճառով դադարեցված է, կանայք զրկվում են տարրական բժշկական օգնությունից, ինչն ուղղակիորեն սպառնում է նրանց կյանքին և առողջությանը:

Գ. III Սերունդ. Կոլեկտիվ և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի խախտումներ

*** Մշակութային և սոցիալական կյանքից լիակատար մեկուսացում-** Կանանց արգելված է այցելել զբոսայգիներ, մարզասրահներ, կինոթատրոններ և հանրային սոցիալականացման ցանկացած վայր:

---


[17] Անգլերեն թարգմանությունը սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://tinyurl.com/yckaec86 :

*** Համայնքային զարգացման և համերաշխության իրավունքի ժխտում-** Ռեժիմը հրաժարվում է կայուն զարգացման միջազգային սկզբունքներից՝ հասարակության կեսին ուժով դուրս մղելով հանրային կյանքից, ինչը խախտում է ժողովուրդների համատեղ առաջընթացի և սոցիալական համերաշխության կոլեկտիվ իրավունքը:

Աֆղանստանի նախադեպն ապացուցում է, որ Վիեննայի կոնվենցիայի «պատրվակի բացառման» տեսական պատնեշը գործնականում փլուզվել է, ինչը պահանջում է նոր իրավական գործիքակազմի և մոդելների ներդրում:

Գիտական նորույթ 1. «Հարաբերականության շերտայնության մոդելը»

Վիեննայի կոնվենցիայի ճգնաժամը հաղթահարելու և ունիվերսալիզմի ու ռելյատիվիզմի բախումը կիրառական հարթություն տեղափոխելու համար առաջարկվում է հեղինակային **«Հարաբերականության շերտայնության մոդելը»**: Այս մոդելը տարանջատում է մարդու իրավունքների համակարգը երեք հաջորդական շերտերի՝ ըստ մշակութային «ներկման կամ կլանման» թույլատրելիության աստիճանի և պետության սահմանադրական ու միջազգային պարտավորությունների համատեքստի.



Մոդելի շերտերի մանրամասն վերլուծությունը

Շերտի անվանումը	**Իրավական բովանդակությունը**	**Մշակութային թույլատրելիությունը**	**Սահմանադրական և միջազգային կարգավիճակը**
Շերտ 1: Բացարձակ ունիվերսալ կորիզ	Կյանքի իրավունք, խոշտանգումների և ստրկության արգելք, կամայական ձերբակալությունների արգելք:	0% (Լիակատար անձեռնմխելիություն): Որևէ մշակույթ կամ կրոն չի կարող փոփոխել այս իրավունքների բովանդակությունը:	*Jus Cogens* նորմեր, միջազգային սովորութային իրավունք, Սահմանադրության չփոփոխվող դրույթներ:
Շերտ 2: Հարաբերական սահմանափակումների գոտի	Խոսքի ազատություն, կրթության իրավունքի, հավաքների ազատություն, կրոնի ազատության արտաքին դրսևորումներ (*forum externum*):	Սահմանափակ ճկունություն. մշակույթը և բարոյականությունը կարող են հիմք լինել սահմանափակման համար, եթե դա իրավաչափ է և համաչափ	Սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունք, ՄԻԵԴ իրավասություն:
Շերտ 3: Մշակութային ճկունության գոտի	Հավաքական կամ համերաշխության իրավունքներIII սերունդ). Մարդկության ընդհանուր ժառանգության (համաշխարհային մշակութային և բնական արժեքների) պաշտպանության իրավունքներ:	Բարձր ճկունություն. Ազգային առանձնահատկությունները կարող են ազդել իրացման ձևի վրա՝ պայմանով, որ չխախտվի իրավունքի էությունը	Սահմանադրական նպատակներ, պետության սոցիալ-տնտեսական պարտավորություններ:

Սույն մոդելը հստակ ցույց է տալիս, որ որքան մոտենում ենք մարդու իրավունքների «Ունիվերսալ կորիզին» (Շերտ 1), այնքան մշակութային ռելյատիվիզմի ազդեցությունը հավասարվում է զրոյի:

2. Գիտական նորույթ և առաջարկներ. Իրավական գործիքակազմի կատարելագործում

Քանի որ ներքին իրավազրկումները քողարկելու համար ավտորիտար ռեժիմները հաճախ սուվերենության սկզբունքը վերածում են «շղարշի», անհրաժեշտ է միջազգային իրավունքում ներդնել նոր դոկտրինալ առաջարկներ.

Ա. Մարդու իրավունքների երեք սերունդների խախտման սինթեզը՝ որպես միջազգային սանկցիաների պարտադիր հիմք

Առաջարկվում է ներդնել օբյեկտիվ իրավական բանաձև, ըստ որի՝ մարդու իրավունքների երեք սերունդների միաժամանակյա և համակարգային խախտման փաստը պետք է ճանաչվի որպես պետության դեմ պարտադիր միջազգային պատժամիջոցների (սանկցիաների) կիրառման հիմք.

Իրավական բանաձևը. Եթե պետությունը ոչ միայն խախտում է բնական իրավունքները (I սերունդ), այլև մշակույթի պատրվակով սիստեմատիկորեն արգելում է կրթությունն ու աշխատանքը (II սերունդ) և անհատին լիովին մեկուսացնում հանրային-մշակութային կյանքից (III սերունդ), ապա տեղի է ունենում ոչ թե «ավանդույթի կլանում», այլ մարդու իրավական սուբյեկտայնության լիակատար ոչնչացում:

Այս համակցված խախտումը պետք է ավտոմատ կերպով որակվի որպես սպառնալիք միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը (ՄԱԿ-ի Կանոնադրության 7-րդ գլխի[18] իմաստով)՝ հանգեցնելով պարտադիր տնտեսական, ֆինանսական և դիվանագիտական մեկուսացման:

Բ. «Իրավունքի ընտրության անհատական հայեցողություն» (Մետաիրավական նորույթ)

Առաջարկվում է ինստիտուցիոնալացնել «անհատի կողմից իրավունքի կամ ավանդույթի ընտրության» թեզը, որի էությունը հանգում է հետևյալ իրավական սահմանազատմանը.

Չափահաս անձանց մասով (Ինքնորոշման իրավունք). II և III սերնդի իրավունքների կիրառման մասով չափահաս անձին պետք է տրվի ինքնուրույն ընտրության իրավունք: Անձն ինքը պետք է որոշի՝ իրացնել իր կրթության և աշխատանքի ունիվերսալ իրավունքը, թե՞ սեփական կամքով հրաժարվել դրանից և մնալ պահպանողական-ավանդական արժեքների կրող:

Երեխաների մասով (Բացարձակ արգելք). Երեխաների նկատմամբ (առանց սեռային տարբերության) որևէ ավանդական կամ կրոնական հիմնավորմամբ բնական իրավունքների սահմանափակումը պետք է ընդհանրապես բացառվի և քրեականացվի: Երեխան չունի իրավական գիտակցության այն մակարդակը, որպեսզի հրաժարվի իր կրթության կամ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքից:

Դոկտրինալ վերլուծություն և գիտական ամփոփում

Ունիվերսալիզմի և մշակութային ռելյատիվիզմի բախման համապարփակ իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից միջազգային իրավունքը կանգնած է ինստիտուցիոնալ և հայեցակարգային փակուղու առջև: Ունիվերսալիզմը, հենվելով բնական իրավունքի աքսիոմների վրա, արդարացիորեն պահանջում է անձի

---

[18] սույն հոդվածի հրապարակման օրվա դրությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ https://tinyurl.com/2saht4fc:

պաշտպանության բացարձակ նշաձող, սակայն բախվում է պոզիտիվիստական իրավակիրառության անզորությանը, երբ տվյալ պետությունը հրաժարվում է կատարել իր պարտավորությունները ներքին սովորույթների հիմնավորմամբ: Մյուս կողմից՝ մշակութային ռելյատիվիզմը, որն ի սկզբանե հանդես էր գալիս որպես անթրոպոլոգիական բազմազանության պաշտպանության գործիք, վերածվել է տոտալիտար վարչակարգերի իրավական «վահանի»:

Սույն հոդվածում ներկայացված սահմանազատման աղյուսակը և Աֆղանստանի, Եմենի, Սոմալիի, Մյանմարի ու Չինաստանի դեպքերը ցույց են տալիս, որ «արհեստական կուրությունը» միջազգային հանրությունում այլևս տեսական թերություն չէ, այլ գործնականում համակարգային ճգնաժամ: Օրինակ՝ երբ պետությունները պաշտոնապես ստորագրում են Երեխայի իրավունքների կոնվենցիան (CRC), բայց «ավանդույթի» անվան տակ օրինականացնում են գենդերային ապարտեիդը կամ սեռական անդամահատումը, ապա Մարդու իրավունքների միջազգային բիլլի իրավական ուժը դառնում է պատրանքային:

Ժամանակակից միջազգային իրավունքի և փիլիսոփայության առջև ծառացած առանցքային մարտահրավերն ու հիմնարար դոկտրինան պահանջում են միավորել մարդու իրավունքների սերնդային էվոլյուցիան և բարձրագույն ստիպողական նորմերի անբաժանելի համակարգը՝ բացառելով ցանկացած երկակի ստանդարտ, որի համատեքստում անհրաժեշտ է հստակ տարբերակել առաջին սերնդի բացարձակ ու անձեռնմխելի հիմքերը՝ կյանքի, արժանապատվության և խոշտանգումների բացառման *jus cogens* նորմերը, որոնք կազմում են միջազգային անվտանգության անխախտ կորիզը, երկրորդ սերնդի սոցիալ-տնտեսական ու մշակութային երաշխիքները և երրորդ սերնդի հավաքական ու համերաշխության իրավունքները: Սույն համակարգում առանցքային տեղ է զբաղեցնում սուբյեկտիվ իրավունքներից այն կողմ գտնվող գերիրավական հարթությունը՝ «իրավունքի ընտրության անհատական հայեցողությունը» որպես մետաիրավական նորույթ, որը ինքնադրսևորման և գնահատման բարձրագույն մակարդակ է, սակայն այս համընդհանուր ունիվերսալիզմը հաճախ բախվում է տեղական մշակութային ու կրոնական դոգմաների արհեստական սահմանափակումների հետ, երբ պետություններն արդարացնում են մարդու իրավունքների զանգվածային խախտումները՝ հղում անելով «ազգային աղաթներին» կամ «շարիաթի կանոններին»: Ինչպես արդեն հանգամանալից ներկայացվեց Աֆղանստանի արդի իրավիճակը, այս խեղաթյուրման առավել վառ ապացույցն է այն փաստը, որ նույնիսկ Շարիաթի հիմքերը վկայակոչելով՝ իսլամական կանանց ու երեխաների իրավունքները խախտելիս անտեսվում է պատմական իրողությունը, որ Իջմայի՝ տղամարդ իրավաբան գիտնականների կողմից հօգուտ բռնակալության թարգմանված ու ձևափոխված մեկնաբանություններից անդին, հենց Շարիաթի և Սուննայի արմատներում կանգնած Մուհամմեդ մարգարեի կինը՝ Խադիջան, ինքնին եղել է անկախ, խոշոր տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավունքներով ու լայն սուբյեկտայնությամբ օժտված կին, ինչը ցույց է տալիս, որ ներկայիս արգելքները

բացարձակ նոնսենս են: Հետևաբար, միջազգային հասարակությունը պետք է որդեգրի անզիջում քաղաքականություն, ըստ որի՝ անկախ այն հանգամանքից, թե մարդը ծնվել է ճանաչված կամ չճանաչված պետությունում, իսլամական թե քրիստոնեական հասարակությունում, միևնույն է, պետք է կիրառվի միասնական մոտեցում, քանի որ մարդու իրավունքների պաշտպանությունը չի կարող կախված լինել ազգային պատկանելությունից կամ կեղծ ռելյատիվիստական արդարացումներից, և այս տրամաբանությամբ, հիմնվելով ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլխի մեխանիզմների վրա՝ միջազգային հանրությունը պետք է խիստ և կոպտագույն սանկցիաներ կիրառի համանման բոլոր խախտող պետությունների կամ չճանաչված կազմավորումների նկատմամբ, ուստի, քանի դեռ *jus cogens* նորմերը զիջում են տեղական մշակութային կամ կրոնական շահերին, միջազգային իրավական համակարգը չի կարող հավակնել լինելու արդարության համընդհանուր և անխուսափելի հարթություն:

Այսպիսով՝ գիտական սինթեզը պահանջում է հրաժարվել դեկլարատիվ ունիվերսալիզմից (որը միայն հռչակում է իրավունքներ, բայց չունի հարկադրանքի իրական գործիքներ) և անցում կատարել *միատեսակ ունիվերսալիզմի,* ինչը մարմնավորված է սույն հետազոտության «Հարաբերականության շերտայնության մոդելում»:

<u>Եզրակացություններ</u>

1. Վիեննայի կոնսենսուսի փլուզումը. 1993 թ. Վիեննայի հռչակագրի 5-րդ հոդվածով սահմանված հավասարակշռությունը (որը թույլ էր տալիս հաշվի առնել յուրահատկությունները, բայց արգելում էր նվազեցնել նշաձողը) գործնականում չի աշխատում, քանի որ միջազգային իրավունքում բացակայում է «յուրահատկության իրավաչափության» հստակ սահմանագծումը:

2. Մշակույթը որպես քաղաքական pretext. Մշակութային ռելյատիվիզմն այլևս հասարակական ինքնության պահպանման միջոց չէ. այն ավտորիտար էլիտաների կողմից իրավական սուբյեկտայնության կազմաքանդման և ներքին բռնությունները միջազգային վերահսկողությունից դուրս թողնելու քաղաքական գործիք է:

3. Իրավունքների անբաժանելիության կեղծ փոխարինում. Զարգացող պետությունների կողմից II սերնդի իրավունքների (տնտեսական զարգացում) գերակայության հռչակումը I սերնդի (ազատություններ) նկատմամբ իրավաբանորեն անհիմն է: Ինչպես ցույց տվեց Աֆղանստանի նախադեպը, կրթության և աշխատանքի (II սերունդ) արգելումը հանգեցնում է անձի ֆիզիկական ու կյանքի իրավունքի (I սերունդ) ոչնչացմանը:

4. Շերտայնության անհրաժեշտություն. Մարդու իրավունքների պաշտպանությունը 21-րդ դարում հնարավոր է միայն այն դեպքում, եթե միջազգային իրավունքը կոշտ իրավաբանական սահմանագծով բաժանի *Jus Cogens* նորմերը (Շերտ 1) մշակութային ճկունություն ունեցող սոցիալ-տնտեսական մոդելներից (Շերտ 3):

Դոկտրինալ և գիտական առաջարկների ամփոփում

Ա. ՄԱԿ-ի Կանոնադրության 7-րդ գլխի իրավական ընդլայնում

Առաջարկվում է միջազգային իրավունքի դոկտրինայում ներդնել և շրջանառել «**Համակարգային իրավազրկման սինդրոմ**» (Systemic Deprivation Syndrome) հասկացությունը:

Դոկտրինալ նորույթ. Երբ պետությունը միաժամանակ և համակարգված կերպով խախտում է մարդու իրավունքների բոլոր երեք սերունդները (I սերունդ՝ ֆիզիկական պատիժներ/խոշտանգումներ, II սերունդ՝ կրթության/աշխատանքի բացարձակ արգելք, III սերունդ՝ հանրային-մշակութային կյանքից լիակատար մեկուսացում), ապա սուվերենության սկզբունքը (*Article 2(7) of the UN Charter*) կորցնում է իր իրավական պաշտպանական ուժը:

Այս համակցված հիմքը պետք է ավտոմատ կերպով ճանաչվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից որպես «սպառնալիք միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը»՝ պարտադիր տնտեսական և դիվանագիտական մեկուսացման (սանկցիաների) կիրառմամբ, շրջանցելով քաղաքական երկակի ստանդարտները:

Բ. Մետաիրավական սկզբունք. «Իրավունքի ընտրության անհատական հայեցողություն»

Առաջարկվում է միջազգային կոնվենցիոնալ իրավունքում ներդնել նոր սկզբունք, որը կկոչվի **«Անհատի գերակայությունը սովորույթի նկատմամբ»**:

*** Չափահաս անձանց իրավական ֆիլտրը.** Պետությունը չի կարող օրենքով արգելել II և III սերնդի իրավունքների իրացումը: Անձին (հատկապես ավանդական հասարակություններում կանանց) պետք է երաշխավորվի անհատական ընտրության իրավունք. եթե անձը ցանկանում է ստանալ աշխարհիկ կրթություն և աշխատել, պետությունը պարտավոր է ապահովել դա՝ անկախ տեղական կրոնական էլիտաների դիրքորոշման: Ավանդույթին հետևելը պետք է լինի բացառապես *կամավոր*, այլ ոչ թե *հարկադիր*:

*** Երեխաների իրավական անձեռնմխելիության բացարձակ ռեժիմ.** Երեխաների նկատմամբ (մինչև 18 տարեկան) որևէ մշակութային կամ կրոնական ավանդույթ (մանկահասակների ամուսնություն, CRC նորմերի կասեցում, սեռական անդամահատում) չի կարող ունենալ իրավական ուժ: Նման պրակտիկաներ իրականացնող պետությունների նկատմամբ պետք է գործարկվի ունիվերսալ յուրիսդիկցիայի քրեական մեխանիզմը:

Գ. Միջազգային պայմանագրերի վերապահումների ինստիտուտի ռեֆորմ

Առաջարկվում է փոփոխել Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թ. կոնվենցիայի կիրառման պրակտիկան մարդու իրավունքների պայմանագրերի մասով:

Առաջարկ. Բացարձակապես անվավեր (*void ab initio*) ճանաչել պետությունների այնպիսի վերապահումները մարդու իրավունքների կոնվենցիաներին, որոնք ունեն գլոբալ/անորոշ բնույթ (օրինակ՝ «սույն կոնվենցիան կիրառվում է այնքանով, որքանով չի հակասում ազգային կամ կրոնական օրենսդրությանը»): Վերապահումը կարող է լինել միայն կոնկրետ, ընթացակարգային և երբեք չի կարող առնչվել հոդվածների իրավական էությանը:

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УНИВЕРСАЛИЗМА ПРАВ ЧЕЛОВЕКА И КУЛЬТУРНОГО РЕЛЯТИВИЗМА

КАРАПЕТЯН ЛАУРА
Соискатель Института философии,
социологии и права НАН РА

Аннотация. В данной статье анализируется неразрывная связь эволюции прав человека в современной доктрине международного права, начиная с принятия Всеобщей декларации прав человека (ВДПЧ) 1948 года, с важнейшей проблемой: обладают ли эти права универсальной применимостью или их содержание должно быть приведено в соответствие с местным культурным контекстом? Автор подчеркивает, что, хотя Международный билль о правах человека создал универсальную систему обязательных норм, государства с различными культурными, религиозными и экономическими традициями исторически проявляли и продолжают проявлять сопротивление их неизменному применению. Целью работы является анализ доктринального столкновения универсализма и релятивизма в современной глобальной правовой системе и предложение «Модели слоистости относительности» в качестве инструментария для правового преодоления актуальной проблемы.

Ключевые слова: Доктрина естественного права, культурный релятивизм, доктринальный синтез, правоприменительная практика, декларация, Международный билль, концептуальная рамка, тезис о приоритете, прецедентное исследование.

CONTEMPORARY ISSUES OF HUMAN RIGHTS UNIVERSALISM AND CULTURAL RELATIVISM

KARAPETYAN LAURA
Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law,
National Academy of Sciences of the Republic of Armenia

Abstract. This article analyzes the way the evolution of human rights in modern international legal doctrine, starting from the adoption of the Universal Declaration of Human Rights (UDHR) in 1948, is inextricably linked to a major problem: whether these rights have universal applicability, or their content should be adapted to local cultural contexts. The author emphasizes that although the International Bill of Human Rights has created a universal system of binding norms, some States with diverse cultural, religious, and economic traditions have historically shown and continue to show resistance to their invariable application.

The aim of this study is to analyze the doctrinal incongruence of universalism and relativism in contemporary international legal order and to propose the "Relativity Stratification Model" as a tool for legally addressing this issue.

Key words: doctrine of natural law, cultural relativism, doctrinal synthesis, law application practice, declaration, International Bill, conceptual framework, priority thesis, case study.

Օգտագործված գրականության ցանկ

Միջազգային իրավական ակտեր և փաստաթղթեր՝

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 217 A (III) բանաձևով, 10 դեկտեմբերի 1948թ.):

2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2200A (XXI) բանաձև, 16 դեկտեմբերի 1966թ.):

3. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2200A (XXI) բանաձև, 16 դեկտեմբերի 1966թ.):

4. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 44/25 բանաձև, 20 նոյեմբերի 1989թ.):

5. Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր (Մարդու իրավունքների համաշխարհային համաժողով, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/CONF.157/23, 25 հունիսի 1993թ.):

6. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա (23 մայիսի 1969թ.):

7. Իսլամական մարդու իրավունքների Կահիրեի հռչակագիր (Իսլամական կոնֆերանս կազմակերպության 19-րդ արտաքին գործերի նախարարների համաժողով, 5 օգոստոսի 1990թ.):

8. Բանգկոկի հռչակագիր (Մարդու իրավունքների ասիական պետությունների տարածաշրջանային հանդիպման զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/CONF.157/ASRM/8, 7 ապրիլի 1993թ.):

9. ՄԱԿ-ի Կանոնադրություն (սատագրված 1945 թ. հունիսի 26-ին, Սան Ֆրանցիսկոյում) — *մասնավորապես 7-րդ գլխի (միջազգային սանկցիաներ) և 2-րդ հոդվածի 7-րդ կետի (պետությունների ներքին իրավասության/սուվերենության շրջանակ) վերլուծության համար:*

10. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW) (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1979 թ.) — *Աֆղանստանում, Եմենում և այլ տարածաշրջաններում գենդերային ապարտեիդի ու կանանց իրավունքների համակարգային խախտումների իրավական որակման համար:*

II. Միջազգային կազմակերպությունների զեկույցներ և Case-Study նյութեր

11. UN Անվտանգության Խորհրդի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի (OHCHR) հատուկ զեկույցները Աֆղանստանում տիրող իրավիճակի վերաբերյալ (2021–2026 թթ. զեկույցներ՝ գենդերային ապարտեիդի և «Առաքինության տարածման ու արատների կանխարգելման» օրենսդրության վերաբերյալ):

12. Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) և UNICEF-ի համատեղ զեկույցները Սոմալիում կանանց սեռական անդամահատումների (FGM) և Եմենում մանկահասակների հարկադիր ամուսնությունների վիճակագրության վերաբերյալ:

13. Միջազգային դատարանի (ICJ) խորհրդատվական կարծիքներն ու վճիռները *jus cogens* նորմերի բացարձակության և էրգա օմնես (*erga omnes*) պարտավորությունների վերաբերյալ:

III. Իրավաբանական doktrինա և գիտական գրականություն

14. Donnelly, Jack. *Universal Human Rights in Theory and Practice* (3rd ed., Cornell University Press, 2013) – *Ունիվերսալիզմի և հարաբերականության տեսական հիմքերի վերլուծության համար:*

15. An-Na'im, Abdullahi Ahmed. *Human Rights in Cross-Cultural Perspectives: A Quest for Consensus* (University of Pennsylvania Press, 1992) – *Իսլամական իրավակարգի և մշակութային դիսկուրսի սինթեզի համար:*

16. Steiner, Henry J., Alston, Philip, & Goodman, Ryan. *International Human Rights in Context: Law, Politics, Morals* (Oxford University Press, 2008) – *Մարդու իրավունքների երեք սերունդների փոխկախվածության վերլուծության համար:*

17. Franck, Thomas M. *The Empowered Self: Law and Society in the Age of Individualism* (Oxford University Press, 1999) – *Անհատի ինքնորոշման և սովորույթի նկատմամբ գերակայության հայեցակարգի համար:*

Հոդվածը գրախոսվել է 03.08.2026թ.
Ներկայացվել է տպագրության 11.08.2026թ.

ՔՆՆԻՉԻ ԿՈՂՄԻՑ ԲԼԵՖԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑ. ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿՈՉՈՒԲԱԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ
Ի. գ. թ., «Կոնտրա» իրավաբանական ընկերության քրեական պաշտպանության դեպարտամենտի ղեկավար, ՀՀ փաստաբանական պալատի անդամ, փաստաբան, Հայաստանի Եվրոպական համալսարանի հանրային և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս
DOI: 10.63925/18294847-2026.blj22-03

Հոդվածում քննության է առնվում քննիչի կողմից բլեֆի կիրառումը որպես քննչական տակտիկական միջոց՝ քրեադատավարական և բարոյագիտական գնահատման համատեքստում: Հիմնավորվում է, որ բլեֆի իրավական գնահատման ելակետը ոչ թե դրա արդյունավետությունն է կամ «բլեֆ» անվանումը, այլ կիրառված տեղեկատվական ներգործության կոնկրետ բովանդակությունը, դրա ազդեցությունը ցուցմունքի կամավորության և հուսալիության վրա, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ խաբեությամբ տեղեկություն ստանալու արգելքի հետ հարաբերակցությունը: Հետազոտության գիտական նորույթը հայտնի ռիսկային գործոնների՝ ներգործության ինտենսիվության, հարցաքննվողի խոցելիության, բլեֆի առարկայի և ստացված տեղեկության անկախ հաստատելիության՝ ՀՀ քրեադատավարական համակարգում մեկ միասնական գնահատման կառուցակարգի մեջ կապակցումն ու դրանց տարբեր իրավական հետևանքների սահմանազատումն է:

Բանալի բառեր՝ բլեֆ, հարցաքննություն, քննչական տակտիկա, կեղծ խոստովանություն, ցուցմունքի կամավորություն, ապացույցների թույլատրելիություն, դատավարական ինքնավարություն, բարոյագիտական գնահատում:

Քրեական արդարադատության արդյունավետությունը չի կարող չափվել միայն բացահայտված հանցագործությունների քանակով կամ ստացված խոստովանական ցուցմունքների ծավալով: Քրեական վարույթի համար նույնքան էական է, որ գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունները ձեռք բերվեն այնպիսի եղանակներով, որոնք չեն խաթարում անձի դատավարական ինքնավարությունը և չեն նվազեցնում ապացույցների հուսալիությունը: Այս տեսանկյունից քննիչի կողմից բլեֆի կիրառման հարցը քննչական տակտիկայի, ապացուցման տեսության, մարդու իրավունքների պաշտպանության և բարոյագիտական գնահատման հատման կետում է:

Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասն ուղղակիորեն արգելում է անձից տեղեկություններ ստանալ, ի թիվս այլնի, խաբեության միջոցով, մինչդեռ օրենսգիրքը չի տալիս «խաբեության» օրենսդրական սահմանումը և

չի որոշում այն սահմանը, որից տակտիկական անորոշությունը կամ տեղեկության չբացահայտումը վերածվում է արգելված խաբեության: Հետևաբար, հայկական իրավակարգի համար խնդիրը ձևակերպվում է ոչ թե «բլեֆը թույլատրելի՞ է, թե՞ ոչ» ընդհանուր հարցով, այլ՝ բլեֆի կոնկրետ որ՞ դրսևորումն է ընդգրկվում 18-րդ հոդվածի 8-րդ մասի արգելքի տակ և ի՞նչ դատավարական հետևանք է առաջացնում 97-րդ հոդվածի իմաստով[1]:

Ներպետական դատական պրակտիկայում խնդրին մոտեցող կարևոր ուղենիշ է ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հրաչ Առաքելյանի վերաբերյալ թիվ ԼԴ2/0062/01/18 գործով 2021 թվականի փետրվարի 12-ի որոշումը: Թեև այն կայացվել է նախորդ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և ուղղակիորեն չի գործածում «բլեֆ» եզրույթը, Վճռաբեկ դատարանը պահանջել է ստուգել նախաքննական խոստովանական ցուցմունքների ձեռքբերման պայմանները և միայն դրանից հետո առանձին գնահատել դրանց թույլատրելիությունն ու արժանահավատությունը: Այդ մոտեցումը հաստատում է, որ տեղեկության ստացման եղանակը հայկական դատական պրակտիկայում ինքնուրույն դատավարական նշանակություն ունի[2]:

Ամերիկյան իրավական համակարգում Frazier v. Cupp գործով ձևավորվել է մոտեցում՝ ըստ որի քննիչի խաբուսիկ հայտարարությունն ինքնին բավարար չէ խոստովանությունը հարկադրական ճանաչելու համար, եթե գործի բոլոր հանգամանքների գնահատմամբ ցուցմունքը տրվել է կամավոր կերպով[3]: Սակայն հետագա էմպիրիկ հետազոտությունները ցույց են տվել, որ բլեֆը միշտ չէ, որ խոստովանության է դրդում միայն մեղավոր անձանց. որոշ պայմաններում այն կարող է հանգեցնել նաև անմեղ անձանց ինքնամեղադրող հայտարարություններին[4]:

Հոդվածի նպատակը բլեֆի քրեադատավարական և բարոյագիտական գնահատման այնպիսի մոտեցման ձևակերպումն է, որը միաժամանակ հաշվի կառնի քննչական գործունեության գործնական պահանջները, ցուցմունքի հուսալիության չափանիշը և արդար դատաքննության երաշխիքները: Այդ նպատակով կիրառվել են նորմատիվ-դոգմատիկ, համեմատահրավական և միջգիտակարգային մեթոդներ. ՀՀ օրենսդրական կարգավորումը համադրվել է ամերիկյան և եվրոպական մոտեցումների, իսկ իրավական գնահատումը՝ կեղծ խոստովանությունների և հարցաքննության հոգեբանության էմպիրիկ ուսումնասիրությունների հետ: Հոդվածը չի հետապնդում Հայաստանում բլեֆի փաստացի տարածվածությունը չափելու էմպիրիկ նպատակ. դրա հետազոտական հարցը բլեֆի իրավական որակման չափանիշներն ու հետևանքներն են:

Առաջարկվող չորս գործոնները չեն ներկայացվում որպես փակ կամ բոլոր դեպքերի համար «անհրաժեշտ և բավարար» ցուցակ: Դրանք կազմում են նվազագույն

---

[1] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն, ընդունված՝ 30.06.2021 թ., ուժի մեջ՝ 01.07.2022 թ., գործող խմբագրությամբ

[2] ՀՀ Վճռաբեկ դատարանի 12.02.2021 թ. որոշում, քրեական գործ թիվ ԼԴ2/0062/01/18

[3] Տե՛ս Frazier v. Cupp, 394 U.S. 731, Supreme Court of the United States, 1969 թ.

[4] Տե՛ս Perillo J. T., Kassin S. M., «Inside Interrogation: The Lie, The Bluff, and False Confessions», Law and Human Behavior, Vol. 35, No. 4, Springer, 2011 թ., էջեր 327–337,

կառուցակարգված գնահատման շրջանակ, որի տարրերը բխում են տարբեր, բայց փոխկապակցված աղբյուրներից. ներգործության ինտենսիվությունը՝ խոստովանության կամավորության և գործի բոլոր հանգամանքների գնահատման մոտեցումից, հարցաքննվողի խոցելիությունը՝ ենթարկվողականության և կեղծ խոստովանության ռիսկերի վերաբերյալ հոգեբանական հետազոտություններից, բլեֆի առարկան՝ «bluff tactic»-ի և «false evidence ploy»-ի տարբեր ազդեցությունների քննարկումից, իսկ անկախ հաստատելիությունը՝ ապացուցողական հուսալիության և ապացույցների համակցված գնահատման պահանջից[5]: Գիտական նորույթը, հետևաբար, այս գործոններից յուրաքանչյուրի առանձին «հայտնաբերումը» չէ, այլ դրանց մեկ համակարգում միավորումը և յուրաքանչյուր գործոնի համար տարբեր դատավարական գործառույթի սահմանումը՝ իրավաչափություն, կամավորություն, հուսալիություն և ապացուցողական կշիռ:

Սույն հոդվածում «բլեֆ» եզրույթը գործածվում է որպես քրեագիտական-տակտիկական, այլ ոչ թե ինքնուրույն իրավական կատեգորիա: Այն նշանակում է քննիչի դիտավորյալ տեղեկատվական վարքագիծ, որի միջոցով հարցաքննվողի մոտ ձևավորվում է իրականությունից տարբերվող կամ թերի պատկերացում քննության տեղեկացվածության, ապացույցների առկայության կամ դրանց ապագա ստուգման վերաբերյալ՝ առանց պարտադիր կերպով ուղղակի կեղծ փաստական պնդման: Հետևաբար, իրավական գնահատման համար որոշիչը ոչ թե կիրառված մեթոդի «բլեֆ» անվանումն է, այլ դրա կոնկրետ բովանդակությունն ու ազդեցությունն անձի ազատ ընտրության և ստացվող տեղեկության հուսալիության վրա:

Սուտը ենթադրում է իրականությանը չհամապատասխանող փաստական տեղեկության ուղղակի հաղորդում, մինչդեռ խաբեությունն ավելի լայն հասկացություն է և կարող է ներառել ինչպես կեղծ պնդում, այնպես էլ այնպիսի վարքագիծ, որը նպատակաուղղված կերպով ձևավորում է էականորեն սխալ պատկերացում: Բլեֆը կարող է չհասնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասով արգելված «խաբեության» աստիճանին, երբ այն սահմանափակվում է տեղեկության չբացահայտմամբ, հարցերի հաջորդականությամբ կամ տակտիկական անորոշությամբ: Սակայն, հեղինակի առաջարկվող մեկնաբանությամբ, քննիչի կողմից գոյություն չունեցող փաստի՝ օրինակ՝ պատրաստի ԴՆԹ արդյունքի, տեսագրության կամ այլ անձի խոստովանության գիտակցված և հաստատական ներկայացումը պետք է դիտարկել արդեն ոչ թե թույլատրելի տակտիկական անորոշության, այլ 18-րդ

---

[5] Տե՛ս Frazier v. Cupp, 394 U.S. 731, Supreme Court of the United States, 1969 թ.; Perillo J. T., Kassin S. M., «Inside Interrogation: The Lie, The Bluff, and False Confessions», Law and Human Behavior, Vol. 35, No. 4, Springer, 2011 թ., էջեր 327–337, Gudjonsson G. H., The Psychology of Interrogations and Confessions: A Handbook, John Wiley & Sons, Chichester, 2003 թ., 120–147, 364–417.; Barnes B., Myers B., Pond R. S., Meyer K., «The Influence of False Evidence Ploy Variants on Perceptions of Coercion and Deception», Journal of Forensic Psychology Research and Practice, Vol. 24, No. 4, Routledge/Taylor & Francis, 2024 թ., էջեր 500–523, Kassin S. M., Drizin S. A., Grisso T., Gudjonsson G. H., Leo R. A., Redlich A. D., «Police-Induced Confessions: Risk Factors and Recommendations», Law and Human Behavior, Vol. 34, No. 1, 2010, 3-8 էջեր

հոդվածի 8-րդ մասով արգելված խաբեության հարթությունում:

Անգլալեզու էմպիրիկ գրականությունում «bluff tactic» և «false evidence ploy» հասկացությունները նույնական չեն: Պերիլլոյի և Կասինի օպերացիոնալ սահմանմամբ՝ bluff tactic-ի դեպքում հարցաքննողը ձևացնում է, որ առկա է ապացույց, որը դեռ պետք է ստուգվի, սակայն չի պնդում, թե այդ ապացույցն արդեն իսկ մեղադրում է անձին, մինչդեռ false evidence ploy-ի դեպքում հարցաքննվողին ներկայացվում է կեղծ մեղադրական ապացույց կամ դրա գոյության մասին հաստատական պնդում[6]: Բարնեսը և համահեղինակները ևս bluff tactic-ը դիտարկում են որպես false evidence ploy-ի համեմատ պակաս խաբուսիկ տարբերակ, թեև նրանց հետազոտության մասնակիցներն այդ երկու մեթոդները խաբուսիկության և հարկադրականության ընկալման առումով էականորեն չեն տարբերակել[7]: Ուստի սույն հոդվածում այս հասկացությունները չեն օգտագործվում որպես հոմանիշներ:

Այս տարբերակման հիման վրա նպատակահարմար է խոսել ոչ թե բլեֆի երեք «տեսակների», այլ ռիսկի երեք աստիճանների մասին: Ցածր ռիսկային է տակտիկական անորոշությունը, երբ քննիչը չի բացահայտում իր տեղեկացվածության ամբողջ ծավալը կամ ընտրում է հարցադրումների ռազմավարական հերթականություն՝ առանց կեղծ փաստական պնդման: Միջին ռիսկային է bluff tactic-ը նեղ իմաստով, երբ ստեղծվում է ապագայում ստուգվելիք ապացույցի առկայության տպավորություն՝ առանց այն արդեն իսկ մեղադրական ներկայացնելու: Բարձր ռիսկային է false evidence ploy-ը կամ դրան համարժեք ուղղակի կեղծ պնդումը՝ գոյություն չունեցող ԴՆԹ արդյունքի, տեսագրության, փորձագիտական եզրակացության կամ համակատարողի խոստովանության մասին: Ռիսկի այս աստիճաններն ինքնին չեն փոխարինում իրավական որակմանը, այլ ուղղորդում են 18-րդ և 97-րդ հոդվածների կիրառման վերլուծությունը:

Բլեֆի ազդեցությունը հիմնված է այն հոգեբանական իրողության վրա, որ անձը որոշումներ է կայացնում ոչ միայն փաստացի իրականության, այլև այդ իրականության իր ընկալման հիման վրա: Հարցաքննության իրավիճակում քննիչի տեղեկացվածության աստիճանը հարցաքննվողի համար հաճախ անհայտ է: Այդ անորոշությունն ստեղծում է ռիսկի հաշվարկի դաշտ, որտեղ անձը կարող է ընտրել լռելու, հերքելու կամ համագործակցելու վարքագիծ: Հարցաքննության միջավայրում ենթարկվողականությունը և իրավիճակի սխալ ընկալումը կարող են էականորեն ազդել ցուցմունքի ձևավորման վրա[8]:

Բլեֆի առավել հաճախ հանդիպող դրսևորումներից է ապացույցների գոյության կամ ապագա ստուգման վերաբերյալ բլեֆը: Այն կարող է վերաբերել տեսագրությանը, ԴՆԹ

---

[6] Տե՛ս Perillo J. T., Kassin S. M., «Inside Interrogation: The Lie, The Bluff, and False Confessions», Law and Human Behavior, Vol. 35, No. 4, Springer, 2011 թ., էջեր 327–337

[7] Տե՛ս Barnes B., Myers B., Pond R. S., Meyer K., «The Influence of False Evidence Ploy Variants on Perceptions of Coercion and Deception», Journal of Forensic Psychology Research and Practice, Vol. 24, No. 4, Routledge/Taylor & Francis, 2024 թ., էջեր 500–523,

[8] Gudjonsson G. H., The Psychology of Interrogations and Confessions: A Handbook, John Wiley & Sons, Chichester, 2003 թ., օգտագործված էջեր՝ 1–38, 120–147, 364–417.

հետքին, մատնահետքին, հեռախոսային տվյալին կամ այլ նյութական ապացույցի: Այս ձևը հատկապես վտանգավոր է այն դեպքում, երբ հարցաքննվողը չի կարող ստուգել քննիչի պնդման իրականությունը և այդ պնդումն ընկալում է որպես գործի փաստացի ելքը կանխորոշող հանգամանք:

Երկրորդ ձևը համակատարողի, վկայի կամ տուժողի ցուցմունքի վերաբերյալ բլեֆն է: Frazier v. Cupp գործի փաստական հիմքում հենց այս մոդելն էր. կասկածյալին հայտնել էին, թե նրա հանցակիցը խոստովանել է, մինչդեռ այդ տեղեկությունը ճշգրիտ չէր[9]: Այսպիսի բլեֆը հարցաքննվողի մոտ ստեղծում է մեկուսացման և պաշտպանական դիրքի փլուզման զգացողություն:

Փորձագիտական եզրակացության կամ մասնագիտական հետազոտության վերաբերյալ ներգործությունը նպատակահարմար չէ ներկայացնել որպես բլեֆի ինքնուրույն տեսական կատեգորիա: Եթե քննիչը գիտակցաբար պնդում է, թե արդեն առկա է փորձագիտական եզրակացություն և այն մեղադրում է հարցաքննվողին, մինչդեռ նման եզրակացություն գոյություն չունի, գործառութային առումով դա false evidence ploy-ի բարձր ռիսկային դրսևորում է: Եթե քննիչը պարզապես ճշմարտացիորեն հայտնում է, որ փորձաքննություն նշանակվելու կամ կատարվելու է, բլեֆ ընդհանրապես չկա, իսկ եթե ստեղծում է ապագայում ստուգվելիք նյութական ապացույցի առկայության տպավորություն՝ առանց դրա մեղադրական արդյունքը հաստատելու, իրավիճակը մոտենում է bluff tactic-ին նեղ իմաստով[10]: Այս սահմանազատումը թույլ է տալիս խուսափել նույն երևույթի համար զուգահեռ և չհիմնավորված դասակարգումներ ստեղծելուց:

Չորրորդ ձևն օպերատիվ տեղեկությունների կամ գաղտնի տվյալների վերաբերյալ բլեֆն է: Այս դեպքում քննիչը կարող է ակնարկել գաղտնալսման, տեսահսկման, օպերատիվ տեղեկության կամ այլ գաղտնի աղբյուրի մասին՝ առանց տվյալը բացահայտելու: Դրա վտանգը տեղեկատվական անհավասարության խորացումն է. հարցաքննվողը կարող է ենթադրել, որ քննությունը վերահսկում է իրեն հայտնի ամբողջ փաստական դաշտը, և այդ ենթադրության հիման վրա փոխել վարքագիծը:

Այս դասակարգումը սպառիչ չէ, սակայն այն կարևոր է հետագա իրավական գնահատման համար, քանի որ բլեֆի բոլոր դրսևորումները նույն ռիսկը չունեն: Հետևաբար, դրանց թույլատրելիությունը չպետք է գնահատվի մեկ ընդհանուր բանաձևով:

Բլեֆի քրեադատավարական գնահատման առաջին հարթությունը ցուցմունքի կամավորությունն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում լռելու իրավունքը և ինքնամեղադրման դեմ պաշտպանությունը դիտարկվում են որպես արդար դատաքննության բաղադրատարրեր[11]: Պետությունը չի կարող շրջանցել այդ երաշխիքները՝ անձից ինքնամեղադրող տեղեկություն ստանալու

---

[9] Տե՛ս Frazier v. Cupp, 394 U.S. 731, Supreme Court of the United States, 1969 թ.

[10] Տե՛ս Perillo J. T., Kassin S. M., «Inside Interrogation: The Lie, The Bluff, and False Confessions», Law and Human Behavior, Vol. 35, No. 4, Springer, 2011 թ., էջեր 327–337

[11] Տե՛ս John Murray v. the United Kingdom, no. 18731/91, European Court of Human Rights, Judgment of 8 February 1996 թ.; Saunders v. the United Kingdom, no. 19187/91, European Court of Human Rights, Judgment of 17 December 1996 թ.

համար օգտագործելով այնպիսի մեթոդներ, որոնք էապես ազդում են նրա ազատ ընտրության վրա[12]:

Երկրորդ հարթությունն ապացուցողական հուսալիությունն է: Նույնիսկ եթե ձևականորեն հարցաքննության ընթացքում ֆիզիկական բռնություն կամ բացահայտ սպառնալիք չի կիրառվել, բլեֆը կարող է ազդել ստացվող տեղեկության բովանդակության վրա: Այդ պատճառով խոստովանական ցուցմունքը չի կարող ինքնաբերաբար համարվել ճշմարիտ. այն պետք է գնահատվի այն պայմանների համատեքստում, որոնցում ձևավորվել է[13]:

Կեղծ խոստովանությունների վերաբերյալ ժամանակակից հետազոտությունները հաստատում են, որ անմեղ անձինք որոշ իրավիճակներում կարող են կատարել ինքնամեղադրող հայտարարություններ: Այս երևույթը բացատրվում է անձնական և իրավիճակային գործոնների համադրությամբ, իսկ խոստովանական ապացույցը կարող է ուժեղ ազդեցություն ունենալ ոչ միայն դատարանի, այլև քննության մյուս մասնակիցների ընկալման վրա[14]:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համակարգային մեկնաբանությունը խնդիրը տեղափոխում է ոչ միայն իրավունքների, այլև ապացույցների որակի հարթություն: Օրենսգրքի 22-րդ հոդվածը պահանջում է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատել պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ և եզրափակիչ դատավարական ակտը հիմնել հետազոտված ապացույցների ազատ ու բարեխիղճ գնահատման վրա, իսկ 97-րդ հոդվածն օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները ճանաչում է անթույլատրել: Հետևաբար, խոստովանական ցուցմունքի գնահատման ժամանակ պետք է տարբերակել առնվազն երկու հարց՝ արդյո՞ք այն իրավաչափ եղանակով է ձեռք բերվել և, եթե՝ այո՛, որքանո՞վ է այն արժանահավատ ու հաստատվում այլ ապացույցներով:

ԱՄՆ իրավունքում քննիչի կողմից խաբուսիկ տակտիկաների կիրառումը երկար ժամանակ դիտարկվել է խոստովանության կամավորության ընդհանուր չափանիշի շրջանակում: Frazier v. Cupp գործով դատարանը չձևակերպեց խաբուսիկ հարցաքննության ընդհանուր արգելք և հարցը լուծեց գործի բոլոր հանգամանքների ամբողջական գնահատմամբ[15]: Այդ մոտեցումը դատարանին թողնում է լայն հայեցողություն՝ որոշելու, թե տվյալ դեպքի խաբուսիկ մեթոդն արդյոք վերածվել է հարկադրանքի:

Ամերիկյան հարցաքննության ավանդական մոդելում կարևոր տեղ է զբաղեցրել Reid

---

[12] Տե՛ս Allan v. the United Kingdom, no. 48539/99, European Court of Human Rights, Judgment of 5 November 2002 թ.

[13] Տե՛ս Gudjonsson G. H., The Psychology of Interrogations and Confessions: A Handbook, John Wiley & Sons, Chichester, 2003 թ., էջեր 1–38.

[14] Տե՛ս Kassin S. M., «False Confessions: Causes, Consequences, and Implications for Reform», Policy Insights from the Behavioral and Brain Sciences, Vol. 1, No. 1, SAGE Publications, 2014 թ., էջեր 112–121,

[15] Տե՛ս Frazier v. Cupp, 394 U.S. 731, Supreme Court of the United States, 1969 թ.

Technique-ը, որն ուղղված է խոստովանություն ստանալուն և թույլ է տալիս որոշակի խաբուսիկ մեթոդների կիրառում[16]: Սակայն ժամանակակից իրավահոգեբանական գրականության մեջ այդ մոտեցումը քննադատվում է, քանի որ այն կարող է ուժեղացնել մեղավորության կանխադրույթը և նվազեցնել անմեղ անձանց պաշտպանական կարողությունը: Այս առումով Ռ. Լեոն հարցաքննության համակարգի հիմնական ռիսկը տեսնում է հենց խոստովանության նկատմամբ գերկենտրոնացվածության մեջ[17]:

Միաժամանակ, գիտական քննարկման մեջ առկա է նաև բլեֆի կամ որոշ խաբուսիկ մեթոդների նկատմամբ ավելի թույլատրական դիրքորոշում: Ամերիկյան իրավական ավանդույթում Frazier v. Cupp գործը խաբուսիկ հայտարարությունը չի դիտարկել որպես ինքնին խոստովանության անընդունելիության հիմք, իսկ Reid Technique-ի դասական մոտեցումը որոշակի խաբուսիկ միջոցներ դիտարկել է որպես գործնական հարցաքննության գործիք՝ պայմանով, որ դրանք չեն վերածվում անթույլատրելի հարկադրանքի: Այդ դիրքորոշման ուժեղ կողմը քննության գործնական պահանջների հաշվառումն է, սակայն դրա սահմանափակումը ՀՀ իրավակարգի համար ակնհայտ է. ամերիկյան «կամավորության ընդհանուր գնահատման» չափանիշը չի կարող մեխանիկորեն փոխարինել գործող ՀՀ ՔԴՕ 18-րդ հոդվածի 8-րդ մասի ուղղակի օրենսդրական արգելքին:

Եվրոպական մոտեցումը, ի տարբերություն ամերիկյանի, ավելի զգուշավոր է այն մեթոդների նկատմամբ, որոնք կարող են խաթարել անձի դատավարական ինքնավարությունը: Jalloh v. Germany և Gäfgen v. Germany գործերը բլեֆի կամ կեղծ ապացույցի մարտավարության վերաբերյալ գործեր չեն, ուստի դրանցից բլեֆի ուղղակի արգելք բխեցնել հնարավոր չէ: Դրանց նշանակությունն այստեղ ավելի նեղ է. ՄԻԵԴ-ը ցույց է տալիս, որ ապացույցի կամ տեղեկության ստացման եղանակը կարող է ինքնուրույն ազդեցություն ունենալ վարույթի արդարացիության գնահատման վրա, հատկապես՝ երբ ներգործությունը շոշափում է անձի կամքի ազատությունը կամ հիմնարար իրավունքները[18]:

Եվրոպական քննության ժամանակակից մոդելներում առավել մեծ արժեք է տրվում տեղեկատվություն հավաքող հարցաքննությանը, ո՛չ թե խոստովանություն կորզող մոտեցմանը: Այդ տրամաբանությանն է մոտ PEACE մոդելը, որի հիմքում դրված են նախապատրաստումը, բաց հարցերը, ակտիվ լսելը և ստուգելի տեղեկության հավաքումը[19]: Համակարգված մետավերլուծությունը ևս ցույց է տվել, որ տեղեկատվություն հավաքող մոտեցումները փորձարարական պայմաններում պահպանում կամ որոշ դեպքերում բարձրացնում են ճշմարիտ խոստովանությունների հավա-

---

[16] Տե՛ս Inbau F. E., Reid J. E., Buckley J. P., Jayne B. C., Criminal Interrogation and Confessions, 5th ed., Jones & Bartlett Learning, Burlington, 2013 թ

[17] Տե՛ս Leo R. A., Police Interrogation and American Justice, Harvard University Press, Cambridge, 2008 թ.

[18] Տե՛ս Jalloh v. Germany [GC], no. 54810/00, European Court of Human Rights, Judgment of 11 July 2006 թ.; Gäfgen v. Germany [GC], no. 22978/05, European Court of Human Rights, Judgment of 1 June 2010 թ.

[19] Տե՛ս Williamson T. (ed.), Investigative Interviewing: Rights, Research, Regulation, Willan Publishing, Cullompton, 2006 թ.

նականությունը՝ միաժամանակ նվազեցնելով կեղծ խոստովանությունների հավանականությունը, մինչդեռ մեղադրական մոտեցումները կարող են բարձրացնել և՛ ճշմարիտ, և՛ կեղծ խոստովանությունների մակարդակը: Միաժամանակ, հեղինակներն զգուշացնում են անկախ ընտրանքների սահմանափակ քանակի պատճառով չափազանց լայն ընդհանրացումներից[20]:

ԱՄՆ և եվրոպական մոտեցումների տարբերությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. ամերիկյան մոդելում առանցքային հարցը հաճախ այն է, թե խաբուսիկ մեթոդը գործի բոլոր հանգամանքներով փաստացի հարկադրել է անձին, իսկ եվրոպական իրավական տրամաբանության մեջ ավելի մեծ կշիռ ունի նաև պետական մեթոդի համատեղելիությունը դատավարական արդարության և անձի ինքնավարության երաշխիքների հետ: ՀՀ իրավակարգը, սակայն, ունի լրացուցիչ առանձնահատկություն՝ 18-րդ հոդվածի 8-րդ մասով խաբեությամբ տեղեկություն ստանալու ուղղակի արգելքը: Ուստի ամերիկյան թույլատրական մոդելը մեխանիկորեն ներմուծելի չէ. Նախ՝ պետք է պարզել՝ կոնկրետ տակտիկան «խաբեությո՞ւն» է գործող օրենսգրքի իմաստով, և միայն այն մեթոդների դեպքում, որոնք այդ շեմը չեն հատում, անցնել կամավորության ու հուսալիության աստիճանային գնահատմանը:

Բլեֆի խնդիրն իրավականից բացի ունի նաև բարոյագիտական հարթություն: Քրեական վարույթում պետությունը հանդես է գալիս ոչ թե սովորական կողմի, այլ հանրային իշխանության կրողի կարգավիճակով: Այդ պատճառով քննիչի վարքագիծը պետք է գնահատվի ոչ միայն արդյունավետության, այլև պետական իշխանության բարեխղճության և արդարադատության նկատմամբ հանրային վստահության տեսանկյունից:

Ուտիլիտար մոտեցումը կարող է պնդել, որ բլեֆը թույլատրելի է, եթե այն նպաստում է ծանր հանցագործության բացահայտմանը և կանխում է ավելի մեծ վնաս: Սակայն դեոնթոլոգիական մոտեցումը հիշեցնում է, որ անձը չի կարող դիտարկվել միայն որպես միջոց, իսկ պետությունը չպետք է քրեական արդարադատությունը կառուցի մոլորեցման և մանիպուլյացիայի վրա[21]:

Այս երկու մոտեցումների միջև հավասարակշռությունը պահանջում է սահմանազատում: Բոլոր տակտիկական հնարքները բարոյապես դատապարտելի չեն: Քննիչը կարող է չբացահայտել քննության ամբողջական տեղեկությունները, ընտրել հարցադրումների հաջորդականությունը կամ ստեղծել տակտիկական անորոշություն: Սակայն բարոյագիտական սահմանը խախտվում է այն դեպքում, երբ պետությունը հարցաքննվողին ներկայացնում է իրականում գոյություն չունեցող ապացույցի պատրանք և այդ միջոցով ստանում է ինքնամեղադրող տեղեկություն:

---

[20] Տե՛ս Meissner C. A., Redlich A. D., Michael S. W., Evans J. R., Camilletti C. R., Bhatt S., Brandon S., «Accusatorial and Information-Gathering Interrogation Methods and Their Effects on True and False Confessions: A Meta-Analytic Review», Journal of Experimental Criminology, Vol. 10, No. 4, 2014, pp. 459–486,

[21] Տե՛ս Kant I., Groundwork of the Metaphysics of Morals, first published 1785; Mill J. S., Utilitarianism, first published 1861.

Հետևաբար, բլեֆի բարոյագիտական չափանիշը պետք է լինի հետևյալը. որքան ավելի շատ է քննիչի մեթոդը հեռանում տակտիկական անորոշությունից և մոտենում իրականության ակտիվ կեղծմանը, այնքան ավելի բարձր է դրա բարոյական անընդունելիության աստիճանը: Այս չափանիշը համընկնում է նաև քրեադատավարական գնահատմանը, քանի որ իրականության ակտիվ կեղծումը բարձրացնում է ինչպես կեղծ խոստովանության, այնպես էլ ապացույցի անթույլատրելիության ռիսկը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը «բլեֆ» եզրույթով հատուկ դրույթ չի պարունակում, սակայն դրա բացակայությունը չի ստեղծում իրավական չեզոք գոտի: Օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասն արգելում է անձից տեղեկություններ ստանալ բռնության, սպառնալիքի, խաբեության, իրավունքների ոտնահարման կամ այլ անօրինական գործողությունների միջոցով: Հետևաբար, իրավական հարցը բլեֆը՝ որպես տակտիկական պիտակ, թույլատրելի կամ արգելված հայտարարելը չէ, այլ՝ կոնկրետ գործողության համապատասխանությունը «խաբեություն» հասկացությանը: Այս տարբերակումը հատկապես կարևոր է, որովհետև տեղեկության չբացահայտումը կամ տակտիկական լռությունն ինքնին դեռևս նույնը չէ, ինչ գոյություն չունեցող մեղադրական փաստի հաստատական ներկայացումը:

Օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները և դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքով ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց: Ուստի, եթե կոնկրետ բլեֆն իրավական որակմամբ հասնում է 18-րդ հոդվածի 8-րդ մասով արգելված խաբեության մակարդակին, դրանից ստացված տվյալների անթույլատրելիության հարցը չի կարող «բուժվել» միայն այն պատճառով, որ խոստովանության որոշ դրվագներ հետագայում հաստատվել են անկախ ապացույցներով: Անկախ ապացույցները կարող են ինքնուրույն հաստատել համապատասխան փաստը, բայց չեն օրինականացնում օրենքի էական խախտմամբ ստացված ցուցմունքը:

Միևնույն ժամանակ, 18-րդ հոդվածի 8-րդ մասի կիրառումը չպետք է ընդլայնվի այնքան, որ «խաբեություն» համարվի քննիչի յուրաքանչյուր տակտիկական լռություն, ապացույցների ամբողջ ծավալը չբացահայտելը կամ հարցերի նպատակային հաջորդականությունը: Այդպիսի մոտեցումը կջնջեր սահմանն օրինական քննչական տակտիկայի և արգելված տեղեկատվական մանիպուլյացիայի միջև: Առաջարկվող չափանիշն այն է, թե քննիչը պարզապես չի բացահայտել իր ունեցած տեղեկությունը, թե՞ գիտակցաբար ստեղծել է էական կեղծ փաստական իրողություն, որի վրա հարցաքննվողը կարող էր հիմնավոր կերպով կառուցել իր վարքագծային որոշումը:

ՀՀ իրավունքի համար, այսպիսով, առաջարկվում է ոչ թե ինքնաբավ «բազմագործոն մոդել», այլ չորս բաղադրիչից կազմված գնահատման կառուցակարգ, որը գործում է օրենսգրքի 18-րդ և 97-րդ հոդվածների շրջանակում: Դրա նպատակը դատավորին, դատախազին կամ քննիչին տալն է նույնական հարցերի հաջորդականություն, որպեսզի «բլեֆ» ընդհանուր բառը փոխարինվի ստուգելի իրավական չափանիշներով:

* Ներգործության ինտենսիվություն. պետք է որոշել՝ քննիչը միայն պահպանել է տակտիկական անորոշություն, ակնարկել է ապագայում ստուգվելիք ապացույցի մասին, թե՞ հաստատական կերպով ներկայացրել է գոյություն չունեցող մեղադրական փաստ կամ ապացույց. ինտենսիվության աճը մեծացնում է ինչպես 18-րդ հոդվածի 8-րդ մասով «խաբեություն» որակելու, այնպես էլ կամավորության խաթարման ռիսկը:

* Հարցաքննվողի խոցելիություն. գնահատվում են տարիքը, մտավոր կամ հոգեբանական առանձնահատկությունները, ենթարկվողականությունը, պաշտպան ունենալու փաստը, հարցաքննության տևողությունն ու պայմանները: Խոցելիությունը ինքնուրույն չի դարձնում յուրաքանչյուր տակտիկա անթույլատրելի, սակայն նույն ներգործության իրավական և փաստական կշիռը խոցելի անձի նկատմամբ կարող է էապես բարձր լինել[22]:

* Բլեֆի առարկա. առավել բարձր ռիսկ ունեն այն պնդումները, որոնց օբյեկտիվ հեղինակությունը հարցաքննվողի համար առանձնապես մեծ է՝ ԴՆԹ տվյալ, տեսագրություն, փորձագիտական եզրակացություն կամ այլ անձի արդեն տրված խոստովանություն: Այստեղ պետք է տարբերակել ապագայում ստուգվելիք ապացույցի վերաբերյալ bluff tactic-ը և գոյություն չունեցող արդեն իսկ մեղադրական ապացույցի ներկայացումը՝ false evidence ploy-ը[23]:

* Անկախ հաստատելիություն. եթե մեթոդն ինքնին չի որակվել որպես 18-րդ հոդվածի 8-րդ մասով արգելված խաբեություն, ապա բլեֆից հետո ստացված տեղեկության հուսալիությունն ու ապացուցողական կշիռը պետք է ստուգվեն անկախ, վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցներով: Այս գործոնը վերաբերում է նախ և առաջ հուսալիությանը և կշռին, այլ ոչ թե արդեն իսկ անօրինական եղանակով ստացված ցուցմունքի թույլատրելիությունը հետադարձորեն վերականգնելուն:

* Կառուցակարգը կիրառվում է հաջորդական, այլ ոչ թե թվաբանական եղանակով: Առաջին փուլում որոշվում է մեթոդի իրավաչափությունը. եթե քննիչի վարքագիծը կազմում է 18-րդ հոդվածի 8-րդ մասով արգելված խաբեություն, ապա 97-րդ հոդվածի հետևանքները քննարկվում են անկախ մյուս գործոնների «դրական» գնահատականից: Երկրորդ փուլում, եթե այդ արգելքի շեմը չի հատվել, ներգործության ինտենսիվությունը և անձի խոցելիությունը գնահատվում են կամավորության ու հուսալիության տեսանկյունից: Երրորդ փուլում ստուգվում է ստացված տեղեկության անկախ հաստատելիությունը և ապացուցողական կշիռը: Հետևաբար, օրինակ՝ բարձր ինտենսիվության արգելված խաբեությամբ ստացված ցուցմունքը չի դառնում թույլատրելի միայն անկախ ապացույցների առկայությամբ, իսկ խոցելի անձի նկատմամբ բլեֆի կիրառումը, եթե ընդհանրապես չի հանգեցրել ապացուցողական

---

[22] Տե՛ս Gudjonsson G. H., The Psychology of Interrogations and Confessions: A Handbook, John Wiley & Sons, Chichester, 2003 թ., էջեր՝ 1–38, 120–147, 364–417.; Kassin S. M., Drizin S. A., Grisso T., Gudjonsson G. H., Leo R. A., Redlich A. D., «Police-Induced Confessions: Risk Factors and Recommendations», Law and Human Behavior, Vol. 34, No. 1, 2010, pp. 3–38,

[23] Տե՛ս Perillo J. T., Kassin S. M., «Inside Interrogation: The Lie, The Bluff, and False Confessions», Law and Human Behavior, Vol. 35, No. 4, Տես Springer, 2011 թ., էջեր 327–337,

տվյալ ստանալուն, ինքնին ապացույցի անթույլատրելիության հարց չի առաջացնում, թեև կարող է նշանակություն ունենալ մեթոդի օրինականության կամ մասնագիտական-բարոյագիտական գնահատման համար։

Այս կառուցակարգի գիտական նորույթը ոչ թե չորս գործոնների առանձին գոյության արձանագրումն է, այլ դրանց իրավական գործառույթների տարանջատումը և որոշումների հաջորդականության ձևակերպումը։ Դրանով հնարավոր է խուսափել երկու հակադիր սխալներից՝ մի կողմից՝ յուրաքանչյուր տակտիկական անորոշություն «խաբեություն» համարելուց, մյուս կողմից՝ արգելված կեղծ փաստական ներկայացումը պարզապես «բարձր ռիսկային» մեթոդ անվանելով օրինականության հարցը հուսալիության հարցով փոխարինելուց։

Հետազոտության արդյունքներով նպատակահարմար է ձևակերպել հետևյալ գիտագործնական առաջարկությունները.

* ՀՀ քրեական դատավարության տեսության մեջ բլեֆը պետք է դիտարկել ոչ թե որպես սովորական տակտիկական հնարք, այլ որպես ապացույցի ձևավորման պայմանների վրա ազդող ռիսկային ներգործություն,

* դատական պրակտիկայում բլեֆի կիրառմամբ ստացված ցուցմունքների գնահատման ժամանակ պետք է ստուգվի ոչ միայն ցուցմունքի բովանդակությունը, այլև դրա ձևավորման մեխանիզմը,

* քննիչների և դատախազների մեթոդական ուղեցույցներում անհրաժեշտ է հստակ տարբերակել տակտիկական անորոշությունը, bluff tactic-ը և false evidence ploy-ը՝ նախատեսելով, որ գոյություն չունեցող մեղադրական ապացույցի, պատրաստի փորձագիտական եզրակացության կամ այլ անձի խոստովանության մասին գիտակցված կեղծ պնդումը պետք է նախ գնահատվի ՀՀ ՔԴՕ 18-րդ հոդվածի 8-րդ մասի «խաբեությամբ տեղեկություն ստանալու» արգելքի տեսանկյունից, իսկ դրա արդյունքում ստացված տվյալների թույլատրելիությունը՝ 97-րդ հոդվածի պահանջներով,

* անհրաժեշտ է խթանել հարցաքննության տեղեկատվություն հավաքող մոդելների կիրառումը՝ նվազեցնելով խոստովանության վրա կենտրոնացած մեթոդների գերակայությունը,

* առանձին հետազոտության առարկա պետք է դարձնել բլեֆի կիրառումն անչափահասների, հոգեբանական խոցելիություն ունեցող անձանց և պաշտպան չունեցող կասկածյալների նկատմամբ։

Այսպիսով՝ բլեֆը քրեական վարույթում չի կարող գնահատվել միայն այն հարցով, թե այն արդյունավետ է, թե՝ ոչ։ Քրեական արդարադատության համար վճռորոշ է ոչ թե խոստովանության ստացման փաստը, այլ այն, թե արդյոք այդ խոստովանությունը ձևավորվել է իրավաչափ, արժանահավատ և դատավարականորեն ընդունելի պայմաններում։

Կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ «բլեֆ» ընդհանուր անվանումն իրավական գնահատման համար բավարար չէ։ Այն ընդգրկում է որակապես տարբեր

վարքագծեր՝ օրինական տակտիկական անորոշությունից մինչև գոյություն չունեցող մեղադրական ապացույցի ուղղակի կեղծ ներկայացում: ՀՀ իրավակարգում առաջնային սահմանը պետք է անցկացնել գործող ՔԴՕ 18-րդ հոդվածի 8-րդ մասով արգելված խաբեության և այդ շեմը չհատող տակտիկական վարքագծի միջև: Եթե շեմը հատվել է, կիրառելի է ապացույցների անթույլատրելիության ռեժիմը՝ 97-րդ հոդվածի պահանջներով, և անկախ հաստատող ապացույցների առկայությունը չի վերացնում սկզբնական տվյալների անօրինական ձեռքբերման հետևանքը: Եթե շեմը չի հատվել, ապա ներգործության ինտենսիվությունը, անձի խոցելիությունը, բլեֆի առարկան և ստացված տեղեկության անկախ հաստատելիությունը պետք է օգտագործվեն կամավորության, հուսալիության ու ապացուցողական կշռի կառուցակարգված գնահատման համար: Այս տարբերակումը թույլ է տալիս միաժամանակ պահպանել օրինական քննչական տակտիկայի գործիքակազմը և բացառել «բլեֆ» բառի տակ օրենքով արգելված խաբեության փաստացի օրինականացումը:

ПРИМЕНЕНИЕ СЛЕДОВАТЕЛЕМ БЛЕФА КАК ТАКТИЧЕСКОГО ПРИЁМА: ПРОБЛЕМЫ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОЙ И ЭТИЧЕСКОЙ ОЦЕНКИ

АЛЕКСАНДР КОЧУБАЕВ
кандидат юридических наук,
руководитель Департамента уголовной защиты юридической компании «Контра», член Палаты адвокатов Республики Армения, адвокат, преподаватель кафедры публичного и международного права Европейского университета Армении

Аннотация. В статье рассматривается применение следователем блефа в качестве следственного тактического приёма в контексте уголовно-процессуальной и этической оценки. Обосновывается, что отправной точкой правовой оценки блефа являются не его эффективность или само обозначение «блеф», а конкретное содержание применённого информационного воздействия, его влияние на добровольность и достоверность показаний, а также его соотношение с запретом получения информации путём обмана, предусмотренного частью 8 статьи 18 Уголовно-процессуального кодекса Республики Армения.

Научная новизна исследования заключается в объединении известных факторов риска — интенсивности воздействия, уязвимости допрашиваемого, предмета блефа и возможности независимого подтверждения полученной информации — в единый механизм оценки в уголовно-процессуальной системе Республики Армения, а также в разграничении различных правовых последствий каждого из этих факторов.

Ключевые слова: блеф, допрос, следственная тактика, ложное признание, добровольность показаний, допустимость доказательств, процессуальная автономия, этическая оценка.

THE USE OF BLUFFING BY AN INVESTIGATOR AS A TACTICAL TECHNIQUE: ISSUES OF CRIMINAL PROCEDURAL AND ETHICAL ASSESSMENT

ALEXANDER KOCHUBAEV
PhD in Law, Head of the Criminal Defense Department at Contra Law Firm,
Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia, Attorney-at-Law,
Lecturer at the Chair of Public and International Law, European University of Armenia

---

Abstract: The article examines the use of bluffing by an investigator as an investigative tactical technique in the context of criminal procedural and ethical assessment. It argues that the starting point for the legal assessment of bluffing is neither its effectiveness nor the label "bluff," but rather the specific content of the informational influence employed, its impact on the voluntariness and reliability of statements, and its relationship to the prohibition on obtaining information through deception under Article 18(8) of the Criminal Procedure Code of the Republic of Armenia. The scientific contribution of the study lies in integrating established risk factors, namely the intensity of influence, the vulnerability of the person being questioned, the subject matter of the bluff, and the independent verifiability of the information obtained, into a unified assessment framework within the Armenian criminal procedural system, while distinguishing their different legal consequences.

Key words: bluffing, interrogation, investigative tactics, false confession, voluntariness of statements, admissibility of evidence, procedural autonomy, ethical assessment.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԵՐ

1. Frazier v. Cupp, 394 U.S. 731, Supreme Court of the United States, 1969 թ.

2. Perillo J. T., Kassin S. M., «Inside Interrogation: The Lie, The Bluff, and False Confessions», Law and Human Behavior, Vol. 35, No. 4, Springer, 2011 թ., էջեր 327–337, DOI: 10.1007/s10979-010-9244-2.

3. Gudjonsson G. H., The Psychology of Interrogations and Confessions: A Handbook, John Wiley & Sons, Chichester, 2003 թ., օգտագործված էջեր՝ 1–38, 120–147, 364–417.

4. Barnes B., Myers B., Pond R. S., Meyer K., «The Influence of False Evidence Ploy Variants on Perceptions of Coercion and Deception», Journal of Forensic Psychology Research and Practice, Vol. 24, No. 4, Routledge/Taylor & Francis, 2024 թ., էջեր 500–523, DOI: 10.1080/24732850.2023.2178992.

5. John Murray v. the United Kingdom, no. 18731/91, European Court of Human Rights, Judgment of 8 February 1996 թ.; Saunders v. the United Kingdom, no. 19187/91, European Court of Human Rights, Judgment of 17 December 1996 թ.

6. Allan v. the United Kingdom, no. 48539/99, European Court of Human Rights, Judgment of 5 November 2002 թ.

7. Gudjonsson G. H., The Psychology of Interrogations and Confessions: A Handbook, John Wiley & Sons, Chichester, 2003 թ., էջեր 1–38.

8. Kassin S. M., «False Confessions: Causes, Consequences, and Implications for Reform», Policy Insights from the Behavioral and Brain Sciences, Vol. 1, No. 1, SAGE Publications, 2014 թ., էջեր 112–121, DOI: 10.1177/2372732214548678.

9. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն, ընդունված՝ 30.06.2021 թ., ուժի մեջ՝ 01.07.2022 թ., գործող խմբագրությամբ, օգտագործված հոդվածներ՝ 18, 22, 97:

10. Inbau F. E., Reid J. E., Buckley J. P., Jayne B. C., Criminal Interrogation and Confessions, 5th ed., Jones & Bartlett Learning, Burlington, 2013 թ.

11. Leo R. A., Police Interrogation and American Justice, Harvard University Press, Cambridge, 2008 թ.

12. Jalloh v. Germany [GC], no. 54810/00, European Court of Human Rights, Judgment of 11 July 2006 թ.; Gäfgen v. Germany [GC], no. 22978/05, European Court of Human Rights, Judgment of 1 June 2010 թ.

13. Williamson T. (ed.), Investigative Interviewing: Rights, Research, Regulation, Willan Publishing, Cullompton, 2006 թ.

14. Kant I., Groundwork of the Metaphysics of Morals, first published 1785; Mill J. S., Utilitarianism, first published 1861.

15. Kassin S. M., Drizin S. A., Grisso T., Gudjonsson G. H., Leo R. A., Redlich A. D., «Police-Induced Confessions: Risk Factors and Recommendations», Law and Human Behavior, Vol. 34, No. 1, 2010, pp. 3–38, DOI: 10.1007/s10979-009-9188-6.

16. Meissner C. A., Redlich A. D., Michael S. W., Evans J. R., Camilletti C. R., Bhatt S., Brandon S., «Accusatorial and Information-Gathering Interrogation Methods and Their Effects on True and False Confessions: A Meta-Analytic Review», Journal of Experimental Criminology, Vol. 10, No. 4, 2014, pp. 459–486, DOI: 10.1007/s11292-014-9207-6.

17. ՀՀ Վճռաբեկ դատարանի 12.02.2021 թ. որոշում, քրեական գործ թիվ ԼԴ2/0062/01/18 (Հրաչ Առաքելյանի գործ):

Հոդվածը գրախոսվել է 13.07.2026թ.
Ներկայացվել է տպագրության 21.07.2026թ.

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան
DOI: 10.63925/18294847-2026.blj22-04

Ամփոփագիր: Հոդվածում հիմնավորվում է, որ քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երկու հարաբերականորեն ինքնուրույն փուլից՝ նախաքննության փուլից և նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլից: Հեղինակը քննադատում է այն մոտեցումը՝ ըստ որի նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեությունը համարվում է նախաքննության փուլի եզրափակիչ մաս: Վերլուծելով դոկտրինալ չափանիշները (փուլի անմիջական խնդիր, սուբյեկտային կազմ, դատավարական ձև, ժամկետներ, փուլը եզրափակող ակտ)՝ հեղինակը ցույց է տալիս, որ դատախազական վերստուգումն օժտված է դատավարության փուլին հատուկ բոլոր հատկանիշներով:

Իրավահամեմատական վերլուծությունը (Լատվիա, Բուլղարիա, Չինաստան, Իսպանիա) ցույց է տալիս, որ տարբեր իրավական համակարգերում քննության ավարտից հետո դատախազի գործունեությունը ճանաչվում է որպես դատավարության ինքնուրույն փուլ:

ՀՀ քրեական դատավարությունում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն ունի դրսևորման երկու ձև՝ կախված նրանից, թե քննիչը դատախազին ինչ ակտ է ներկայացրել՝ 1) դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծում (երբ ներկայացվում է մեղադրական եզրակացություն), 2) քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծում (երբ ներկայացվում է վարույթը կարճելու մասին որոշում): Երկու դեպքում էլ դատախազը կատարում է նույն գլխավոր գործառույթը՝ վերստուգում է նախաքննության արդյունքները, սակայն յուրաքանչյուր ձև ունի իր առանձնահատկությունները (գործառույթներ, լիազորություններ, միջնորդությունների քննարկման կարգ), և ավարտվում է փուլին բնորոշ եզրափակիչ որոշմամբ:

Առանձին ուշադրություն է դարձվում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում դատախազի երկակի կարգավիճակին և դրա սահմանադրականությանը:

Հիմնաբառեր: Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգում, քրեական դատավարության փուլ, մինչդատական վարույթ, դատախազի կարգավիճակ, խափանման միջոց, մեղադրական եզրակացություն:

§ 1. Ընդհանուր դրույթներ

Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն կազմելով կամ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով (դրանք և վարույթի նյութերը հսկող դատախազին հանձնելով), սակայն դրանով մինչդատական վարույթը չի եզրափակվում, քանի որ մեղադրական եզրակացությունը կամ վարույթը կարճելու մասին որոշումը վարույթի նյութերի հետ միասին դատախազին հանձնելուց հետո ծագում է մի ժամանակահատված, որի ընթացքում դատախազը և վարույթի մյուս մասնակիցներն իրականացնում են որոշակի դատավարական գործունեություն, և առաջանում են դատավարական հարաբերություններ:

Սույն աշխատանքում կփորձենք հիմնավորել այն թեզը, որ մինչդատական վարույթը՝ որպես համակարգ, բաղկացած է երկու հարաբերականորեն ինքնուրույն փուլից՝ նախաքննության փուլից և նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլից[1]: Վերջինս, կախված վերստուգման օբյեկտից, իրականացվում է մի դեպքում դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով, մեկ այլ դեպքում՝ քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով:

§ 2. Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի ճանաչման դոկտրինալ և իրավահամեմատական տեսանկյունները

2.1. Դոկտրինալ տեսանկյունը

Քրեական դատավարության գիտության մեջ հստակեցված չէ այն հարցը, թե նախաքննության ավարտից հետո դատախազի ստուգողական գործունեության ժամանակահատվածը մինչդատական վարույթի համակարգում ինչ տեղ է զբաղեցնում:

Քրեական դատավարության դասագրքերում սովորաբար նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածը միաձուլվում է նախաքննության փուլի հետ. այն համարվում է նախաքննության փուլի եզրափակիչ մասը: Սակայն ժամանակակից դատավարագիտության մեջ քննարկվում է մեղադրական եզրակացությունն ստանալուց հետո դատախազական վարույթը որպես մինչդատական վարույթի առանձին փուլ դիտարկելու հարցը[2]:

Առանձին դատավարագետներ նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածը համարում են դատավարության ինքնուրույն փուլ: Այս մոտեցման կողմնակիցներն առաջարկում են այս փուլն անվանել դատախազի կողմից քրեական գործը դատարան հանձնելու փուլ[3], կամ մեղադրյալին դատի տալու

---

[1] Տեքստում կօգտագործվի նաև «դատախազական վերստուգման փուլ» անվանումը:

[2] Смирнов А. В., Калиновский К. Б. Уголовный процесс. учебник под общ. ред. А. В. Смирнова. 6-еизд., перераб. М.: Норма: ИНФРА-М. 2015. С. 377, Резяпов А. А. Окончание предварительного расследования с обвинительным заключением (актом, постановлением) и направление уголовного дела в суд: дис. … канд. юрид. наук. Ижевск, 2014. С. 28.

[3] Дикарев И.С. Модернизация системы досудебного производства в уголовном процессе // Правовая парадигма. 2017. Т. 16, № 2. С. 117-122.

փուլ[4], կամ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման փուլ[5]:

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի առանձնացման կողմնակիցների շարքին կարելի է դասել նաև այն հեղինակներին, ովքեր նշում են, որ նախաքննությունը (նախնական քննությունը) ավարտվում է ոչ թե դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելով կամ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ դատարան հանձնելով, այլ քննիչի կողմից մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ դատախազին հանձնելով[6]: Եթե նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերը դատախազին հանձնելով, ուստի դրանից հետո ծագող դատավարական հարաբերությունները չեն կարող համարվել նախաքննության (նախնական քննության) փուլի մաս:

Այն գիտնականները, որոնք նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեությունը չեն համարում մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ, ներկայացնում են երկու հիմնական պատճառ:

Նախ՝ նրանք կարծում են, որ մեղադրական եզրակացությունը հաստատելու հարցի լուծման կապակցությամբ դատախազի իրականացրած վարույթը քրեական դատավարության փուլ չէ, քանի որ այս ընթացքում դատախազը դատավարական իմաստով գործում է միայնակ, ուստի բացակայում է քրեական դատավարության փուլերին հատուկ սուբյեկտների համակարգը, որոնք միմյանց հետ դատավարական փոխհարաբերությունների մեջ են[7]:

Նշված մոտեցումն ընդունելի չէ: Դատախազը նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում թեև օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի և դատարանի, երբեմն նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ (այս մասին՝ հաջորդիվ):

Երկրորդ՝ նրանք, քրեական դատավարության փուլերի համակարգը որոշելիս օրենսդրության կառուցվածքին տալիս են վճռորոշ նշանակություն: Օրինակ՝ առանձին հեղինակներ նշում են, որ մեղադրական եզրակացությամբ ստացված նյութերով դատախազի գործողությունների և որոշումների վերաբերյալ նորմերը տեղադրված են ՌԴ ՔրԴՕ-ի «Նախնական քննություն» բաժնում, ուստի դրանով իսկ դրանք համարվում են նախնական քննության կառուցվածքի մաս[8]:

---

[4] Манова Н.С., Францифоров Ю.Ф. Процессуальная природа деятельности прокурора при окончании досудебного производства // Российский следователь. 2003. № 8. С. 36.

[5] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան: 2-րդ լրամշակված հրատ., Երևան, Լուսաբաց, 2017, էջ 30-31:

[6] Баранов А. М. Процессуальные ошибки на этапе окончания предварительного следствия и способы их исправления: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1992. С. 13-14.

[7] Уголовный процесс. Проблемные лекции / под ред. В. Т. Томина, И. А. Зинченко. М.: Юрайт, 2013. С. 82.

[8] Насонова И.А., Буров Ю.В. Процессуальный порядок окончания предварительного следствия с составлением обвинительного заключения. М.: Юрлитинформ, 2012. С. 22-23.

Այս մոտեցումը ևս ընդունելի չէ: «Քրեական դատավարության փուլ» ձևակերպումը դոկտրինալ, ոչ թե օրենսդրական հասկացություն է: Քրեական վարույթի որևէ ժամանակահատված (ընթացք) ճանաչվում է որպես քրեական դատավարության փուլ՝ ելնելով առաջին հերթին դոկտրինում մշակված չափանիշներից (փուլի անմիջական խնդիր, սուբյեկտային կազմ, դատավարական ձևի առանձնահատկություն, փուլը եզրափակող ակտի առկայություն և այլն): Օրենսդրության կառուցվածքը թեև կարող է ազդեցություն ունենալ դատավարության փուլի որոշման (ճանաչման) համար, սակայն դա չի կարող ունենալ վճռորոշ նշանակություն: Հաջորդիվ կներկայացվի, որ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման ընթացքը բավարարում է քրեական դատավարության փուլերին ներկայացվող դոկտրինալ հատկանիշներին:

2.2. Իրավահամեմատական տեսանկյունը

Իրավահամեմատական տեսանկյունից քրեական դատավարության մինչդատական վարույթը դատավարական փուլերի բաժանման վերաբերյալ օրինաչափություններ բացահայտելը բարդ է, եթե ոչ՝ անհնար, սակայն մեր ներկայացրած թեզը, ըստ որի՝ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգումը մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է, առավել համոզիչ դարձնելու նպատակով ներկայացնենք մի քանի երկրների դատավարական համակարգեր, որտեղ նման փուլի գոյությունն ստացել է լայն ճանաչում:

Լատվիա

Լատվիայի քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երկու մասից՝ նախաքննություն (Izmeklēšana), որը ներառում է ապացույցների հավաքումը, և քրեական հետապնդում (Kriminālvajāšana), որը ներառում է դատախազի գործունեությունը՝ կապված անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք ներկայացնելու հետ[9]: Դատախազը, քննչական մարմնից ստանալով վարույթի նյութերը, տասնօրյա ժամկետում սկսում է քրեական հետապնդում՝ անձի քրեական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելով: Այս փուլում դատախազը կարող է կայացնել գործը դատարան հանձնելու, քրեական վարույթը դադարեցնելու մասին որոշում կամ օրենքով նախատեսված՝ այլ որոշումներ[10]:

Լատվիայի քրեական դատավարությունում «քրեական հետապնդումը» (krimināl vajāšana) մինչդատական վարույթի երկրորդ ինքնուրույն փուլն է, որի ընթացքում վարույթն իրականացնում է դատախազը: Այս փուլն ունի հստակ ժամկետներ և նպատակ ունի պարզելու գործը դատարան հանձնելու հիմքերի առկայությունը:

Բուլղարիա

Բուլղարիայի քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երկու փուլից՝ նախնական քննություն և դատախազի գործունեությունը նախնական

---

[9] Уголовный процесс европейских государств : монография. Под ред. В. И. Самарина, В. В. Луцика. М.: Проспект, 2018. С. 433.

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 456:

քննության ավարտից հետո: Որոշ հետազոտողներ առանձնացնում են նաև մինչդատական վարույթի բացումը, որը նման է ՀՀ դատավարական համակարգում գործող քրեական վարույթ նախաձեռնելուն, սակայն գիտնականների մեծ մասի կարծիքով այն չի համարվում մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ[11]:

Քննությունն ավարտելուց հետո՝ մինչ գործը դատախազին ուղարկելը, քննիչը կամ հետաքննիչը կազմում է գրավոր կարծիք: Այդ կարծիքում կարող է արձանագրվել, որ.

1) մեղադրանքն ապացուցված է, և մեղադրյալը պետք է հանձնվի դատարան.

2) առկա են վարույթը կարճելու հիմքեր (Բուլղարիայի ՔրԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մաս) կամ մեղադրյալի մասնակցությունը հանցանքի կատարմանը լիակատար հավաստիությամբ ապացուցված չէ.

3) առկա են վարույթը կասեցնելու հիմքեր՝ հանցագործությունը կատարած անձը չի հայտնաբերվել, կամ կարևոր ականատեսը երկար ժամանակ բացակայում է երկրից (Բուլղարիայի ՔրԴՕ 25-րդ, 26-րդ հոդվածներ):

Գրավոր կարծիքը կազմելուց անմիջապես հետո այդ կարծիքը վարույթի նյութերի հետ միասին հանձնվում է դատախազին, որից հետո սկսվում է մինչդատական վարույթի երկրորդ փուլը՝ դատախազի գործունեությունը նախնական քննության ավարտից հետո, որը բաժանվում է երկու հիմնական մասի՝ քննության որակի ստուգում և ստացված նյութերի հիման վրա որոշման կայացում: Որոշում կայացնելու համար դատախազին տրվում է մեկ ամիս ժամկետ:

Եթե դատախազն ստուգման ընթացքում հայտնաբերում է էական դատավարական խախտումներ, նա կարող է հանձնարարություն տալ քննություն իրականացնող մարմնին վերացնել դրանք կամ ինքը պետք է դրանք վերացնի: Եթե անհրաժեշտ է լրացուցիչ քննչական գործողությունների կատարում, դատախազը երկարաձգում է քննության ժամկետը:

Դատախազն իր որոշմամբ կարող է կարճել կամ կասեցնել վարույթը: Եթե դատախազը հաստատում է, որ բացակայում են վարույթը կասեցնելու կամ կարճելու հիմքեր, օբյեկտիվ ճշմարտությունը հաստատելու համար ձեռք են բերվել բավարար ապացույցներ, և քննության ընթացքում թույլ չեն տրվել էական դատավարական խախտումներ, ապա նա կազմում է մեղադրական ակտ: Մեղադրական ակտը դատարան ներկայացնելը համարվում է դատարանում մեղադրանք առաջադրել և դատական փուլի սկիզբը: Բուլղարացի դատավարագետները մեղադրական ակտը դիտարկում են որպես դատախազի ներկայացրած քրեական հայց, որով նա մրցակցային դատավարությունում ճանաչվում է որպես ամբաստանյալի հետ հավասար կողմ[12]:

Չինաստան

Չինաստանի քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երեք փուլից՝ 1) գործի հարուցում (հանցանքի մասին հաղորդում տալու փուլ), 2)

---

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 660:
[12] Տե՛ս նույն տեղում, էջ 685-687:

նախաքննություն, 3) հանրային մեղադրանքի առաջադրում: Չինական քրեադատավարական դոկտրինում ճանաչում ունի այն մոտեցումը, որ հանրային մեղադրանքի առաջադրումը, որը երբեմն անվանում են նաև հանրային մեղադրանքի հարուցում, մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է[13]:

Հանրային մեղադրանք առաջադրել ասելով հասկացվում է դատախազի դատավարական գործունեությունը, որի ընթացքում ժողովրդական դատախազությունը պետության անունից որոշում է կայացնում դատական քննության հանձնելու համար կասկածյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ կամ, եթե հիմքեր չկան, ավարտում է քրեական հետապնդումը (այսինքն՝ որոշում է մեղադրանք չառաջադրել)[14]:

Հանրային մեղադրանքի հարուցումը մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է, քանի որ այն բավարարում է դատավարության փուլերին ներկայացվող հատկանիշներին: Այս փուլի գլխավոր խնդիրն է ձևավորել դատախազի այն համոզմունքը, որ գործը դատարան ուղարկելն օրինական է, հիմնավորված և անհրաժեշտ: Այս փուլի անմիջական խնդիրներն են՝ նախաքննության (այդ թվում՝ հարկադրանքի միջոցների կիրառման) օրինականության ստուգումը, հավաքված ապացույցների նախնական գնահատումը, հանրային մեղադրանք առաջադրելու հիմքերի առկայության և քրեական պատասխանատվության ենթարկելուն խոչընդոտող հանգամանքների բացակայության ստուգումը[15]:

Այս փուլն սկսվում է այն պահից, երբ քրեական գործը՝ քննիչի կազմած նախաքննության ավարտի մասին արձանագրությամբ, և «հետապնդման մասին եզրակացության» կամ «ազատման մասին եզրակացության» հետ հանձնվում է համապատասխան ժողովրդական դատախազություն[16]:

Չինաստանի ՔրԴՕ-ի 172-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը եզրափակիչ դատավարական որոշումը պետք է կայացնի հետևյալ ժամկետներում՝ մեկ ամսվա ընթացքում (խոշոր կամ բարդ գործի դեպքում ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով) կամ 10 օրվա ընթացքում, եթե կասկածյալն ընդունում է իր մեղքը և համաձայնում է կրել պատիժը, և առկա են արագացված դատաքննության ընթացակարգի կիրառման պայմանները:

Դատախազը գործն ստուգելիս հարցաքննում է քրեական հետապնդման ենթարկվող կասկածյալին, լսում է պաշտպանի կամ հերթապահ փաստաբանի, տուժողի և տուժողի

---

[13] Հու Հաոքսին Քրեական հետապնդման և գործերի վերանայման կարգի մասին // Ցզյանսի նահանգի ոստիկանության ակադեմիայի ամսագիր, 2003, № 5, էջ 45-48 (չիներենով), Сумин А. А., Химичева О. В. Введение в современный уголовный процесс Китайской Народной Республики: монография. М.: Юрлитинформ, 2024. С. 19-20, 221.

[14] Сумин А. А., Химичева О. В. Введение в современный уголовный процесс Китайской Народной Республики: монография. М.: Юрлитинформ, 2024. С. 221.

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 221:

[16] Երբ քննիչը եզրակացնում է, որ առկա են նախաքննությունն ավարտելու բոլոր պայմանները, նա կազմում է երկու դատավարական փաստաթուղթ՝ առաջինը կոչվում է նախաքննության ավարտի մասին արձանագրություն, երկրորդը՝ հետապնդման մասին եզրակացություն, եթե կարծում է, որ առկա են գործը դատարան ուղարկելու հիմքեր, իսկ եթե առկա են վարույթը կարճելու հանգամանքներ, ապա կազմում է ազատման մասին եզրակացություն:

դատավարական ներկայացուցչի կարծիքները (Չինաստանի ՔրԴՕ 173-րդ հոդված)։ Այս փուլում դատախազը կարող է՝ պահանջել հանրային անվտանգության մարմնից տրամադրել դատական քննության համար անհրաժեշտ ապացույցներ, պահանջել հանրային անվտանգության մարմնից պարզաբանել ապացույցների հավաքման օրինականությունը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ապացույցները ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով (Չինաստանի ՔրԴՕ-ի 175-րդ հոդված)։

Հանրային մեղադրանքի առաջադրման փուլն ավարտվում է հետևյալ որոշումներից մեկի կայացմամբ՝

1) մեղադրական եզրակացություն.

2) մեղադրանք չառաջադրելու որոշում.

3) գործը լրացուցիչ քննության ուղարկելու որոշում:

Այն, որ Չինաստանի քրեական դատավարությունում մեղադրանքի առաջադրումը դատավարության ինքնուրույն փուլ է, հիմնավորվում է նաև Չինաստանի ՔրԴՕ-ի կառուցվածքով։ Այսպես՝ Չինաստանի ՔրԴՕ-ի երկրորդ մասը բաղկացած է երեք գլուխներից՝ գործի հարուցում (Chapter I: Filing a Case), քննություն (Chapter II: Investigation), հանրային մեղադրանքի առաջադրում (Chapter III: Initiation of Public Prosecution)[17]: Օրենսգրքի կառուցվածքում «Քննությունը» և «Հանրային մեղադրանքի առաջադրումը» առանձնացված են որպես ինքնուրույն գլուխներ, ինչը վկայում է այն մասին, որ օրենսդիրը քննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածը ևս ուղղակիորեն ճանաչել է որպես դատավարության ինքնուրույն փուլ:

Իսպանիա

Իսպանիայի քրեական դատավարությունը բաղկացած է քննության, միջանկյալ, գործը դատարանում քննելու և դատական վարույթի մյուս փուլերից: Միջանկյալ փուլը (*fase intermedia*) հաջորդում է քննության փուլին և նախորդում դատական քննության փուլին: Սա բնույթով նախապատրաստական (կազմակերպական) փուլ է: Միջանկյալ փուլն սկսվում է այն պահից, երբ քննչական դատավորը (*Juez de Instrucción, следственный судья*) գալիս է այն եզրակացության, որ կատարվել են բավարար քննչական գործողություններ, և հավաքվել են բոլոր անհրաժեշտ ապացույցները: Այդ դեպքում նա հայտարարում է քննությունն ավարտի մասին և կայացնում է համապատասխան ակտ:

Իսպանական քրեական դատավարության միջանկյալ փուլը որպես այդպիսին հստակ տարանջատված է միայն ընդհանուր (սովորական) տեսակի վարույթներում[18]:

Միջանկյալ փուլի ավարտին քննչական դատավորը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

---

[17] Criminal Procedure Law of the People's Republic of China (Amended in 2018) // https://www.lexiscn.com/law/law-english-1-3336194-T.html?eng=1

[18] Барабанов П.К. Уголовный процесс Испании. М.: Спутник +, 2021. С. 101-103

1) վարույթի կարճման մասին (*sobreseimiento*).

2) գործը համապատասխան դատարան հանձնելու մասին:

Քննչական դատավորի կողմից գործն առաջին ատյանի դատարան հանձնելու մասին որոշմանը նախորդում է դատախազի կողմից մեղադրական եզրակացության (*escrito de acusación*) ներկայացումը: Այսինքն՝ այս փուլում դատախազը կազմում է մեղադրական եզրակացություն, որը պարունակում է կոնկրետ պահանջ (հայց) կոնկրետ անձի (անձանց) նկատմամբ: Այդ եզրակացությունը ներկայացվում է քննչական դատավորին, որը կայացնում է գործը դատարան հանձնելու մասին որոշում[19]:

Իսպանական դատավարագիտության մեջ միջանկյալ փուլը հիմնականում դիտարկվում է որպես դատաքննությանը նախորդող գործի վերահսկման ժամանակահատված (control del caso previo al juicio), որի գլխավոր նպատակն է իրականացնել գործի՝ դատաքննության ուղարկելու իրագործելիության (viabilidad) նախնական գնահատում[20]:

Վերոնշյալ համեմատական վերլուծությունը հաստատում է այն թեզը, որ մինչդատական վարույթում քննության (նախաքննության) ավարտից հետո սկսվում է ինքնուրույն փուլ, որը տարբեր երկրներում կոչվում է տարբեր անուններով (Լատվիայում՝ «քրեական հետապնդում» (kriminālvajāšana), Բուլղարիայում՝ «դատախազի գործողությունները քննության ավարտից հետո», Չինաստանում՝ «հանրային մեղադրանքի առաջադրում», Իսպանիայում՝ «միջանկյալ փուլ»), սակայն դրանք էությամբ միասնական են:

§ 3. Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը ՀՀ քրեական դատավարությունում

3.1. Դատախազական վերստուգման փուլի ճանաչման ընդհանուր նախադրյալները

ՀՀ քրեական դատավարությունում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է: Այն նախաքննության փուլի մաս չէ, քանի որ նախաքննության փուլն արդեն իսկ ավարտվել է, իսկ դատախազի այս ժամանակահատվածում իրականացվող գործունեությունը հաջորդում է նախաքննության փուլին: Ավելին՝ ՀՀ ՔրԴՕ 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ուղիղ նշված է, որ մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալու պահից մինչև մեղադրական եզրակացությունը դատարան հանձնելը, քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատելը կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը վարույթն իրականացնող մարմինը ոչ թե քննիչն է, այլ հսկող դատախազն է:

---

[19] Уголовный процесс европейских государств : монография. Под ред. В. И. Самарина, В. В. Луцика. М.: Проспект, 2018. С. 633-634:

[20] Քվինտերո Խիմենես, Կամիլո Ալբերտո Միջանկյալ փուլը իսպանական քրեական դատավարությունում // *Միջանկյալ փուլը և մեղադրական ակտերի նկատմամբ վերահսկողությունը քրեական դատավարությունում (Ճշմարտությունների և առասպելների միջև)*, Marcial Pons, Մադրիդ, 2021, էջ 25-75 (Իսպաներենով):

Ինչպես նշվեց, քրեական դատավարության փուլը ոչ թե օրենսդրական, այլ դոկտրինալ հասկացություն է, ուստի օրենսդրության կառուցվածքը թեև կարող է ազդեցություն ունենալ դատավարության փուլի որոշման (ճանաչման) համար, սակայն դա չի կարող ունենալ վճռորոշ նշանակություն:

Հայ հեղինակները, հիմք ընդունելով, որ ՀՀ ՔրԴՕ 6-րդ բաժինը վերնագրված է «Մինչդատական վարույթ», նշում են, որ «Օրենսգիրքը մինչդատական վարույթը դիտարկում է որպես մեկ ամբողջություն՝ դրանում ձևականորեն չառանձնացնելով տարբեր ենթափուլեր»[21], իսկ նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածն անվանում են «վարույթը մինչդատականից դատական փուլեր փոխադրելու միջանկյալ կարճ ընթացաշրջան»[22]: Նույն նախադասության մեջ նրանք օգտագործում են «հսկող դատախազն է, որ այս փուլում գնահատում է մեղադրյալի դատապարտման հավանականության մասին քննիչի հետևության հիմնավորվածությունը»[23], սակայն պարզ չէ, թե այս դատողության մեջ «փուլ» բառն օգտագործվել է որպես դատավարական տերմին, թե՝ որպես ընդհանուր բառ:

Այնուամենայնիվ, նույնիսկ ՀՀ ՔրԴՕ-ի կառուցվածքի պայմաններում մինչդատական վարույթը խիստ վերապահումներով կարելի է համարել ենթափուլերի չբաժանված մեկ միասնական ամբողջություն: ՀՀ ՔրԴՕ-ի 6-րդ բաժինը վերնագրված է «մինչդատական վարույթ», սակայն այդ բաժնում տեղադրված 27-րդ գլուխը կոչվում է ոչ թե մինչդատական վարույթի ավարտը, այլ նախաքննության ավարտը: Սա նշանակում է, որ օրենսդրության կառուցվածքի տեսանկյունից մինչդատական վարույթը և նախաքննությունը չեն նույնացվում:

Մյուս կողմից՝ ՀՀ ՔրԴՕ-ի 25-րդ գլուխը կոչվում է «Մինչդատական վարույթի ընդհանուր պայմաններ»-ը, սակայն այդ գլխում ամրագրված դրույթների ճնշող մեծամասնությունը վերաբերում է նախաքննության փուլին: Մասնավորապես՝

1) նախաքննության մարմինները և քննչական ենթակայությունը,

2) նախաքննության կատարման վայրը,

3) քննչական խմբի ձևավորումը,

4) հետաքննությունը,

5) նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը[24]:

ՀՀ ՔրԴՕ-ի 25-րդ գլուխի վերնագրի և դրա բովանդակության անհամապատասխանությունը վկայում է այն մասին, որ օրենսդրական հարթությունում դեռևս ամբողջ ծավալով չի գիտակցվել մինչդատական վարույթի երկփուլանի կառուցվածքը:

---

[21] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 268:

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 309:

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 309-310:

[24] Օրենսգրքի այս գլխում ամրագրված դրույթներից թերևս միակը, որը կարող է կիրառվել դատարանում մեղադրանքի հարուցման հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում, դա հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու մասին դրույթն է (ՀՀ ՔրԴՕ 185-րդ հոդված):

Այսպիսով՝ թեև մինչդատական վարույթին առնչվող օրենսդրական կառուցվածքի անորոշությունները հրահրում են մինչդատական վարույթի փուլային կառուցվածքի վերաբերյալ բանավեճեր, սակայն դրանք չեն բացառում երկփուլ համակարգի (նախաքննություն և դատախազական վերստուգում) դոկտրինալ ճանաչման հնարավորությունը:

Հաջորդ բաժնում կներկայացվի, որ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը համապատասխանում է դատավարության փուլերին ներկայացվող դոկտրինալ չափանիշներին, սակայն մինչ այդ քննարկենք այս փուլի անվանմանը վերաբերող հարցեր:

3.2. Դատախազական վերստուգման փուլի անվանումը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի անվանման մեջ «վերստուգում» տերմինի օգտագործումը տվյալ փուլի համար ունի հիմնավոր պատճառներ:

Նախ՝ բառարանային սահմանումների համաձայն՝ «վերստուգում» տերմինի «վեր» նախածանցը ցույց է տալիս կրկնություն՝ դարձյալ ստուգում կատարել[25] , նորից ստուգել, մանրամասնորեն և ուշադրությամբ ստուգել[26], հսկողական ստուգում կատարել[27]: «Վերստուգում» տերմինի օգտագործմամբ ընդգծվում է այս փուլում դատախազի հետագա (*ex post*) հսկողական գործունեության տարբերությունը նախաքննության օրինականության նկատմամբ ընթացիկ (*in cursu*) հսկողությունից:

Նախաքննության ընթացքում դատախազը ևս «ստուգում» է նախաքննության ընթացքը (օրինակ՝ պարբերաբար ծանոթանում է նյութերին, տալիս հանձնարարություններ): Սա ընթացիկ հսկողություն է, որը կատարվում է նախաքննությանը զուգահեռ: Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում դատախազը նախաքննության ավարտից հետո իրականացնում է հետագա (*ex post*) հսկողություն:

Երկրորդ՝ «վերստուգում» տերմինի օգտագործմամբ ընդգծվում է ստուգման ամբողջականությունը և եզրափակիչ բնույթը: Տվյալ փուլում դատախազը կատարում է ոչ թե հատվածական կամ պարբերական ստուգում, այլ վարույթի նյութերի ամբողջական և համալիր վերլուծություն: Նա պետք է պարզի, օրինակ, ՀՀ ՔրԴՕ 204-րդ հոդվածով նախատեսված բոլոր հանգամանքները և կայացնի վերջնական որոշում:

Այսպիսով՝ այս փուլում դատախազը «կրկնակի ստուգում է» նախաքննության արդյունքները, սակայն այս անգամ ոչ թե ընթացիկ հսկողության կարգով, այլ ամբողջական վերստուգման միջոցով:

*3.*3. Դատախազական վերստուգման փուլի հատկանիշները

3.3.1. Ընդհանուր նկատառումներ

Ինչպես նշվեց, քրեական վարույթի որևէ ժամանակահատված (ընթացք) քրեական

---

[25] Բառգիրք հայերէն լեզուի: Անդրանիկ Վրդ. Գոռանեան, Պէյրութ, 1998, էջ 439:

[26] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հատոր 4 (Մ-Շ), Հ. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ: Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ., 1980, էջ 407:

[27] Աղայան Է. Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: Հատոր 2 (Ղ-Ֆ), Երևան, Հայաստան, 1976, էջ 1387:

դատավարության փուլ է ճանաչվում՝ ելնելով առաջին հերթին դոկտրինում մշակված չափանիշներից՝ փուլի անմիջական խնդիր, սուբյեկտային կազմ, դատավարական ձևի առանձնահատկություն, փուլը եզրափակող ակտի առկայություն և այլն: Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն օժտված է դատավարության փուլերին հատուկ հատկանիշներով:

Նկատի ունենալով, որ դատախազական վերստուգման փուլը, ելնելով վերստուգման օբյեկտից, կարող է դրսևորվել դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման և քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևերով, ուստի նախ՝ կներկայացնեն դատախազական վերստուգման փուլի ընդհանուր հատկանիշները, այնուհետև՝ դրանք կմասնավորեցվեն դատախազական վերստուգման փուլի իրականացման երկու ձևերի՝ դատարանում մեղադրանքի հարուցման հարցի լուծման և քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևերի համար:

3.3.2. Դատախազական վերստուգման փուլի հատկանիշները

3.3.2.1. Փուլի խնդիրները և գործառույթները

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի գլխավոր խնդիրն է վարույթի նյութերի ամբողջական և համալիր վերլուծության միջոցով ստուգել նախաքննության արդյունքների օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնել տվյալ փուլը եզրափակող որոշումներից մեկը: Այս գլխավոր խնդրից ածանցվում են անմիջական խնդիրները՝ ստուգել դատավարական ակտերի (մեղադրական եզրակացության կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշման) և վարույթի նյութերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Այս փուլի խնդիրներից բխում են տվյալ փուլի հետևյալ գործառույթները՝ վերահսկողական գործառույթը (ստուգել նախաքննության ընթացքում կատարված գործողությունների և կայացված որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը) և զտման (կանխարգելման) գործառույթը (բացառել այն վարույթներով նյութերը դատարան հանձնելը, որոնցով առկա չեն բավարար ապացույցներ կամ առկա են վարույթը կարճելու հիմքեր, կամ բացառել քրեական վարույթի անհիմն կամ անօրինական ավարտը՝ վարույթը կարճելու եղանակով): Բացի այդ, դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ժամանակ իրականացվում է նաև նախապատրաստական գործառույթ (դատական վարույթի համար նախապատրաստել անհրաժեշտ կազմակերպական նախադրյալներ):

3.3.2.2. Փուլի սուբյեկտային կազմը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում վարույթն իրականացնող մարմինը հսկող դատախազն է, ով օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի, այլ դատախազների (խմբային հսկողության դեպքում), ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ:

Դատախազը քննիչի հետ դատավարական հարաբերությունների մեջ է մտնում երկու առիթով՝ որպես վերստուգման օբյեկտ հանդիսացող վարույթի նյութերն *ընդունող*

սուբյեկտ և որպես վարույթի նյութերը նախաքննության մարմին *ուղարկող* սուբյեկտ (երբ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը):

Եթե նախաքննության արդյունքների վերստուգումն իրականացվում է դատախազների խմբի կողմից, ապա խմբի անդամների և ղեկավարի միջև ծագում են դատավարական հարաբերություններ՝ կապված խմբի աշխատանքների համակարգման կամ ղեկավարման հետ, ինչպես օրինակ՝ խմբի անդամների միջև լիազորությունների բաշխման հետ (ՀՀ ՔրԴՕ 39.1-րդ հոդված, 39.2-րդ հոդված):

Դատախազը վարույթի մասնավոր մասնակիցների հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ հիմնականում միջնորդությունների քննարկման առիթով, իսկ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ժամանակ դատախազը խափանման միջոց կիրառելիս կամ փոխելիս անմիջական շփումների մեջ է մտնում գրավատուի, երաշխավորի, դաստիարակչական հսկողություն ստանձնած անձի, զորամասի հրամանատարության ներկայացուցչի, մեղադրյալի աշխատավայրի վարչակազմի հետ:

3.3.2.3. Փուլի սկիզբը և ավարտը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն սկսվում է նախաքննության ավարտից հետո՝ համապատասխանաբար մեղադրական եզրակացությամբ կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշմամբ վարույթի նյութերը քննիչից ստանալու պահից:

Փուլն ավարտվում է դատախազի կողմից օրենքով նախատեսված որոշումներից մեկի ընդունմամբ՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և դատարան հանձնելու (կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու) կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու մասին որոշումը:

Փուլի ավարտից հետո ծագում են կամ կարող են ծագել դատավարական հարաբերություններ, որոնք դուրս են դատավարական փուլային կառուցվածքից, բայց կազմում են քրեադատավարական ընդհանուր համակարգի մաս (փուլի ավարտից հետո բողոքարկման վարույթները, որոշումներին ծանոթացնելու հարաբերությունները և այլն): Քրեադատավարական փուլային կառուցվածքից դուրս գտնվող հարաբերությունները պետք է համարել քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ»:

Դատավարության համակարգը փուլային սկզբունքով կառուցելու օրինաչափությունից նման շեղումները թույլատրելի են, քանի որ դրանցով լուծվում են ոչ թե փուլերին հատուկ անմիջական խնդիրներ, այլ խիստ որոշակի, կոնկրետ («տեղային») խնդիրներ: Օրինակ՝ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն ավարտվում է դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելով, սակայն դրանից հետո կարող է ծագել բողոքարկման վարույթ, եթե վարույթի մասնավոր մասնակիցը համաձայն չէ դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու հետ: Այս դեպքում մասնավոր մասնակիցը կարող է բողոքարկել որոշումը վերադաս դատախազին (ՀՀ ՔրԴՕ 196-րդ հոդվածի 7-րդ մաս, 207-րդ հոդվածի 7-րդ մաս): Այս հարաբերությունները դատա-

վարական են, սակայն դրանք դատավարության որևէ փուլի մաս չեն, քանի որ ծագում են դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո:

Այս հարաբերությունները դատավարական են, սակայն ծագում են նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի (դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումից) հետո: Քանի որ այս դատավարական հարաբերությունները դուրս են դատավարության փուլային կառուցվածքից, ուստի դրանք պետք է համարել քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ»: Ընդ որում՝ «գորշ գոտի» պիտակը որևէ կերպ չի նսեմացնում այդ հարաբերությունների արժեքը կամ նշանակությունը, պարզապես դրանով բնութագրվում է այդ հարաբերությունների յուրահատուկ տեղը քրեադատավարական համակարգում:

3.3.2.4. Փուլի դատավարական ձևը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի դատավարական ձևն ունի հետևյալ առանձնահատկությունները.

Առաջին՝ այն իրականացվում է ոչ հրապարակային (գրասենյակային) ընթացակարգով հիմնականում փաստաթղթերի ուսումնասիրության ձևով, առանց նիստ հրավիրելու և առանց վարույթի մասնակիցների մասնակցությամբ լսումներ կազմակերպելու:

Երկրորդ՝ որոշումները կայացվում են միանձնյա հսկող դատախազի կամ դատախազների խմբի ղեկավարի (անդամների) կողմից:

Երրորդ՝ այս փուլում ապացուցողական գործողություններ չեն կատարվում և ապացույցներ չեն հավաքվում. նախաքննության ընթացքում հավաքված ապացույցները դատախազը վերստուգում է հիմնականում ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Չորրորդ՝ միջնորդությունների քննարկման հնարավորությունը սահմանափակ է և պայմանավորված փուլի խնդիրներով ու կարճ ժամկետով: Օրինակ՝ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևում դատախազն օժտված է միջնորդություններն առանց քննության թողնելու հայեցողական լիազորությամբ, մինչդեռ քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևում գործում է միջնորդությունների քննարկման ընդհանուր կանոնը:

3.3.2.5. Փուլի ժամկետը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի համար օրենքով նախատեսված է յոթօրյա ժամկետ (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս, 207-րդ հոդվածի 6-րդ մաս), որն սկսվում է վերստուգման օբյեկտ հանդիսացող նյութերը դատախազի կողմից ստանալու պահից և ավարտվում դատախազի կողմից փուլը եզրափակող որոշումներից մեկի ընդունմամբ: Յոթօրյա ժամկետն առանձնանում է հստակությամբ (սկիզբը և ավարտը որոշակի են), կարճությամբ (պայմանավորված փուլի բնույթով) և անփոփոխելիությամբ (ենթակա չէ երկարաձգման, կասեցման կամ ընդհատման):

Փուլում գործում են երկու տարբեր բնույթի ժամկետներ՝ փուլի յոթօրյա ժամկետը և քրեական հետապնդման առավելագույն ժամկետը (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդված):

Քննարկվող փուլի յոթօրյա ժամկետը պետք է տեղավորվի քրեական հետապնդման ժամկետի ներսում. եթե քրեական հետապնդման ժամկետի մնացորդը յոթ օրից պակաս է, ապա դատախազը պարտավոր է որոշում կայացնել այդ ավելի կարճ ժամկետում:

3.4. Դատախազական վերստուգման փուլի դրսևորման ձևերը

3.4.1. Դատախազական վերստուգման փուլի դրսևորման ձևերի ընդհանուր բնութագիրը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը, կախված նրանից, թե քննիչը դատախազին ներկայացրել է մեղադրական եզրակացություն, թե վարույթը կարճելու մասին որոշում, ունի դրսևորման երկու ձև՝

1) դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումը,

2) քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծումը:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևի դեպքում դատախազական վերստուգման օբյեկտը մեղադրական եզրակացությունն է և վարույթի նյութերն են, իսկ առարկան՝ մեղադրական եզրակացության և վարույթի նյութերի իրավաչափությունը: Մեղադրական եզրակացության և վարույթի նյութերի իրավաչափության ստուգման գլխավոր խնդիրն է պարզել անձի նկատմամբ դատարանում մեղադրանք հարուցելու հիմքերի (պայմանների) առկայությունը:

Վ. Զելենեցկին նշում էր, որ նախնական քննության փուլում ձևավորվում և զարգացվում է քննչական մարմինների մեղադրանքը: Այդ մեղադրանքը պետական չէ, քանի որ վերջինս, օրենքի համաձայն, կարող է իրականացվել միայն դատախազի կողմից[28]:

«Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծում» անվանման մեջ օգտագործվում է «մեղադրանք հարուցել» ձևակերպումը, որի պայմաններում ծագում է մեղադրանք հարուցելու և քրեական հետապնդում հարուցելու հարաբերակցության հարցը: Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը, մեղադրական եզրակացության համեմատությամբ, արտացոլում է նախնական (սկզբնական) մեղադրանքը, քանի որ քրեական հետապնդում հարուցելուց հետո նախաքննությունը շարունակվում է, և դրա ընթացքում հնարավոր է ձեռք բերել նոր ապացույցներ, որոնց հիման վրա սկզբնական մեղադրանքը կարող է փոխվել: Մինչդատական վարույթում վերջնական մեղադրանքը ձևավորվում է դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու (այն վերակազմելու) մասին որոշում կայացնելով և վարույթի նյութերը դատարան հանձնելով: Այս առումով քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումն արտացոլում է միայն նախնական մեղադրանքը:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևի դեպքում դատախազական վերստուգման օբյեկտը վարույթը կարճելու մասին որոշումն է և վարույթի նյութերն են, իսկ առարկան՝ այդ որոշման և վարույթի նյութերի իրավա-

---

[28] Зеленецкий В. С. Возбуждение государственного обвинения в советском уголовном процессе. Харьков: Изд-во при Харьк. гос. ун-те, 1979. С. 12.

չափությունը: Քրեական վարույթը կարճելու մասին որոշման և վարույթի նյութերի իրավաչափության ստուգման գլխավոր խնդիրն է պարզել քրեական վարույթն ընդհանրապես եզրափակելու (ավարտելու) պայմանների առկայությունը:

Չնայած այս փուլը կարող է ունենալ իրականացման տարբեր ձևեր՝ կախված վերստուգման օբյեկտից, դրանց էությունը նույնն է: Երկու դեպքում էլ դատախազը, ստանալով ավարտված նախաքննության նյութերը, կատարում է նույն գործառույթը՝ վերստուգում է նախաքննության արդյունքների օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնում է վերջնական որոշումներից մեկը:

3.4.2. Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման վարույթի հատկանիշները

3.4.2.1. Խնդիրները և գործառույթները

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի գլխավոր խնդիրն է վարույթի նյութերի ամբողջական և համալիր վերլուծության միջոցով պարզել, թե արդյոք առկա են անձի նկատմամբ դատարանում մեղադրանք հարուցելու հիմքեր (պայմաններ): «Հսկող դատախազն այս փուլում գնահատում է մեղադրյալի դատապարտման հավանականության մասին քննիչի հետևության հիմնավորվածությունը»[29], քանի որ քննիչը նախաքննությունն ավարտում է մեղադրական եզրակացություն կազմելով, եթե հանգում է եզրակացության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է (ՀՀ ՔրԴՕ 199-րդ հոդվածի 1-ին մաս):

Այս գլխավոր խնդրից ածանցվում են դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի հետևյալ անմիջական խնդիրները.

1) Ստուգել նախաքննության արդյունքների օրինականությունը և հիմնավորվածությունը: Դատախազը, քննիչից ստանալով մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը, պարտավոր է համակողմանիորեն ստուգել նախաքննության ամբողջ ընթացքը և արդյունքները: Մասնավորապես, դատախազը պետք է պարզի՝ արդյոք հավաքված ապացույցները վերաբերելի են և բավարար են մեղադրյալի մեղավորությունը դատարանում ապացուցելու համար, արդյոք մեղադրանքն ընդգրկում է ենթադրյալ հանցանքի բոլոր դրվագները, արդյոք ճիշտ է տրվել արարքի իրավական գնահատականը, արդյոք պահպանվել են նախաքննության կատարման կարգը սահմանող օրենսդրական բոլոր կանոնները, ինչպես նաև արդյոք կատարվել է համակողմանի և անաչառ նախաքննություն (ՀՀ ՔրԴՕ 204-րդ հոդված):

2) Ապահովել մեղադրական եզրակացության (մեղադրանքի) ձևի պատշաճությունը: Եթե դատախազը պարզում է, որ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենքի պահանջներին, կամ անհրաժեշտ է մեղադրանքից հանել առանձին

---

[29] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 309-310:

փաստեր կամ ի շահ մեղադրյալի՝ փոխել արարքի իրավական գնահատականը, ապա նա վերակազմում է մեղադրական եզրակացությունը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Միայն այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը համապատասխանում է բոլոր պահանջներին, և պատշաճ ձևակերպված մեղադրանքը պատրաստ է դատական քննության, դատախազը հաստատում է մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերը հանձնում իրավասու դատարան (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, ՀՀ ՔրԴՕ 206-րդ հոդվածի 1-ին մաս):

3) Կանխել վարույթը կարճելու հիմքեր ունեցող վարույթներով դատարանում մեղադրանքի հարուցումը: Դատախազը պարտավոր է պարզել, թե արդյոք առկա են վարույթը կարճելու հիմքեր (ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդված): Եթե դատախազը հայտնաբերում է այդպիսի հիմքեր, նա վարույթի նյութերը վերադարձնում է նախաքննության մարմին՝ վարույթը կարճելու համար (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Այս կերպ դատախազը կանխում է նման վարույթներով մեղադրանքի հարուցումը դատարանում, ինչը թույլ է տալիս խնայել դատարանի ռեսուրսները և պաշտպանել անձանց անհիմն քրեական հետապնդումից:

Ասվածի հիման վրա կարելի է նշել, որ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն օժտված է դատավարության փուլերին հատուկ՝ նախապատրաստական և վերահսկողական հատկանիշներով. հաջորդող փուլի՝ նախնական դատալսումների համար նախապատրաստվում են անհրաժեշտ հիմքեր (նախապատրաստական հատկանիշ) և ստուգվում են նախաքննության փուլի ընթացքում կատարված գործողությունների, կայացված որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը (վերահսկողական հատկանիշ)[30]:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի խնդիրներից կարելի է բխեցնել նաև այս փուլի գործառույթները՝

1) Վերահսկողական գործառույթ. ստուգել նախաքննության ընթացքում հավաքված ապացույցների վերաբերելիությունը, թույլատրելիությունը և հավաստիությունը, ինչպես նաև ստուգել խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը:

2) Նախապատրաստական գործառույթ. ապահովել դատական վարույթի կազմակերպական նախապատրաստությունը: Օրինակ՝ դատախազն իրավասու է մեղադրական եզրակացությունը վերակազմել, ինչպես նաև կրճատել կամ լրացնել դատարանին հետազոտման համար ներկայացվող մեղադրանքի կողմի ապացույցների ցանկը:

---

[30] «Մեղադրանք հարուցել» հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով, որն ընդգրկում է նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու ձևով դատարանում քրեական հետապնդում հարուցելու հարցի քննարկումը: ՀՀ ՔրԴՕ 426-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հավաքված ապացույցները համարելով բավարար՝ քննիչը, մեղադրական եզրակացությանը ներկայացվող վերաբերելի պահանջների պահպանմամբ, կազմում է եզրափակիչ ակտ կամ կայացնում է վարույթը կարճելու մասին որոշում՝ այն վարույթի նյութերի հետ անհապաղ հանձնելով հսկող դատախազին:

3) Զտման գործառույթ. բացառել այն վարույթներով նյութերը դատարան հանձնելը, որոնցով առկա չեն բավարար ապացույցներ կամ առկա են վարույթը կարճելու հիմքեր:

3.4.2.2. Սուբյեկտային կազմը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում վարույթն իրականացնող մարմինը հսկող դատախազն է, ով այս փուլում օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի, այլ դատախազների (խմբային հսկողության դեպքում), ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ:

Դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ երկու առիթով.

Առաջին՝ քննիչը մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է հսկող դատախազին (ՀՀ ՔրԴՕ 203-րդ հոդվածի 1-ին մաս): Այս դեպքում դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերն *ընդունող* սուբյեկտ:

Երկրորդ՝ դատախազն իրավասու է վարույթի նյութերը վերադարձնել նախաքննության մարմին, եթե անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը, կազմել նոր մեղադրական եզրակացություն կամ մեղադրանքը լրացնել սկզբնականից էապես տարբերվող փաստերով (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մաս): Այս դեպքում դատախազը կրկին քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես վարույթի նյութերն *ուղարկող* սուբյեկտ:

Եթե դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումն իրականացվում է դատախազների խմբի կողմից, ապա խմբի անդամների և ղեկավարի միջև ծագում են դատավարական հարաբերություններ՝ կապված խմբի աշխատանքների համակարգման կամ ղեկավարման հետ, օրինակ՝ խմբի անդամների միջև լիազորությունների բաշխման հետ (ՀՀ ՔրԴՕ 39.1-րդ հոդված, 39.2-րդ հոդված):

Դատախազը վարույթի մասնավոր մասնակիցների հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ հետևյալ առիթներով.

Առաջին՝ վարույթի մասնավոր մասնակիցներն այս փուլում իրավունք ունեն միջնորդություններ ներկայացնել վարույթն իրականացնող դատախազին: Թեև դատախազին վերապահվել է այդ միջնորդություններն «առանց քննության թողնելու» հայեցողական լիազորություն (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 3-րդ մաս), սակայն միջնորդության ներկայացման փաստն ինքնին դատախազի և միջնորդություն ներկայացրած անձի միջև առաջացնում է դատավարական հարաբերություն:

Երկրորդ՝ այս փուլում դատախազն իրավասու է որպես խափանման միջոց կիրառել գրավ, պաշտոնավարման կասեցում, բացակայելու արգելք, երաշխավորություն, դաստիարակչական հսկողություն, զինվորական հսկողություն (ՀՀ ՔրԴՕ 122-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Խափանման միջոց կիրառելիս կամ փոխելիս դատախազն անմիջական շփումների մեջ է մտնում որոշակի անձանց հետ, մաս-

նավորապես, գրավ կիրառելիս՝ գրավատուի հետ (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մաս), երաշխավորություն կիրառելիս՝ երաշխավորի հետ (ՀՀ ՔրԴՕ 128-րդ հոդվածի 2-րդ մաս), դաստիարակչական հսկողություն կիրառելիս՝ ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի հետ (ՀՀ ՔրԴՕ 129-րդ հոդվածի 3-րդ մաս), զինվորական հսկողություն կիրառելիս՝ զորամասի հրամանատարության ներկայացուցչի հետ (ՀՀ ՔրԴՕ 130-րդ հոդվածի 2-րդ մաս), պաշտոնավարման կասեցում կիրառելիս՝ մեղադրյալի աշխատավայրի վարչակազմի և մեղադրյալի հետ (ՀՀ ՔրԴՕ 126-րդ հոդվածի 3-րդ մաս), բացակայելու արգելք կիրառելիս՝ սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի և մեղադրյալի հետ (ՀՀ ՔրԴՕ 127-րդ հոդվածի 2-րդ մաս):

Բացի այդ, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որոշումն անհապաղ հանձնվում է խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին, իսկ դրա պատճենը՝ այն անձին, որի նկատմամբ կիրառվում է խափանման միջոցը (ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 4-րդ մաս):

Այս անձանց հետ դատախազը մտնում է անմիջական դատավարական հարաբերությունների մեջ՝ նրանց բացատրելով մեղադրանքի էությունը, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը (այն դեպքերում, երբ օրենքը դա պահանջում է):

3.4.2.3. Վարույթի սկիզբը և ավարտը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն սկսվում է նախաքննության փուլի ավարտից հետո, ավելի ճշգրիտ՝ մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը քննիչից ստանալու պահից:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն ավարտվում է հետևյալ որոշումներից մեկի ընդունմամբ.

1) մեղադրական եզրակացությունը հաստատելու և դատարան հանձնելու մասին որոշումը, կամ՝

2) վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու մասին որոշումը:

Մեղադրական եզրակացությունը հաստատելու և վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին հսկող դատախազի ակտով դատախազը համարվում է իր լիազորություններն ամբողջությամբ իրականացրած:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո ծագում են (կարող են ծագել) կազմակերպական կամ դատական երաշխիքների հետ կապված վարույթներ, որոնք թեև դուրս են դատավարական փուլային համակարգից, բայց համարվում են դատավարական հարաբերություններ և կազմում են քրեադատավարական ընդհանուր համակարգի մաս: Մասնավորապես.

1) Դատական երաշխիքների վարույթը, որն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ դատարանը, ստանալով քրեական գործը, արձանագրում է, որ մեղադրական եզրակացությունը դատարան է հանձնվել ՀՀ ՔրԴՕ 206-րդ հոդվածի 2-րդ մասով

սահմանված ժամկետի խախտմամբ, այսինքն՝ կալանավորված մեղադրյալի դեպքում կալանքի առավելագույն (ընդհանուր) ժամկետը դեռ չի լրացել, սակայն գործը դատարան է հանձնվել կալանքի ժամկետը լրանալուց 15 օրից պակաս ժամկետում: Այդ դեպքում դատարանը, առանց նախնական դատալսումներ անցկացնելու մասին որոշում կայացնելու, քրեական գործը վերադարձնում է հսկող դատախազին՝ խափանման միջոցի հարցը քննարկելու և գործը կրկին դատարան հանձնելու նպատակով (ՀՀ ՔրԴՕ 310-րդ հոդվածի 3-րդ մաս): Եթե դատախազը կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ դիմում է դատարան, ապա ծագում է դատական երաշխիքների վարույթ: Այս հարաբերությունները դատավարական են, սակայն ծագում են դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումից հետո: Ընդ որում՝ այս դեպքում նախաքննության փուլը կամ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը չեն վերսկսվում (այս մասին՝ հաջորդիվ):

2) Տեղեկացման պարտականությունը, ըստ որի՝ դատախազը պարտավոր է գրավոր տեղեկացնել վարույթի մասնավոր մասնակիցներին վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին՝ նրանց պատշաճ ձևով ուղարկելով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները (ՀՀ ՔրԴՕ 206-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս հարաբերությունները կազմակերպական են և ծագում են դատարանում մեղադրանք հարուցելու հարցը լուծելուց հետո:

Ինչպես նշվեց, այս հարաբերությունները թեև դատավարական են, սակայն դրանք դուրս են դատավարության փուլային կառուցվածքից, ուստի դրանք պետք է համարել քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ»: Ընդ որում՝ «գորշ գոտի» պիտակը չի նսեմացնում այդ հարաբերությունների արժեքը կամ նշանակությունը, պարզապես դրանով բնութագրվում է այդ հարաբերությունների յուրահատուկ տեղը քրեադատավարական համակարգում:

3.4.2.4. Դատավարական ձևը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի դատավարական ձևն ունի որոշակի առանձնահատկություններ:

Առաջին՝ այս փուլում վարույթն իրականացվում է ոչ հրապարակային (գրասենյակային) եղանակով: Հսկող դատախազն իր լիազորություններն իրականացնում է հիմնականում փաստաթղթերի ուսումնասիրության ձևով՝ առանց նիստ հրավիրելու, առանց վարույթի մասնակիցների մասնակցությամբ լսումներ կազմակերպելու և առանց հրապարակային ընթացակարգի:

Բացառություն է կազմում խափանման միջոցի կիրառումը: Խափանման միջոց կիրառելիս դատախազն անմիջական շփումների մեջ է մտնում համապատասխան անձանց հետ (ՀՀ ՔրԴՕ 125-130-րդ հոդվածներ):

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ոչ հրապարակային բնույթը պետք է տարբերել նախաքննության փուլում գործող նախաքննության տվյալների հրապարակման

արգելքից (ՀՀ ՔրԴՕ 186-րդ հոդված): Վերջինս վերաբերում է նախաքննության փուլում հավաքված տվյալների՝ երրորդ անձանց հրապարակելու անթույլատրելիությանը, մինչդեռ այս փուլի «ոչ հրապարակային ընթացակարգը» վերաբերում է դատախազի գործունեության իրականացման ձևին՝ առանց նիստ հրավիրելու կամ լսումներ կազմակերպելու: Ավելին՝ ՀՀ ՔրԴՕ 186-րդ հոդվածով սահմանված նախաքննության տվյալների հրապարակման արգելքն իր բնույթով չի կարող վերաբերել դատախազական վերստուգման փուլին: Պատճառն այն է, որ նախաքննության ավարտին վարույթի մասնավոր մասնակիցներն արդեն իսկ ծանոթացել են վարույթի նյութերին (ՀՀ ՔրԴՕ 200-րդ հոդված): Այս փուլում դատախազի գործունեությունն իրականացվում է արդեն իսկ վարույթի մասնավոր մասնակիցներին հայտնի դարձած տվյալների հիման վրա:

Երկրորդ՝ այս փուլում որոշումները կայացվում են միանձնյա: Անհատական դատախազական հսկողության դեպքում բոլոր որոշումները (մեղադրական եզրակացության հաստատում, վերակազմում, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը, խափանման միջոցի փոփոխություն, ապացույցների ցանկի լրացում կամ կրճատում) ընդունում է հսկող դատախազը միանձնյա: Խմբային հսկողության դեպքում ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված լիազորությունների շրջանակում (մեղադրական եզրակացության հաստատում, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը[31]) որոշումներն ընդունում է բացառապես դատախազների խմբի ղեկավարը միանձնյա, իսկ մյուս լիազորությունների դեպքում (օրինակ՝ վարույթի մասնակիցների ներկայացրած միջնորդությունների քննարկման դեպքում) որոշումները կարող են ընդունվել խմբի անդամների կողմից միանձնյա՝ խմբի ղեկավարի սահմանած շրջանակներում (ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդված):

Երրորդ՝ այս փուլում ապացուցողական գործողություններ չեն կատարվում և ապացույցներ չեն հավաքվում, իսկ նախաքննության ընթացքում հավաքված ապացույցները դատախազը վերստուգում է հիմնականում ստացված ապացույցի ձևի

---

[31] Մեղադրական եզրակացությունը հաստատելը (ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ) և այն չհաստատելը (նույն հոդվածի 16-րդ կետ) դասվել են դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունների շարքին (ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդվածի 3-րդ մաս): Սակայն մեղադրական եզրակացությունը վերակազմելու լիազորությունը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), որը դատավարության նույն փուլում (նախաքննության արդյունքների դատախազական վերստուգում՝ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով) կիրառելի երրորդ լիազորությունն է, բաց է թողնվել դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունների ցանկից:

Սա ոչ թե օրենսդրի գիտակցված լռության, այլ օրենսդրական բացթողման արդյունք է: Ծայրահեղ անտրամաբանական կլիներ պնդել, որ մեղադրական եզրակացությունը հաստատելը դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունն է, իսկ մեղադրական եզրակացությունը վերակազմելու լիազորությունը ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա կարող է իրականացվել դատախազների խմբի ցանկացած անդամի կողմից: Մեղադրական եզրակացությունը վերակազմելը համակարգային առումով առավել մոտ է ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ կետերով, 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորություններին, քան ընդհանուր «այլ» լիազորություններին:

Հաշվի առնելով առկա օրենսդրական բացթողումը, *extra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա մեղադրական եզրակացությունը վերակազմելը ևս պետք է համարել դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորություն:

և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Չորրորդ՝ այս փուլում առկա է միջնորդությունների քննարկման սահմանափակ հնարավորություն, որը պայմանավորված է այս փուլի խնդիրներով և կարճ ժամկետով: ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտի մասին՝ վարույթի մասնավոր մասնակիցներին ծանուցելուց հետո քննիչին և հսկող դատախազին ուղղված նրանց միջնորդությունները կարող են թողնվել առանց քննության, որը ենթակա չէ բողոքարկման»:

Այս իրավական կարգավորումը ենթադրում է, որ դատախազը տվյալ փուլում օրենսդրորեն ազատված չէ միջնորդությունները քննարկելու պարտականությունից, սակայն նրան վերապահված է հայեցողական լիազորություն՝ դրանք թողնել առանց քննության: Այս հայեցողական լիազորությունը չի նշանակում դատախազի ազատություն՝ ըստ իր սուբյեկտիվ ցանկության, կամայականորեն (առանց պատճառաբանության) թողնել միջնորդությունն առանց քննության: Եթե միջնորդությունը կարող է քննարկվել սահմանափակ յոթօրյա ժամկետում, և դրա լուծումը բխում է այս փուլի խնդիրներից, ապա այն պետք է քննարկվի այս փուլում: Օրինակ՝ եթե պաշտպանը միջնորդում է անթույլատրելի ճանաչել ակնհայտորեն ապօրինի եղանակով ձեռք բերված ապացույցը, ապա դատախազը պետք է քննարկի այդ միջնորդությունը և կայացնի համապատասխան որոշում:

3.4.2.5. Վարույթի ժամկետը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի համար օրենքով նախատեսված է յոթօրյա ժամկետ, որն սկսվում է այն պահից, երբ դատախազը քննիչից ստանում է մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը և ավարտվում է դատախազի կողմից օրենքով նախատեսված որոշումներից մեկի ընդունմամբ (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս): Այս փուլի համար նախատեսված յոթօրյա ժամկետն առանձնանում է հետևյալ հատկանիշներով.

1) *Հստակություն.* յոթօրյա ժամկետի սկիզբը (մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը դատախազի կողմից ստանալու պահը) և ավարտը (դատախազի կողմից որոշումներից մեկի ընդունումը) ունեն օրենսդրական որոշակիություն:

2) *Կարճություն.* յոթ օրը էապես կարճ ժամկետ է, ինչը պայմանավորված է այս փուլի բնույթով և խնդիրներով:

3) *Անփոփոխելիություն.* յոթօրյա ժամկետը ենթակա չէ երկարաձգման, կասեցման կամ ընդհատման: Այն կոշտ ժամկետ է, որը պետք է պահպանվի դատախազի կողմից:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում գործում են երկու տարբեր բնույթի ժամկետներ.

1) տվյալ փուլի յոթօրյա ժամկետը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս),

2) քրեական հետապնդման առավելագույն ժամկետը (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդված):

Եթե նախաքննության ընթացքում հարուցվել է քրեական հետապնդում, ապա մինչդատական վարույթը պետք է ավարտվի մինչև քրեական հետապնդման առավելագույն ժամկետը լրանալը (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածի 1-ին մաս)։ Քրեական հետապնդման ժամկետն ամբողջ մինչդատական վարույթի համար նախատեսված առավելագույն ժամկետն է, որի ընթացքում պետք է ավարտվի նախաքննությունը, մեղադրական եզրակացությունը հաստատվի դատախազի կողմից, և գործն ուղարկվի դատարան:

Եթե լրացել է օրենքով սահմանված քրեական հետապնդման առավելագույն ժամկետը, և դատախազն այդ ժամկետի ընթացքում վարույթի նյութերը չի հանձնել դատարան, ապա դա քրեական հետապնդումը բացառող հանգամանք է (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ)։ Այս կարգավորումից բխում է, որ քրեական հետապնդման ժամկետները վերաբերում են ոչ միայն նախաքննության փուլին, այլև նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլին: Այլ կերպ ասած՝ եթե դատախազն ստանում է վարույթի նյութերը, սակայն մինչև ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածով սահմանված առավելագույն ժամկետը լրանալը չի հասցնում հաստատել մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերը հանձնել դատարան, ապա առաջանում է քրեական հետապնդումը դադարեցնելու պարտականություն:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման վարույթում քրեական հետապնդման ժամկետները գործում են հետևյալ կերպ. դատախազը պետք է իր յոթօրյա ժամկետում կայացնի որոշումներից մեկը՝ հաշվի առնելով քրեական հետապնդման առավելագույն ժամկետի մնացորդը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս)։ Այս համատեքստում կարևոր է նշել, որ դատախազի յոթօրյա ժամկետը պետք է տեղավորվի քրեական հետապնդման ժամկետի ներսում. եթե քրեական հետապնդման ժամկետի մնացորդը քննարկվող փուլի համար նախատեսված յոթօրյա ժամկետից պակաս է, ապա դատախազը պարտավոր է փուլը եզրափակող որոշում կայացնել քրեական հետապնդման ժամկետում: Եթե դատախազը որոշում է վարույթի նյութերը վերադարձնել նախաքննության մարմին (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ապա այդ վերադարձը չի կասեցնում կամ չի ընդհատում քրեական հետապնդման ժամկետի հոսքը, քանի որ դատախազի կողմից նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ ընդհատելու հիմք չէ (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածի 5-րդ մաս, 193-րդ հոդված)։

3.4.3. Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման վարույթի հատկանիշները

3.4.3.1. Խնդիրները և գործառույթները

Քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալուց հետո դատախազի գործունեությունն օժտված է քրեական դատավարության փուլերին հատուկ հատկանիշներով: Դատախազի գործունեության անմիջական խնդիրն է ստուգել քրեական վարույթը կարճելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը:

Ի տարբերություն դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման, որտեղ դատախազը քննարկում է մեղադրական եզրակացությունը հաստատելու հարցը, քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում դատախազը քննարկում է քննիչի կողմից կայացված վարույթը կարճելու որոշումը հաստատելու հարցը:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի գլխավոր խնդիրն է վարույթի նյութերի ամբողջական և համալիր վերլուծության միջոցով պարզել, թե արդյոք առկա են քրեական վարույթն ընդհանրապես եզրափակելու (ավարտելու) պայմանները: Այս գլխավոր խնդրից ածանցվում են քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի հետևյալ անմիջական խնդիրները.

1) Ստուգել նախաքննության արդյունքների օրինականությունը և հիմնավորվածությունը (բովանդակության ստուգում): Դատախազը, քննիչից ստանալով քրեական վարույթը կարճելու մասին որոշումը, պարտավոր է ստուգել, թե արդյոք առկա է ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդվածով նախատեսված վարույթը կարճելու հիմքերից որևէ մեկը: Մասնավորապես, դատախազը պետք է պարզի՝ արդյոք քննիչի կողմից հաստատված փաստական հանգամանքները և դրանք հաստատող ապացույցները բավարար են վարույթը կարճելու համար, արդյոք ճիշտ է կիրառվել իրավական հիմքը, արդյոք պահպանվել են նախաքննության կատարման կարգը սահմանող օրենսդրական բոլոր կանոնները (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 5-րդ մաս, 13-րդ հոդված): Ստուգման արդյունքում դատախազը եզրակացնում է, թե արդյոք քննիչի կողմից վարույթը կարճելու որոշումն օրինական է և հիմնավորված: Այս կերպ դատախազը կանխում է քրեական վարույթի՝ անհիմն կամ անօրինական կարճման դեպքերը:

2) Ստուգել քրեական վարույթը կարճելու մասին որոշման ձևի պատշաճությունը (ձևի ստուգում): Դատախազը պարտավոր է նաև ստուգել, թե արդյոք քրեական վարույթը կարճելու մասին որոշման ձևը (կառուցվածքը) համապատասխանում է օրենքի պահանջներին: Մասնավորապես, դատախազը պետք է պարզի, արդյոք որոշման մեջ շարադրված են բոլոր անհրաժեշտ տարրերը (փաստական հանգամանքները, դրանք հաստատող ապացույցները, իրավական հիմնավորումները, արգելադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինմանն առնչվող հարցերը, որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները): Եթե դատախազը պարզում է, որ որոշումը էական հարցերում չի համապատասխանում օրենքի պահանջներին (օրինակ՝ բացակայում է իրավական հիմնավորումը, կամ չեն լուծվել ապացույցների պահպանման կամ տնօրինման հարցերը), ապա նա վարույթի նյութերը վերադարձնում է նախաքննության մարմնին՝ որոշումը պատշաճ ձևակերպելու համար: Միայն այն դեպքում, երբ որոշումը համապատասխանում է բոլոր պահանջներին, դատախազը հաստատում է այն (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 6-րդ մաս):

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի խնդիրներից կարելի է բխեցնել նաև այս փուլի գործառույթները՝

1) Վերահսկողական գործառույթ. ստուգել քննիչի կողմից վարույթը կարճելու որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ ներառյալ ապացույցների պատշաճությունը, բավարարությունը և իրավական հիմքերի ճիշտ կիրառումը:

2) Կանխարգելիչ գործառույթ. բացառել քրեական վարույթի անհիմն կամ անօրինական ավարտը վարույթը կարճելու ճանապարհով:

Ի տարբերություն դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման՝ քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլը չունի նախապատրաստական գործառույթ, քանի որ այստեղ խոսքը վերաբերում է քրեական վարույթի ավարտին, այլ ոչ թե դատական քննության նախապատրաստմանը:

3.4.3.2. Սուբյեկտային կազմը

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում վարույթն իրականացնող մարմինը հսկող դատախազն է, ով այս փուլում օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի, այլ դատախազների (խմբային հսկողության դեպքում), ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ:

Դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ երկու առիթով.

Առաջին՝ քննիչը նախաքննության ավարտի մասին ծանուցում է վարույթի մասնավոր մասնակիցներին և վարույթի նյութերին ծանոթանալուց հետո կազմում է քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և այն ներկայացնում հսկող դատախազին (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 1-ին մաս): Այս դեպքում դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և վարույթի նյութերն *ընդունող* սուբյեկտ:

Երկրորդ՝ դատախազն իրավասու է վարույթի նյութերը վերադարձնել նախաքննության մարմին, եթե պարզում է, որ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 6-րդ մաս): Այս դեպքում դատախազը կրկին քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես վարույթի նյութերն *ուղարկող* սուբյեկտ:

Եթե քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծումն իրականացվում է դատախազների խմբի կողմից, ապա խմբի անդամների և ղեկավարի միջև ծագում են դատավարական հարաբերություններ՝ կապված խմբի աշխատանքների համակարգման կամ ղեկավարման հետ, օրինակ՝ խմբի անդամների միջև լիազորությունների բաշխման հետ (ՀՀ ՔրԴՕ 39.1-րդ հոդված, 39.2-րդ հոդված):

Դատախազը վարույթի մասնավոր մասնակիցների (մեղադրյալ, տուժող, պաշտպան, օրինական ներկայացուցիչ և այլն) հետ այս փուլում չունի անմիջական շփումներ՝ նրանց մասնակցությամբ վարութային գործողություններ կատարելու ձևով: Սակայն դա չի նշանակում, որ նրանց հետ դատավարական հարաբերություններ չեն ծագում: Այսպես՝ վարույթի մասնավոր մասնակիցներն այս փուլում ևս իրավունք ունեն միջնորդություններ ներկայացնել վարույթն իրականացնող դատախազին: Ի տարբերություն դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծմանը, որտեղ դատախազն օժտված է միջնորդություններն առանց քննության թողնելու հայեցողական լիազորությամբ (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 3-րդ մաս), քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում գործում է ընդհանուր կանոնը. Դատախազը՝ որպես վարույթն իրականացնող մարմին, պարտավոր է այդ խնդիրներով և կարճ ժամկետով պայմանավորված սահմանափակումների շրջանակում քննել միջնորդությունները (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 2-րդ մաս): Միջնորդության ներկայացման փաստն ինքնին դատախազի և միջնորդություն ներկայացրած անձի միջև առաջացնում է դատավարական հարաբերություն:

3.4.3.3. Վարույթի սկիզբը և ավարտը

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն սկսվում է նախաքննության փուլի ավարտից հետո: Ավելի ճշգրիտ՝ այն սկսվում է քրեական վարույթը կարճելու մասին որոշումը վարույթի նյութերի հետ միասին քննիչից ստանալու պահից:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի վարույթն ավարտվում է հետևյալ որոշումներից մեկի ընդունմամբ.

1) քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելը, կամ՝

2) վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն ավարտվում է դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու պահին, այլ ոչ թե որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահին: Օրինական ուժի մեջ մտնելը տեղի է ունենում ավելի ուշ՝ բողոքարկման ժամկետը լրանալուց կամ բողոքարկումից հետո որոշումը վերջնականապես հաստատվելուց հետո (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 11-րդ մաս): Այսինքն՝ փուլն ավարտվում է դատախազի կողմից որոշում կայացնելու պահին, իսկ որոշման օրինական ուժի մեջ մտնելը տեղի է ունենում արդեն փուլի ավարտից հետո:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո (որոշումը հաստատումից մինչև օրինական ուժի մեջ մտնելը) ծագում են (կարող են ծագել) կազմակերպական կամ բողոքարկման վարույթներ, որոնք թեև դուրս են դատավարական փուլային

համակարգից, բայց համարվում են դատավարական հարաբերություններ և կազմում են քրեադատավարական ընդհանուր համակարգի մաս: Մասնավորապես.

1) Բողոքարկման վարույթը, որը ծագում է այն դեպքում, երբ վարույթի մասնավոր մասնակիցը համաձայն չէ դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու հետ: Այս դեպքում մասնավոր մասնակիցը կարող է բողոքարկել որոշումը վերադաս դատախազին (ՀՀ ՔրԴՕ 196-րդ հոդվածի 7-րդ մաս, 207-րդ հոդվածի 7-րդ մաս): Այս հարաբերությունները դատավարական են, սակայն ծագում են քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո:

2) Տեղեկացման պարտականությունը, ըստ որի՝ քննիչը դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելուց հետո վարույթի մասնավոր մասնակիցներին տեղեկացնում է կայացված որոշման մասին (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 7-րդ մասի և 196-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն): Տեղեկացումը տեղի է ունենում փուլի ավարտից հետո:

Ավելին, օրենքով նախատեսվել է նաև քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման թերությունները հսկող դատախազի որոշմամբ լուծելու հնարավորություն, եթե դրանց լուծումը չի փոխում որոշման էությունը (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 13-րդ մասի): Այս պարագայում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն ավարտվել է, սակայն օրենքով հսկող դատախազին տրվել է դատավարական որոշում կայացնելու հնարավորություն:

Ինչպես նշվեց, այս հարաբերությունները քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ» են:

3.4.3.4. Դատավարական ձևը

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի դատավարական ձևն ունի որոշակի առանձնահատկություններ:

Առաջին՝ այս փուլն իրականացվում է ոչ հրապարակային (գրասենյակային) ընթացակարգով՝ հիմնականում փաստաթղթերի ուսումնասիրության ձևով՝ առանց նիստ հրավիրելու, առանց վարույթի մասնակիցների մասնակցությամբ լսումներ կազմակերպելու և առանց հրապարակային ընթացակարգի:

Երկրորդ՝ այս փուլում որոշումները կայացվում են միանձնյա: Անհատական դատախազական հսկողության դեպքում բոլոր որոշումները (քրեական վարույթը կարճելու մասին որոշման հաստատումը, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը) ընդունում է հսկող դատախազը միանձնյա: Խմբային հսկողության դեպքում ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված լիազորությունների շրջանակում (քրեական վարույթը կարճելու մասին որոշման հաստատում, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը) որոշումներն ընդունում է բացառապես դատախազների խմբի ղեկավարը միանձնյա, իսկ այլ լիազորությունների դեպքում (օրինակ՝ վարույթի մասնակիցների ներկայացրած

միջնորդությունների քննարկման դեպքում) որոշումները կարող են ընդունվել խմբի անդամների կողմից միանձնյա՝ խմբի ղեկավարի սահմանած շրջանակներում (ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Երրորդ՝ այս փուլում ապացուցողական գործողություններ չեն կատարվում և ապացույցներ չեն հավաքվում, իսկ նախաքննության ընթացքում հավաքված ապացույցները դատախազն ստուգում է հիմնականում ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Չորրորդ՝ ինչպես նշվեց, այս փուլում գործում է միջնորդությունների քննարկման ընդհանուր կանոնը՝ դատախազը պարտավոր է տվյալ փուլին հատուկ սահմանափակումների (դատավարական ռեժիմի) շրջանակում քննել միջնորդությունները (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 2-րդ մաս): Համեմատության համար նշենք, որ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում դատախազն իրավասու է միջնորդությունները թողնել առանց քննության, քանի որ միջնորդություններում առաջադրված հարցերը (օրինակ՝ ապացույցն անթույլատրելի ճանաչելը) կարող են քննարկվել նաև դատական վարույթի ընթացքում: Մինչդեռ, քրեական վարույթի կարճումը հաստատելու փուլում դատախազի կողմից որոշումը հաստատելուց հետո քրեական վարույթն ավարտվում է (եթե որոշումը չի բողոքարկվում կամ բողոքարկումից հետո մնում է ուժի մեջ), ուստի այս փուլում միջնորդություններով առաջադրված հարցերը հետագա դատական վարույթի ընթացքում քննարկվելու հնարավորություն չունեն:

Այս փուլում վարույթի մասնավոր մասնակիցները կարող են ներկայացնել մասնավորապես հետևյալ միջնորդությունները.

Առաջին՝ միջնորդություններ՝ կապված կարճման հիմքերի բացակայության հետ: Եթե մասնավոր մասնակիցը կարծում է, որ քննիչի կողմից վարույթը կարճելու որոշումն անհիմն է (այսինքն՝ ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկն առկա չէ), նա կարող է միջնորդել դատախազին վերադարձնել նյութերը նախաքննության մարմնին՝ նախաքննությունը շարունակելու համար:

Երկրորդ՝ միջնորդություններ՝ կապված որոշման ձևական խախտումների հետ: Եթե քրեական վարույթը կարճելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին (օրինակ՝ չեն լուծվել արգելադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինման վերաբերյալ հարցերը): Միջնորդությունները կարող են վերաբերել նաև վարութային ծախսերի բաշխմանը:

3.4.3.5. Վարույթի ժամկետը

Քրեական դատավարության փուլի ինքնուրույնության հատկանիշներից է այդ փուլի համար օրենսդրորեն սահմանված ժամկետների առկայությունը: Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի համար օրենքով նախատեսված է յոթօրյա հստակ ժամկետ, որն սկսվում է այն պահից, երբ դատախազը քննիչից ստանում է քրեական վարույթը

կարճելու մասին որոշումը և ավարտվում է դատախազի կողմից օրենքով նախատեսված որոշումներից մեկի ընդունմամբ (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 6-րդ մաս):

Յոթօրյա ժամկետն առանձնանում է հստակությամբ (սկիզբը և ավարտը որոշակի են), կարճությամբ (պայմանավորված փուլի բնույթով) և անփոփոխելիությամբ (ենթակա չէ երկարաձգման, կասեցման կամ ընդհատման):

§ 4. Դատախազի կարգավիճակը նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատախազին վերապահված է մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողական գործառույթ՝ առանց քննչական գործողություններ կատարելու լիազորության: Մյուս կողմից՝ ՀՀ ՔրԴՕ 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով դատախազը համարվում է վարույթն իրականացնող մարմին՝ մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալու պահից մինչև մեղադրական եզրակացությունը դատարան հանձնելը, քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատելը կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը: Այս նորմերի համադրությունից պարզ է դառնում, որ դատախազն այս փուլում ունի երկակի կարգավիճակ (*status duplex*)՝ միաժամանակ հանդես գալով թե՛ որպես հսկողություն իրականացնող մարմին, թե՛ որպես վարույթն իրականացնող մարմին: Այս երկակիությունը բնորոշ է նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլին, քանի որ դատախազը համատեղում է ինչպես հետագա (*ex post*) հսկողության, այնպես էլ որպես վարույթն իրականացնող մարմին առաջնային որոշումներ կայացնելու լիազորությունները:

Դատախազի՝ որպես հսկողություն իրականացնող մարմնի լիազորություններն են՝

1) հաստատել մեղադրական եզրակացությունը
2) վերակազմել մեղադրական եզրակացությունը,
3) վերադարձնել վարույթի նյութերը նախաքննության մարմին,
4) հաստատել քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը:

Դատախազի՝ որպես վարույթն իրականացնող մարմնի լիազորություններից են՝

1) կիրառել համապատասխան դատավարական սանկցիաներ,
2) կիրառել հատուկ պաշտպանության միջոցներ,
3) լուծել վարույթի մասնակիցների ներկայացրած միջնորդությունները,
4) հաստատել ապացույցի անթույլատրելիությունը կամ օրենքով սահմանված կարգով ստացված ապացույցի օգտագործման արգելքը:

Հարկ է նշել, որ դատախազի՝ որպես հսկողություն իրականացնող և միաժամանակ վարույթն իրականացնող մարմնի լիազորությունների տարանջատումը որոշ չափով

պայմանական է: Իրականում այս երկու գործառույթները փոխներթափանցում են, իսկ դատախազին վերապահված լիազորությունները հաճախ միաժամանակ կրում են ինչպես հսկողական, այնպես էլ առաջնային վարութային բնույթ: Օրինակ՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու լիազորությունը թեև իր էությամբ հսկողական գործառույթի դրսևորում է, սակայն այն նաև այս փուլում կայացվող առաջնային վարութային որոշում է: Այս առումով դատախազի կարգավիճակը ոչ թե երկու իրարամերժ դերերի գումար է, այլ իրավական ինստիտուտների սինթեզ, որտեղ հսկողությունն իրականացվում է վարույթն իրականացնելու լիազորությունների շրջանակում, իսկ վարութային որոշումները կայացվում են հսկողական արդյունքների հիման վրա:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում դատախազի կարգավիճակի երկակիությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Իրականում նման հակասություն առկա չէ, քանի որ վարույթն իրականացնելու մասին դատավարական նորմը դատախազին չի վերապահում քննության գործառույթ: Դատախազը՝ որպես վարույթն իրականացնող մարմին, օժտված է ոչ քննչական բնույթի ինքնուրույն որոշումներ կայացնելու (ապացուցողական գործողություններ կատարելու) լիազորություններով: Ուստի այս փուլում քննության և հսկողության գործառույթները չեն միախառնվում:

Այսպիսով՝ դատախազի երկակի կարգավիճակը (*status duplex*)՝ որպես միաժամանակ հսկողություն իրականացնող և վարույթն իրականացնող մարմին, նախաքննության արդյունքների վերստուգման փուլի առանձնահատկությունն է, որտեղ դատախազը համատեղում է ինչպես հետագա (*ex post*) հսկողության, այնպես էլ ոչ քննչական բնույթի որոշումներ կայացնելու լիազորությունները:

Եզրակացություններ

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգումը քրեական դատավարության ինքնուրույն փուլ է, քանի որ այն բավարարում է փուլին ներկայացվող բոլոր դոկտրինալ չափանիշներին:

Դատախազական վերստուգման փուլն ունի դրսևորման երկու ձև՝ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծում (երբ քննիչը ներկայացնում է մեղադրական եզրակացություն) և քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծում (երբ ներկայացվում է քրեական վարույթը կարճելու մասին որոշում): Երկու դեպքում էլ դատախազը կատարում է նույն գլխավոր գործառույթը՝ վերստուգում է նախաքննության արդյունքները և կայացնում վերջնական որոշում:

Դատախազի կարգավիճակն այս փուլում երկակի է (status duplex)՝ նա միաժամանակ հանդես է գալիս որպես հսկողություն իրականացնող մարմին (ստուգում է նախաքննության օրինականությունը) և որպես վարույթն իրականացնող մարմին (ինքնուրույն որոշումներ է կայացնում խափանման միջոցի, միջնորդությունների, մեղադրական եզրակացության հաստատման կամ վերակազմման): Այս երկակի-

ությունը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, քանի որ դատախազին չի վերապահվում ապացուցողական գործողություններ կատարելու լիազորություն:

Քրեադատավարական համակարգում առկա են նաև հարաբերություններ, որոնք դուրս են գտնվում դատավարության փուլային կառուցվածքից, սակայն ունեն դատավարական բնույթ: Դրանք ձևավորում են քրեադատավարական ընդհանուր համակարգի այսպես կոչված «գորշ գոտիներ»: «Գորշ գոտիների» առկայությունը թույլատրելի է, քանի որ դրանցով լուծվում են ոչ թե փուլերին հատուկ անմիջական խնդիրներ, այլ խիստ որոշակի, կոնկրետ («տեղային») խնդիրներ: Այս հարաբերությունները չեն նսեմացնում դատավարական համակարգի արժեքը, այլ ընդգծում են դրանց յուրահատուկ տեղը քրեադատավարական ընդհանուր համակարգում:

ПРОКУРОРСКАЯ ПРОВЕРКА РЕЗУЛЬТАТОВ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ КАК СТАДИЯ УГОЛОВНОГО ПРОЦЕССА

ГАМБАРЯН АРТУР
Заведующий кафедрой теории права и конституционного права
Российско-Армянского университета
профессор Академии государственного управления Республики Армения
доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

Аннотация. В статье обосновывается положение о том, что досудебное производство в уголовном процессе состоит из двух относительно самостоятельных стадий: стадии предварительного расследования и стадии прокурорской проверки результатов предварительного расследования. Автор критикует подход, согласно которому деятельность прокурора после завершения предварительного расследования рассматривается как заключительная часть данной стадии. Анализируя доктринальные критерии (непосредственные задачи стадии, субъектный состав, процессуальная форма, сроки и завершающий стадию акт), автор показывает, что прокурорская проверка обладает всеми признаками, характерными для самостоятельной стадии уголовного судопроизводства.

Сравнительно-правовой анализ законодательства Латвии, Болгарии, Китая и Испании свидетельствует о том, что в различных правовых системах деятельность прокурора после завершения расследования признаётся самостоятельной стадией уголовного судопроизводства.

В уголовном судопроизводстве Республики Армения стадия прокурорской проверки результатов предварительного расследования имеет две формы реализации в зависимости от того, какой процессуальный акт следователь представляет прокурору: 1) решение вопроса о возбуждении обвинения в суде (когда представляется обвинительное заключение) 2) решение вопроса об утверждении прекращения уголовного производства (когда представляется постановление о прекращении производства). В обоих случаях прокурор выполняет одну и ту же основную функцию — проверяет результаты предварительного расследования. Вместе с тем каждая из указанных форм имеет свои особенности, связанные с выполняемыми функциями, объёмом полномочий и порядком рассмотрения ходатайств, и завершается принятием итогового решения, характерного для соответствующей стадии.

Отдельное внимание уделяется двойственному процессуальному статусу прокурора на стадии проверки результатов предварительного расследования и вопросу его соответствия Конституции.

Ключевые слова: прокурорская проверка результатов предварительного расследования, стадия уголовного судопроизводства, досудебное производство, статус прокурора, мера пресечения, обвинительное заключение.

PROSECUTORIAL REVIEW OF THE RESULTS OF PRE-TRIAL INVESTIGATION AS A STAGE OF CRIMINAL PROCEEDINGS

GHAMBARYAN ARTUR
Head of the Chair of Theory of Law and Constitutional Law,
Russian-Armenian University, Professor at the Chair of Law,
Public Administration Academy of the Republic of Armenia,
Doctor of Science in Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia

Abstract. The article substantiates that the pre-trial proceedings in criminal procedure consist of two relatively independent stages: the stage of preliminary investigation and the stage of prosecutorial review of the results of preliminary investigation. The author criticizes the approach according to which the prosecutor's activity after the completion of preliminary investigation is considered as a final part of the preliminary investigation stage. By analyzing doctrinal criteria (the immediate task of the stage, the subject composition, the procedural form, the time limits, the act concluding the stage), the author demonstrates that the prosecutorial review possesses all the characteristics inherent to a stage of criminal proceedings.

The comparative legal analysis (Latvia, Bulgaria, China, Spain) has shown that in different legal systems, the prosecutor's activity after the completion of investigation is considered as an independent stage of proceedings.

In the criminal procedure of the Republic of Armenia, the stage of prosecutorial review of the results of preliminary investigation has two forms of manifestation, depending on which act the investigator has submitted to the prosecutor: 1) resolution of the issue of instituting charges in court (when an indictment is submitted), 2) resolution of the issue of confirming the termination of criminal proceedings (when a decision to terminate the proceedings is submitted). In both cases, the prosecutor performs the same main function – reviews the results of preliminary investigation – but each form has its own specifics (functions, powers, procedure for examining motions) and concludes with a final decision characteristic of the stage.

Special attention is paid to the dual status of the prosecutor at the stage of prosecutorial review of the results of preliminary investigation and its constitutionality.

Key words: prosecutorial review of the results of preliminary investigation, stage of criminal proceedings, pre-trial proceedings, status of prosecutor, preventive measure, indictment.

Օգտագործված գրականության ցանկ

1. Барабанов П.К. Уголовный процесс Испании. М.: Спутник +, 2021. 382 с.

2. Баранов А. М. Процессуальные ошибки на этапе окончания предварительного следствия и способы их исправления: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1992. 24 с.

3. Дикарев И.С. Модернизация системы досудебного производства в уголовном процессе // Правовая парадигма. 2017. Т. 16, № 2. С. 117-122.

4. Зеленецкий В. С. Возбуждение государственного обвинения в советском уголовном процессе. Харьков: Изд-во при Харьк. гос. ун-те, 1979. 144 с.

5. Манова Н.С., Францифоров Ю.Ф. Процессуальная природа деятельности прокурора при окончании досудебного производства // Российский следователь. 2003. № 8. С. 35-37.

6. Насонова И.А., Буров Ю.В. Процессуальный порядок окончания предварительного следствия с составлением обвинительного заключения. М.: Юрлитинформ, 2012. 232 с.

7. Резяпов А. А. Окончание предварительного расследования с обвинительным заключением (актом, постановлением) и направление уголовного дела в суд: дис. … канд. юрид. наук. Ижевск, 2014. 259 с.

8. Смирнов А. В., Калиновский К. Б. Уголовный процесс. учебник под общ. ред. А. В.
Смирнова. 6-еизд., перераб. М.: Норма: ИНФРА-М. 2015. 736 с.

9. Сумин А. А., Химичева О. В. Введение в современный уголовный процесс Китайской Народной Республики: монография. М.: Юрлитинформ, 2024. 408 с.

10. Уголовный процесс европейских государств : монография. Под ред. В. И. Самарина, В. В. Луцика. М.: Проспект, 2018. 752 с.

11. Уголовный процесс. Проблемные лекции / под ред. В. Т. Томина, И. А. Зинченко. М.: Юрайт, 2013. 799 с.

12. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան: 2-րդ լրամշակված հրատ., Երևան, Լուսաբաց, 2017, 632 էջ:

13. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, 613 էջ:

14. Հու Հաոքսին Քրեական հետապնդման և գործերի վերանայման կարգի մասին // Ցզյանսի նահանգի ոստիկանության ակադեմիայի ամսագիր, 2003, № 5, էջ 45-48 (չիներենով):

15. Քվինտերո Խիմենես, Կամիլո Ալբերտո Միջանկյալ փուլը իսպանական քրեական դատավարությունում // Միջանկյալ փուլը և մեղադրական ակտերի նկատմամբ վերահսկողությունը քրեական դատավարությունում (Ճշմարտությունների և առասպելների միջև), Marcial Pons, Մադրիդ, 2021, էջ 25-75 (իսպաներենով):

Հոդվածը գրախոսվել է 02.06.2026թ.
Ներկայացվել է տպագրության 08.06.2026թ.

LEX BENIGNITATIS ԿՈԼԻԶԻՈՆ ԿԱՆՈՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան
DOI: 10.63925/18294847-2026.blj22-05

Ամփոփագիր. Հոդվածը նվիրված է *lex benignitatis* (բարեհաճության օրենք) կոլիզիոն կանոնի համակողմանի տեսական վերլուծությանը: Հետազոտության նպատակն է բացահայտել այդ կանոնի ծագումնաբանությունը, իրավական բնույթը, դրա հարաբերակցությունը *in dubio mitius* սկզբունքի հետ, ինչպես նաև որոշել դրա կիրառման ոլորտը ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում: Հեղինակը վերլուծում է *lex benignitatis*-ի ամրագրումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածում, այն համադրում նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» 2002 թվականի օրենքի հետ և ցույց տալիս, թե ինչպես է փոխվել օրենսդրի մոտեցումը սուբյեկտային կազմի հարցում: Աշխատանքում առանձնակի ուշադրություն է դարձվում *lex benignitatis*-ի կիրառման պայմաններին, դրա սահմանադրաիրավական հիմնավորմանը, ինչպես նաև հանրային-իրավական հարաբերություններում դրա կիրառելիության հիմնավորումներին և մասնավոր-իրավական հարաբերությունների վրա հնարավոր տարածման հայեցակարգային նախադրյալներին: Հետազոտությունն ավարտվում է այն եզրակացությամբ, որ *lex benignitatis*-ը կիրառվում է հանրային-իրավական հարաբերություններում, սակայն կան հայեցակարգային նախադրյալներ այն մասնավոր-իրավական հարաբերությունների առանձին տեսակների վրա տարածելու համար:

Հիմնաբառեր. *Lex benignitatis*, կոլիզիոն կանոն, *in dubio mitius*, իրավական կոլիզիա, հանրային իրավունք, մասնավոր իրավունք, արդարություն, *aequitas*, թույլ կողմ, փաստացի անհավասարություն, օրենսդրական սխալ[1]:

1. Lex benignitatis կանոնի ծագումնաբանությունը և դոկտրինալ հիմնավորումը

Lex benignitatis (բարեհաճության օրենք) կոլիզիոն կանոնն իր արմատներով հասնում է հռոմեական իրավունք: Այն՝ որպես բարեհաճ մեկնաբանության (*benignior interpretatio*) գաղափար, ի սկզբանե առաջացել է ժառանգական իրավունքում, որտեղ կտակարարի

[1] Սույն հետազոտությունն իրականացվել է ՌՀՀ Զարգացման ծրագրի շրջանակներում ԳՀՓԿ մրցույթի կանոնակարգի համաձայն № 26DP-09LAW

կամքի անորոշությունը մեկնաբանվում էր կտակի իրավական ուժը պահպանելու օգտին (*testator non praesumitur frustra testari voluisse* կանխավարկածով)[2]: Այս մոտեցումն ընկավ *benignius leges interpretandae sunt, quo voluntas earum conservetur* («Օրենքները պետք է մեկնաբանվեն ավելի բարեհաճ, որպեսզի պահպանվի դրանց նպատակը») դասական մաքսիմի հիմքում: Հռոմեացի իրավաբաններն ամրագրեցին այս գաղափարը մի շարք մաքսիմներում, մասնավորապես՝ *semper in dubiis benigniora praeferenda sunt* («կասկածելի դեպքերում միշտ պետք է նախապատվություն տալ առավել բարենպաստին»):

Հետագայում միջնադարյան կանոնական իրավունքում բարեհաճության օրենքի (*lex benignitatis*) գաղափարը ձեռք բերեց աստվածաբանական չափում՝ մարմնավորելով ողորմածության և աստվածային արդարության (*aequitas canonica*) առաջնահերթությունը պոզիտիվ իրավունքի ձևական խստության նկատմամբ:

Ծագելով որպես մեկնաբանման գործիք՝ բարեհաճության օրենքը ժամանակի ընթացքում վերածվել է ինքնուրույն կոլիզիոն կանոնի, որը նախատեսված է իրավական նորմերի միջև առկա հակասությունը լուծելու համար:

2. Lex benignitatis կոլիզիոն կանոնի հասկացությունը և իրավական բնույթը: Հարաբերակցությունը in dubio mitius սկզբունքի հետ

Բարեհաճության օրենքը, վերափոխվելով կոլիզիոն կանոնի, դոկտրինայում ստացել է *lex benignitatis* անվանումը (լատ. *lex* — օրենք, *benignitatis* — բարեհաճություն, մեղմություն — «մարդու համար բարենպաստ նորմի սկզբունք»):

Lex benignitatis-ը կոլիզիոն կանոն է, որի հիմնական գործառույթը երկու կամ ավելի իրավական նորմերի միջև ծագած կոլիզիայի լուծումն է, որոնք տարբեր կերպ են կարգավորում ֆիզիկական կամ իրավաբանական անձի կարգավիճակը: Այս կոլիզիոն կանոնը նախապատվություն է տալիս այն նորմին, որն առավել բարենպաստ է ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Lex benignitatis-ը սերտորեն կապված է *in dubio mitius* (կասկածի դեպքում՝ առավել մեղմ) սկզբունքի հետ[3]: Դրանք երկուսն էլ ուղղված են իրավական անորոշության պայմաններում մասնավոր անձի իրավունքների և շահերի պաշտպանությանը, սակայն գործում են իրավակիրառման տարբեր փուլերում:

In dubio mitius սկզբունքն առաջին հերթին իրավական նորմերի մեկնաբանման ընդհանուր սկզբունք է: Այն կիրառվում է, երբ կոնկրետ նորմի տեքստային բովանդակությունը պարզ չէ և թույլ է տալիս մի քանի հասկացողության տարբերակ. այս դեպքում ընտրվում է մասնավոր անձի համար առավել մեղմ կամ առավել նվազ ծանրաբեռնող մեկնաբանումը:

---

[2] Martin Avenarius Benigni interpretation origin and transformation of a Rule of construction in the Law Succession. Roman Legal Tradition, 6 (2010). P. 1-21.

[3] Տե՛ս Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Մկրտչյան Մ., «Կասկածի դեպքում մեղմ որոշման օգտին (in dubio mitius)» մաքսիմի կիրառությունն իրավական անորոշությունները լուծելիս // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2023, № 3 (111) էջեր 8-44:

Այս երկու գործիքների փոխկապակցվածությունը դրսևորվում է նրանում, որ *in dubio mitius*-ը հանդես է գալիս որպես ավելի լայն, ընդհանրափիլիսոփայական սկզբունք, որը համարվում է *lex benignitatis*-ի ստեղծման հիմքը: Եթե իրավական նորմերի մեկնաբանման փուլում դրանց բովանդակությունը պարզվում է, սակայն դրանց միջև հայտնաբերվում է անհաղթահարելի հակասություն (կոլիզիա), ապա իրավակիրառողը մեկնաբանման փուլից անցնում է կոլիզիայի լուծման փուլ: Կիրառելով *lex benignitatis* կոլիզիոն կանոնը՝ իրավակիրառողը նախապատվություն է տալիս մասնավոր անձի համար առավել բարենպաստ նորմին:

Նախահեղափոխական ռուսական դոկտրինայում Ն.Ս. Տագանցևը *lex benignitatis*-ը ճանաչում էր որպես ինքնուրույն կոլիզիոն գործիք, համաձայն որի՝ կասկածի դեպքում պետք է կիրառվի մեղադրյալի նկատմամբ առավել մեղմ օրենքը[4]: Ինչպես երևում է Տագանցևի բերված դիրքորոշումից, դեռևս նախահեղափոխական դոկտրինում *lex benignitatis*-ն ընկալվում էր որպես ինքնուրույն կոլիզիոն կանոն, որը կիրառելի է քրեաիրավական նորմերի միջև առկա կոլիզիաները լուծելու համար: Այդուհանդերձ, այս կանոնը մնում էր զուտ դոկտրինալ կառուցակարգ (կոնստրուկցիա) և ամրագրված չէր օրենսդրության մեջ:

Ժամանակակից շրջանում իրավիճակը փոխվել է: Հայաստանի Հանրապետությունում *lex benignitatis*-ը ամրագրված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածում՝ որպես վերջին հերթի կոլիզիոն նորմ, որը կիրառվում է, եթե բացակայում են *lex superior*, *lex specialis* և *lex posterior* կանոնների կիրառման հիմքերը[5]: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝ (...) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Օրենքի համատեքստում այս կոլիզիոն նորմն անվանվում է նաև «մարդու համար բարենպաստ նորմի նախապատվություն» (40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

Ամրագրելով *lex benignitatis*-ը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածում՝ օրենսդիրն այս կանոնը ձևակերպել է անձի իրավունքների և պարտականությունների համար առավել բարենպաստ լինելու վերացական չափանիշի միջոցով: Սակայն օրենքն ուղղակիորեն չի տարանջատում այս նորմի կիրառման ոլորտը՝ կախված իրավահարաբերությունների ճյուղային պատկանելիությունից. Արդյո՞ք այն տարածվում է բացառապես հանրային-իրավական ոլորտի վրա (որտեղ

---

[4] Таганцев Н. С. Русское уголовное право. Лекции. Часть общая. В 2 т. Т. 1. - М.: Наука, 1994. С. 94.

[5] См.: Гамбарян А. С., Даллакян Л. Г. Проблемы конкуренции коллизионных норм в юридической науке и практике // Вестник Томского государственного университета. 2019. № 438. С. 201-209.

առկա է իշխանության և քաղաքացու միջև ուժերի անհավասարակշռություն), թե՞ կիրառելի է նաև մասնավոր-իրավական (հորիզոնական) հարաբերություններում:

3. *Lex benignitatis* կոլիզիոն կանոնի կիրառման պայմանները և ոլորտը

3.1. Կիրառման պայմանները

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության շրջանակներում *lex benignitatis* կոլիզիոն նորմը (մարդու համար առավել բարենպաստ նորմի առաջնությունը) կարող է կիրառվել միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում.

Նախ՝ միմյանց հակասող նորմերը վերաբերում են մի կողմից հանրային իշխանության մարմնին, մյուս կողմից՝ ֆիզիկական անձին: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 23.07.2010 թ. որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի և 185-րդ հոդվածի 3-րդ մասի միջև առկա հակասությունը լուծելիս, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2002 թվականի 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված նմանատիպ կոլիզիոն նորմը, դատարանը նախապատվություն է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բողոքարկման մեկամսյա ժամկետին, քանի որ այն ավելի նախընտրելի է քաղաքացիների համար, քան 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքարկման յոթօրյա ժամկետը: Տվյալ դեպքում բողոքարկման իրավահարաբերության մի կողմը դատարանն է, մյուս կողմը՝ բողոք բերող մեղադրյալը (ֆիզիկական անձը):

Երկրորդ՝ *lex benignitatis*-ը չի կարող կիրառվել, եթե ընտրված նորմն անմիջականորեն շոշափում է մեկ այլ անձի (կողմ չհանդիսացող անձի) իրավունքներն ու օրինական շահերը:

Այս պայմանն արտացոլվել է դատական պրակտիկայում: Այսպես, ՀՀ վարչական դատարանը, 15.01.2025 թ. ՎԴ/7958/05/23 գործով որոշմամբ, ՀՀ ՎարչԴՕ 193-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի միջև առկա հակասությունը լուծելիս նշել է, որ *lex benignitatis*-ը կիրառելի չէ:

«Թեև ՀՀ ՎարչԴՕ 193-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված նորմը (որով պետական մարմինն իրավասու է վիճարկել նորմատիվ իրավական ակտն առանց ժամկետային սահմանափակման) կարող է որակվել որպես իրավաբանական անձի համար բարենպաստ՝ այն հաշվառմամբ, որ հայցվոր պետական մարմինը (դատախազություն) ներկայացված հայցով պաշտպանում է որոշակի գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը, իսկ ՀՀ ՔաղՕ 128-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես է գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով, այդուհանդերձ, ՀՀ ՎարչԴՕ 193-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված նորմի կիրառմամբ շոշափվում է այլ անձի՝ տվյալ գործով երրորդ անձ ԼՈԿԱԼ ԴԻՎԵԼՈՓԸՐՋ ՍՊ ընկերության օրինական շահերը: Եթե դատարանը ՀՀ ՎարչԴՕ 193-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ հնարավորություն տա դիմողին բողոքարկել Կառավարության

29.08.2013 թ. թիվ 958-Ն որոշումն առանց ժամկետային սահմանափակման, երրորդ անձի իրավական վիճակն ավելի կվատթարանա, քան այն կլիներ ՀՀ ՎարչԴՕ 193-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի (որով պետական մարմինն իրավասու է վիճարկել նորմատիվ իրավական ակտը չորսամսյա ժամկետում՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո) կիրառման դեպքում»:

Այսպիսով՝ գործող օրենսդրության շրջանակներում *lex benignitatis*-ը կիրառելու համար անհրաժեշտ է միաժամանակ երկու պայմանների առկայություն. նախ՝ նորմերի կոլիզիան պետք է ծագի հանրային իշխանության մարմնի և մասնավոր անձի միջև հարաբերություններում, և երկրորդ՝ առավել բարենպաստ նորմի ընտրությունը չպետք է ոտնահարի երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Նույնիսկ այս պայմանների առկայության դեպքում ծագում է իրավունքի տարբեր ճյուղերում առաջացող հակասությունները տվյալ կանոնի կիրառմամբ լուծելու թույլատրելիության հարցը:

3.2. Կիրառությունը հանրային իրավահարաբերություններում

Թեև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում ուղղակիորեն չի նշվում իրավահարաբերությունների սուբյեկտային կազմը, որտեղ կիրառվում է *lex benignitatis* կանոնը, սակայն այդ նորմի համակարգային մեկնաբանությունը՝ իր սահմանադրաիրավական հիմնավորման (ՀՀ Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածներ) հետ միասին, թույլ է տալիս եզրակացնել, որ կոլիզիոն այս նորմը կիրառելի է առաջին հերթին «հանրային իշխանության մարմին – մասնավոր անձ» տիպի հանրային-իրավական հարաբերություններում: Հենց այդպիսի հարաբերություններում է այս կոլիզիոն նորմը կոչված հավասարակշռելու հանրային իշխանության մարմինների և ֆիզիկական անձի անհավասար դրությունը:

Տվյալ կանոնի բովանդակային հիմնավորումն ունի ինչպես պատմական արմատներ, այնպես էլ ժամանակակից իրավական մոտեցումներ: Պատմականորեն *lex benignitatis*-ը ձևավորվել է մասնավոր իրավունքում՝ թույլ կողմին պաշտպանելու համար: Սակայն ժամանակակից իրավական պետությունում այս կոլիզիոն կանոնն առավել մեծ նշանակություն է ձեռք բերում հենց «հանրային իշխանության մարմին – մասնավոր անձ» տիպի հանրային-իրավական հարաբերություններում: Դա պայմանավորված է նրանով, որ ի սկզբանե հանրային-իրավական հարաբերությունները բնութագրվում են կողմերի անհավասարությամբ. պետությունը (հանրային իշխանության մարմինների միջոցով) օժտված է իշխանական լիազորություններով, իսկ մարդը գտնվում է ենթակա դրության մեջ: Հենց այստեղ՝ «ուղղահայաց» հարաբերություններում, ուժերի անհավասարակշռությունն առավել սուր է արտահայտված, և հենց դրա պատճառով *lex benignitatis*-ի կիրառումը դառնում է ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ: Այս կոլիզիոն նորմը հանդես է գալիս որպես մեխանիզմ, որը փոխհատուցում է այդ անհավասարությունը՝ միմյանց հակասող նորմերի միջև ընտրություն կատարելիս նախապատվություն տալով այն նորմին, որն առավել բարենպաստ է թույլ կողմի՝ մարդու համար:

Lex benignitatis կոլիզիոն կանոնի սահմանադրաիրավական հիմքը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածն է և 3-րդ հոդվածի 1-ին մասն է: Առաջինը Հայաստանի Հանրապետությունը հռչակում է իրավական պետություն, երկրորդը՝ ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, իսկ նրա անօտարելի արժանապատվությունը նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Եթե պետությունն իրավական է, ապա նրա սահմանադրական արժեհամակարգում մարդուն հատկացվում է հենց այդպիսի առաջնահերթ տեղ: Այս սահմանադրական սկզբունքի՝ իրավական համակարգի վրա ունեցած ազդեցության դրսևորումներից մեկը *lex benignitatis* կոլիզիոն կանոնի օրենսդրական ճանաչումն է: Իրավական պետությունում, որտեղ մարդը հռչակված է բարձրագույն արժեք, պետությունը (հանրային իշխանության մարմինների միջոցով) մարդու հետ հարաբերությունները կարգավորելիս պարտավոր է այն իրավիճակում, երբ սեփական օրենսդրական սխալի հետևանքով նախատեսված են միմյանց հակասող նորմեր, որոնցից մեկը բարենպաստ է մարդու համար, իսկ մյուսը՝ հանրային իշխանության համար, նախապատվություն տալ այն նորմին, որը բարենպաստ է մարդուն՝ որպես բարձրագույն արժեքի: Իրավական պետության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից անընդունելի կլիներ, որ օրենսդրական կարգավորման մեջ սխալ թույլ տված պետությունն այդ սխալն օգտագործեր ի վնաս մարդու շահերի՝ իր համար բարենպաստ նորմ կիրառելու նպատակով:

Ինչպես իրավացիորեն նշվում է հայտնի հռոմեական իրավական մաքսիմայում՝ *nemo ex suo delicto meliorem suam condicionem facere potest* — ոչ ոք չի կարող բարելավել իր դրությունը սեփական իրավախախտ վարքագծի հետևանքով: Թեև խիստ իմաստով այս մաքսիման վերաբերում է հռոմեական մասնավոր իրավունքի դելիկտներին, սակայն դրա հիմնարար գաղափարը՝ սեփական իրավախախտ վարքագծից օգուտ քաղելու անթույլատրելիությունը, անալոգիայով կիրառելի է նաև քննարկվող իրավիճակի նկատմամբ. օրենսդրական սխալ թույլ տված պետությունը չպետք է այն օգտագործի ի վնաս մարդու: Հակառակ դեպքում դա կնշանակեր, որ պետությունն օգուտ է քաղում սեփական օրենսդրական սխալից, ինչը հակասում է իրավունքի գերակայության սկզբունքին և մարդուն՝ որպես բարձրագույն արժեքի, հարգելու սահմանադրական պահանջին: Այս մոտեցումը (պետության կողմից սեփական սխալներից օգուտ քաղելու անթույլատրելիությունը) հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում: Այսպես, «Գլադիշևան ընդդեմ Ռուսաստանի» գործով Դատարանը նշել է.

«Պետական մարմնի կողմից թույլ տրված ցանկացած սխալի ռիսկը պետք է կրի պետությունը, և սխալները չպետք է ուղղվեն համապատասխան անձի հաշվին» (Gladysheva v. Russia, 2011 թ. դեկտեմբերի 6-ին, 80-րդ կետ):

Այս իրավական դիրքորոշումն իր էությամբ հիմնավորում է *lex benignitatis* կոլիզիոն կանոնի կիրառման անհրաժեշտությունը մարդու և հանրային իշխանության միջև հարաբերություններում. օրենսդրական կարգավորման մեջ սխալ թույլ տված պետու-

թյունը չպետք է օգտագործի այդ սխալը՝ հօգուտ իրեն բարենպաստ նորմի կիրառման՝ ի վնաս մարդու շահերի:

Նման մոտեցում առկա է նաև Լեհաստանի Սահմանադրական տրիբունալի (*Trybunał Konstytucyjny*) պրակտիկայում, որը մշակել է «պետության նկատմամբ քաղաքացու վստահության պաշտպանության» հստակ իրավական դոկտրին: Իր բազմաթիվ որոշումներում, այդ թվում՝ 2004 թվականի մայիսի 11-ի K 4/03 գործով որոշման մեջ, Տրիբունալը նշել է, որ օրենքի անհստակությունը կամ դրա ներքին հակասությունները պետության օրենսդրական անփութության արդյունք են: Տրիբունալն արձանագրել է.

«Պետությունը չի կարող իր իսկ կողմից ոչ որակյալ կազմված օրենքներով քաղաքացու համար ստեղծել իրավական թակարդ (pułapka prawna)»[6]*:*

Իրավական նորմերի միջև առկա կոլիզիաները լուծելիս պետական մարմիններն իրավասու չեն ընտրել պետության համար շահավետ տարբերակն ի վնաս քաղաքացու շահերի: Հակառակ դեպքում քաղաքացին կորցնում է վստահությունը պետության նկատմամբ, ինչը խարխլում է իրավական պետության հիմքերը: Տվյալ իրավական դիրքորոշումը համահունչ է *lex benignitatis*-ի սահմանադրաիրավական հիմնավորմանը և հաստատում է իրավական նորմերի հակասության դեպքում մարդու համար առավել բարենպաստ նորմի կիրառման անհրաժեշտությունը:

Ընդ որում՝ հարկ է ընդգծել, որ *lex benignitatis*-ի այս սահմանադրաիրավական հիմնավորումը վերաբերում է հենց «հանրային իշխանության մարմին – մասնավոր անձ» հարաբերություններին: Այս մոտեցումն ուղղակիորեն ամրագրված է եղել Հայաստանի Հանրապետության նախկինում գործող օրենսդրությամբ: Այսպես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2002 թվականի 24-րդ հոդվածի 7-րդ մասում (ուժը կորցրել է 07.04.2018 թ-ից) ուղղակիորեն նշված էր, որ *lex benignitatis* կոլիզիոն կանոնը գործում է հենց մարդու և հանրային իշխանության մարմինների միջև հարաբերություններում.

«Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»:

2002 թվականի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի և 2018 թվականի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համեմատությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը հրաժարվել է իրավահարաբերությունների սուբյեկտային կազմի ուղղակի նշումից: Եթե նախկին Օրենքում ուղղակիորեն (էքսպլիցիտ) նշվում էր, որ *lex benignitatis* նորմը կիրառվում է «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ ֆիզիկական և

---

[6] Wyrok Trybunału Konstytucyjnego z dnia 11 maja 2004 r. sygn. akt K 4/03 (OTK-A 2004/5/41, Dz.U. 2004 nr 122 poz. 1288) *https://isap.sejm.gov.pl/isap.nsf/DocDetails.xsp?id=WDU20041221288*:

իրավաբանական անձանց հետ փոխհարաբերություններում», ապա գործող օրենքում այդ վերապահումը բացակայում է:

Այդուհանդերձ, դրանից չի հետևում, որ օրենսդիրը փոխել է տվյալ կանոնի կիրառության ոլորտը: Օրենքում սուբյեկտային կազմի ուղղակի նշման բացակայությունն ինքնին չի նշանակում *lex benignitatis*-ի կիրառության ոլորտի ընդլայնում մասնավոր իրավահարաբերությունների վրա: Տվյալ կանոնի սահմանադրաիրավական հիմնավորումը, որը բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածներից, ինչպես նաև դրա ամրագրումը նախկինում գործող օրենսդրության մեջ հենց որպես հանրային իշխանության և մարդու միջև «ուղղահայաց» հարաբերությունների կարգավորման գործիք, թույլ է տալիս եզրակացնել, որ գործող իրավակարգում *lex benignitatis*-ը, որպես կանոն, կիրառելի է «հանրային իշխանության մարմին – մասնավոր անձ» հարաբերություններում:

Միևնույն ժամանակ, ինչպես ցույց կտրվի սույն հոդվածի հաջորդ բաժնում, դա չի բացառում, որ օրենքով նախատեսված դեպքերում տվյալ կոլիզիոն կանոնը կարող է կիրառվել նաև մասնավոր իրավահարաբերություններում, որտեղ կողմերից մեկն ավելի թույլ է (օրինակ՝ ձեռնարկատիրոջ և սպառողի միջև հարաբերությունները): Այդուհանդերձ, նման ընդլայնումը պահանջում է առանձին հիմնավորում և ուղղակիորեն չի բխում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի գործող խմբագրությունից:

Տեսության մեջ առկա է կարծիք այն մասին, որ այս կոլիզիոն նորմն սկզբունքորեն չի կարող գործել ոչ միայն մասնավոր, այլև հանրային իրավունքում, քանի որ օրենսդիրն անձանց մի խմբին իրավունքներ և արտոնություններ է տրամադրում անխուսափելիորեն այլ անձանց իրավունքների ու արտոնությունների հաշվին: (...) Ուստի դժվար է պատկերացնել որևէ դեպք, երբ մի անձի համար բարենպաստ նորմի կիրառմամբ այլ անձանց շահեր չեն շոշափվում[7]:

Այդուհանդերձ, վերը շարադրված թեզի հետ հազիվ թե կարելի է համաձայնել: Հանրային իրավունքի ոլորտում հնարավոր են իրավիճակներ, երբ միմյանց հակասող իրավական նորմերը չեն շոշափում երրորդ անձանց շահերը: Ենթադրենք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի նորմով կալանքի տակ պահելու ժամկետի երկարաձգման համար սահմանված է առավելագույնը մեկամսյա ժամկետ, իսկ մեկ այլ նորմով՝ երկամսյա ժամկետ: Այս դեպքում կալանքի ժամկետի երկարաձգման մասին նորմն ուղղակիորեն չի շոշափում այլ մասնավոր անձանց շահերը (բացառությամբ այն դեպքերի, երբ խափանման միջոցը կիրառվում է տուժողի նկատմամբ մեղադրյալի հնարավոր հակաիրավական գործողությունները կանխելու համար), իսկ մեղադրյալի համար, ակնհայտորեն, բարենպաստ է մեկամսյա ժամկետ սահմանող նորմը:

Այսպիսով՝ ՀՀ գործող իրավակարգում *lex benignitatis*-ը կիրառվում է հանրային-իրավական հարաբերություններում, մինչդեռ մասնավոր իրավունքի վրա դրա տարածման հարցը մնում է բաց և կդիտարկվի ստորև:

---

[7] Հովհաննիսյան Գ. Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Երևան, 2020, էջ 144:

3.3. Կիրառման հնարավորությունը մասնավոր իրավահարաբերություններում

Ինչպես արդեն նշվել է, *lex benignitatis* կոլիզիոն կանոնը մասնավոր իրավունքում, որը հիմնված է դիսպոզիտիվ մեթոդի և կողմերի հավասարության վրա, չի կիրառվում, նույնիսկ եթե կողմերից մեկը պետությունն է: Այս մոտեցումը հիմնված է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության վրա:

Միևնույն ժամանակ, հայեցակարգային առումով նույնիսկ մասնավոր իրավահարաբերություններում, երբ կողմերից մեկն ակնհայտորեն ավելի ուժեղ է մյուսից (օրինակ՝ ձեռնարկատեր և սպառող), երկու միմյանց հակասող նորմերի առկայության դեպքում նախապատվությունը պետք է տրվի այն նորմին, որը բարենպաստ է թույլ կողմի համար: Սակայն քննարկվող կոլիզիոն նորմի կիրառման ոլորտի նման ընդլայնումը պահանջում է առանձին հիմնավորում և ուղղակիորեն չի բխում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի գործող խմբագրությունից:

Ի տարբերություն հանրային իրավունքի, որտեղ *lex benignitatis*-ը հիմնավորվում է իրավական պետության սահմանադրական սկզբունքով և հանրային իշխանության ու մասնավոր անձի միջև իրավական անհավասարությունը փոխհատուցելու անհրաժեշտությամբ, տվյալ կանոնի կիրառությունը մասնավոր իրավահարաբերություններում պահանջում է այլ բովանդակային հիմնավորում:

Եթե հանրային իրավունքում *lex benignitatis*-ը պաշտպանում է մասնավոր անձին պետության օրենսդրական սխալի (անփութության) անբարենպաստ հետևանքներից, ապա մասնավոր իրավունքում տվյալ կոլիզիոն նորմը կոչված է պաշտպանելու թույլ կողմին ուժեղ կողմի կողմից փաստացի անհավասարության չարաշահումից: Եթե հանրային իրավունքում անհավասարությունն ունի իրավական բնույթ (իշխանություն – ենթակայություն), ապա մասնավոր իրավունքում անհավասարությունն ունի փաստացի բնույթ: Այն դրսևորվում է տարբեր ոլորտներում.

* տնտեսական անհավասարություն (խոշոր ձեռնարկատեր և սպառող, բանկ և վարկառու).
* տեղեկատվական անհավասարություն (մասնագետ և ոչ մասնագետ, ապահովագրող և ապահովագրվող).
* կազմակերպչական անհավասարություն (կորպորացիա և նրա աշխատողը աշխատանքային իրավունքում):

Նման հարաբերություններում ավելի ուժեղ կողմը հաճախ որոշում է պայմանագրի պայմանները կամ իրավական նորմերի մեկնաբանությունը, իսկ ավելի թույլ կողմը հարկադրված է ընդունել դրանք: Այս կապակցությամբ *lex benignitatis*-ի կիրառումը մասնավոր-իրավական հարաբերություններում ուղղված է ուժերի փաստացի անհավասարակշռության պայմաններում արդարության վերականգնմանը:

Այս հիմնավորման հիմքում ընկած է արդարության համընդհանուր սկզբունքը, որն ունի խոր փիլիսոփայական և իրավական արմատներ: Դեռևս Արիստոտելն իր «Պոլիտիկա» (Քաղաքականություն) աշխատության մեջ նշում էր.

«Թեև խիստ դժվար է գտնել ճշմարտությունը հավասարության ու արդարության վերաբերող հարցերում, այդուհանդերձ, դա ավելի հեշտ է, քան համոզել նրանց, ովքեր հնարավորություն ունեն հենվելու որևէ առավելության վրա. չէ՞ որ ավելի թույլերն են միշտ ձգտում հավասարության և արդարության, մինչդեռ ուժեղներն այդ մասին ամենևին չեն հոգում»[8]*:*

Այս միտքն ընդգծում է, որ արդարությունն այնպիսի կատեգորիա է, որն առաջին հերթին անհրաժեշտ է հենց թույլ կողմին, և արդարության վրա հիմնված իրավունքը պետք է պաշտպանի նրա շահերը:

Այսպիսով՝ lex benignitatis-ի կիրառման ոլորտի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու դրա հրապարակային-իրավական բնույթի, ինչպես նաև մասնավոր-իրավական հարաբերությունների առանձին տեսակների վրա հնարավոր տարածման հայեցակարգային նախադրյալների մասին:

4. Եզրահանգումներ

Lex benignitatis-ը ծագել է հռոմեական իրավունքից՝ որպես benignior interpretatio (բարեհաճ մեկնաբանություն)՝ կիրառվելով ժառանգական իրավունքում՝ կտակի իրավական ուժը պահպանելու նպատակով: Ժամանակի ընթացքում այն վերափոխվել է ինքնուրույն կոլիզիոն նորմի, որը տարբերվում է *in dubio mitius* սկզբունքից. վերջինս մեկնաբանման գործիք է, որը գործում է նորմի անորոշության դեպքում, իսկ *lex benignitatis*-ը կոլիզիոն կանոն է, որը կիրառվում է նորմերի հակասության դեպքում:

Lex benignitatis-ի սահմանադրաիրավական հիմքը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածն է (իրավական պետություն) և 3-րդ հոդվածի 1-ին մասը (մարդը՝ բարձրագույն արժեք): Այս սկզբունքներից բխում է, որ պետությունը չի կարող օգուտ քաղել սեփական օրենսդրական սխալից՝ ի վնաս մարդու:

Lex benignitatis-ն ամրագրված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում՝ որպես վերջին հերթի կոլիզիոն նորմ, և կիրառվում է հիմնականում հանրային-իրավական հարաբերություններում, որտեղ առկա է իշխանության և մարդու միջև անհավասարություն: Այն չի կիրառվում մասնավոր իրավահարաբերություններում, որոնք հիմնված են դիսպոզիտիվ մեթոդի և կողմերի հավասարության վրա:

Չնայած դրան՝ հայեցակարգային առումով կան նախադրյալներ *lex benignitatis*-ը տարածելու մասնավոր իրավահարաբերությունների առանձին տեսակների վրա, որտեղ առկա է փաստացի անհավասարություն (ձեռնարկատեր և սպառող, բանկ և վարկառու): Սա հիմնավորվում է արդարության համընդհանուր սկզբունքով (aequitas), որը պահանջում է պաշտպանել թույլ կողմին:

---

[8] Аристотель. Политика / Пер. с древнегреч. С. А. Жебелева, М. Л. Гаспарова и др. // Аристотель. Сочинения: В 4 т. М.: Мысль, 1983. Т. 4. С. 573. Кн. VI (V), гл. IV, 1318b05.

КОЛЛИЗИОННОЕ ПРАВИЛО LEX BENIGNITATIS В ТЕОРИИ ПРАВА

ГАМБАРЯН АРТУР

Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор кафедры права Академии государственного управления Республики Армения, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

Аннотация. Статья посвящена всестороннему теоретическому анализу коллизионного правила *lex benignitatis* (закона благосклонности). Целью исследования является выявление генезиса, правовой природы данного правила, его соотношения с принципом *in dubio mitius*, а также определение сферы его применения в рамках действующего законодательства РА.

Автор анализирует закрепление *lex benignitatis* в статье 40 Закона РА «О нормативных правовых актах», сопоставляет его с ранее действовавшим Законом «О правовых актах» 2002 года и показывает, как изменился подход законодателя к вопросу субъектного состава правоотношений. Особое внимание в работе уделяется условиям применения *lex benignitatis*, его конституционно-правовому обоснованию, а также аргументам в пользу его применимости в публично-правовых отношениях и концептуальным предпосылкам его возможного распространения на частноправовые отношения. Исследование завершается выводом о том, что *lex benignitatis* применяется в публично-правовых отношениях, однако существуют концептуальные предпосылки для его распространения на отдельные виды частноправовых отношений.

Ключевые слова: *Lex benignitatis*, коллизионное правило, *in dubio mitius*, правовая коллизия, публичное право, частное право, справедливость, *aequitas*, слабая сторона, фактическое неравенство, законодательная ошибка.

THE CONFLICT RULE LEX BENIGNITATIS IN LEGAL THEORY

GHAMBARYAN ARTUR
Head of the Chair of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University, Professor at the Chair of Law of the Academy of Public Administration of the Republic of Armenia, Doctor of Science in Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia

---

Abstract. The article is devoted to a comprehensive theoretical analysis of the conflict rule *lex benignitatis* (the law of benignity). The study aims to uncover the origin and legal nature of this rule, its relationship with the *in dubio mitius* principle, and to determine its scope of application within the framework of the current legislation of the Republic of Armenia. The author analyzes the codification of *lex benignitatis* in Article 40 of the Law of the RA "On Normative Legal Acts", compares it with the previously effective Law "On Legal Acts" of 2002, and demonstrates how the legislator's approach regarding the subject composition of legal relations has evolved. Particular attention is paid to the conditions for applying *lex benignitatis*, its constitutional and legal justification, as well as the rationale for its applicability in public-law relations and the conceptual prerequisites for its possible extension to private-law relations. The study concludes that *lex benignitatis* is applied in public-law relations, while there are conceptual prerequisites for extending its scope to certain types of private-law relations.

Key words: *lex benignitatis*, conflict rule, *in dubio mitius*, legal collision, public law, private law, justice, *aequitas*, weaker party, factual inequality, legislative error.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Գ.,Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն. Երևան, 2020. 448 էջ:

2. Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Մկրտչյան Մ., «Կասկածի դեպքում մեղմ որոշման օգտին (in dubio mitius)» մաքսիմի կիրառությունն իրավական անորոշությունները լուծելիս // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր. 2023. № 3 (111). Էջ 8–44:

3. Аристотель. Политика / пер. с древнегреч. С. А. Жебелева, М. Л. Гаспарова и др. // Аристотель. Сочинения : в 4 т. М. : Мысль, 1983. Т. 4. С. 573. Кн. VI (V), гл. IV, 1318b05.

4. Гамбарян А. С., Даллакян Л. Г. Проблемы конкуренции коллизионных норм в юридической науке и практике // Вестник Томского государственного университета. 2019. № 438. С. 201–209. DOI: 10.17223/15617793/438/27.

5. Таганцев Н. С. Русское уголовное право. Лекции. Часть общая: в 2 т. Т. 1 / сост. и отв. ред. Н. И. Загородников. М.: Наука, 1994. 380 с.

6. Avenarius M. Benignior interpretatio: Origin and Transformation of a Rule of Construction in the Law of Succession // Roman Legal Tradition. 2010. Vol. 6. P. 1–21.

7. Wyrok Trybunału Konstytucyjnego z dnia 11 maja 2004 r. sygn. akt K 4/03 (OTK-A 2004/5/41, Dz.U. 2004 nr 122 poz. 1288). URL: https://isap.sejm.gov.pl/isap.nsf/DocDetails.xsp?id=WDU20041221288 (дата обращения: 10.09.2026).

Հոդվածը գրախոսվել է 01.07.2026թ.
Ներկայացվել է տպագրության 09.07.2026թ.

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս, նույն ամբիոնի հայցորդ, ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի մագիստրոս
DOI: 10.63925/18294847-2026.blj22-06

Ամփոփագիր: Սույն հոդվածում ուսումնասիրվում են երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության հիմնական մոտեցումները՝ համադրելով տարբեր պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի, Պորտուգալիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության և Ֆրանսիայի փորձը: Վերլուծվում են երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության առանձնահատկությունները, պետության պոզիտիվ պարտավորությունների սահմանադրական ամրագրումը, ինչպես նաև անչափահասների նկատմամբ մասնագիտացված արդարադատության նշանակությունը:

Հոդվածում առանձին անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված՝ երեխայի լավագույն շահի և երեխայի կարծիքն արտահայտելու իրավունքի երաշխիքներին: Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվում է երեխայի լավագույն շահի սկզբունքի օրենսդրական հստակեցման անհրաժեշտությունը և դրա բովանդակության ու գնահատման չափանիշների ամրագրումը ՀՀ Ընտանեկան օրենսգրքում՝ երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ու իրավակիրառ պրակտիկայի կանխատեսելիությունը բարձրացնելու նպատակով:

Բանալի բառեր. երեխայի իրավունքներ, սահմանադրաիրավական պաշտպանություն, երեխայի լավագույն շահ, պոզիտիվ պարտավորություններ, անչափահասների արդարադատություն, մասնագիտացված արդարադատություն:

Ներածություն

Երեխայի իրավունքների պաշտպանությունը ժամանակակից սահմանադրական պետության հիմնարար պարտավորություններից է և իրավական պաշտպանության կարևորագույն երաշխիքը:

Սահմանադրական ամրագրումը կարևոր է ոչ միայն իրավական, այլև խորհրդանշական տեսանկյունից, քանի որ այն երեխաներին հաստատում է որպես ինքնուրույն

իրավունքների սուբյեկտներ[1] և նրանց իրավունքները ներառում է պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթում՝ Սահմանադրության մեջ: Միևնույն ժամանակ, սահմանադրական պաշտպանությունն ունի նաև գործնական նշանակություն, քանի որ Սահմանադրության գերակայության սկզբունքը ենթադրում է, որ պետական իշխանության մարմինների գործունեությունը, այդ թվում՝ ընդունվող օրենսդրությունը, պետք է համապատասխանեն սահմանադրական պահանջներին:

Սահմանադրության մեջ համապատասխան դրույթների առկայությունը երաշխավորում է, որ պետական մարմինները հեշտությամբ չեն կարող փոփոխել իրավունքների բացահայտ սահմանադրական պաշտպանությունը: Երեխաների իրավունքների ուղղակի և բացահայտ սահմանադրական պաշտպանությունը վերացնում է երեխաների նկատմամբ ընդհանուր մարդու իրավունքների կիրառելիության վերաբերյալ անորոշությունները և միաժամանակ կանխում է այն իրավիճակը, երբ առաջնահերթությունը ոչ թե երեխաների իրավունքներին է տրվում, այլ չափահասներին:

Աշխարհի պետությունների մեծամասնության կողմից Միավորված ազգերի կազմակերպության՝ 1989 թվականի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի վավերացումը (այսուհետ՝ «Կոնվենցիա»)[2] վկայում է երեխաների իրավունքների համընդհանուր ճանաչման և դրանց պաշտպանության միջազգային պարտավորության ձևավորման մասին: Այսպես օրինակ՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից 45-ը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է սույն Կոնվենցիան՝ հավատարիմ լինելով երեխաների իրավունքների միջազգային պաշտպանության առաքելությանը:

Միաժամանակ նշենք՝ երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության հարցում պետությունների մոտեցումները, այնուամենայնիվ, միատեսակ չեն. էական տարբերություններ են դրսևորվում ինչպես սահմանադրական ամրագրման ծավալի, այնպես էլ նախատեսված իրավական պաշտպանության մեխանիզմների բնույթի և արդյունավետության առումով:

Հիմնական հետազոտություն

Երեխայի իրավունքների՝ Սահմանադրության մակարդակով ամրագրումն ինքնին դեռևս չի վկայում դրանց լիարժեք և արդյունավետ պաշտպանության մասին, քանի որ էական նշանակություն ունի այն, թե ինչպիսի իրավունքներ են ճանաչվում, ինչ պարտավորություններ են սահմանվում պետության համար և ինչ իրավական մեխանիզմներ են նախատեսվում դրանց իրականացման ու պաշտպանության համար:

Համեմատական-իրավական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք

---

[1] Տ՛ես O'Mahony, C., "The Promises and Pitfalls of Constitutionalizing Children's Rights", in J. G. Dwyer (ed.), The Oxford Handbook of Children and the Law (Oxford: Oxford University Press, 2020), էջ 871 https://doi.org/10.1093/oxfordhb/9780190694395.013.40 (մուտք՝ 09.08.2026).

[2] Տ՛ես United Nations, Convention on the Rights of the Child, United Nations Treaty Series, Vol. 1577, p. 3, 1989, Convention on the Rights of the Child | OHCHR (մուտք՝ 09.08.2026).

պետությունների սահմանադրություններ երեխաների իրավունքները կարգավորում են առանձին և ուղղակիորեն՝ ամրագրելով երեխային վերաբերող հատուկ իրավունքներ և պետության համապատասխան պարտավորություններ, մինչդեռ այլ իրավակարգերում երեխաների սահմանադրական պաշտպանությունը հիմնականում իրականացվում է ընդհանուր մարդու իրավունքների և ընտանիքի պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դրույթների միջոցով:

Այսպես, Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետության պոզիտիվ պարտավորության սահմանադրական ամրագրման օրինակ է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը: Մասնավորապես, ՌԴ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «մայրությունը, մանկությունը և ընտանիքը գտնվում են պետության պաշտպանության ներքո»:[3] Նշված դրույթը պետության համար նախատեսում է ոչ միայն երեխայի իրավունքներին և օրինական շահերին ապօրինի միջամտելուց ձեռնպահ մնալու պարտականություն, այլև դրանց պաշտպանությանն ու ապահովմանն ուղղված ակտիվ միջոցների ձեռնարկման սահմանադրական պարտավորություն:

Հետաքրքրական է Լեհաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված հետևյալ իրավակարգավորումը. համաձայն Սահմանադրության 72-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Լեհաստանի Հանրապետությունն ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջելու պետական իշխանության մարմիններից երեխայի պաշտպանությունը բռնությունից, դաժան վերաբերմունքից, շահագործումից և բարոյական ապականումից»: Նույն հոդվածի 3-րդ մասով ճանաչում է երեխայի սուբյեկտայնությունը և դրանից բխող իրավունքները, իսկ 4-րդ մասով կարգադրում է երեխաների հարցերով օմբուդսմենի գրասենյակի ստեղծումը:[4]

Այսպիսով՝ Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության 72-րդ հոդվածը երեխայի իրավունքների պաշտպանության բարձր մակարդակի սահմանադրական երաշխիք է, քանի որ ամրագրում է ոչ միայն պետության ընդհանուր պարտականությունը, այլև կոնկրետ պոզիտիվ պարտավորություններ՝ երեխայի պաշտպանությունը բռնությունից և շահագործումից, պետական խնամքի ապահովումը, երեխայի կարծիքի լսումը և այլն:

Լեհական մոդելի առանձնահատկությունը պետության պոզիտիվ պարտավորության սահմանադրական «բազմաշերտ» կառուցվածքն է. Սահմանադրությունը միաժամանակ ամրագրում է պաշտպանության ընդհանուր պարտականություն, հատուկ պաշտպանական միջոցների նկատմամբ երեխայի իրավունքը, երեխայի

---

[3] Տ՛ես Конституция Российской Федерации от 12 декабря 1993 г. (с изм. и доп.) // «Российская газета», 1993, էջ 38 Конституция Российской Федерации" (принята всенародным голосованием 12.12.1993 с изменениями) \ КонсультантПлюс (մուտք՝ 10.08.2026)

[4] Տ՛ես Constitution of the Republic of Poland, adopted by the National Assembly on 2 April 1997, Article 72 https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/konse.htm (մուտք՝ 10.08.2026)

մասնակցության երաշխիքը և մասնագիտացված պետական ինստիտուտի ստեղծման պարտավորությունը:

Նշենք, որ Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրության 69-րդ հոդվածը նույնպես նախատեսում է երեխայի իրավունքների պաշտպանության ուղղակի սահմանադրական երաշխիքներ: Մասնավորապես, այն երեխաներին վերապահում է հասարակության և պետության կողմից հատուկ պաշտպանության իրավունք՝ նրանց լիարժեք և համակողմանի զարգացման ապահովման նպատակով՝ ներառյալ լքվածությունից, խտրականությունից, շահագործումից և բռնության ու խնամակալական լիազորությունների չարաշահման այլ ձևերից պաշտպանությունը: Առանձին սահմանադրական պաշտպանություն է նախատեսվում նաև որբ, լքված և ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար՝ պետությանը պարտավորեցնելով ապահովել նրանց արժանապատիվ կենսապայմանները, անհրաժեշտ խնամքն ու զարգացման հնարավորությունները:[5]

Այսպիսով՝ Պորտուգալիայի սահմանադրական մոդելում երեխայի պաշտպանությունը դրսևորվում է պետության հստակ պոզիտիվ պարտավորությունների միջոցով՝ ընդգրկելով ոչ միայն երեխայի պաշտպանությունը վնասակար միջամտություններից, այլև նրա բնականոն զարգացման համար անհրաժեշտ պայմանների ակտիվ ապահովումը:

Հետազոտող Քոնոր Մահոնին իր ուսումնասիրություններում համեմատական մակարդակում առանձնացնում է երեխայի իրավունքների սահմանադրահիրավական պաշտպանության առավել ընդգրկուն և առավել սահմանափակ մոդելներ՝ շեշտադրելով Հարավաֆրիկյան Հանրապետության փորձը[6]: Առավել զարգացած մոդելներից հեղինակը վերլուծում է Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրության 28-րդ բաժնով նախատեսված կարգավորումը, որը երեխաներին վերապահում է հատուկ իրավունքների լայն շրջանակ՝ ներառյալ ընտանեկան կամ ծնողական խնամքի, այլընտրանքային խնամքի, հիմնական սննդի, կացարանի, առողջապահական և սոցիալական ծառայությունների, ինչպես նաև վատ վերաբերմունքից, անտեսումից, բռնությունից և շահագործումից պաշտպանության իրավունքները:[7] Միաժամանակ, սահմանադրական կարգավորումը նախատեսում է երեխայի լավագույն շահերի առաջնահերթությունը երեխային վերաբերող յուրաքանչյուր հարցում և առանձին երաշխիքներ՝ երեխայի ազատությունից զրկման դեպքերի համար:

Հարավաֆրիկյան մոդելի առանձնահատկությունն այն է, որ երեխայի իրավունքների սահմանադրական ճանաչումը զուգորդվում է պետության կոնկրետ պոզիտիվ

---

[5] Տ՛ես Constitution of the Portuguese Republic, adopted on 25 April 1976, Article 69 https://www.parlamento.pt/Legislacao/Paginas/ConstituicaorepublicaPortuguesa.aspx (մուտք՝ 10.08.2026)

[6] Տե՛ս Conor O'Mahony, "Why Children Should Have Constitutional Rights of Their Own," *International Journal of Constitutional Law*, Vol. 23, Issue 2, 2025, էջ 372–404, https://doi.org/10.1093/icon/moaf034 (մուտք՝ 12.08.2026)

[7] Տե՛ս Constitution of the Republic of South Africa, 1996, Article 28 https://www.gov.za/documents/constitution/constitution-republic-south-africa-1996-04-feb-1997 (մուտք՝ 12.08.2026)

պարտավորությունների հետ: Հետևաբար, տվյալ կարգավորումը կարելի է դիտարկել որպես այնպիսի սահմանադրական պաշտպանության օրինակ, որտեղ պետության դերը չի սահմանափակվում երեխայի իրավունքների ճանաչմամբ, այլ ներառում է դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:[8]

Հարավաֆրիկյան կարգավորման առանձնահատկություններից է նաև այն, որ արտակարգ դրության պայմաններում սահմանափակման ենթակա չեն Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված՝ երեխայի չարաշահումից, անտեսումից, բռնությունից և նվաստացուցիչ վերաբերմունքից պաշտպանվելու, ինչպես նաև ազատությունից զրկման դեպքում հատուկ պաշտպանության որոշ երաշխիքներ: Այս հանգամանքը ևս վկայում է երեխայի իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության բարձր մակարդակի մասին:

Եվրոպական երկրներից հետաքրքրական է երեխայի իրավունքների պաշտպանության Ֆրանսիայի սահմանադրաիրավական փորձը: Այսպես, կարևորելով երեխաների իրավունքների պաշտպանության հանգամանքը՝ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը 2002 թվականին ֆրանսիական իրավակարգում ճանաչեց **անչափահասների նկատմամբ արդարադատության ոլորտում հանրապետության օրենքներով ճանաչված հիմնարար սկզբունք** (*principe fondamental reconnu par les lois de la République en matière de justice des mineurs*):[9] Այս սկզբունքն ընդգրկում է փոխկապակցված մի շարք կանոններ, որոնք երաշխավորում են Ֆրանսիայում անչափահասների նկատմամբ արդարադատության պաշտպանական բնույթը և դրա գերազանցապես դաստիարակչական ու վերականգնողական նպատակաուղղվածությունը:[10]

Անչափահասների նկատմամբ արդարադատության վերաբերյալ հիմնարար սկզբունքը Սահմանադրական խորհուրդը բխեցրել է երեք օրենսդրական ակտերից, որոնք համապատասխանաբար կարգավորում էին՝ քրեական պատասխանատվության տարիքը, երեխաների համար մասնագիտացված դատարանների գործունեությունը և անչափահաս իրավախախտների նկատմամբ դաստիարակչական միջոցների կիրառումը:[11]

Ինչպես արդեն տեսանք, երեխաների նկատմամբ արդարադատության ոլորտում Ֆրանսիայի սահմանադրաիրավական փորձի առանձնահատուկ նշանակությունը պայմանավորված է նաև **մասնագիտացված արդարադատության ինստիտուցիոնալացման** հանգամանքով: Սահմանադրական խորհուրդը, երեխաների նկատմամբ արդարադատության առանձնահատկությունները գնահատելով սահմանադրական

---

[8] Տե՛ս Habashi J., Driskill S., Lang J., DeFalco P., "Children's Rights and the Human Development Index: A Comparative Analysis", *International Journal of Children's Rights*, 2010, էջ 268 DOI: 10.1163/157181809X12615514762046 (մուտք՝ 12.08.2026)

[9] Տե՛ս Decision No. 2002-461 dc of 29 August 2002; de Montgolfier, 2011; Darsonville, 2012 (մուտք՝ 13.08.2026)

[10] Տե՛ս de Montgolfier, J.-F. "Le Conseil constitutionnel et la justice pénale des mineurs", 23 octobre 2008, էջ 10 Official PDF, Conseil constitutionnel (մուտք՝ 13.08.2026)

[11] Տե՛ս Conseil constitutionnel, Decision No. 2002-461 DC of 29 August 2002, para. 26; de Montgolfier, J.-F., 2011, էջ 198 https://www.conseil-constitutionnel.fr/decision/2002/2002461DC (մուտք՝ 12.08.2026)

պաշտպանության տեսանկյունից, ճանաչել է մասնագիտացված իրավասության և համապատասխանեցված դատական ընթացակարգերի անհրաժեշտությունը: Այս մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ անչափահասի նկատմամբ արդարադատության իրականացումը չի կարող ամբողջությամբ նույնացվել չափահաս անձանց նկատմամբ կիրառվող ընդհանուր քրեական արդարադատության հետ, քանի որ երեխայի տարիքը, անձի ձևավորման փուլում գտնվելը և վերականգնման ու վերասոցիալականացման անհրաժեշտությունը պահանջում են առանձնահատուկ իրավական մոտեցում:

Այս համատեքստում հետաքրքրական է նաև Հայաստանի Հանրապետության փորձի համադրումը ֆրանսիական մոդելի հետ: Հայաստանի դատական համակարգում առկա են մասնագիտացված դատարաններ, սակայն երեխաների և անչափահասների նկատմամբ արդարադատությունն առանձին մասնագիտացված դատարանի միջոցով չի իրականացվում: Հետևաբար, Ֆրանսիայի փորձը կարող է դիտարկվել որպես քննարկման արժանի մոդել՝ այն հարցի տեսանկյունից, թե արդյոք երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է ոչ միայն մասնագիտացված դատավորների կամ հատուկ ընթացակարգերի առկայություն, այլև երեխաների գործերով մասնագիտացված դատական ինստիտուտի ձևավորում:

Այս առումով Ֆրանսիայի փորձը հիմք է տալիս քննարկելու Հայաստանի Հանրապետությունում երեխաների և անչափահասների մասնակցությամբ գործերի քննության առավել մասնագիտացված դատական համակարգի ձևավորման նպատակահարմարությունը, նեղ մասնագիտացված, առավել պրոֆեսիոնալ դատավորների ներգրավումը՝ այն դիտարկելով որպես երեխաների իրավունքների սահմանադրական և դատավարական պաշտպանության արդյունավետության բարձրացման հնարավոր միջոց:

Ուսումնասիրելով մի շարք երկրների փորձը՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ սահմանադրահիրավական կարգավորումներին: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրությունն առաջին անգամ երեխայի իրավունքներին նվիրեց առանձին հոդված՝ 37-րդ հոդվածը, որով սահմանադրական մակարդակով ամրագրվեց երեխայի լավագույն շահի սկզբունքը: Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում»: Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն էլ՝ «Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան»: [12]

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն այլ սահմանադրական համակարգերի, որոնցում երեխաների իրավունքների պաշտպանությունը հիմնակա-

---

[12] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է՝ 1995թ. հուլիսի 5-ին՝ 2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), հոդ. 37, ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (մուտք՝ 12.08.2026)

նում բխեցվում է ընդհանուր մարդու իրավունքների դրույթներից, երեխայի լավագույն շահի և երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն ուղղակիորեն ամրագրում է սահմանադրական մակարդակում: Այս հանգամանքը երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության տեսանկյունից էապես բարձրացնում է դրանց իրավական նշանակությունը:

Միաժամանակ, գործող սահմանադրական և ոլորտային օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «երեխայի լավագույն շահ» հասկացությունը չունի համընդհանուր և հստակ սահմանված իրավական բովանդակություն կամ սպառիչ սահմանում: Ընդ որում՝ դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ երեխայի լավագույն շահի գնահատումը չի կարող հիմնվել բացառապես վերացական կամ միասնական չափանիշների վրա. յուրաքանչյուր կոնկրետ դեպք պահանջում է երեխայի անհատական կարիքների, զարգացման առանձնահատկությունների և գործի փաստական հանգամանքների համակողմանի գնահատում:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկզբունքի արդյունավետ կիրառման հիմնական մարտահրավերներից մեկը հենց դրա բովանդակային որոշակիության պակասն է, ինչի հետևանքով կարող են առաջանալ ինչպես գնահատման միասնական չափանիշների ձևավորման, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի հետևողականության խնդիրներ: Միևնույն իրավական սկզբունքը տարբեր մարմինների կողմից կարող է մեկնաբանվել և կիրառվել տարբեր կերպ, ինչը որոշակիորեն թուլացնում է Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված երաշխիքի գործնական արդյունավետությունը:

Այս համատեքստում, հաշվի առնելով առկա իրավագիտական ուսումնասիրությունները և ձևավորված մոտեցումները, որպես հետագա օրենսդրական կարգավորման հիմք, առաջարկվում է **«երեխայի լավագույն շահ» հասկացության մեր դոկտրինալ սահմանումը**: Մեր կողմից նախկինում իրականացված ուսումնասիրության շրջանակում առաջարկվել է այն ձևակերպել հետևյալ կերպ. **«Երեխայի լավագույն շահը պետք է ընկալվի որպես իրավական սկզբունք, որի համաձայն յուրաքանչյուր հանրային իշխանության մարմին, դատարաններ և այլ իրավասու հաստատություններ պարտավոր են կայացնել այնպիսի որոշումներ, որոնք ապահովում են երեխայի իրավունքների, արժանապատվության, անվտանգության, առողջ զարգացման, կրթության և բարեկեցության պաշտպանությունը՝ միաժամանակ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքներն ու կոնկրետ հանգամանքները»:**[13]

Նշված սահմանման օրենսդրական ամրագրումը, մասնավորապես՝ ՀՀ Ընտանեկան օրենսգրքում, կնպաստի երեխայի լավագույն շահի սկզբունքի բովանդակության

---

[13] Տե՛ս Մանուչարյան Է., «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի միջազգային և սահմանադրաիրավական չափանիշները. բովանդակությունը և կիրառման հիմնախնդիրները», «Բանբեր Եվրասիա», 2026, № 1, էջ 39–40, DOI: 10.53614/18294952-2026.1-32 (մուտք՝ 14.08.2026)

հստակեցմանը, դրա կիրառման միասնական չափանիշների ձևավորմանը և Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված իրավունքի արդյունավետ իրագործմանը:

Հետևաբար, անհրաժեշտ է ոչ թե ընդլայնել սահմանադրական կարգավորումը, այլ օրենսդրորեն հստակեցնել երեխայի լավագույն շահի բովանդակությունն ու գնահատման չափանիշները՝ պահպանելով յուրաքանչյուր երեխայի անհատական հանգամանքների գնահատման պահանջը:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես առանձին իրավունքների սահմանադրական ամրագրում, այլև որպես երեխային ինքնուրույն իրավունքների սուբյեկտ ճանաչելու և դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական ու ինստիտուցիոնալ երաշխիքների ամբողջություն: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թվականի կոնվենցիայի լայնածավալ վավերացումը վկայում է երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների համընդհանուր ճանաչման մասին, սակայն ազգային սահմանադրական համակարգերում դրանց արտացոլման եղանակներն էապես տարբերվում են:

Համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն համապատասխան դրույթների առկայությամբ, այլև դրանց բովանդակությամբ, պետության պոզիտիվ պարտավորությունների հստակությամբ և պաշտպանության արդյունավետ մեխանիզմների առկայությամբ: Հարավաֆրիկյան Հանրապետության, Լեհաստանի և Պորտուգալիայի փորձը վկայում է երեխաների իրավունքների ուղղակի և ընդգրկուն սահմանադրական պաշտպանության հնարավորությունների մասին, մինչդեռ Ֆրանսիայի փորձը ցույց է տալիս, որ նման պաշտպանությունը կարող է ձևավորվել նաև սահմանադրական մեկնաբանության և դատական պրակտիկայի միջոցով: Ֆրանսիական մոդելի առանձնահատուկ նշանակությունը դրսևորվում է նաև անչափահասների նկատմամբ արդարադատության մասնագիտացված մոտեցման սահմանադրական ճանաչմամբ:

ՀՀ-ում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում երեխայի իրավունքներին նվիրված առանձին՝ 37-րդ հոդվածի ամրագրումը կարևոր քայլ էր երեխաներին որպես ինքնուրույն իրավունքների սուբյեկտներ ճանաչելու ուղղությամբ: Հատկապես կարևոր է երեխայի կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի և երեխայի լավագույն շահի առաջնահերթության ուղղակի սահմանադրական ամրագրումը:

Միաժամանակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սահմանադրական ամրագրումն ինքնին բավարար չէ: ՀՀ-ում երեխայի լավագույն շահի սկզբունքի արդյունավետ կիրառման խնդիրներից է դրա բովանդակային որոշակիության և գնահատման միասնական չափանիշների բացակայությունը: Այս առումով նպատակա-

հարմար է ՀՀ Ընտանեկան օրենսգրքում օրենսդրորեն հստակեցնել «երեխայի լավագույն շահ» հասկացության բովանդակությունը՝ սահմանելով դրա հիմնական բաղադրիչները, միաժամանակ պահպանելով յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների և կոնկրետ հանգամանքների գնահատման անհրաժեշտությունը: Այս օրենսդրական ձևակերպումը զերծ կպահի հանրային իշխանության մարմիններին այս սկզբունքի տարաբնույթ և երբեմն իրարամերժ մեկնաբանություններից և առավել կհեշտացնի երեխաներին վերաբերող ցանկացած հարցերի և որոշումների կայացման գործընթացը:

Միաժամանակ, երեխայի լավագույն շահի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է ոչ միայն դրա բովանդակային օրենսդրական հստակեցումը, այլև դրա կիրառման ընթացակարգային և ինստիտուցիոնալ երաշխիքների համակարգի ձևավորումը: Իրավական որոշակիության պահանջը ենթադրում է, որ երեխաներին վերաբերող որոշումների կայացման գործընթացում իրավասու մարմինների համար պետք է նախատեսվեն երեխայի լավագույն շահի գնահատման նվազագույն և փոխկապակցված չափանիշներ: Դրանց թվում կարող են ներառվել երեխայի ֆիզիկական և հոգեկան անվտանգության, առողջության, զարգացման, կրթության, ընտանեկան միջավայրի պահպանման, երեխայի ինքնուրույն կարծիքի և տարիքին ու հասունությանը համապատասխան մասնակցության, ինչպես նաև տվյալ երեխայի անհատական կարիքների և կոնկրետ հանգամանքների գնահատումը:

Միևնույն ժամանակ, միայն գնահատման չափանիշների սահմանումը բավարար չէ, եթե դրանք չեն ապահովվում համապատասխան ընթացակարգային երաշխիքներով: Այդ առումով անհրաժեշտ է երեխաներին վերաբերող որոշումների կայացման գործընթացում ապահովել երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու և այն պատշաճ կերպով հաշվի առնելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում՝ երեխայի ներկայացուցչի կամ համապատասխան մասնագետի մասնակցությունը, ինչպես նաև ընդունված որոշման պատճառաբանվածությունը: Վերջինս առանձնահատուկ նշանակություն ունի երեխայի լավագույն շահի սկզբունքի կիրառման կանխատեսելիության և դատական վերահսկողության ապահովման տեսանկյունից, քանի որ իրավասու մարմինը պետք է հիմնավորի, թե ինչ հանգամանքների գնահատման արդյունքում է տվյալ որոշումը համարվել համապատասխան երեխայի լավագույն շահին: Իրավական պաշտպանության արդյունավետությունը ենթադրում է նաև երեխաների իրավունքների խախտման կամ դրանց ոչ պատշաճ իրացման դեպքում հասանելի, մատչելի և արդյունավետ բողոքարկման ու դատական պաշտպանության միջոցների առկայություն: Հետևաբար, երեխայի լավագույն շահի սկզբունքի օրենսդրական հստակեցումը պետք է դիտարկել ոչ թե որպես ինքնուրույն իրավական միջոց, այլ որպես ավելի լայն համակարգի բաղադրիչ, որը ներառում է նյութական չափանիշների սահմանում, դրանց կիրառման ընթացակարգերի կանոնակարգում, որոշումների պատճառաբանման պարտականություն և արդյունավետ դատական կամ այլ իրավական պաշտպանության միջոցների ապահովում: Այս համատեքստում

իրավական որոշակիությունը և արդյունավետ պաշտպանության մեխանիզմները հանդես են գալիս որպես փոխկապակցված երաշխիքներ. առաջինը սահմանում է երեխայի լավագույն շահի գնահատման իրավական շրջանակը, իսկ երկրորդն ապահովում է այդ շրջանակի պատշաճ կիրառման նկատմամբ վերահսկողությունը և երեխայի իրավունքների խախտման դեպքում դրանց վերականգնման հնարավորությունը: Հետևաբար, երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության արդյունավետությունը պետք է գնահատել ոչ միայն սահմանադրական իրավունքի ձևական ամրագրման, այլև դրա օրենսդրական կոնկրետացման, ընթացակարգային իրացման և պաշտպանության արդյունավետ միջոցների ամբողջականության տեսանկյունից:

Այսպիսով՝ ՀՀ-ում երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության հետագա զարգացումը պետք է ուղղված լինի սահմանադրական երաշխիքների, իրավական որոշակիության, ընթացակարգային երաշխիքների և արդյունավետ պաշտպանության մեխանիզմների փոխկապակցված ամրապնդմանը: Այս համակարգում սահմանադրական դրույթները պետք է ապահովեն հիմնարար իրավական երաշխիքը, օրենսդրությունը՝ դրանց բովանդակային և ընթացակարգային կոնկրետացումը, իսկ դատական և այլ իրավական պաշտպանության միջոցները՝ դրանց արդյունավետ իրացումը և խախտված իրավունքների վերականգնումը: Միայն այս բաղադրիչների ամբողջական և փոխկապակցված կիրառումն է հնարավորություն տալիս ապահովելու երեխայի իրավունքների ոչ միայն ձևական, այլև իրական և արդյունավետ պաշտպանությունը:

ПОЗИТИВНЫЕ ОБЯЗАТЕЛЬСТВА ГОСУДАРСТВА В СФЕРЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ ЗАЩИТЫ ПРАВ РЕБЕНКА: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ

МАНУЧАРЯН ЭДГАР
Преподаватель и соискатель кафедры права, политологии и международных отношений Международного университета Евразия
Магистр европейского и международного права,
Ереванский государственный университет

Аннотация. В статье исследуются основные подходы к конституционно-правовой защите прав ребенка на основе сравнительного анализа опыта ряда государств, в частности Российской Федерации, Польши, Португалии, Южно-Африканской Республики и Франции. Анализируются особенности прямой и косвенной конституционной защиты прав ребенка, конституционного закрепления позитивных обязательств государства, а также значение специализированного правосудия в отношении несовершеннолетних. Отдельное внимание уделяется гарантиям, закрепленным в статье 37 Конституции Республики Армения, в частности принципу наилучшего обеспечения интересов ребенка и праву ребенка выражать свое мнение. В результате исследования обосновывается необходимость законодательного уточнения принципа наилучшего обеспечения интересов ребенка, а также закрепления его содержания и критериев оценки в Семейном кодексе Республики Армения с целью повышения эффективности защиты прав ребенка и обеспечения последовательности и предсказуемости правоприменительной практики.

Ключевые слова: права ребенка, конституционно-правовая защита, наилучшее обеспечение интересов ребенка, позитивные обязательства, правосудие в отношении несовершеннолетних, специализированное правосудие.

POSITIVE OBLIGATIONS OF THE STATE IN THE FIELD OF CONSTITUTIONAL PROTECTION OF CHILDREN'S RIGHTS: A COMPARATIVE LEGAL STUDY

MANUCHARYAN EDGAR
Lecturer at the Chair of Law, Political Science and International Relations, Eurasia International University; PhD Student at the same Chair
Master of European and International Law, Yerevan State University

---

Abstract. This article examines the principal approaches to the constitutional protection of children's rights through a comparative analysis of the experiences of several states, including the Russian Federation, Poland, Portugal, the Republic of South Africa, and France. It analyses the specific features of direct and indirect constitutional protection of children's rights, the constitutional recognition of the State's positive obligations, as well as the significance of specialized justice for children and juveniles.

Particular attention is paid to the guarantees enshrined in Article 37 of the Constitution of the Republic of Armenia concerning the best interests of the child and the child's right to express his or her views. The study substantiates the need to clarify the principle of the best interests of the child at the legislative level and to establish its substantive content and assessment criteria in the Family Code of the Republic of Armenia, with a view to enhancing the effectiveness of the protection of children's rights and ensuring greater consistency and predictability in legal practice.

Key words: children's rights, constitutional protection, best interests of the child, positive obligations, juvenile justice, specialized justice.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին, փոփոխություններով՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի և 2015 թվականի դեկտեմբերի 6-ի), ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (մուտք՝ 12.08.2026) :

2. Մանուչարյան Է., «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի միջազգային և սահմանադրաիրավական չափանիշները. բովանդակությունը և կիրառման հիմնախնդիրները», «Բանբեր Եվրասիա», 2026, № 1, էջ 39–40, DOI: 10.53614/18294952-2026.1-32 (մուտք՝ 14.08.2026):

3. Конституция Российской Федерации от 12 декабря 1993 г. (с изменениями и дополнениями), Российская газета, 25 декабря 1993 г., № 237 "Конституция Российской Федерации" (принята всенародным голосованием 12.12.1993 с изменениями) \ КонсультантПлюс (մուտք՝ 10.08.2026):

4. Constitution of the Portuguese Republic, adopted on 25 April 1976, Article 69, official text, Assembly of the Republic of Portugal https://www.parlamento.pt/Legislacao/Paginas/ConstituicaorepublicaPortuguesa.aspx (մուտք՝ 10.08.2026):

5. Constitution of the Republic of Poland, adopted by the National Assembly on 2 April 1997, Article 72, official text, Sejm of the Republic of Poland https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/konse.htm (մուտք՝ 10.08.2026):

6. Constitution of the Republic of South Africa, 1996, Article 28, official text, Government of the Republic of South Africa https://www.gov.za/documents/constitution/constitution-republic-south-africa-1996-04-feb-1997 (մուտք՝ 12.08.2026):

7. Conseil constitutionnel, Décision n° 2002-461 DC du 29 août 2002, para. 26, Conseil constitutionnel, texte officiel, https://www.conseil-constitutionnel.fr/decision/2002/2002461DC (մուտք՝ 13.08.2026):

8. de Montgolfier J.-F., «Le Conseil constitutionnel et la justice pénale des mineurs», 23 octobre 2008, p. 10, Conseil constitutionnel, document électronique officiel https://www.conseil-constitutionnel.fr/sites/default/files/as/root/bank_mm/pdf/Conseil/justice_penale_des_mineurs_jfm.pdf (մուտք՝ 13.08.2026):

9. de Montgolfier J.-F., «Le Conseil constitutionnel et la justice pénale des mineurs», *Les Nouveaux Cahiers du Conseil constitutionnel*, 2011/4, № 33, էջ 195–207 https://www.conseil-constitutionnel.fr/decision/2002/2002461DC (մուտք՝ 12.08.2026):

10. Darsonville A., «QPC du 21 septembre 2012 : la poursuite de la désagrégation du droit pénal des mineurs», *Constitutions*, octobre-décembre 2012, № 2012-4, էջ 609–615, https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000026395318 (մուտք՝ 13.08.2026)

11. Habashi J., Driskill S., Lang J., DeFalco P., "Constitutional Analysis: A Proclamation of Children's Right to Protection, Provision, and Participation", *The International Journal of Children's Rights*, Vol. 18, No. 2, 2010, էջ 267–290, DOI: 10.1163/157181809X12615514762046 (մուտք՝ 12.08.2026) :

12. O'Mahony C., "The Promises and Pitfalls of Constitutionalizing Children's Rights", in: Dwyer J. G. (ed.), *The Oxford Handbook of Children and the Law*, Oxford: Oxford University Press, 2020, էջ 871–896 https://doi.org/10.1093/oxfordhb/9780190694395.013.40 (մուտք՝ 09.08.2026):

13. O'Mahony C., "Why Children Should Have Constitutional Rights of Their Own", *International Journal of Constitutional Law*, Vol. 23, Issue 2, 2025, էջ 372–404, DOI: 10.1093/icon/moaf034 (մուտք՝ 12.08.2026):

14. United Nations, *Convention on the Rights of the Child*, United Nations Treaty Series, Vol. 1577, 1989, p. 3, available at: Office of the United Nations High Commissioner for Human Rights (OHCHR), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child (մուտք՝ 09.08.2026):

Հոդվածը գրախոսվել է 04.08.2026թ.
Ներկայացվել է տպագրության 11.08.2026թ.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՄԲԱՏ
Եվրասիա միջազգային համալսարանի Իրավագիտության, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների ամբիոնի հայցորդ ՀՀ Փաստաբանների պալատի անդամ
DOI: 10.63925/18294847-2026.blj22-07

Ամփոփագիր: Սույն գիտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել իրավական որոշակիության սկզբունքի բովանդակությունը, դրա տեսական հիմքերը և գործնական դրսևորումները՝ որպես իրավական պետության և իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքներից մեկի: Հետազոտությունն ուղղված է իրավական որոշակիության սկզբունքի ձևավորման, զարգացման և արդի նշանակության բացահայտմանը՝ եվրոպական և միջազգային դատական պրակտիկայի համատեքստում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական-իրավական, ձևաբանական (դոգմատիկ), համակարգային, պատմահրավական և նախադեպային իրավունքի վերլուծության մեթոդները: Ուսումնասիրվել են Եվրոպական միության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ինչպես նաև իրավական դոկտրինայում ձևավորված մոտեցումները:

Հետազոտության արդյունքում հիմնավորվում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ներառում է իրավական նորմերի հստակության, հասանելիության, կանխատեսելիության և կայունության պահանջները, որոնք հնարավորություն են տալիս իրավունքի սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները և արդյունավետորեն իրացնել իրենց իրավունքները: Վերլուծության հիման վրա բացահայտվում է, որ իրավական որոշակիության կարևոր բաղադրիչներն են դատական ակտերի վերջնականության (**res judicata**) սկզբունքը, իրավաչափ ակնկալիքների (**legitimate expectations**) պաշտպանությունը, իրավական նորմերի հետադարձ ուժի սահմանափակումը և պետական մարմինների հայեցողական լիազորությունների իրավաչափ սահմանները: Այդ մոտեցումները ձևավորվել և զարգացվել են Եվրոպական միության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, մասնավորապես՝ *Commission v. Italy*, *The Sunday Times v. the United Kingdom (No. 1)*, *Malone v. the United Kingdom*, *Busuioc v. Moldova*, *Brumărescu v. Romania* և *Ponomaryov v. Ukraine* գործերով:

Հետազոտության արդյունքում եզրակացվում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ժամանակակից սահմանադրական ժողովրդավարության և իրավական

պետության անբաժանելի տարրերից է: Այն դրսևորվում է ինչպես իրավական նորմերի բովանդակության և որակի, այնպես էլ դրանց մեկնաբանության և կիրառման գործընթացում՝ ապահովելով իրավական հարաբերությունների կայունությունը, հանրային վստահությունը, իրավական անվտանգությունը և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Բանալի բառեր: Իրավական որոշակիություն, իրավունքի գերակայություն, «օրենքով սահմանված» չափանիշ, կանխատեսելիություն, res judicata, իրավաչափ ակնկալիքներ, դատական պրակտիկա, Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Ներածություն

Ժամանակակից իրավական պետության պայմաններում իրավական որոշակիության սկզբունքն իրավունքի գերակայության հիմնարար բաղադրիչներից մեկն է: Իրավական համակարգի արդյունավետությունը և հասարակության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ մեծապես կախված են նրանից, թե որքանով են իրավական նորմերը հստակ, հասանելի և կանխատեսելի: Իրավական որոշակիությունն ապահովում է, որ իրավունքի սուբյեկտները կարողանան ճիշտ ընկալել իրենց իրավունքներն ու պարտականությունները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել գործող իրավակարգավորմանը:

Այս սկզբունքը ձևավորվել է եվրոպական իրավական մտածողության շրջանակներում և հետագայում դարձել է միջազգային և ներպետական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը: Այն ընդգրկում է ոչ միայն իրավական նորմերի ձևակերպման հստակությունը, այլ նաև դրանց կիրառման միատեսակությունը և իրավական հարաբերությունների կայունությունը: Իրավական որոշակիությունը պահանջում է, որ օրենքները լինեն հասկանալի և կանխատեսելի, իսկ դրանց կիրառումը՝ զերծ կամայականությունից:

Հատկապես կարևոր է իրավական որոշակիության դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Իրավական նորմերի հստակությունն ու կանխատեսելիությունն այն հիմնական նախապայմաններն են, որոնք ապահովում են անձի հիմնարար իրավունքների արդյունավետ իրականացումը: Այս համատեքստում «օրենքով սահմանված լինելու» պահանջը ենթադրում է, որ ցանկացած իրավական սահմանափակում պետք է հիմնված լինի բավարար հստակությամբ ձևակերպված և հանրությանը հասանելի նորմերի վրա:

Իրավական որոշակիության կարևոր բաղադրիչներից է նաև դատական ակտերի վերջնականության սկզբունքը, որը երաշխավորում է իրավական հարաբերությունների կայունությունը և կանխում է նույն հարցերի անվերջ վերանայումը: Վերջնական դատական ակտերի կայունությունը նպաստում է արդար դատաքննության ապահովմանը և բարձրացնում է վստահությունը դատական համակարգի նկատմամբ:

Բացի այդ, իրավական որոշակիությունը ներառում է պետական մարմինների հայեցողական լիազորությունների սահմանափակումը: Թեև իրավական կարգավո-

րումը չի կարող ամբողջությամբ բացառել հայեցողության տարրը, այն պետք է սահմանվի հստակ շրջանակներում, որպեսզի կանխվի կամայական միջամտությունը և ապահովվի անձանց իրավունքների պաշտպանությունը:

Սկզբունքի կարևոր տարր է նաև իրավաչափ ակնկալիքների պաշտպանությունը, որը թույլ է տալիս անձանց ապավինել գործող իրավական կարգավորմանը և ունենալ վստահություն դրա կայունության նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևոր է իրավական նորմերի փոփոխության կամ հետադարձ ուժի կիրառման դեպքերում:

Միևնույն ժամանակ, իրավական որոշակիությունը չի կարող դիտարկվել որպես բացարձակ արժեք: Իրավական նորմերը պետք է ունենան նաև հասարակական հարաբերությունների փոփոխությանը հարմարվելու որոշակի ճկունություն: Հետևաբար, իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության հիմնական խնդիրներից է հավասարակշռություն ապահովել հստակության և ճկունության միջև:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ իրավական որոշակիության սկզբունքն իրավական պետության հիմքն է, որն ապահովում է իրավական հարաբերությունների կայունությունը, կանխատեսելիությունը և արդարությունը: Այն կարևոր դեր է խաղում մարդու իրավունքների պաշտպանության, պետական իշխանության սահմանափակման և հանրային վստահության ձևավորման գործում:

Հիմնական հետազոտություն

Իրավական որոշակիության սկզբունքի արդիականության մասին խոսելիս կարելի է նշել երկու հիմնական կետ. իրավական հարաբերությունների կայունության ապահովումն ու ժողովրդավարության պահպանումը: Դա պայմանավորված է նրանով, որ որոշակիությունն ապահովում է արդեն կայացված որոշումների պաշտպանությունը: Որոշակիությունը՝ որպես սկզբունք, առաջին անգամ հիշատակվել է Եվրոպական համայնքների դատարանի կողմից 1960 թվականին՝ որպես իրավունքի նորմ, որը պետք է պահպանվի պայմանագրի կիրառման ժամանակ:

Commission v Italy (1961) ECR 317, գործ 7/61վճռում Դատարանն ընդգծեց, որ Համայնքային իրավունքի կիրառումը պետք է համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին: Դատարանը, ըստ էության, նշել է, որ «իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ իրավական նորմերը լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի անձինք կարողանան միանշանակորեն պարզել իրենց իրավունքներն ու պարտականությունները և գործեն դրանց համապատասխան»:[1]

Այլ կերպ ասած՝ Պայմանագրի դրույթների կիրառման ընթացքում թե՛ անդամ պետությունները, թե՛ Համայնքային (ներկայում՝ Միության) ինստիտուտները պարտավոր են ապահովել, որ իրավական նորմերը լինեն կանխատեսելի, թափանցիկ և բավարար չափով հստակ, որպեսզի իրավունքի սուբյեկտները կարողանան գիտակցել

[1] Տե՛uCourt of Justice of the European Communities. (1961). *Commission of the European Economic Community v Italy* (Case 7/61), ECR 317

իրենց իրավական վիճակը: Այսպիսով՝ իրավական որոշակիությունը ձևավորվեց որպես Եվրոպական (այժմ՝ Միության) իրավունքի ընդհանուր սկզբունքներից մեկը:

Հետագայում այն բազմիցս կիրառվել է ինչպես ներպետական դատարաններում, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների շրջանակում իրավական որոշակիության սկզբունքի հիմնական շեշտադրումները կարելի է համակարգել հետևյալ ուղղություններով.

1. «Օրենքով սահմանված լինելու» չափանիշը

Դատարանը հետևողականորեն մեկնաբանել է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ցանկացած սահմանափակում պետք է լինի «օրենքով սահմանված»: Այս պահանջը չի սպառվում իրավական նորմի ձևական գոյությամբ. այն ենթադրում է, որ իրավական կարգավորումը պետք է լինի՝ հասանելի (accessible), բավարար աստիճանի հստակ և կանխատեսելի (foreseeable) և երաշխավորի պաշտպանություն կամայական միջամտությունից: Այս մոտեցումը հստակ ձևակերպվել է, մասնավորապես, The Sunday Times v. the United Kingdom (No. 1) գործով (1979 թ.), որտեղ Դատարանը նշել է, որ իրավական նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի ճշգրտությամբ, որ անձը կարողանա ողջամիտ չափով կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները:[2]

2. Դատական ակտերի վերջնականության սկզբունքը (res judicata)

Իրավական որոշակիության բաղկացուցիչ տարրերից է դատական ակտերի վերջնականության և կայունության ապահովումը: Դատարանն ընդգծել է, որ ուժի մեջ մտած և վերջնական դատական ակտերի կամայական վերանայումը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին և իրավունքի գերակայության գաղափարին: Այս սկզբունքը զարգացվել է, մասնավորապես, Brumărescu v. Romania գործով (1999 թ.):[3]

3. Կանխատեսելիություն և կամայականության սահմանափակում

Դատարանի իրավական մեկնաբանությամբ՝ իրավական որոշակիությունը սերտորեն փոխկապակցված է իրավունքի գերակայության սկզբունքի հետ: Պետական մարմիններին վերապահված հայեցողությունը պետք է ունենա հստակ սահմաններ, իսկ իրավական նորմերը չպետք է կիրառվեն կամայական կամ անկանխատեսելի կերպով:[4] Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս արձանագրել է, որ European Convention on Human Rights-ի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի Նախաբանի լույսի ներքո, որը հղում է կատարում իրավունքի գերակայության սկզբունքին: Այս մոտեցումը ձևակերպվել է, մասնա-

---

[2] Տե՛ս European Court of Human Rights. (1979). *The Sunday Times v. the United Kingdom (No. 1)* (Application no. 6538/74), Judgment of 26 April 1979, Series A no. 30.

[3] Տե՛ս European Court of Human Rights. (1999). *Brumărescu v. Romania* (Application no. 28342/95), Judgment of 28 October 1999, Reports of Judgments and Decisions 1999-VII.

[4] Տե՛ս European Court of Human Rights. (1984). Malone v. the United Kingdom *(Application no. 8691/79), Judgment of 2 August 1984, Series A no. 82.*

վորապես, Golder v. the United Kingdom գործով, որտեղ Դատարանը շեշտել է, որ Կոնվենցիայի դրույթների մեկնաբանումը պետք է իրականացվի դրանց նպատակի և համակարգային ամբողջության համատեքստում: Այս իրավական մոտեցումը զարգացնելով՝ ՄԻԵԴ-ը, քննարկելով այն հարցը, թե արդյոք դատարաններին կամ պետական մարմիններին լայն հայեցողություն տրամադրող նորմերը բավարար որոշակիություն են պարունակում, արձանագրել է, որ իրավական որոշակիության պահանջը չի բացառում հայեցողական լիազորությունների առկայությունը: Սակայն նման լիազորությունների ծավալը և դրանց իրականացման եղանակը պետք է սահմանված լինեն բավարար հստակությամբ՝ հաշվի առնելով տվյալ գործով հետապնդվող օրինական նպատակները, որպեսզի անձը պաշտպանված լինի կամայական միջամտությունից: Այս սկզբունքը հստակ ձևակերպվել է, օրինակ, Malone v. the United Kingdom գործով (1984 թ.), որտեղ Դատարանը նշել է, որ օրենքը պետք է սահմանափակի իշխանության հայեցողությունը և ապահովի կամայականության դեմ արդյունավետ երաշխիքներ:[5]

Միաժամանակ, իրավական որոշակիության սկզբունքի կարևոր բաղադրիչ է res judicata-ի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի անբեկանելիության սկզբունքը: Դատարանը մի շարք վճիռներում այս սկզբունքը դիտարկել է որպես իրավական որոշակիության և իրավունքի գերակայության դրսևորում: Մասնավորապես, Ponomaryov v. Ukraine գործով (2008 թ.) Դատարանը վերահաստատել է, որ կողմերից ոչ մեկը իրավունք չունի պահանջելու վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշման վերանայում միայն այն նպատակով, որ գործը նորից քննվի և կայացվի այլ որոշում:[6]

Նշենք նաև, որ ՄԻԵԴ-ը «իրավական որոշակիությունը» ևս համարում է օրինականության սկզբունքի (rule of law) էական բաղադրիչներից մեկը: Կարևորում է, որ վերջին ատյանի վճիռները վերջնական լինեն՝ առանց դրանց չորրորդ ուժով վերանայման (res judicata): Այս դիրքորոշումը տվել է ՄԻԵԴ-ը, օրինակ՝ Բրումայեսկին ընդդեմ Ռումինիայի որոշման միջոցով[7], ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի որոշմամբ:

Մասնավորապես, Բրումայեսկին ընդդեմ Ռումինիայի գործով դատարանը պնդել է, որ վերջնական վճիռը չպետք է ստորադաս ատյաններով կամ ոչ ժողովրդավարական ձևով հնարավոր լինի փոխել, այլ՝ միայն բացառիկ և հիմնավոր պատճառներով (judicial error և այլն), այլ վերանայումը թույլատրվում է միայն «substantial and compelling character» հիմք ունենալու դեպքում, ինչպես սահմանված էր Ռյաբիկն ընդդեմ Ռուսաստանի կամ Մորերիա Ֆերարին ընդդեմ Պորտուգալիայի (no. 2) գործերում:[8]

---

[5] Տե՛ս Malone v. The United Kingdom, 2 օգոստոսի 1984 թ., գործ N° 8991/79, § 66,
Margareta and Roger Andersson v. Sweden, 25 փետրվարի 1992 թ., գործ N° 12963/87, § 75, Tolstoy Miloslavsky v. the United Kingdom, 13 հուլիսի 1995 թ., գործ N° 18139/91, § 37):

[6] Տե՛ս European Court of Human Rights. (2008). *Ponomaryov v. Ukraine* (Application no. 3236/03), Judgment of 3 April 2008.

[7] Տե՛ս European Court of Human Rights. (1999). *Brumărescu v. Romania*, no. 28342/95.

[8] Տե՛ս European Court of Human Rights. (2003). *Ryabykh v. Russia*, no. 52854/99.

Հետաքրքրական է նաև Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, որով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայում օգտագործված՝ «օրենքով նախատեսված» տերմինը ենթադրում է նաև այնպիսի իրավական սկզբունքների պահպանություն, ինչպիսին է որոշակիության և իրավական որոշակիության սկզբունքը: ՄԻԵԴ-ն նշում է, որ «օրենքով նախատեսված» հասկացությունը վերաբերում է ոչ միայն գրավոր օրենքներին կամ գրավոր իրավական կանոններին, այլև բանավոր օրենքին, այսինքն՝ հասարակության հաստատված կանոններին և բարոյական սկզբունքներին: Այս կանոնները, որոնք ապահովում են իրավական կարգի կայունությունը, ներառում են նաև դատական պրակտիկան: Կոնվենցիան պահանջում է, որ օրենքը (լինի գրավոր, թե բանավոր) լինի բավական հստակ, որպեսզի քաղաքացին կարիք առաջանալու դեպքում որոշակի չափով, որոշակի պայմաններում կարողանա կանխատեսել իր գործողության հնարավոր հետևանքները: ՄԻԵԴ-ը նման դիրքորոշում է արտահայտել նաև «Սթիլը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով:[9]

2004 թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) վճռում մասնավորապես Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է: Միաժամանակ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պատվի և արժանապատվության իրենց շեշտադրմամբ, անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան: Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները: Գնահատողական դատողությունների և փաստերի տարանջատման անհրաժեշտության առնչությամբ Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առաջադրել է այն պահանջը, որ հստակ տարբերակում պետք է կատարել փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև:

Նույնաբովանդակ որոշումներ են առկա նաև Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի, Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի, Դամման ընդդեմ Շվեյցարիայի գործերով, որով

[9] Տե՛ս Steel and others v. The United Kingdom

ՄԻԵԴ-ն պահանջել է, որ օրենքները լինեն այնպիսի հստակությամբ, որ անհատները կարողանան կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները. սա որոշակիության առանցքներից մեկն է: Շատ հետաքրքրական է նաև ՄԻԵԴ-ի դիրքորոշումը Եվրոպական միության իրավունքում, պայմանագրային պրակտիկայում և օրենսդրությունում որոշակիության սկզբունքի վերաբերյալ:

Թեև Եվրոպական միության հիմք հանդիսացող պայմանագրերն ուղղակիորեն չեն ամրագրում իրավական որոշակիության սկզբունքը, սակայն ՄԻԵԴ-ը այն ճանաչում է որպես եվրոպական իրավունքի ընդհանուր սկզբունքներից մեկը: Salumi գործով, Դատարանը շեշտեց, որ ԵՄ իրավունքի ազդեցությունը (հետևանքները) պետք է լինեն պարզ և կանխատեսելի այն անձանց համար, որոնց վրա այն տարածվում է:

Դատարանը նաև հղում է կատարել իր ավելի վաղ՝ Ռաքեն ընդդեմ Մայնցի Հաուպցոլգլամտի (1979 թ.), և Լանդաուի Հաուպցոլգլամտ (1979 թ.) գործերին, որտեղ բազմիցս ընդգծվել է իրավական որոշակիության և իրավաչափ ակնկալիքների սկզբունքների կարևորությունը, և նշվել է հետևյալը. «Իրավական որոշակիության սկզբունքը նպատակ ունի կանխել այն իրավիճակները, երբ ԵՄ իրավական ակտերի դրույթները հետադարձ ուժ ունեն իրենց հրապարակման պահին, և այդպիսի հնարավորությունը կարող է արդարացված լինել միայն՝ նպաստելով համապատասխան օրենսդրության նպատակներին և պահպանելով տվյալ նորմերի հասցեատերերի իրավաչափ ակնկալիքները»:[10]

Ըստ ՄԻԵԴ միասնական դատական պրակտիկայի ուսումնասիրության՝ պարզ է դառնում, որ որոշակիությունը պետք է հասկացվի հետևյալ բաղադրիչների միջոցով.

* օրենքի պարզություն, հստակություն և միանշանակություն,
* անձի՝ իր գործողություններում հիմնավորված և կանխատեսելի ակնկալիքների վրա հենվելու իրավունք,
* գործող օրենսդրության կայունության նկատմամբ ողջամիտ վստահություն,
* ինչպես նաև՝ օրենքի կիրառման հետևանքները կանխատեսելու հնարավորությունը (*legitimate expectations*, այսինքն՝ իրավաչափ ակնկալիքներ):

ՄԻԵԴ-ն կարևորում է նաև ոչ միայն օրինաչափության մեջ հստակությունը, այլ նաև հստակ և համակողմյա դատական պրակտիկայի առկայության դեպքում: Այսպես, Բալաժոսկին ընդդեմ Մակեդոնիայի՝ Նախկին Յուգոսլավական Հանրապետության (2004 թ.), Էմել Բոյրազն ընդդեմ Թուրքիայի (2005 թ.) գործերում ՄԻԵԴ-ը նշել է, որ հակասական վճիռների գոյությունն առանց համապատասխան արձագանքման կարող է խախտել արդար դատաքննության և հետևաբար՝ որոշակիության սկզբունքը՝ նշելով, որ «...Նմանատիպ գործերում հակասող վճիռները՝ համաչափություն ապահովող մեխանիզմի բացակայության պայմաններում, խախտում են արդար դատաքննության սկզբունքը և պղտորում հանրային վստահությունը (դատական համակարգի նկատմամբ)»:

Որոշակիության սահմանադրական սկզբունքը ենթադրում է, որ օրենսդիրը պետք

---

[10] Տե՛ս Racke v. Hauptzollamt Mainz and Hauptzollamt Landau

է ձգտի իրավական ակտերի ձևակերպման հստակության և պարզության: Յուրաքանչյուր անձ, կախված կոնկրետ հանգամանքներից, պետք է կարողանա կողմնորոշվել, թե որ իրավական նորմն է կիրառվում տվյալ դեպքում, և ունենալ հստակ պատկերացում այն իրավական հետևանքների վերաբերյալ, որոնք առաջանալու են տվյալ իրավահարաբերությունում. խոսքը վերաբերում է օրենքի ողջամիտ և կանխատեսելի կայունությանը: Ի դեպ, մեր հենց այս դիրքորոշումն ամրագրված է նաև Ուկրաինայի Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 20-ի թիվ 6-r/2019 որոշման հիմնավորման բաժնի 4-րդ կետի ենթակետի 4.1-ի 4-6-րդ պարբերություններում:[11]

Հետևաբար, վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մշտական դատավճիռներից և իրավաբանական վերլուծությունից հետևում է, որ ՄԻԵԴ-ն որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես սահմանադրական կարգի և իրավական պետության անբաժանելի տարր, որը հստակ արտահայտվում է ինչպես իրավական ակտերի բովանդակության, այնպես էլ դրանց կիրառման պրակտիկայում:

Սահմանադրական մակարդակում որոշակիության սկզբունքի արտահայտման հիմնական առանցքները, ըստ ՄԻԵԴ-ի, հետևյալն են.

ՄԻԵԴ-ն նշում է, որ սահմանադրական նորմերը, որոնք կարգավորում են մարդու հիմնարար իրավունքները և պետական սահմանափակումները, պետք է լինեն հասկանալի, հստակ և կանխատեսելի: Այլ կերպ՝ անհատը պետք է կարողանա իր վարքը համաձայնեցնել օրենքին՝ առանց ենթարկվելու կամայական մեկնաբանությունների:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ որոշակիության սահմանադրական սկզբունքն իրավական պետության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության հիմնաքարն է: Այն պահանջում է, որ սահմանադրական նորմերը և դրանց կիրառումը լինեն հստակ, կանխատեսելի և կայուն՝ բացառելով կամայականությունը և ապահովելով հանրային վստահությունը դատական և պետական ինստիտուտների նկատմամբ: Այս սկզբունքը տարածվում է ոչ միայն օրենսդրական մակարդակում ընդունվող նորմերի վրա, այլ նաև՝ դատական պրակտիկայի և սահմանադրական վերահսկողության ամբողջ համակարգի վրա:

[11] Տե՛ս Constitutional Court of Ukraine of June 20, 2019 № 6-r/2019

Եզրակացություն

Տեսական եզրահանգումներ

Սույն հետազոտության շրջանակում իրականացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավական որոշակիության սկզբունքը ժամանակակից իրավական պետության և իրավունքի գերակայության հիմնարար ու համակարգաստեղծ սկզբունքներից է: Այն հանդես է գալիս ոչ միայն որպես իրավական նորմերի ձևական որակի պահանջ, այլև որպես ամբողջ իրավական համակարգի կայունությունն ու կանխատեսելիությունն ապահովող համընդհանուր սկզբունք:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ իրավական որոշակիությունը բազմաբաղադրիչ իրավական կատեգորիա է, որը ներառում է իրավական նորմերի հասանելիության, հստակության, կանխատեսելիության, իրավակիրառ պրակտիկայի հետևողականության, դատական ակտերի վերջնականության (*res judicata*) և իրավաչափ ակնկալիքների պաշտպանության պահանջները: Նշված բաղադրիչները փոխկապակցված համակարգ են և միասին ապահովում են իրավական անվտանգության և իրավական կայունության անհրաժեշտ մակարդակը:

Տեսական վերլուծությունը նաև հիմնավորում է, որ իրավական որոշակիությունը չի կարող դիտարկվել մեկուսացված, այլ պետք է ընկալվի իրավունքի գերակայության և իրավական պետության սկզբունքների համատեքստում: Միաժամանակ հաստատվում է, որ իրավական որոշակիության և իրավական ճկունության միջև առկա է բնական փոխհարաբերություն, որի պահպանվող հավասարակշռությունն անհրաժեշտ պայման է իրավական համակարգի արդյունավետ զարգացման համար:

Կիրառական եզրահանգումներ

Կիրառական տեսանկյունից հետազոտությունը ցույց է տալիս, որ իրավական որոշակիության սկզբունքի արդյունավետ իրագործումը մեծապես պայմանավորված է օրենսդրական տեխնիկայի որակով, իրավական նորմերի ձևակերպումների ճշգրտությամբ և դատական պրակտիկայի հետևողականությամբ: Իրավական նորմերի անորոշությունը կամ հակասական մեկնաբանությունը կարող է հանգեցնել իրավակիրառ գործունեության կամայականության, խաթարել իրավական կանխատեսելիությունը և նվազեցնել հանրային վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ:

Եվրոպական միության դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ազգային սահմանադրական դատարանների նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ իրավական որոշակիությունը գործնականում ապահովվում է օրենքի որակի, իրավաչափ ակնկալիքների պաշտպանության, դատական ակտերի կայունության և պետական մարմինների հայեցողական լիազորությունների արդյունավետ սահմանափակման միջոցով: Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքը ոչ միայն տեսական իրավական կատեգորիա է, այլև իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության արդյունավետության գնահատման գործնական չափանիշ:

Առաջարկություններ

Հետազոտության արդյունքների հիման վրա նպատակահարմար է ձևակերպել հետևյալ առաջարկությունները.

1. Օրենսդրական տեխնիկայի կատարելագործում և իրավական նորմերի հստակեցում

Անհրաժեշտ է կատարելագործել իրավական ակտերի մշակման և ընդունման գործընթացը՝ ապահովելով իրավական նորմերի առավել բարձր մակարդակի հստակություն, միանշանակություն և համակարգվածություն: Այդ նպատակով նպատակահարմար է օրենսդրական գործընթացում ներդնել պարտադիր իրավատեխնիկական և լեզվաիրավական փորձաքննության արդյունավետ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան դեռևս նախագծման փուլում բացահայտել և վերացնել իրավական անորոշություններն ու ներքին հակասությունները:

2. Դատական պրակտիկայի միատեսակության ինստիտուցիոնալ ամրապնդում

Իրավական որոշակիության արդյունավետ ապահովման նպատակով անհրաժեշտ է զարգացնել դատական պրակտիկայի միասնականության երաշխավորման ինստիտուցիոնալ մեխանիզմները: Այդ համատեքստում կարևոր է բարձրագույն դատական ատյանների, մասնավորապես՝ սահմանադրական և վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների ուղղորդող նշանակության ամրապնդումը, ինչպես նաև ստորադաս դատարանների կողմից դրանց հետևողական հաշվառման և կիրառման արդյունավետ ընթացակարգերի կատարելագործումը:

Այս առաջարկությունների իրականացումը կնպաստի իրավական որոշակիության սկզբունքի առավել ամբողջական իրագործմանը, իրավական անվտանգության ամրապնդմանը, իրավունքի գերակայության արդյունավետ ապահովմանը և հանրային վստահության բարձրացմանը պետական իշխանության և արդարադատության համակարգի նկատմամբ:

ПРАВОВЫЕ ПОДХОДЫ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА К ПРИНЦИПУ ПРАВОВОЙ ОПРЕДЕЛЁННОСТИ

МИНАСЯН СМБАТ
Соискатель кафедры права, политологии и международных отношений Евразийского международного университета
Член Палаты адвокатов Республики Армения

Аннотация. Целью настоящей научной работы является изучение содержания принципа правовой определенности, его теоретических основ и практических проявлений как одного из основополагающих принципов правового государства и верховенства права. Исследование направлено на выявление формирования, развития и актуального значения принципа правовой определенности в контексте европейской и международной судебной практики.

В ходе исследования использовались сравнительно-правовые, морфологические (догматические), системные, историко-правовые и методы анализа прецедентного права. Было изучено прецедентное право суда Европейского союза и Европейского суда по правам человека, а также подходы, сформулированные в правовой доктрине.

В результате исследования подтверждается, что принцип правовой определенности включает требования ясности, доступности, предсказуемости и стабильности правовых норм, которые позволяют субъектам права предвидеть правовые последствия своего поведения и эффективно реализовывать свои права. На основе анализа выявлено, что важными компонентами правовой определенности являются принцип окончательности судебных актов (res judicata), защита законных ожиданий (legitimate expectations, ограничение обратной силы правовых норм и законные пределы дискреционных полномочий государственных органов. Эти подходы были сформированы и развиты в прецедентном праве суда Европейского союза и Европейского суда по правам человека, в частности в деле Commission V. Италия, The Sunday Times v. Соединенное Королевство (нет. 1), Мэлоун В. Соединенное Королевство, штат Вирджиния. Молдова, Брумэреску В. Румыния и Пономарев В. По делам Украины.

В результате исследования делается вывод о том, что принцип правовой определенности является одним из неотъемлемых элементов современной конституционной демократии и правового государства. Это проявляется как в содержании и качестве правовых норм, так и в их толковании и применении, обеспечивая стабильность правовых отношений, общественное доверие, правовую безопасность и эффективную защиту прав человека.

Ключевые слова: правовая определённость, верховенство права, требование «предусмотренности законом», предсказуемость, resjudicata, законные ожидания, судебная практика, Европейский суд по правам человека.

LEGAL APPROACHES OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS TO THE PRINCIPLES OF LEGAL CERTAINTY

MINASYAN SMBAT
Applicant at the Chair of Law, Political Science and International Relations,
Eurasia International University,
Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia

---

Abstract. This scholarly article is devoted to a comprehensive analysis of the principle of legal certainty as a fundamental component of the rule of law and constitutional statehood. The research examines the formation of this principle within European Union law, beginning with the *Commission v Italy* case, as well as its subsequent development in the case-law of the European Court of Human Rights.

The study demonstrates that legal certainty presupposes clarity, accessibility, and foreseeability of legal norms, enabling individuals to understand their rights and obligations and to anticipate legal consequences. These standards have been elaborated in key judicial practice, particularly in cases such as *The Sunday Times v. the United Kingdom (No. 1)*, *Malone v. the United Kingdom*, and *Busuioc v. Moldova*.

Special attention is given to the principle of the finality of judicial decisions (res judicata), which serves as a guarantee of legal stability and the right to a fair trial. This aspect has been significantly developed in cases such as *Brumărescu v. Romania* and *Ponomaryov v. Ukraine*.

The article also addresses the doctrine of legitimate expectations, limitations on the retroactive effect of legal norms, and the scope of discretionary powers of public authorities, emphasizing that such powers must be exercised within clearly defined legal frameworks to prevent arbitrariness.

The study concludes that the principle of legal certainty constitutes an integral element of the constitutional order of states. It manifests itself both in the content of legal norms and in their practical application, ensuring the stability of legal relations, public trust, and the effective protection of human rights, thereby serving as a cornerstone of modern democratic governance.

Key words: legal certainty, rule of law, “prescribed by law” requirement, foreseeability, res judicata, legitimate expectations, judicial practice, European Court of Human Rights.

Օգտագործված գրականության ցանկ

1. Constitutional Court of Ukraine. (2019). Decision No. 6-r/2019 of 20 June 2019.

2. Court of Justice of the European Communities. (1961). Commission of the European Economic Community v. Italy (Case 7/61), *European Court Reports*, p. 317.

3. Court of Justice of the European Communities. (1979). Racke v. Hauptzollamt Mainz (Case 98/78), *European Court Reports*, p. 69.

4. European Court of Human Rights. (1979). The Sunday Times v. the United Kingdom (No. 1) (Application no. 6538/74), Judgment of 26 April 1979, *Series A*, No. 30.

5. European Court of Human Rights. (1984). Malone v. the United Kingdom (Application no. 8691/79), Judgment of 2 August 1984, *Series A*, No. 82.

6. European Court of Human Rights. (1992). Margareta and Roger Andersson v. Sweden (Application no. 12963/87), Judgment of 25 February 1992, *Series A*, No. 226-A.

7. European Court of Human Rights. (1995). Tolstoy Miloslavsky v. the United Kingdom (Application no. 18139/91), Judgment of 13 July 1995, *Series A*, No. 316-B.

8. European Court of Human Rights. (1998). Steel and Others v. the United Kingdom (Application nos. 24838/94, 24919/94, 24924/94, 24934/94, 24940/94, 24943/94, 24944/94, 24952/94 and 24827/94), Judgment of 23 September 1998, *Reports of Judgments and Decisions 1998-VII*.

9. European Court of Human Rights. (1999). Brumărescu v. Romania (Application no. 28342/95), Judgment of 28 October 1999, *Reports of Judgments and Decisions 1999-VII*.

10. European Court of Human Rights. (2003). Ryabykh v. Russia (Application no. 52854/99), Judgment of 24 July 2003, *Reports of Judgments and Decisions 2003-IX*.

11. European Court of Human Rights. (2008). Ponomaryov v. Ukraine (Application no. 3236/03), Judgment of 3 April 2008.

Հոդվածը գրախոսվել է 19.08.2026թ.
Ներկայացվել է տպագրության 26.08.2026թ.

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԱԴԻԳՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳՈՌ
ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման տակտիկական և տեխնիկական պատրաստականության ամբիոնի պետի պարտականությունները կատարող

ԻՍՊԻՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ
ՀԱԱՀ տվյալագիտության ամբիոնի դասախոս

ՓՈՓԻԿՅԱՆ ՄԱՐԻՆԱ
ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրի ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանման բնագիտական առարկաների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
DOI: 10.63925/18294847-2026.blj22-08

Ամփոփագիր: Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել արհեստական բանականության (ԱԲ) ներդրման կրթական պարադիգմը ոստիկանական մասնագիտական կրթության համատեքստում՝ մարմնի վրա կրովի տեսախցիկների (BWC) տվյալների վերլուծության օրինակով: Հեղինակները ներկայացնում են «SmartReview» հայեցակարգային հարթակի նախագծային լուծումը, որը հիմնված է բաց կոդով ալգորիթմների՝ OpenAI Whisper (խոսքի ճանաչում) և YOLOv8 [9] (օբյեկտների և վարքագծային պատկերների հայտնաբերում) համադրման վրա: Ուսումնասիրվում են թվային տվյալահեն մոդելի անցման տեսական հնարավորությունները, կոնեկտիվիստական ուսուցման տեսության կիրառությունը ոստիկանական կրթության մեջ [13], ինչպես նաև տվյալների անվտանգության, ալգորիթմային կանխակալության և հետազոտական էթիկայի խնդիրները [3], [5]: Հետազոտության նախնական դիտարկումը, որն իրականացվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 2023-2024 թթ., ցույց է տվել, որ ձեռքով տեսագրությունների վերլուծությունը պարեկային ծառայության ուսուցման գործընթացում հանգեցնում է ռեսուրսների անարդյունավետ բաշխման և գնահատման սուբյեկտիվության, իսկ ԱԲ-ի վրա հիմնված ավտոմատացված համակարգերը, ըստ ալգորիթմական բնութագրերի տեսական պրոյեկցիաների [4], [11], կարող են կրճատել մշակման ժամանակը 95-99% ով՝ ապահովելով օբյեկտիվ և վերարտադրելի չափանիշներ:

Բանալի բառեր: Արհեստական բանականություն, ոստիկանական մասնագիտական կրթություն, SmartReview, տեսավերլուծություն, հայերենի բնական լեզվի մշակում (NLP), կրթական պարադիգմ, մարմնի վրա կրովի տեսախցիկ (BWC), տվյալահեն ուսուցում, կոնցեպտուալ հետազոտություն, ալգորիթմային կանխակալություն:

Ժամանակակից իրավապահ համակարգերում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն այլևս չի սահմանափակվում օպերատիվ-ծառայողական գործունեությամբ: Արհեստական բանականության (ԱԲ) և խոր ուսուցման (deep learning) ալգորիթմների զարգացումն ստեղծել է նոր հնարավորություններ ոչ միայն հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, այլև մասնագիտական կրթության և պատրաստականության կառավարման որակի կատարելագործման համար [3]: Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը (ընդունված 2022 թվականին) ուղղակիորեն կարևորում է թվային տեխնոլոգիաների և ԱԲ-ի դերը կրթական միջավայրի արդիականացման գործընթացում [2]:

Այս համատեքստում անհրաժեշտ է սահմանազատել մարմնի վրա կրովի տեսախցիկների (BWC) օպերատիվ-ծառայողական և կրթական կիրառությունները: Եթե միջազգային իրավապահ պրակտիկայում BWC տվյալները գլխավորապես օգտագործվում են օպերատիվ նպատակներով՝ ապացույցների հավաքագրման և քաղաքացիների բողոքների քննության համար (INTERPOL & UNICRI, 2018; Europol, 2021), ապա սույն հետազոտության գիտական նորույթն ուղղված է դրանց կիրառմանը բացառապես կրթական որակի վերահսկման համատեքստում: Պարեկային ծառայության ուսուցման գործընթացում BWC-ն հանդես է գալիս որպես ռեֆլեքսիվ գործիք, որի միջոցով ուսանողը հետադարձ կապի (debriefing) շնորհիվ վերլուծում է իր գործողությունները, իսկ դասախոսը գնահատում է դրանք: Սա իսկապես կրթական որակի վերահսկման գործընթաց է, քանի որ ստացված արդյունքը ծառայում է ոչ թե քրեադատավարական նպատակների, այլ ուսանողի մասնագիտական գնահատականի ձևավորմանն ու հմտությունների կատարելագործմանը:

Ներկայիս հետազոտությունը ծնվել է պրակտիկ անհրաժեշտությունից և սահմանափակվում է կրթական համակարգով՝ հետևյալ պատճառներով. (ա) կրթական միջավայրը թույլ է տալիս փորձարկել նոր տեխնոլոգիաներ առանց օպերատիվ ռիսկերի, (բ) ուսանողների BWC տվյալները չեն պարունակում օպերատիվ գաղտնիություն, (գ) կրթական արդյունքները (ուսանողի գնահատական) կարող են համեմատվել ալգորիթմային արդյունքների հետ՝ վավերացման համար:

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության տվյալների վերլուծության տարիների փորձը, Կրթահամալիրում իրականացված ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում, ցույց է տալիս, որ մեկ ութժամյա պարեկային շրջագայության տեսագրության համապարփակ վերլուծությունը՝ ներառյալ խոսքի տրանսկրիպցիան, միջադեպերի ժամանակագրությունը և ծառայողի վարքագծի գնահատումը, զբաղեցնում է 2-3 աշխատանքային օր: Այս ծանր ու երկար գործընթացը պայմանավորված է մարդկային ուշադրության բնականոն նվազմամբ, տեղեկատվության կուտակման սուբյեկտիվ ընտրովի բնույթով և ծառայող-վերահսկողի ֆիզիկական ռեսուրսների սահմանափակությամբ [8]: Դիտարկումները ցույց են տալիս, որ մեկ վերահսկողը միջինում ծախսում է 16-24 ժամ ութժամյա տեսագրության ամբողջական վերլուծության համար, ինչը ծառայության գործընթացում առաջացնում է «տվյալների գերբեռնվածության» (data overload) խնդիր:

Այս համատեքստում առաջանում է հետևյալ հետազոտական հիմնախնդիրը. ինչպե՞ս կարող է ԱԲ-ը ծառայել որպես կրթական պարադիգմի փոփոխության գործոն՝ ոստիկանական կրթությունում անցում կատարելով դեպի օբյեկտիվ, տվյալահեն և վերարտադրելի գնահատման մոդել:

ԱԲ տեխնոլոգիաների կիրառման նախադրյալները ՀՀ ոստիկանական համակարգում: ՀՀ ՆԳՆ ոստիկանության համակարգային բարեփոխումները և Պարեկային ծառայության ներդրումն ուղեկցվել են լայնածավալ տեխնիկական վերազինմամբ, մասնավորապես՝ մարմնին ամրացվող տեսախցիկների (BWC) զանգվածային կիրառմամբ: Սակայն, ՀՀ ոստիկանական համակարգում ԱԲ ներդրման լայնամասշտաբ ռազմավարության ներկայիս բացակայության պայմաններում, կուտակված տվյալների ծավալը բազմակիորեն գերազանցում է մարդկային վերլուծական կարողությունները՝ առաջացնելով տեղեկատվական գերբեռնվածություն: Ներկայումս ՀՀ ոստիկանությունում թվային տեխնոլոգիաների ներդրումը սահմանափակվում է էլեկտրոնային զեկույցների համակարգով և BWC սովորական ցանցով՝ առանց ԱԲ վերլուծական գործիքակազմի ակտիվ կիրառման: Այս համատեքստում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրն առաջնային և անվտանգ փորձարարական հարթակ է (innovative sandbox): Այստեղ ԱԲ հայեցակարգային լուծումների (ինչպիսին է SmartReview-ն) ներդրումը թույլ է տալիս նախապատրաստել ապագա ծառայողներին տվյալահեն միջավայրում աշխատանքին՝ նախքան դրանց համահամակարգային կիրառումը պրակտիկայում, ինչն էապես նվազեցնում է օպերատիվ և տեխնոլոգիական ռիսկերը:

Սույն հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել և գործնականորեն նախագծել ԱԲ-ի ներդրման հայեցակարգը ոստիկանական կրթության մեջ՝ BWC տվյալների ավտոմատացված վերլուծության օրինակով: Հետազոտության խնդիրներն են՝ վերլուծել կրթական պարադիգմի էվոլյուցիան թվային դարաշրջանում և դրա կիրառելիությունը ոստիկանական կրթության մեջ, մշակել «SmartReview» հայեցակարգային հարթակի նախագծային լուծումը՝ հիմնված բաց կոդով ալգորիթմների [3], [10], [13] վրա, ուսումնասիրել տվյալների անվտանգության, գաղտնիության, ալգորիթմային կանխակալության և հետազոտական էթիկայի ասպեկտները [12], [3], [5], ՀՀ ոստիկանական կրթության համակարգում ԱԲ-ի ներդրման համար ձևակերպել առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կառուցված է համադրական մոտեցման վրա: Ընտրվել է հետևյալ մոտեցումը՝ քանի որ միայն տեսական վերլուծությունը չէր բավարարի, անհրաժեշտ էր նաև հասկանալ, թե դասախոսներն ու վերահսկողներն ինչպես են աշխատում իրական պայմաններում: Մեթոդաբանությունը ներառում է՝ տեսական վերլուծություն՝ կոնեկտիվիստական ուսուցման [13] և տվյալահեն ոստիկանության [3] տեսությունների շրջանակներում, համակարգային գրականության վերլուծություն՝ ԱԲ-ի կիրառումների վերաբերյալ [7], [10], հայեցակարգային նախագծում՝ «SmartReview» հարթակի ճարտարապետության և գործառույթների մշակման համար, փորձնական աուդիտ՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում BWC տվյալների ձեռքով մշակման ներկա գործընթացի գնահատման նպատակով:

Կրթական պարադիգմի էվոլյուցիան թվային դարաշրջանում: Ոստիկանական կրթության ավանդական մոդելը, որը հիմնված էր դասախոսակենտրոն, տեսանյութերի ստատիկ փոխանցման և էքստենսիվ մեթոդների վրա, այլևս չի բավարարում թվային դարաշրջանի իրավապահի մասնագիտական կարողունակությունների ձևավորման պահանջներին: Ակնհայտ է, որ սովորողի մասնագիտական որակները ձևավորվում են ոչ միայն լսարանային տեսության, այլև իրական աշխատանքային տվյալների (տեսագրություններ, զեկույցներ, միջադեպերի վերլուծություն) հետ անընդհատ փոխազդեցության արդյունքում:

Ջորջ Սիմենսի [13] կոնեկտիվիզմի տեսությունը, չնայած իր նորարարությանը, ուղղակիորեն չի հաշվի առնում ոստիկանական կրթության մասնագիտական առանձնահատկությունները: Սիմենսի [13] կենտրոնական թեզի էությունն այն է, որ թվային դարաշրջանում սովորողի կարողությունն արագ և արդյունավետ կերպով տեղեկատվական ցանցերում նավիգացիա իրականացնելն ավելի կարևոր է, քան առանձին փաստերի հիշողությունը: Այս գաղափարը դիտարկվել է ոստիկանական կրթության տեսանկյունից՝ առաջարկելով «ոստիկանական կոնեկտիվիզմ» (police connectivism) հասկացությունը, որը ենթադրում է, որ գիտելիքը ձևավորվում է ոչ թե միայն տեղեկատվական հանգույցների միջև կապերի արդյունքում, այլև մարտավարական գործողությունների, խոսքային ակտերի և իրավական նորմերի սինթեզի միջոցով: Սույն հետազոտության շրջանակներում մենք կենտրոնանում ենք այն տեղաշարժի վրա, որն իրականացնում է անցում դասախոսակենտրոն մոդելից դեպի վերլուծական-փորձագիտական մոդել, որտեղ դասախոսի հիմնական գործառույթը դառնում է ուսուցանվողի գործողությունների մասնագիտական մեկնաբանումը՝ հիմնված օբյեկտիվ տվյալների վրա: Այս անցումը հստակեցվում է եռափուլ տրամաբանական սխեմայի միջոցով, որը ցույց է տալիս տվյալների գերբեռնվածության հաղթահարման և կրթական պարադիգմի փոփոխության պատճառահետևանքային կապը.

* Նկարագրական մակարդակ (Ավանդական փուլ). Դասախոս-վերահսկողը ծախսում է 16-24 ժամ մեկ ութժամյա տեսագրության ձեռքով վերլուծության վրա: Նրա ողջ ռեսուրսն սպառվում է պարզ նկարագրական աշխատանքի վրա (իրադարձությունների արձանագրում, տրանսկրիպցիա):

* Ճգնաժամային փուլ (Տվյալների գերբեռնվածություն). Տեղեկատվության ավելցուկը թույլ չի տալիս անցնել խորքային մեթոդական վերլուծության: Դասախոսը սահմանափակվում է լոկ «տվյալներ մշակողի» (information processor) դերով:

Ինտերպրետացիոն մակարդակ (Վերլուծական-փորձագիտական փուլ). ԱԲ ալգորիթմների ներդրումն ազատում է դասախոսին ռուտինային աշխատանքից: Դասախոսի հիմնական գործառույթը դառնում է սովորողի գործողությունների իմաստային մեկնաբանումը (teacher as learning facilitator)՝ ուղղված «ինչու՞» և «ինչպե՞ս ավելի լավ անել» հարցերի վերլուծությանը: Սա է պարադիգմային անցման կորիզը:

«ԱԲ տեխնոլոգիաների կիրառման նախադրյալները ՀՀ ոստիկանական համակարգում» ՀՀ ՆԳՆ ոստիկանության համակարգային բարեփոխումները և Պարեկային

ծառայության ներդրումն ուղեկցվել են տեխնիկական վերազինմամբ, մասնավորապես՝ մարմնին ամրացվող տեսախցիկների (BWC) զանգվածային կիրառմամբ: Սակայն, ՀՀ ոստիկանական համակարգում ԱԲ լայնամասշտաբ ռազմավարության բացակայության պայմաններում, կուտակված տվյալների ծավալը գերազանցում է մարդկային վերլուծական կարողությունները: Այս համատեքստում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրն առաջնային հարթակ է (innovative sandbox), որտեղ ԱԲ հայեցակարգային լուծումների (ինչպիսին է SmartReview-ն) ներդրումը թույլ է տալիս նախապատրաստել ապագա ծառայողներին տվյալահեն միջավայրում աշխատանքին՝ նախքան դրանց համահամակարգային կիրառումը պրակտիկայում:

Տվյալահեն ոստիկանությունը որպես կիրառական հիմք: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առաջադեմ երկրների իրավապահ համակարգերն անցում են կատարել «տվյալահեն ոստիկանության» մոդելին: Բաբուտան և Օսվալդը [3] ապացուցել են, որ ԱԲ գործիքների կիրառումը ոչ միայն արագացնում է վերլուծական գործողությունները, այլև կրթական կարևոր գործիք է պարեկային ծառայողների վարքագծի ստանդարտացման համար: Սակայն այս հետազոտությունները կենտրոնանում են բացառապես ալգորիթմային կանխակալության վրա՝ չանդրադառնալով կրթական կիրառումներին: Մեր հետազոտությունը լրացնում է այս բացը՝ առաջարկելով ԱԲ-ի ներդրման հայեցակարգը կրթական որակի վերահսկման համատեքստում:

ԱԲ-ի կիրառումն իրավապահ համակարգում: Յան Գուդֆելոուի և համահեղինակների աշխատությունները ցույց են տալիս, որ խոր ուսուցման մոդելները գերազանցում են մարդկային գործոնը հատկապես օրինաչափությունների ճանաչման և տեսալսողական տվյալների սեգմենտավորման հարցում [7]: Գերժամանակակից ալգորիթմներ, ինչպիսիք են OpenAI Whisper-ը և YOLOv4-ը, թույլ են տալիս ստեղծել «ինտելեկտուալ էկոհամակարգեր», որտեղ մեքենայական վերլուծությունը նվազեցնում է մարդկային գործոնով պայմանավորված սխալների քանակը [4], [11]:

Իրավապահ համակարգում տվյալների վերլուծության միջազգային փորձը ցույց է տալիս, որ բնական լեզվի մշակման (NLP) մոդելների տեղայնացումը միակ արդյունավետ միջոցն է պետական կառավարման համակարգում տեղեկատվական հոսքերը կառավարելի դարձնելու համար: Այստեղ պետք է նշել, որ Whisper-ի բազմալեզու մոդելը (մասնավորապես large-v3 տարբերակը) արդեն ներառում է հայերենն իր 99 լեզուների ցանկում [11], սակայն արևելահայերեն և արևմտահայերեն բարբառների, ինչպես նաև ոստիկանական մասնագիտական ժարգոնի համար լրացուցիչ ադապտացիա է պահանջվում՝ տրանսկրիպցիայի ճշգրտությունը մասնագիտական կրթության համար ընդունելի մակարդակի հասցնելու համար:

Տեսավերլուծության ավտոմատացման միջազգային փորձ: Եվրոպական միության Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգը (GDPR) սահմանում է, որ տեսախցիկների տվյալների վերլուծությունը պետք է լինի օբյեկտիվ և զերծ մարդկային կանխակալությունից [12]: Միջազգային պրակտիկայում BWC-ների կիրառումն արդյունավետ է համարվում միայն այն դեպքում, երբ գոյություն ունի տվյալների

վերլուծության ավտոմատացված համակարգ, որը թույլ է տալիս իրականացնել «հետադարձ կապի» (debriefing) գործընթացը գիտականորեն հիմնավորված վիճակագրության հիման վրա [12]: Europol-ի զեկույցները մատնանշում են, որ ԱԲ-ն այսօր դիտարկվում է որպես «կարողությունների բազմապատկիչ» իրավապահ մարմինների գործունեության մեջ [6]:

Տվյալների հավաքագրում և ընտրություն: ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կատարված նախնական դիտարկումը ցույց տվեց, որ BWC տեսագրությունների ձեռքով վերլուծության գործընթացը կարող է բաժանվել հետևյալ փուլերի՝ դիտարկում, ժամանակագրության կազմում, խոսքի տրանսկրիպցիա, միջադեպերի նույնականացում և գնահատման արձանագրում: Աուդիտի արդյունքում պարզվեց, որ մեկ վերահսկող միջինում ծախսում է 16-24 ժամ՝ ութժամյա տեսագրության ամբողջական վերլուծության համար:

Սույն հետազոտությունը հիմնված է հայեցակարգային նախագծման մեթոդաբանության վրա, քանի որ «SmartReview» հարթակը ներկայումս գտնվում է նախատիպային փուլում, և լայնամասշտաբ փորձարկումներ դեռևս չեն իրականացվել:

«SmartReview» համակարգի ճարտարապետություն: Համակարգի նախագծման հիմքում դրվում է «Privacy by Design» սկզբունքը, որը ենթադրում է տվյալների անվտանգության ինտեգրում տեխնոլոգիական ամենացածր մակարդակներում [5]: Կավուկյանի կողմից ձևակերպված 7 սկզբունքներից հետազոտության համար առանցքային են՝ ակտիվ կանխարգելումը, գաղտնիությունը՝ որպես սկզբնադիր կարգավորում, և տեխնոլոգիական կառուցվածքային ապահովումը: Ճարտարապետությունը բաղկացած է երեք առանցքային շերտերից:

Տվյալների մշակման շերտ: Կօգտագործվի OpenAI Whisper ալգորիթմի վրա հիմնված լոկալացված մոդելը, որը թույլ կտա իրականացնել հայերեն խոսքի տրանսկրիպցիա՝ առանց արտաքին ամպային սերվերներին դիմելու: Սա ապահովում է գաղտնիության բարձր մակարդակ:

Անալիտիկ շերտ: Այս մակարդակում իրականացվում է տեսանյութի բովանդակային ինդեքսավորումը: Համակարգը վերլուծում է ձայնային տատանումները և վիզուալ փոփոխությունները՝ ավտոմատ նշագրելով պոտենցիալ միջադեպերը (օրինակ՝ ձայնի բարձրացում, արագ շարժումներ կամ տեսախցիկի օբյեկտիվի ծածկում): YOLOv8 ալգորիթմը կիրառվում է օբյեկտների (զենք, փաստաթղթեր, փողոցային նշաններ) և վարքագծային պատկերների (ագրեսիվ ժեստեր, ֆիզիկական խոչընդոտում) իրական ժամանակում հայտնաբերման համար:

Ինտերֆեյսի շերտ: Վերահսկողի համար կստեղծվի դինամիկ կառավարման վահանակ, որտեղ տեսանյութը ներկայացված է սեղմված ժամանակացույցով, որի վրա ակնառու երևում են բոլոր կարևոր իրադարձությունները:

Փորձարկման պայմաններ և սցենարներ (նախագծային): Նախատիպային փորձարկումների համար նախատեսվում են ութժամյա աշխատանքային հերթափոխի տեսագրություններ, որոնք պարունակում են տարբեր տիպի փոխազդեցություններ (քաղաքացիների հետ հաղորդակցություն, զննություն, արտակարգ պատահարներ):

Փորձարկման սցենարը ներառում է հետևյալ քայլերը՝ տվյալների ներբեռնում և ինդեքսավորում, բանալի բառերով որոնում («զենք», «թմրանյութ», «փաստաթուղթ», «իրավունք» և այլն) 1000+ ժամ ընդհանուր տևողությամբ տվյալների բազայում, ամփոփագրի ստեղծում ԱԲ-ի կողմից և դրա համեմատումը վերահսկողի կողմից ձեռքով արված նշումների հետ:

Ճշգրտության և արագության չափման մեթոդաբանություն: Քանի որ համակարգը նախագծային փուլում է, ժամանակային արդյունավետության գնահատումն իրականացվում է ալգորիթմական տեսական հաշվարկների և գրականության մեջ ներկայացված համանման համակարգերի ցուցանիշների համեմատման հիման վրա: Մենք օգտագործել ենք հետևյալ ցուցանիշները՝ WER (Word Error Rate)՝ տրանսկրիպցիայի ճշգրտության համար, F1-score՝ միջադեպերի հայտնաբերման ճշգրտության համար, FPS (Frames Per Second) և մշակման ժամանակի հարաբերակցություն՝ արագության գնահատման համար:

Տեսական վերլուծության արդյունքներ: Կատարված համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ավտոմատացված համակարգերը, ըստ ալգորիթմական բնութագրերի տեսական պրոյեկցիաների, կարող են կրճատել BWC տվյալների վերլուծության ժամանակը 95-99%՝ 8-ժամյա տեսանյութի մշակումը հասցնելով 10-30 րոպեի: Այս ցուցանիշը հիմնված է Whisper-ի և YOLOv8-ի ալգորիթմական արագության հրապարակված բնութագրերի վրա՝ կիրառված ոստիկանական տեսագրությունների միջին ծավալին և բարդությանը:

Ցուցանիշ	Ձեռքով վերլուծություն	Ավտոմատացված վերլուծություն (SmartReview)	Նշումներ
Մշակման ժամանակ (8-ժամյա տեսանյութ)	16-24 ժամ	10-30 րոպե	Տեսական պրոյեկցիա
Տրանսկրիպցիայի ճշգրտություն	Անհամեմատելի (սուբյեկտիվ)	WER < 15% (Whisper)	Պահանջվում է fine-tuning
Միջադեպերի հայտնաբերում	Սուբյեկտիվ, կախված հոգնածությունից	F1-score > 0.85 (YOLOv8)	Պահանջվում է ժարգոնային ադապտացիա
Վերարտադրելիություն	Ցածր	Բարձր	Ալգորիթմիկ ֆիքսված պարամետրեր
Գաղտնիություն	Ճկուն	AES-256 + Local Server	Privacy by Design

Սակայն պետք է ընդգծել, որ այս թվերը պրոյեկցիաներ են, ոչ թե էմպիրիկ արդյունքներ: Լայնամասշտաբ փորձարկումներն անհրաժեշտ են ցուցանիշների վավերացման համար:

Ալգորիթմային կանխակալության (algorithmic bias) խնդիր: ԱԲ-ի ներդրումը ոստիկանական կրթությունում անխուսափելիորեն առաջացնում է ալգորիթմային կանխակալության ռիսկ: Մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարող է արտահայտվել հետևյալ ձևերով՝ լեզվական կանխակալություն, երբ Whisper-ի ճշգրտությունը կարող է տարբերվել ըստ սեռի (բարձր/ցածր ձայն), տարիքային խմբի և բարբառային պատկանելության: Արևելահայերենի և արևմտահայերենի խոսնակների համար տրանսկրիպցիայի WER-ը կարող է տարբերվել մինչև 8-12%: Վարքագծային կանխակալություն, երբ YOLOv8-ի ուսուցման տվյալների բազան, եթե հիմնված է հիմնականում արևմտյան տեսագրությունների վրա, կարող է ցածր ճշգրտություն ցուցաբերել հայկական սոցիալ-մշակութային միջավայրին բնորոշ ժեստերի և վարքագծային նմուշների հայտնաբերման ժամանակ: Կոնտեքստային կանխակալություն, երբ ալգորիթմը կարող է սխալմամբ «միջադեպ» դասակարգել իրավաչափ ուժի կիրառման դեպքերը, եթե ուսուցման տվյալներում չկան համապատասխան հայկական իրավապահ պրակտիկայի օրինակներ:

Այս ռիսկերը պահանջում են հետևյալ միջոցառումները՝ (1) ուսուցման տվյալների բազայի տեղայնացում, (2) մարդ-կողմնորոշված՝ անգլերենում՝human-in-the-loop, վերահսկողություն, (3) պարբերական ալգորիթմիկ աուդիտ:

Տվյալների անվտանգության և էթիկայի հարցեր: Հաշվի առնելով ոստիկանական կրթության զգայուն բնույթը՝ մեթոդաբանության մեջ ներառվել է «Local Server Deployment» մոդելը: Բոլոր տվյալները կգաղտնագրվեն AES-256 ստանդարտով: Կարևոր է նշել, որ համակարգը չի իրականացնի դեմքերի ճանաչում (Face Recognition), ինչը համապատասխանում է ՀՀ տվյալների պաշտպանության օրենսդրությանը և բացառում է էթիկական հնարավոր կոնֆլիկտներն ուսումնական գործընթացում [1]:

Լաքինի և համահեղինակների աշխատությունը, չնայած կենտրոնացած լինելով ընդհանուր կրթության վրա, ապացուցում է, որ ԱԲ-ն կրթական միջավայրում պետք է դիտարկվի ոչ թե որպես մարդկային գործոնին փոխարինող, այլ որպես մարդկային ներուժի ընդլայնման գործիք [10]: Այս դիրքորոշումը կիսվում և ընդլայնվում է ոստիկանական կրթության համատեքստում:

Հետազոտության սահմանափակումներ: Սույն հետազոտության հիմնական սահմանափակումներն են՝ «SmartReview» հարթակը դեռևս գտնվում է նախատիպային փուլում, և ներկայացված արդյունքները հիմնված են տեսական վերլուծության և ալգորիթմական պրոյեկցիաների վրա: Հայերենի բարբառային առանձնահատկությունները և ոստիկանական մասնագիտական խոսույթը կարող են բացասաբար անդրադառնալ տրանսկրիպցիայի ճշգրտության վրա՝ առանց համակարգի լրացուցիչ լավարկման (*fine-tuning*): Հետազոտությունը չի ընդգրկում ալգորիթմային կանխակալության երկարաժամկետ սոցիալական հետևանքների խոր վերլուծությունը:

էթիկական սահմանափակում՝ փորձաքննության ժամանակ օգտագործվող տեսագրությունները պարունակում են անձնական տվյալներ, ուստի փորձարկումների համար անհրաժեշտ կլինի առանձին էթիկական հանձնաժողովի թույլտվությունը:

Եզրակացություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱԲ-ն ոչ թե պետք է դիտարկվի որպես դասախոսի փոխարինող, այլ որպես գործիք, որն ազատում է նրան կրկնվող աշխատանքից և հնարավորություն է տալիս կենտրոնանալ այն բանի վրա, ինչն իսկապես կարևոր է՝ ուսանողի հոգեբանական պատրաստվածության, էթիկական վարքագծի և մասնագիտական որոշումների կայացման որակական վերլուծության վրա: Այս տեսանկյունից «SmartReview»-ը ոչ միայն տեխնիկական լուծում է, այլև կրթական փիլիսոփայության փոփոխության արտահայտություն:

Արհեստական բանականության ներդրումը ոստիկանական կրթության մեջ առաջարկում է «տվյալների գերբեռնվածության» խնդրի կայուն լուծում՝ անցում կատարելով դեպի օբյեկտիվ, վերարտադրելի և ժամանակապես արդյունավետ գնահատման մոդել: Մշակված է «SmartReview» հայեցակարգային հարթակը, հիմնված լինելով բաց կոդով ալգորիթմների և «Privacy by Design» սկզբունքի վրա, ապահովում է տվյալների լոկալ մշակում, գաղտնիություն և ալգորիթմային թափանցիկություն:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ ներկայացված ժամանակային արդյունավետության գնահատականը (95-99% ժամանակի խնայում) տեսական պրոյեկցիա է՝ հիմնված կիրառվող ալգորիթմների բնութագրերի վրա, և պահանջում է հետագա լայնամասշտաբ էմպիրիկ վավերացում:

Հետագա հետազոտական ուղղություններ: Նախագծված համակարգի գործնական կիրառելիությունն ապահովելու նպատակով հետագա հետազոտությունները պետք է կենտրոնանան էմպիրիկ վավերացման ծրագրի իրագործման վրա, որը ներառում է.

* Մոդելների տեղայնացում և լավարկում (fine-tuning). Խոսքի ճանաչման OpenAI Whisper մոդելի լրացուցիչ ուսուցում՝ հաշվի առնելով հայերենի տարածքային բարբառներն ու ոստիկանական մասնագիտական խոսույթը:

* Էմպիրիկ փորձարկումներ. Իրականացնել լայնամասշտաբ փորձարկումներ 1000+ ժամ տևողությամբ տեսագրությունների բազայի վրա:

* Վիճակագրական վավերացում. Գնահատել համակարգի ճշգրտությունը՝ համեմատելով ԱԲ-ի կողմից ստեղծված ավտոմատ ամփոփագրերը վերահսկողների կողմից ձեռքով արված նշումների հետ՝ կիրառելով WER (խոսքի համար) և F1-score (միջադեպերի նույնականացման համար) ցուցանիշները:

* Ալգորիթմային կանխակալության դեմ պայքար. Մշակել պարբերական ալգորիթմիկ աուդիտների իրականացման մեխանիզմներ՝ սեռատարիքային կամ սոցիալ-մշակութային կանխակալությունները նվազագույնի հասցնելու համար:

ИСКУССТВЕННЫЙ ИНТЕЛЛЕКТ КАК ФАКТОР ТРАНСФОРМАЦИИ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПАРАДИГМЫ В СИСТЕМЕ ПОЛИЦЕЙСКОГО ОБРАЗОВАНИЯ

МУРАДЯН ГОР

Временно исполняющий обязанности начальника кафедры тактической и технической подготовки Образовательного комплекса МВД Республики Армения, полицейского учебного подразделения

ИСПИРЯН ЭГИНЕ

Преподаватель кафедры науки о данных,
Национальный аграрный университет Армении

ПОТИКЯН МАРИНА

Доцент кафедры естественных наук Образовательного комплекса МВД Республики Армения, учебного подразделения спасательной службы и кризисного управления, кандидат экономических наук

Аннотация. Целью исследования является теоретическое обоснование образовательной парадигмы внедрения искусственного интеллекта (ИИ) в контексте профессионального полицейского образования на примере анализа данных с на примере анализа данных нательных видеокамер (BWC). Авторы представляют проектное решение концептуальной платформы SmartReview, основанное на сочетании алгоритмов с открытым исходным кодом OpenAI Whisper (распознавание речи) и YOLOv8 [9] (обнаружение объектов и поведенческих изображений). Исследуются теоретические возможности перехода к модели, основанной на цифровых данных, применение коннективистской теории обучения в полицейском образовании [13], а также вопросы безопасности данных, алгоритмической предвзятости и исследовательской этики [3], [5].

Предварительный обзор исследования, проведенного в Образовательном комплексе полиции РА в 2023-2024 годах., показал, что ручной анализ видеозаписей в процессе обучения патрульной службы приводит к неэффективному распределению ресурсов и субъективности оценки, а автоматизированные системы на основе ИИ, в соответствии с теоретическими проекциями алгоритмических характеристик [4], [11], могут сократить время обработки на 95-99%, обеспечивая объективные и воспроизводимые критерии.

Ключевые слова: искусственный интеллект, профессиональное полицейское образование, SmartReview, видеоаналитика, обработка естественного языка армянского языка (NLP), образовательная парадигма, носимая видеокамера (BWC), обучение на основе данных, концептуальные исследования, алгоритмическая предвзятость

ARTIFICIAL INTELLIGENCE AS A FACTOR FOR EDUCATIONAL PARADIGM SHIFT IN THE POLICE EDUCATION SYSTEM

MURADYAN GOR
Acting Head of the Chair of Tactical and Technical Training,
Police Training Unit of the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

ISPIRYAN HEGHINE
Lecturer at the Chair of Data Science,
Armenian National Agrarian University

POTIKYAMARINA N
PhD in Economics, Associate Professor at the Chair of Natural Sciences,
Rescue Service and Crisis Management Training Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

---

Abstract. The objective of the study is to provide a theoretical substantiation of an educational paradigm that integrates artificial intelligence (AI) in the context of police professional education, using the example of body-worn camera (BWC) data analysis. The authors present the design of the conceptual "SmartReview" platform, which is based on the combination of open-source algorithms: OpenAI Whisper (speech recognition) and YOLOv8 (detection of objects and behavioral patterns). The theoretical possibilities of transitioning to a digital data-driven model, the application of connectivist learning theory in police education, as well as issues of data security, algorithmic bias, and research ethics have been examined. The preliminary observation, conducted at the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the RA in 2023-2024, indicate that the manual analysis of video recordings in the training process of patrol service leads to inefficient allocation of resources and evaluation subjectivity, whereas AI-based automated systems, according to theoretical projections of algorithmic characteristics, can reduce processing time by 95-99%, providing objective and reproducible metrics.

Key words: artificial intelligence, professional police education, SmartReview, video analytics, Armenian Natural Language Processing (ANLP), educational paradigm, body-worn camera (BWC), data-driven learning, conceptual research, algorithmic bias.

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Օրենք «Անձնական տվյալների պաշտպանության մասին» (ընդունված 18.05.2015թ.), ՀՕ-49-Ն: https://www.arlis.am/hy/acts/117034

2. ՀՀ Օրենք «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» (ընդունված 16.11.2022թ.), ՀՕ-340-Ն: https://www.arlis.am/hy/acts/ (ստուգել)

3. Babuta, A., & Oswald, M. (2019). *Data Analytics and Algorithmic Bias in Policing*. RUSI Briefing Paper. Royal United Services Institute: https://assets.publishing.service.gov.uk/media/5d7f6b2540f0b61ccdfa4b80/RUSI_Report_-_Algorithms_and_Bias_in_Policing.pdf (կամ https://www.rusi.org/explore-our-research/publications/briefing-papers/data-analytics-and-algorithmic-bias-policing)

4. Bochkovskiy, A., Wang, C. Y., & Liao, H. Y. M. (2020). YOLOv4: Optimal Speed and Accuracy of Object Detection. *arXiv preprint arXiv:2004.10934*: https://arxiv.org/abs/2004.10934

5. Cavoukian, A. (2011). *Privacy by Design: The 7 Foundational Principles*. Information and Privacy Commissioner of Ontario: https://www.sfu.ca/~palys/Cavoukian-2011-PrivacyByDesign-7FoundationalPrinciples.pdf

6. Europol (2021). *Internet Organised Crime Threat Assessment (IOCTA) 2021*. Publications Office of the European Union, Luxembourg: https://www.europol.europa.eu/publications-events/main-reports/internet-organised-crime-threat-assessment-iocta-2021

7. Goodfellow, I., Bengio, Y., & Courville, A. (2016). *Deep Learning*. MIT Press. ISBN: 9780262035613: https://mitpress.mit.edu/9780262035613/deep-learning/

8. INTERPOL & UNICRI (2018). *Artificial Intelligence and Robotics for Law Enforcement*. UNICRI, Geneva: https://unicri.org/artificial-intelligence-and-robotics-law-enforcement

9. Jocher, G., et al. (2023). *YOLOv8*. Ultralytics: https://github.com/ultralytics/ultralytics (կամ https://docs.ultralytics.com/)

10. Luckin, R., Holmes, W., Griffiths, M., & Forcier, L. B. (2016). *Intelligence Unleashed: An Argument for AI in Education*. Pearson Education, London. ISBN: 978-0-9924248-8-6: https://discovery.ucl.ac.uk/1475756/

11. Radford, A., Kim, J. W., Xu, T., Brockman, G., McLeavey, C., & Sutskever, I. (2023). Robust Speech Recognition via Large-Scale Weak Supervision. *Proceedings of the 40th International Conference on Machine Learning (ICML 2023)*, PMLR, Vol. 202, pp. 28492–28518: https://proceedings.mlr.press/v202/radford23a.html

12. Regulation (EU) 2016/679 (GDPR). Official Journal of the European Union, L 119, 4 May 2016: https://eur-lex.europa.eu/eli/reg/2016/679/oj

13.Siemens, G. (2005). Connectivism: A Learning Theory for the Digital Age. *International Journal of Instructional Technology and Distance Learning*, 2(1), 3–10: https://www.wgu.edu/blog/connectivism-learning-theory2105.html (կամ http://www.itdl.org/Journal/Jan_05/article01.htm)

Հոդվածը գրախոսվել է 11.08.2026թ.
Ներկայացվել է տպագրության 17.08.2026թ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մաշտոցի բաժնի
ավագ համայնքային ոստիկան, ոստիկանության մայոր,
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ
DOI:10.63925/18294847-2026.blj22-09

Ամփոփագիր: Սույն հոդվածում ներկայացվում են միջնադարի հայ իրավագետների մոտեցումները, որոնք վերաբերում են ընտանեկան բռնության տարբեր դրսևորումներին: Ազգային օրենքներում առկա իրավանորմերով կարգավորում էին ամուսնաընտանեկան հարաբերությունները, պաշտպանում երեխաների, կնոջ և անօգնական ծնողի իրավունքները: Հոդվածում մանրակրկիտ ուսումնասիրվել են միջնադարյան հայ հասարակությունում առկա բռնության տեսակները՝ տարանջատված ֆիզիկականի, սեռականի, տնտեսականի, ինչպես նաև անտեսման, որոնք տվյալ ժամանակահատվածում ստացել են իրավական գնահատական: Ազգային օրենքներում առկա իրավանորմերն իրենց իրավաբանական ուժով պարտադիր բնույթ են ունեցել և դրանցից շեղումը հասարակության կողմից մերժելի ու դատապարտելի է համարվել:

Ստեղծված իրավանորմերի կիրառման նպատակն էր ապահովել ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական բջջի հատուկ պաշտպանությունը:

Բանալի բառեր. ընտանիք, բռնության տեսակներ, անտեսում, իրավանորմ, դատապարտում, ազգային օրենք:

Ընտանիքը սոցիալական առաջին ինստիտուտն է, որտեղից սկիզբ է առնում կյանքի շարունակությունը, որը կարգավորում է հասարակության մի շարք գործառույթներ: Նրանով է պայմանավորված վերարտադրության, աճող սերնդի կրթության, դաստիարակության սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունը: Այստեղ է հիմք դրվում անձի՝ որպես հասարակության լիարժեք անդամի ձևավորումն ու զարգացումը:

Սոցալական ինստիտուտ հանդիսացող ընտանիքը համարվում է հասուն, եթե առաջնորդվում է ընտանիքի անդամների նկատմամբ պատասխանատվությամբ: Ընտանիքի սոցալ-հոգեբանական հասունությունը որոշվում է ամուսինների՝ միմյանց և երեխաների նկատմամբ պատասխանատվության առկայությամբ:

Երեխաների լույս աշխարհ գալու փաստը դեռ չի խոսում ընտանիքի լիարժեք լինելու մասին: Ընտանիքի ամբողջականության կամ որպես մեկ ամբոջական և արժեքավոր ինստիտուտի վերաբերյալ սոցալ-հոգեբանական մոտեցումը ենթադրում է ընտանիքի

անդամների՝ միմյանց նկատմամբ պատասխանատվության առկայություն: Ընտանիքի արժեքային համակարգում գերակայում է հենց պատասխանատվության զգացումը:

Միջնադարյան հայ իրավական հուշարձաններում առկա են կնոջ, երեխայի, անօգնական ծնողի իրավունքները պաշտպանող իրավանորմեր, որոնք հիմնված են ընտանիքում նրանց իրավահավասարության, անձնիշխանության, կամքի և ընտրելու ազատության, ազատախոհության գաղափարների վրա: Հայ քաղաքական ու հոգևոր գործիչները սահմանված օրենքներով պաշտպանում էին խոցելի խմբի ներկայացուցիչների անձնական և գույքային իրավունքները, մարդկային արժանապատվությունը, կրթության ու դաստիարակության իրավունքները, միաժամանակ դատապարտում էին խոցելի խմբի ներկայացուցիչների նկատմամբ բռնությունները:

Նշենք, որ իրավական հուշարձան հասկացության տակ հասկանում ենք սովորութային նորմերի, կանոնական որոշումների կամ օրենքների համակցված գրավոր ժողովածուները /կանոնագրքեր, դատաստանագրքեր, Սահմանադրության նախագծեր/: Դրանք ներառում են 4-18-րդ դարերում հայ հասարակության մեջ տեղ գտած իրավահարաբերությունները: Աշխատությունների հիմքում հայ ժողովրդի սովորույթներն ու ավանդույթներն են, հին և նոր կտակարանները: Հայտնի միջնադարյան իրավական հուշարձաններից են՝ Դավիթ Ալավկավորդու «Կանոնագիրք հայոց»-ը, Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը, Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք»-ը: Հայ հասարակությունը միշտ լուրջ է վերաբերվել ընտանեկան արժեքներին, հատկապես ամբողջական, լիարժեք ընտանիքին՝ մեծերի և երեխաների հանդեպ հարգալից վերաբերմունքով, իսկ հայ կնոջ նկատմամբ՝ առանձնակի հարգանքով: Բայց դրան զուգահեռ կան ընտանիքում բռնության տարբեր տեսակի դրսևորումներ, ինչն էլ արձանագրված է հուշարձաններում:

Այսպես, հաշվի առնելով ընտանիքում ներդաշնակ հարաբերությունների և երեխաների բարոյահոգեբանական առողջ վիճակի կարևորությունը՝ հայ օրենսգետները հորդորում են բացառել բռնությունները կանանց ու երեխաների նկատմամբ, պաշտպանել երեխաների անվտանգությունը, ինչպես նաև չանտեսել անօգնական ծնողներին: Գոշի դատաստանագրքում հատուկ տեղ է գտել հետևյալ կանոնը. «Երբ տղամարդը մարմնական վնասվածք է պատճառում կնոջը, այրն իր կնոջը անընդհատ, հետևողականորեն անարգի, եթե խորթ կա նրանց միջև, և այդ բանի համար են իրար անարգում, ապա դատաստան լինի և պարտ է, որ այրն համբերի: Իսկ եթե առանց երկյուղ ունենալու այրն իր կնոջը հարկադրի՝ ձեռքը կոտրի կամ աչքը հանի կամ ատամը կամ ոտքը կոտրի՝ տուգանվի կրկնակի»: Հոդվածի մյուս պարբերությունում նշված է. «Եթե կինը կամենա իր այրի մոտ մնալ, և այրը զղջա իր արածի համար, տուգանքն այդժամ կնոջը տան: Իսկ եթե այրը կրկին աներկյուղ նույն կերպ կամենա վարվել իր կնոջ հետ, ապա բաժանել նրանց, որպեսզի սպանություն չլինի»[1]: Ամուսինն իրավունք չուներ մարմնական վնասվածքներ հասցնել կնոջը, հակառակ դեպքում

[1] Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Երևան, 2001, գլուխ ԺԵ, էջ 53

պետք է պատժվեր այդ արարքի համար նախատեսված տուգանքի կրկնակի չափով: Եթե ամուսինը կրկներ իր արարքները տուգանվելուց հետո և վտանգեր կնոջ առողջությունը, կինն իրավունք ուներ ամուսնալուծվելու: Օրենսդիրն ընտրության հնարավորություն է տալիս կնոջը, և բռնության ենթարկված կինը կարող է ամուսնալուծվելու համար դիմել դատարան: Ամուսինը նույնիսկ կնոջ անհավատարմության դեպքում իրավունք չունի սպանել նրան: Սա վկայում է, որ կնոջ հանդեպ բռնությունը հայ իրավունքում ունեցել է հստակ դատապարտում և հիմք հանդիսացել ամուսնալուծության համար: «Եթե այրն իր կնոջն սպանում է պոռնկության համար, արյան դատաստան լինի նրան՝ լրիվությամբ, քանզի նման պարագայում Աստված պատվիրեց արձակել կնոջը և ոչ թե սպանել: Եվ եթե կինն է սպանում իր այրին դեղերով կամ այլ ցավերով, նույն դատաստանը լինի»[2]:

Մխիթար Գոշը կնոջ իրավունքների հարաբերական հավասարությունը պայմանավորել է նաև գույքային հարաբերություններով: Բացի ամուսնալուծվելուց հայ կինը կարողացել է վերադարձնել օժիտը և ապահովել իր հետագա նյութական պահանջները: Պաշտպանված էր կնոջ գույքային իրավունքը, այն խախտելու դեպքում սահմանված էր համապատասխան պատիժ: Հատկանշական է, որ Գոշն աշխարհում առաջիններից է, որ իրավական փաստաթղթով սահմանել է կնոջ և տղամարդու գույքային իրավահարաբերությունը: Կինն իրավունք ուներ ինքնուրույն տնօրինել իր գույքը և կտակել այն՝ ըստ իր հայեցողության: Երեխաները նրա ունեցվածքը ժառանգում էին՝ անկախ հայրական ժառանգությունից: Գոշի այս մոտեցումն այդ ժամանակաշրջանում կնոջ նկատմամբ առաջադիմական քայլ էր:

Ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող կանոններ կան նաև Դավիթ Ալավկա որդու կանոններում: Կանոնական և սովորութական իրավունքի վրա հիմնված այդ կանոնները կարգավորում են ամուսնալուծության պայմաններն ու կարգը, ամուսինների փոխհարաբերությունները, ամուսնալուծության և հարակից այլ հարցեր: Ամուսնաընտանեկան կանոններում Դավիթ Ալավկա որդին արտահայտել է մի շարք առաջադիմական գաղափարներ, որոնց ակունքները հասնում են մինչև 5-րդ դար, սակայն ուսումնասիրվող դարաշրջանում և դրանից հետո այդ գաղափարները ոչ մի այն չէին կորցրել իրենց հասարակական հնչեղությունը և կենսական ուժը, այլև պահանջվում էր դրանց վերստին սանկցավորումը և օրենսդրական ամրագրումը: Ըստ Դավիթ Ալավկա որդու՝ ամուսնությունը պետք է լինի փոխադարձ համաձայնությամբ (փոխադարձ հաճութեամբ).

«… առանց հարկի տեսանի մի՛ պսակեսցէ» (հէ կանոն):[3] Հիրավի, այս նորմն իր ժամանակաշրջանի համար չափազանց առաջադիմական իրավանորմ էր, որի նշանակությունը և կարևորությունն ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման բնագավառում ակնհայտ է: Ինչպես նշել ենք, հայ իրականության մեջ

---

[2] Տե՛ս Նույն տեղում, գլուխ ԺԹ, էջ 55

[3] Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29/, էջ 16

դա նորություն չէր: Դեռ առաջին հայ հայրապետների և եկեղեցական ժողովներում ընդունած կանոններում բազմիցս շեշտվել է, որ ամուսնությունը պետք է լինի փոխադարձ համաձայնության («հաճութիւն») հիման վրա, հակառակ դեպքում՝ այն համարվում էր անվավեր:[4]

Կնոջ և տղամարդու միջև ամուսնական հարաբերությունների հաստատումը կարևոր գրավական է իրավունքի զարգացման տեսանկյունից: Եթե ամուսնությունը տեղի էր ունենում կնոջ կամքին հակառակ, ապա համարվում էր, որ կինը հարկադրվել է ամուսնությանը, և այդպիսի ամուսնությունը համարվում էր ստիպողական, ուստի կինը կարող էր ամուսնալուծվել: Մոտեցումն ուներ սկզբունքային նշանակություն, քանզի ամուսնությունը կամովին միություն էր, և կինը չէր կարող հարկադրվել: Ինչ խոսք, հիշյալ իրավանորմը, ամենայն հավանականությամբ, բազմիցս ոտնահարվել է առօրյա կյանքում, հենց դա է պատճառը, որ Դավիթ Ալավկա որդին, վերստին սահմանելով այդ նորմը, կամեցել է այն բարձրացնել օրենքի աստիճանի և դրանով իսկ պարտադիր դարձնել հայ իրականության մեջ: Քրիստոնեությունն ընդհանրապես և հայ կանոնական իրավունքը մասնավորապես ամուսնությունը համարել են աստվածային հաստատություն ձևավորելու՝ ամուսինների «ցկեանս միութեան» գաղափարը. «Զոր Աստուած զուգեաց մարդ, մի մեկենեսցէ». (Մատ. ԺԹ, 6):

Աստվածաշնչի այս պատվիրանը բառացիորեն կրկնում է Դավիթ Ալավկա որդին իր Հ կանոնում. «Զի դիւահար կին չէ պարտ թողուլ, զի զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ»: Ասինքն՝ կանոնագիրը նույնպես ընդունում է ամուսնության «ցկյանս միության» գաղափարը և, միաժամանակ ելնելով այդ գաղափարից, սահմանափակում է անհիմն ամուսնալությունները: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նա մեծ նշանակություն է տալիս կայուն և համերաշխ ընտանիքների գոյությանը: Ամենից առաջ այդ հանգամանքը նկատի ունի կանոնագիրը, երբ սահմանում է ամուսնության մյուս կանոնները՝ ամուսնացող զույգերը պետք է որոշակի տարիքի լինեն, այնպիսի տարիքի, որ տարբերեն իրենց «աջն ու ձախը», այսինքն՝ գիտակցեն իրենց կատարած քայլի նշանակությունը. «Այլ զփոքրագոյն մանկանս մի ոքի քահանայից յանձն առցէ հարսանեաց պսակ դնել նոցա մինչև յերկոտասան ամին, որ ճանաչեն զաջն ու զահեակն» (ԴԲ կանոն): Դավիթ Ալավկա որդին, ինչպես նշեցինք, դեմ էր անհիմն ամուսնալուծություններին: Հատկանշական է, որ նա այդ իսկ առթիվ, հետևելով կանոնական իրավունքին, չբերությունը (ամլությունը) չի համարում որպես ապահարզանի օրինական հիմք (տե՛ս Հ կանոնը)[5]:

Ակնհայտ է, որ դեռև 5-րդ դարից սկսած առաջադրված այս պահանջները չեն դադարել արդիական լինելուց, քանի որ առ այսօր էլ կանանց հանդեպ բռնությունն ու ընտանեկան բռնությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է, որի վկայությունն է «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան

---

[4] /Տե՛ս Սահակ Պարթևի կանոնախմբի ԻԷ կանոն, կանոնագիրք Հայոց, Երևան, 1964, Ա, էջ 382/
[5] Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29, էջ 16/

բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան, որի վավերացման գործընթացը դեռևս շատ պետություններում ավարտին չի հասել: Հայաստանի կառավարությունն այն ստորագրել է 2017 թ. դեկտեմբերի 28-ին:

Օրենսգետները չեն անտեսել երեխաների կրթության ու դաստիարակության խնդիրները: Կանոնական և աշխարհիկ նորմերը ծնողներին պարտավորեցրել են զավակներին դաստիարակել Աստծո հանդեպ հավատի, հայրենասիրության, ազգասիրության ոգով:

Ծնողական հսկողության ոչ ճիշտ ընտրված մեխանիզմները, ընտանիքի անկազմակերպ և անկանոն կենցաղը նպաստում են երեխաների իրավախախտ վարքի առաջացմանը: Մասնագետները նշում են հետևյալ օրինաչափությունները. որքան ջերմ են ընտանեկան հարաբերությունները, այնքան փոքր է հավանականությունը, որ երեխայի մեջ հանցավոր վարքագիծ կձևավորվի: Առկա են այնպիսի ընտանիքներ, որտեղ ծնողներն զբաղվում են հարբեցողությամբ, անբարոյականությամբ: Երբեմն երեխաները, ընկնելով նրանց ազդեցության տակ կամ ներգրավվելով այդ միջավայրում կամ ուղղակի ենթարկվելով ճնշման, սկսում են ալկոհոլ օգտագործել, զբաղվել գողությամբ: **Դավիթ Ալավկան** դատապարտում է նման վարքագիծ դրսևորող հայրերին և սահմանում համապատասխան պատիժ. «Այլ հայր մանկան գնացեալ իցէ առ գինըմպուս կամ ի գործ ինչ և մանուկ սորա անկատար դիմեալ առ հայր իւր և հեղձեալ ի գետ, զի ոչ գիտաց ի նոցանէ, անպատուհաս են վասն անգիտությանն, բայց վասն արբեցութեան, զի եղեն պատճառ կորստեան մանկանն, երիցս քառասուն պահեսցեն՝ զերկուսն սրբապահութեամբ և զմինն շաբաթապահաւք՝ Ճ /100/ ծննդրաւ, իսկ հայր մանկանն ամ մի պահեսցէ՝ զվեց ամիսն սրբապահութեամբ և զվեց շաբաթապահութեամբ ծննդրութեամբ, նույնպես և մայր մանկանն»[6]:

Առավել ուշադրության արժանի են **կրթության**ը վերաբերող կանոնները. այսպես. «Այլ քահանա, վանական կամ աշխարհական, որք զմանուկս վարձու առնուն, յուսումն, վաճառ ու գին դնեն Աստծո շնորհացն: Զրի առեք և ձրի տուք: Բայց թէ կամավ իւրանց, պահանջելոյ մեր տան զպէտս, զի արժան է մշակն վարձոյ, այսինքն՝ կերակրոցն և ըմպելեաց, որպես Պողոս գրէ, հաղորդութուն արասցէ աշակերտն վարդապետին ամենայն բարութիւնս»»[7]: Ծնողները երեխաներին կրթության տալով կարգավորում էին երեխաների զբաղվածության և ուսման հարցը՝ դրանով իսկ շրջանցելով անտեսման փաստերը:

Սմբատ Սպարապետը նույնպես սահմանել է երեխաների վերաբերյալ կանոններ: Նրա դատաստանագրքում առկա են կանոններ որբ և աղքատ երեխաների մասին: Արգելվել են բռնություններն աշակերտների հանդեպ: Ինչպես հայրը, այնպես էլ ուսուցիչն իրավունք չուներ հարվածել երեխային. «Եթե վարդապետը ուսուցանելու ընթացքում աշակերտին այնպես հարվածի, որ վերջինս մահանա, նա մարդասպան է»

---

[6] Տե՛ս Մատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 65/
[7] Տե՛ս Մատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 64

և «...այլևս չի կարող հոգևորական լինել»»[8]: Այսպիսով՝ Սմբատը պաշտպանում է երեխաների կրթության իրավունքը և անվտանգությունը՝ պահանջելով մարդասիրական վերաբերմունք նրանց նկատմամբ:

Բռնության դրսևորումներից է նաև անտեսումը: Անտեսումը մշտապես երեխայի ֆիզիկական և հոգեբանական տարրական պահանջների չբավարարելն է, որի հետևանքը կարող է լինել երեխայի առողջության և զարգացման լուրջ վատթարացումը: Դա իր մեջ ներառում է ծնողի կամ խնամակալի կողմից անհրաժեշտ սնունդ, կացարան և հագուստ չտրամադրելը, երեխային ֆիզիկական վնասից կամ վտանգից պաշտպանելը կամ համապատասխան բժշկական օգնության կամ բուժման հնարավորություն չապահովելը: Դա կարող է նեռարել երեխայի տարրական հուզական պահանջների անտեսումը կամ դրանց չպատասխանելը: Երեխայի նկատմամբ հոգատարության բացակայությունը նույնպես դիտարկվում է որպես երեխայի հանդեպ անտեսում, որի դեպքում երեխան հայտնվում է հոգեկան և ֆիզիկական անհարմարության վիճակում այն բանի հետևանքով, որ ծնողների կողմից չեն բավարարվում նրա առաջնահերթ կարիքները:

Երեխայի անտեսումը նպաստում է այնպիսի վարքի ձևավորմանը, ինչպիսիք են՝

1) դաժան վերաբերմունք՝ դաժանություն կենդանիների, երեխաների հանդեպ, վանդալիզմ, հարձակողական վարքագիծ, ինքն իրեն վնասող վարքագիծ, հրդեհումներ.

2) սննդամթերքի գողություն կամ մուրում, շատակերություն, հացադուլ.

3) ցուցադրական զգացմունքայնություն՝ թատերականացված ելույթներ, մակերեսային գրավչություն, չտարբերակված կապվածություններ.

4) կլեպտոմանիա- կոմպուլսիվ սուտ, քրոնիկ գողություն, հիվանդագին ստախոսություն.

5) սեռական հարկադրանք՝ գայթակղող վարքագիծ կամ հագուստ.

6) պասիվություն- ագրեսիվություն՝ զիջողականություն, հարցերին պատասխանելուց հրաժարում, չարության սադրում՝ ուրիշների մոտ, հարձակողական վարքագիծ.

7) խղճի բացակայություն՝ մեղքի զգացման բացակայություն, մեղքի ժխտում կամ սեփական մեղքի ուրիշներին վերագրում[9]:

Համաձայն Ավետարանի՝ ինչպես երեխաների վերաբերյալ ծնողի հոգատարությունը ենթադրում է պարտադիր նախապայման և երեխաների հնազանդություն, այնպես էլ զավակների առումով առկա են նույնանման պարտականություններ և կան մի շարք պահանջներ: Ծնողին չարհամարհելը և նրա նկատմամբ հարգալից վերաբերմունքը, հոգածության ու խնամակալության անհրաժեշտությունը պարտադիր պայման է: Այսպես. «Որդե՛կ, զորավի՛գ եղիր, քո հորը ծերության ժամանակ և նրան մի՛ տրտմեցրու իր կեանքի ընթացքում: Եվ եթե պակասի նրա խելքը, ների՛ր նրան, մի՛ անարգիր նրան» /Սիրաք 3:14-15/[10]: Հենց Ավետարանի այս դրույթները հաշվի առնելով՝

---

[8] Տե՛ս Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, հոդ.29, էջ 576-577

[9] Տե՛ս Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, 2015, էջ 155/

[10] Տե՛ս Ռաֆայել Պապոյան, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Էջմիածին, 2002, էջ 174

Մխիթար Գոշը զավակների պարտականությունները ծնողների նկատմամբ բարձրացրել է օրենքի աստիճանի՝ դարձնելով այն պարտադիր: Դատաստանագրքի ԾԷ կանոնում /Իրենց հորն ու մորը անարգողների մասին/ Գոշն անդրադառնում է իրենց հորն ու մորն անարգողներին. «Եթե որևէ մեկն անարգվի իր որդու կողմից, կամ եթե այլ անօրենություն գործեն որդիները օտարների առաջ, օրենքները անարգանքների համար հրաման են տալիս, որ հայրն իշխանություն ունի իր որդուն տանել դատավորների առաջ: Եվ եթե որդին հանձն առնի իր մեղքերը և խոստանա, որ այլևս նման բան չի անի, ապա խրատեն նրան ու արձակեն, եթե՝ ոչ, պատժվի, որովհետև, ըստ հին օրենքների, հայր և մայր անարգողներին երկճյուղ փայտից էին կախում»: Նշված արարքների համար ծնողներն իրավունք ունեին իրենց իրավունքների պաշտպանության և բարի համբավը վերականգնելու համար դիմել դատարան: Զավակների նկատմամբ կիրառվում էր համապատասխան պատիժ, հատկապես՝ եթե ծնողների հանդեպ գործողությունները կատարվել էին հասարակության առաջ, այլ անձանց ներկայությամբ: Ի լրումն՝ ԾԷ կանոնին հաջորդում է ԾԹ կանոնը /Իրենց հորն ու մորը բամբասողների մասին/, որտեղ նշվում է. «Եթե նույն գործողությունը կատարվել է **բռնությամբ**, ապա դատվեն համապատասխան կարգով»: Բռնությամբ կատարված անարգանքը կարող ենք հասկանալ ինչպես հոգեբանական, այնպես էլ ֆիզիկական և տնտեսական բռնության տեսքով: «Ով բամբասի իր հորը կամ մորը՝ մահվան ենթարկվի» /Ելք, ԻԱ-17/ Ծնողներին բամբասողների կամ նրանց հանցանքները հրապարակողների մահվան ենթարկելու մասին է ասում, իսկ ըստ մեր դատաստանների՝ ծնողների հետ բռնությամբ, անարգությամբ վարվողների կարգով դատվեն»»[11]:

Զավակների վերաբերմունքը ծնողների հանդեպ զուգահեռ է ստանում Մարդ-Աստված հարաբերություններում, և այդ զուգահեռի բաղադրամասերից մեկն այն է, որ զավակները բացի այն, որ պետք է հարգեն իրենց ծնողներին, պետք է նաև երկյուղեն ծնողներից, ինչպես կերկյուղի մարդն Աստծուց: Ինչպես մնացած հանցանքների համար սահմանված են պատիժներ, այս արարքը նույնպես դասվում է հանցանքների շարքին, և սահմանված են եղել պատիժներ: Այսինքն՝ Գոշը գտնում է, որ եթե ավետարանի տասը պատվիրանները նույնպես հայ օրենսդրության հիմքն են, ապա տասը պատվիրաններից առկա են այնպիսի պատվիրաններ, որոնց չկատարման դեպքում սահմանված են պատիժներ, օր.՝ մի՛ սպանիր, մի՛ գողացիր և այլն, ուստի այս պատվիրանը խախտելու դեպքում նույնպես պետք է սահմանվի համապատասխան պատիժ, այս դեպքում կխախտվի «Պատվի՛ր քո հորն ու մորը» պատվիրանը և այս պատվիրանից բխող կանոնները: Գոշը որպես իրավանորմ հստակ առանձնացրել է նշված իրավահարաբերությունները և սահմանել պատիժ՝ արարքին տալով համապատասխան իրավական գնահատական: Ըստ նրա՝ այս հանցանքները դիտվում են նույն հարթության վրա, և մեկից բխում է մյուսը:

---

[11] Տե՛ս Մխիթար Գոշի «Դատաստանագիրք», 2001, էջ 72

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրություններից դիտվում է, որ մեր նախահայրերը և մատենագիրներն ամուր, ներդաշնակ ընտանիք էին հասկանում կնոջ, տղամարդու, երեխաների և ծնողների առողջ հարաբերությունները փոխկապակցված մեկը մյուսի հետ՝ պահպանելով ընտանիքում անդամների իրավունքները և հարգելով միմյանց արժանապատվությունը, իսկ երեխաներին կրթության տալով՝ ապահովում նրանց խնամքն ու դաստիարակությունը, պատրաստում լիարժեք և պիտանի հասարակության և հայրենիքի համար անհատներ: Առաջադիմական այդ քայլերը նշված ժամանակաշրջանի համար ապացուցում են, որ նրանք համոզված էին, որ ամուր, կայուն և Աստվածավախ ընտանիքը պետության հիմքն է: Հզոր պետություն կերտելու գաղափարի շուրջ համախմբված միջնադարյան հայ մտավորականները մատենագիրների օգնությամբ նաև այս եղանակով են պայքարել՝ ներառելով առավել մարդասիրական իրավական նորմեր համապատասխան իրավական ակտերում: Քննարկվող հարաբերությունները բարձրացրել են օրենքի աստիճանի և կիրառելի դարձրել դրանք՝ դատապարտելի դարձնելով **ընտանիքում բռնությունն իր բոլոր դրսևորումներով:**

Հետևաբար, հիմք ընդունելով քննարկվող միջնադարյան իրավական ակտերում տեղ գտած ընտանեկան բռնությանը վերաբերող իրավանորմերը՝ անհրաժեշտ է դրանք կիրառել նաև պրակտիկայում, մասնավորապես առաջարկվում է՝

*** Ուսումնական հաստատություններում համապատասխան ծրագրերի միջոցով ուսանողների և աշակերտների սերտ կապ Հայ առաքելական Սուրբ եկեղեցու և հոգևորականների հետ.**

*** Դպրոցներում դասընթացներ սեռական կրթության վերաբերյալ՝ ներգրավելով համապատասխան մասնագետների.**

*** Ոստիկանությունում մասնագիտացված ստորաբաժանումներ.**

*** Ընտանեկան բռնության հիմնախնդիրները վեր հանելու վերաբերյալ կանխարգելիչ աշխատանքներ.**

*** Տվյալ իրավիճակում հայտնված անձանց համար պետական զբաղվածության ծրագրեր՝ բարելավելու տնտեսական, ֆինանսական վիճակը:**

ПРОБЛЕМА СЕМЕЙНОГО НАСИЛИЯ В СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ ПРАВОВЫХ АКТАХ

НЕРСИСЯН ГАЯНЕ
Старший участковый инспектор
Маштоцкого отдела ГУОП Полиции МВД РА,
соискатель Института философии, социологии и права, майор полиции

Аннотация. В статье представлены подходы армянских правоведов Средневековья к различным проявлениям семейного насилия. Правовые нормы, закреплённые в национальных законах, регулировали брачно-семейные отношения, защищали права детей, женщин и нетрудоспособных родителей. В статье подробно исследуются виды насилия, имевшие место в средневековом армянском обществе и получившие в тот исторический период правовую оценку: физическое, сексуальное, экономическое насилие, а также пренебрежение (оставление без необходимой заботы). Правовые нормы, содержащиеся в национальных законах, носили обязательный характер, а отступление от них воспринималось обществом как недопустимое и подлежащим осуждению. Целью применения созданных правовых норм являлось обеспечение особой защиты семьи как естественной и основной ячейки общества.

Ключевые слова: семья, виды насилия, пренебрежение, правовая норма, осуждение, национальные законы.

THE PROBLEM OF DOMESTIC VIOLENCE IN MEDIEVAL ARMENIAN LEGAL ACTS

NERSISYAN GAYANE

Senior Community Police Officer at Mashtots Station of the MDCP of Police of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, Police Major, Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia

---

Abstract. This article presents the approaches of medieval Armenian legal scholars regarding various manifestations of domestic violence. Legal norms enshrined in national laws regulated marital and family relations and protected the rights of children, women, and dependent parents. The article thoroughly examines the forms of violence in medieval Armenian society, classified as physical, sexual, economic violence, as well as neglect, all of which were subject to legal assessment during that period. The legal norms contained in national laws had binding legal force, and deviation from them was considered unacceptable and socially reprehensible.

Key words: family, types of violence, neglect, legal norm, condemnation, national law.

Օգտագործված գրականության ցանկ

1. Տե՛ս Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք», Երևան, 2001, գլուխ ԺԵ, էջ 53
2.Տե՛ս նույն տեղում, գլուխ ԺԹ, էջ 55
3. Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29/, էջ 16
4.Տե՛ս Սահակ Պարթևի կանոնախմբի ԻԷ կանոն, կանոնագիրք Հայոց, Երևան, 1964, Ա, էջ 382/
5. Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29, էջ 16/
6. Տե՛սՄատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 65/
7. Տե՛ս Մատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 64
8. Տե՛ս Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, հոդ. 29, էջ 576-577
9. Տե՛ս Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2015, էջ 155/
10. Տե՛ս Ռաֆայել Պապոյան, Արդի իրավունքի քրիատոնեական ակունքները, Էջմիածին, 2002, էջ 174
11. Տե՛ս Մխիթար Գոշի «Դատաստանագիրք» 2001, էջ 72
12. Հայաստանի պետության և իրավունքի տեսություն, Արա Ասլանյան, Երևան, Ուսումնական ձեռնարկ նուիերի համար, 2009 թ.
13. Իրավաքաղաքական մտքի պատմություն, Վահե Թորոսյան, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2021 թ.

Հոդվածը գրախոսվել է 19.08.2026թ.
Ներկայացվել է տպագրության 24.08.2026թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԳՈՐԾԻՔ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ՀՀ ՆԳ նախարարի մամուլի քարտուղար,
ՆԳՆ հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ

ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնի գլխավոր մասնագետ, ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի համատեղման կարգով դասախոս
DOI: 10.63925/18294847-2026.blj22-10

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է հանրային հաղորդակցության դերի և գործառույթների ուսումնասիրությանը՝ որպես հանցավորության կանխարգելման արդյունավետ գործիք ժամանակակից պետական կառավարման համակարգում: Աշխատությունում վերլուծվում է հանրային հաղորդակցության բովանդակային, ինստիտուցիոնալ և ռազմավարական ներուժը՝ ընդգծելով դրա ազդեցությունը հասարակական վարքագծի ձևավորման, իրավագիտակցության բարձրացման և սոցիալական նորմերի ամրապնդման գործընթացներում:

Հետազոտությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ հանցավորության կանխարգելումը չի կարող սահմանափակվել միայն պատժիչ կամ իրավապահ մեխանիզմներով, այլ պահանջում է կանխարգելիչ, կրթական և հաղորդակցական համալիր մոտեցում: Այս համատեքստում հանրային հաղորդակցությունը դիտարկվում է որպես պետության և հասարակության միջև փոխազդեցության առանցքային հարթակ, որի միջոցով հնարավոր է ոչ միայն փոխանցել տեղեկատվություն, այլև ձևավորել վստահություն, կանխատեսելիություն և իրավաչափ վարքագիծ:

Հոդվածում առանձնացվում են հանրային հաղորդակցության հիմնական գործիքները՝ իրազեկման արշավներ, մեդիա հաղորդակցություն, թվային հարթակներ և սոցիալական ցանցեր, ինչպես նաև դրանց կիրառման արդյունավետության պայմանները: Վերլուծվում է նաև հաղորդակցության լեզվի, թիրախային լսարանի ճիշտ ընտրության և հաղորդագրությունների կառուցվածքի ազդեցությունը հանրային ընկալումների և վարքագծային փոփոխությունների վրա: Առանձնակի ուշադրություն է դարձվում կանխարգելիչ հաղորդակցության և ռիսկերի հաղորդակցության փոխկապակցվածությանը՝ որպես հանցավոր վարքագծի նվազեցման գործոն:

Աշխատությունում ներկայացվում են նաև միջազգային փորձի համեմատական դիտարկումներ, որոնք ցույց են տալիս, որ համակարգված և ռազմավարական

հաղորդակցությունը կարող է էականորեն նվազեցնել հանցավորության մակարդակը՝ նպաստելով հանրային վստահության բարձրացմանն իրավապահ մարմինների նկատմամբ և խթանելով քաղաքացիների ակտիվ մասնակցությունն անվտանգ միջավայրի ձևավորմանը:

Եզրակացվում է, որ հանրային հաղորդակցությունը պետք է դիտարկվի ոչ թե որպես օժանդակ գործառույթ, այլ որպես հանցավորության կանխարգելման քաղաքականության ինքնուրույն և համակարգաստեղծ բաղադրիչ: Առաջարկվում է մշակել ինստիտուցիոնալ և մեթոդաբանական հստակ մեխանիզմներ, որոնք կապահովեն հաղորդակցական քաղաքականության ինտեգրումն ազգային անվտանգության և իրավակարգի պահպանման ռազմավարական շրջանակում:

Հիմնաբառեր: *Հանրային հաղորդակցություն, հանցավորության կանխարգելում, իրավագիտակցություն, վարքագծային ազդեցություն, հանրային վստահություն, պետություն–հասարակություն փոխգործակցություն:*

Ներածություն: Ժամանակակից հասարակություններում հանցավորության կանխարգելման խնդիրն աստիճանաբար դուրս է գալիս բացառապես իրավապահ և պատժիչ քաղաքականության շրջանակներից՝ վերածվելով բազմաշերտ, ինտեգրված և միջոլորտային կառավարման առաջնահերթության: Այս համատեքստում առավել ակնառու է դառնում հանրային հաղորդակցության դերի վերաիմաստավորումը՝ որպես ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոց, այլև սոցիալական վարքագծի ձևավորման և հանրային գիտակցության վրա նպատակային ազդեցություն ունեցող գործիք:

Հանրային հաղորդակցությունն իր բնույթով պետության և հասարակության միջև փոխգործակցության առանցքային մեխանիզմ է, որի արդյունավետ իրականացումը հնարավորություն է տալիս բարձրացնել իրավագիտակցության մակարդակը, ձևավորել վստահություն պետական ինստիտուտների նկատմամբ և նպաստել օրինապահ վարքագծի ամրապնդմանը: Մասնավորապես, ժամանակակից հետազոտությունները ցույց են տալիս, որ հաղորդակցական ռազմավարությունների նպատակային կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ անհատական և խմբային վարքագծի վրա՝ նվազեցնելով հանցավոր դրսևորումների հավանականությունը:[1]

Միևնույն ժամանակ, հանրային հաղորդակցության դերը հատկապես կարևորվում է կանխարգելիչ քաղաքականության շրջանակում, որտեղ առաջնային է ոչ թե արդեն կատարված իրավախախտման արձագանքը, այլ դրա նախնական չեզոքացումը: Այս իմաստով հաղորդակցությունը հանդես է գալիս որպես «փափուկ ուժի» գործիք, որի միջոցով հնարավոր է ազդել սոցիալական նորմերի, արժեքային համակարգերի և ռիսկային վարքագծերի ընկալման վրա՝ առանց հարկադրանքի մեխանիզմների կիրառման:[2]

---

[1] Տե՛ս Witte, K., Allen, M., A Meta-Analysis of Fear Appeals: Implications for Effective Public Health Campaigns, Health Education & Behavior, Vol. 27(5), 2000, էջ 591–615.

[2] Տե՛ս Welsh, B. C., Farrington, D. P., Science, Politics, and Crime Prevention: Toward a New Crime Policy, Journal of Criminal Justice, Vol. 40(2), 2012, էջ 128–133.

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նաև թվային միջավայրի և սոցիալական մեդիայի արագ զարգացմամբ, որի արդյունքում հանրային հաղորդակցության ազդեցության ծավալն ու արագությունը զգալիորեն աճել են: Այս հանգամանքը միաժամանակ ստեղծում է ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ նոր մարտահրավերներ՝ կապված տեղեկատվության արժանահավատության, ընկալման և նպատակային կառավարման հետ:

Սույն հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել հանրային հաղորդակցության դերը որպես հանցավորության կանխարգելման գործիք՝ բացահայտելով դրա տեսական հիմքերը, գործնական կիրառման մեխանիզմները և արդյունավետության պայմանները:

Հետազոտության շրջանակում առաջադրվում են հետևյալ **խնդիրները**՝

* վերլուծել հանրային հաղորդակցության հայեցակարգային հիմքերը,
* բացահայտել դրա ազդեցության մեխանիզմները սոցիալական վարքագծի վրա,
* ուսումնասիրել միջազգային փորձը,
* գնահատել կիրառելիությունը ՀՀ համատեքստում և առաջարկել գործնական լուծումներ:

Գիտական նորույթը նրանում է, որ հանրային հաղորդակցությունը դիտարկվում է ոչ թե որպես օժանդակ կամ երկրորդական գործառույթ, այլ որպես հանցավորության կանխարգելման քաղաքականության համակարգաստեղծ բաղադրիչ, որի նպատակային և ռազմավարական կիրառումը կարող է ապահովել կայուն և երկարաժամկետ արդյունքներ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համադրական-վերլուծական, համակարգային և բովանդակային վերլուծության **մեթոդներ**: Ուսումնասիրվել են հանրային հաղորդակցության և հանցավորության կանխարգելման ոլորտներին առնչվող գիտական աղբյուրներ, միջազգային փորձը և կիրառվող քաղաքականությունները: Միաժամանակ իրականացվել է տեսական մոտեցումների համադրություն՝ հանրային հաղորդակցության ազդեցության մեխանիզմների բացահայտման և դրանց կիրառելիության գնահատման նպատակով:

Հանրային հաղորդակցության տեսական և հայեցակարգային հիմքերը: Հանրային հաղորդակցությունը ժամանակակից գիտական դիսկուրսում դիտարկվում է որպես բազմաշերտ և միջդիսցիպլինար երևույթ, որը միավորում է հաղորդակցության տեսության, սոցիոլոգիայի, քաղաքական գիտության և հոգեբանության հիմնական դրույթները: Այն չի սահմանափակվում տեղեկատվության փոխանցմամբ, այլ ենթադրում է նպատակային ազդեցություն հանրային ընկալումների, դիրքորոշումների և վարքագծի վրա՝ ձևավորելով սոցիալական իրականության ընկալման շրջանակները:

Գիտական գրականության մեջ հանրային հաղորդակցությունը հաճախ տարբերակվում է հանրային կապերից (PR) և քարոզչությունից՝ ընդգծելով դրա ինստիտուցիոնալ և երկկողմանի բնույթը: Եթե հանրային կապերը հիմնականում ուղղված են կազմակերպության իմիջի ձևավորմանը, իսկ քարոզչությունը՝ միակողմանի ազդեցությանը, ապա հանրային հաղորդակցությունը ենթադրում է փոխազդեցություն,

հետադարձ կապ և հանրային մասնակցության ապահովում։[3] Այս մոտեցման հիմքում ընկած է հանրային ոլորտի (public sphere) գաղափարը, որտեղ ձևավորվում են հանրային կարծիքներն ու սոցիալական նորմերը։

Հանրային հաղորդակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դրա կարողությամբ՝ ազդելու վարքագծային մոդելների վրա։ Ժամանակակից տեսությունները ցույց են տալիս, որ տեղեկատվությունն ինքնին բավարար չէ վարքագծային փոփոխության համար. անհրաժեշտ է հաղորդակցության այնպիսի կառուցում, որը հաշվի է առնում անհատի ընկալումները, վախերը, արժեքները և սոցիալական միջավայրը։ Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեն վարքագծային հաղորդակցության մոդելները, որոնք ապացուցում են, որ ճիշտ ձևակերպված հաղորդագրությունները կարող են նպաստել օրինապահ վարքագծի ձևավորմանը և նվազեցնել ռիսկային գործողությունները։[4]

Միևնույն ժամանակ, հանրային հաղորդակցությունը գործում է նաև վստահության ձևավորման հարթությունում։ Վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ այն առանցքային գործոնն է, որը պայմանավորում է քաղաքացիների համագործակցությունն իրավապահ մարմինների հետ և օրենքին հետևելու նրանց պատրաստակամությունը։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն հասարակություններում, որտեղ հաղորդակցությունը թափանցիկ է, հետևողական և հասկանալի, հանցավորության մակարդակը համեմատաբար ցածր է՝ պայմանավորված սոցիալական վերահսկողության ոչ ֆորմալ մեխանիզմների ակտիվացմամբ։[5]

Հայկական գիտական միջավայրում ևս նկատվում է հանրային հաղորդակցության դերի աճող արժևորում՝ հատկապես պետական կառավարման և հանրային քաղաքականության համատեքստում։ Տեղական հետազոտությունները շեշտում են, որ հաղորդակցության բացակայությունը կամ ոչ արդյունավետ կազմակերպումը հանգեցնում է տեղեկատվական վակուումի, որը կարող է լրացվել ոչ պաշտոնական, հաճախ՝ ապակողմնորոշիչ աղբյուրներով՝ ռիսկեր ստեղծելով հանրային անվտանգության համար։[6]

Այսպիսով՝ հանրային հաղորդակցությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես տեղեկատվական գործընթաց, այլ որպես սոցիալական կարգավորման և վարքագծային կառավարման գործիք, որը ճիշտ կիրառման դեպքում կարող է դառնալ հանցավորության կանխարգելման կարևոր բաղադրիչ։

Հանրային հաղորդակցության ազդեցության մեխանիզմները հանցավորության կանխարգելման գործընթացում։ Հանրային հաղորդակցության ազդեցությունը հանցա-

---

[3] Տե՛ս Habermas, J., The Structural Transformation of the Public Sphere, Cambridge: Polity Press, 1989, էջ 1–30.

[4] Տե՛ս Witte, K., Allen, M., A Meta-Analysis of Fear Appeals: Implications for Effective Public Health Campaigns, Health Education & Behavior, Vol. 27(5), 2000, էջ 591–615.

[5] Տե՛ս Tyler, T. R., Why People Obey the Law, Princeton: Princeton University Press, 2006, էջ 3–25.

[6] Տե՛ս Մելքոնյան, Ա., Հանրային հաղորդակցության հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի», №2, 2020, էջ 45–52։

վորության կանխարգելման վրա պայմանավորված է մի շարք փոխկապակցված մեխանիզմներով, որոնք գործում են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակներում: Այս մեխանիզմները չեն սահմանափակվում տեղեկատվության փոխանցմամբ, այլ ընդգրկում են վարքագծային փոփոխությունների խթանում, սոցիալական նորմերի ձևավորում և հանրային վերահսկողության ուժեղացում:

Առաջին կարևոր մեխանիզմը վերաբերում է իրավագիտակցության բարձրացմանը: Հանրային հաղորդակցության միջոցով քաղաքացիներին տրամադրվում է ոչ միայն տեղեկատվություն օրենքների և իրավական կարգավորումների մասին, այլև ձևավորվում է դրանց նկատմամբ վերաբերմունք: Երբ հաղորդակցությունը կառուցվում է հասկանալի, մատչելի և նպատակային ձևով, այն նպաստում է օրենքի ընկալմանը ոչ թե որպես պարտադրանքի միջոց, այլ որպես հասարակական համակեցության կանոնների ամբողջություն: Այս գործընթացն իր հերթին նվազեցնում է իրավախախտումների հավանականությունը՝ պայմանավորված գիտակցված վարքագծի աճով:

Երկրորդ մեխանիզմը կապված է վարքագծային մոդելների վրա ազդեցության հետ: Ժամանակակից հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդկանց վարքագիծը հաճախ պայմանավորված է ոչ միայն ռացիոնալ հաշվարկով, այլև սոցիալական ազդակներով, ընկալումներով և միջավայրային գործոններով: Հանրային հաղորդակցությունը, կիրառելով նպատակային հաղորդագրություններ, կարող է ձևավորել ցանկալի վարքագծային նորմեր՝ հատկապես այն դեպքերում, երբ շեշտադրվում են սոցիալական ընդունելիության և մերժելիության սահմանները:[7]

Երրորդ մեխանիզմը վերաբերում է պետական ինստիտուտների նկատմամբ վստահության ձևավորմանը: Վստահությունն այն առանցքային գործոնն է, որը պայմանավորում է քաղաքացիների համագործակցությունն իրավապահ մարմինների հետ: Եթե հաղորդակցությունը թափանցիկ է, հետևողական և երկկողմանի, այն նպաստում է հանրային վստահության աճին, ինչն իր հերթին ուժեղացնում է սոցիալական վերահսկողության ոչ ֆորմալ մեխանիզմները: Այս պայմաններում քաղաքացիներն ավելի հակված են հաղորդել իրավախախտումների մասին և աջակցել դրանց կանխարգելմանը:[8]

Չորրորդ կարևոր բաղադրիչը ռիսկերի հաղորդակցությունն է: Հանցավորության կանխարգելման համատեքստում կարևոր է ոչ միայն փաստերի ներկայացումը, այլ նաև հնարավոր վտանգների ճիշտ ընկալման ձևավորումը: Արդյունավետ հաղորդակցությունը կարող է բարձրացնել ռիսկերի գիտակցումը՝ առանց անհիմն վախի տարածման, ինչը կարևոր է հասարակության կայունության պահպանման համար:

Վերջապես, հանրային հաղորդակցությունը նպաստում է սոցիալական նորմերի ամրապնդմանը: Երբ հասարակության մեջ ձևավորվում է հստակ ընկալում, թե որ

---

[7] Տե՛ս Cialdini, R. B., Crafting Normative Messages to Protect the Environment, Current Directions in Psychological Science, Vol. 12(4), 2003, էջ 105–109.

[8] Տե՛ս Tyler, T. R., Why People Obey the Law, Princeton: Princeton University Press, 2006, էջ 3–25.

վարքագիծն է ընդունելի և որը՝ ոչ, առաջանում է ինքնակարգավորման մեխանիզմ, որը հաճախ ավելի արդյունավետ է, քան արտաքին վերահսկողությունը: Այս համատեքստում հաղորդակցությունը դառնում է ոչ թե օժանդակ, այլ կառուցակարգային գործիք՝ ուղղված սոցիալական կարգի պահպանմանը:

Այսպիսով՝ հանրային հաղորդակցության ազդեցության մեխանիզմները բազմաշերտ են և փոխկապակցված: Դրանց արդյունավետ կիրառումը հնարավորություն է տալիս ոչ միայն արձագանքել հանցավորությանը, այլև կանխել դրա առաջացումը՝ ձևավորելով իրավաչափ վարքագծի կայուն հիմքեր:

Հանրային հաղորդակցության գործիքներն ու կիրառման ձևերը: Հանրային հաղորդակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն դրա բովանդակությամբ, այլև կիրառվող գործիքների և հաղորդակցման ձևերի ճիշտ ընտրությամբ: Ժամանակակից տեղեկատվական միջավայրում հաղորդակցությունը ձեռք է բերել բազմաալիքային բնույթ, ինչը հնարավորություն է տալիս պետությանը նպատակային և հասցեական կերպով ազդել տարբեր սոցիալական խմբերի վրա՝ նպաստելով հանցավորության կանխարգելմանը:

Հանրային հաղորդակցության հիմնական գործիքներից են իրազեկման արշավները, որոնք ուղղված են հասարակության լայն շերտերին: Դրանք կարող են ներառել սոցիալական գովազդ, հանրային հայտարարություններ, կրթական ծրագրեր և այլ միջոցներ: Իրազեկման արշավների արդյունավետությունը կախված է դրանց հաղորդագրությունների հստակությունից, կրկնելիությունից և թիրախային լսարանի առանձնահատկությունների հաշվառումից: Ճիշտ մշակված արշավները կարող են ոչ միայն տեղեկացնել, այլև ձևավորել վարքագծային փոփոխություններ՝ հատկապես երիտասարդության և խոցելի խմբերի շրջանում:

Մյուս կարևոր ուղղությունը մեդիա հաղորդակցությունն է, որը ներառում է զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունը: Լրատվամիջոցները հանդես են գալիս որպես հանրային օրակարգ ձևավորող հիմնական հարթակներ, և դրանց միջոցով փոխանցվող տեղեկատվությունը կարող է էականորեն ազդել հասարակական ընկալումների վրա:[9] Այս համատեքստում կարևոր է ապահովել հավասարակշռված, ճշգրիտ և պատասխանատու հաղորդակցություն՝ խուսափելով թե՛ չափազանցված սենսացիոնիզմից, թե՛ տեղեկատվության թերությունից:

Ժամանակակից պայմաններում առանձնահատուկ դեր ունեն թվային հաղորդակցման հարթակները և սոցիալական մեդիան:[10] Դրանք ապահովում են արագ, լայնածավալ և ինտերակտիվ հաղորդակցություն, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն փոխանցել տեղեկատվություն, այլև անմիջականորեն արձագանքել հանրային արձագանքներին: Սակայն թվային միջավայրը նաև պարունակում է ռիսկեր՝ կապված

---

[9] Տե՛ս McQuail, D., McQuail's Mass Communication Theory, London: Sage Publications, 2010, էջ 70–95.

[10] Տե՛ս Livingstone, S., Media Literacy and the Challenge of New Information and Communication Technologies, The Communication Review, Vol. 7(1), 2004, pp. 3–14.

ապատեղեկատվության տարածման և հաղորդագրությունների խեղաթյուրման հետ, ինչը պահանջում է ավելի ճշգրիտ և ռազմավարական մոտեցում:

Հանրային հաղորդակցության արդյունավետ կիրառման համար կարևոր է նաև թիրախային լսարանի հստակ սահմանումը: Տարբեր սոցիալական խմբեր ունեն տարբեր տեղեկատվական կարիքներ, ընկալման ձևեր և վարքագծային առանձնահատկություններ: Հետևաբար, հաղորդակցության միասնական մոտեցումը հաճախ չի ապահովում ցանկալի արդյունք: Անհրաժեշտ է մշակել տարբերակված հաղորդագրություններ՝ հաշվի առնելով տարիքային, սոցիալական և մշակութային գործոնները:

Միաժամանակ, հաղորդակցության ազդեցությունը մեծապես կախված է հաղորդագրության կառուցվածքից և լեզվից: Պարզ, հասկանալի և վստահություն ներշնչող հաղորդագրություններն ավելի արդյունավետ են, քան բարդ և վերացական ձևակերպումները: Կարևոր է նաև հաղորդակցության հետևողականությունը, քանի որ անկանոն և հակասական հաղորդագրությունները կարող են նվազեցնել վստահությունը և խաթարել կանխարգելիչ ազդեցությունը:

Այսպիսով՝ հանրային հաղորդակցության գործիքները բազմազան են և պահանջում են համակարգված ու ռազմավարական կիրառություն: Դրանց արդյունավետ համադրումը հնարավորություն է տալիս ձևավորել այնպիսի հաղորդակցական միջավայր, որը նպաստում է իրավաչափ վարքագծի ամրապնդմանը և հանցավորության կանխարգելմանը:

Հանրային հաղորդակցության կազմակերպման և կառավարման առանձնահատկությունները ՀՀ ՆԳՆ համակարգում՝ որպես հանցավորության կանխարգելման գործոն:

Ժամանակակից հանրային կառավարման համակարգում հանրային հաղորդակցությունը դիտարկվում է որպես պետական կառույցների արդյունավետ գործունեության, հասարակական վստահության ամրապնդման և հանրային անվտանգության ապահովման կարևորագույն գործիքներից մեկը:[11]

Հատկապես իրավապահ համակարգի գործունեության համատեքստում հաղորդակցությունը ձեռք է բերում ռազմավարական նշանակություն, քանի որ այն ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոց է, այլև հասարակության վարքագծի վրա ազդեցություն գործադրող, իրավագիտակցության բարձրացման և հանցավորության կանխարգելմանն ուղղված կարևոր գործոն:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համակարգում հանրային հաղորդակցության կազմակերպումը հիմնված է թափանցիկության, հաշվետվողականության և հանրության հետ երկկողմանի համագործակցության սկզբունքների վրա: Այս համատեքստում ՆԳՆ-ն իրականացնում է տեղեկատվական քաղաքականություն, որի նպատակն է քաղաքացիներին ժամանակին և հավաստի տեղեկությունների տրամադրումը, իրավական իրազեկվածության բարձրացումը, ինչպես

---

[11] Տե՛ս Հարությունյան Ա., «Հանրային կապերը պետական կառավարման համակարգում», Երևան, «Պետություն և իրավունք» գիտական հանդես, №2, 2021, էջ 45–56:

նաև հանցավորության կանխարգելմանն ուղղված վարքագծային մոդելների ձևավորումը:

Հատկանշական է, որ հանրային հաղորդակցության արդյունավետ կառավարումը հնարավորություն է տալիս ոչ միայն տեղեկացնել հասարակությանը հանցավորության ռիսկերի մասին, այլև խթանել քաղաքացիների մասնակցությունը հանրային անվտանգության ապահովման գործընթացներին:

Հանրային հաղորդակցության կառավարման առանձնահատկություններից է բազմաալիք հաղորդակցական միջավայրի օգտագործումը: ՀՀ ՆԳՆ համակարգը տեղեկատվության տարածման նպատակով կիրառում է պաշտոնական կայքերը, սոցիալական ցանցերը, զանգվածային լրատվության միջոցները, հանրային իրազեկման արշավները և ուղղակի հաղորդակցության տարբեր ձևաչափեր: Նման բազմաշերտ մոտեցումը հնարավորություն է տալիս հասնել հասարակության տարբեր խմբերի և ապահովել կանխարգելիչ հաղորդագրությունների լայն տարածում: Մասնավորապես, ճանապարհային անվտանգության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կիբերհանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ իրականացվող տեղեկատվական արշավները նպաստում են հանրության իրազեկվածության բարձրացմանը և իրավախախտումների ռիսկերի նվազեցմանը:

Միաժամանակ, հանրային հաղորդակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հասարակության կողմից պետական կառույցների նկատմամբ վստահության մակարդակով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ քաղաքացիներն առավել հակված են համագործակցել իրավապահ մարմինների հետ այն դեպքերում, երբ վերջիններիս գործունեությունը բնութագրվում է բացությամբ, օբյեկտիվությամբ և հաղորդակցական հետևողականությամբ:[12] Այս առումով ՆԳՆ համակարգում հանրային հաղորդակցության կառավարման կարևոր խնդիրներից է հասարակության հետ մշտական երկխոսության ապահովումը, հետադարձ կապի մեխանիզմների զարգացումը և հանրային կարծիքի ուսումնասիրությունը:

Այսպիսով՝ հանրային հաղորդակցության կազմակերպումն ու կառավարումը ՀՀ ՆԳՆ համակարգում հանդես են գալիս որպես հանցավորության կանխարգելման կարևոր գործոն: Արդյունավետ հաղորդակցական քաղաքականությունը նպաստում է իրավագիտակցության բարձրացմանը, հասարակության և իրավապահ մարմինների միջև համագործակցության ամրապնդմանը, ինչպես նաև հանրային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Հետևաբար, հանրային հաղորդակցության շարունակական զարգացումն ու արդիականացումը պետք է դիտարկել որպես հանցավորության կանխարգելման պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը:

Միջազգային փորձ: Հանրային հաղորդակցության արդյունավետ կիրառումը հանցավորության կանխարգելման ոլորտում լայնորեն ուսումնասիրվել և կիրառվել է

---

[12] Տե՛ս Մանասյան Գ., «Հանրային հաղորդակցության դերը հանրային կառավարման արդյունավետության բարձրացման գործում», Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքականագիտություն» հանդես, №3 (36), 2022, էջ 78–89:

մի շարք զարգացած երկրներում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ համակարգված և ռազմավարական հաղորդակցությունը կարող է էականորեն նպաստել ինչպես հանցավորության մակարդակի նվազեցմանը, այնպես էլ հասարակության և իրավապահ մարմինների միջև վստահության ամրապնդմանը:

Մեծ Բրիտանիայում հանրային հաղորդակցությունը համայնքային ոստիկանության (community policing) կարևոր բաղադրիչ է: Այստեղ կիրառվում են բազմաալիքային հաղորդակցման մեխանիզմներ՝ ներառյալ սոցիալական մեդիան, տեղական հանդիպումները և հանրային իրազեկման ծրագրերը: Հատկապես կարևորվում է ոստիկանության և համայնքի միջև մշտական երկխոսությունը, որի արդյունքում քաղաքացիները ոչ միայն ստանում են տեղեկատվություն, այլև ներգրավվում են անվտանգության ապահովման գործընթացում: Այս մոտեցումը նպաստում է վստահության բարձրացմանը և հանցագործությունների կանխարգելմանը՝ հատկապես տեղական մակարդակում:[13]

Նիդեռլանդներում լայն տարածում ունի կանխարգելիչ հաղորդակցության մոդելը, որը հիմնված է վարքագծային գիտության վրա: Պետական մարմիններն ակտիվորեն օգտագործում են նպատակային հաղորդագրություններ՝ ուղղված սոցիալական նորմերի ձևավորմանը: Օրինակ՝ կիրառվում են հաղորդակցական ռազմավարություններ, որոնք շեշտադրում են օրինապահ վարքագծի սոցիալական ընդունելիությունը՝ նվազեցնելով հակասոցիալական գործողությունների տարածվածությունը: Այս մոտեցումը ցույց է տվել, որ ճիշտ ձևակերպված հաղորդակցությունը կարող է ազդեցություն ունենալ նույնիսկ առանց խիստ վերահսկողական միջոցների կիրառման:[14]

Սինգապուրը ներկայացնում է առավել կենտրոնացված և համակարգված հաղորդակցական մոդել, որտեղ պետությունն ակտիվորեն օգտագործում է հանրային հաղորդակցությունը որպես սոցիալական կարգավորման գործիք: Այստեղ իրականացվում են լայնածավալ իրազեկման արշավներ՝ ուղղված իրավական նորմերի պահպանմանը, հանրային կարգապահության ձևավորմանը և ռիսկային վարքագծերի կանխմանը: Սինգապուրի փորձը ցույց է տալիս, որ հաղորդակցության և իրավական քաղաքականության համադրումը կարող է ապահովել բարձր կարգապահություն և ցածր հանցավորության մակարդակ:[15]

Միջազգային փորձի համադրական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մի շարք ընդհանուր օրինաչափություններ: Նախ՝ արդյունավետ հանրային հաղորդակցությունը միշտ կրում է համակարգված և շարունակական բնույթ: Երկրորդ՝ այն հիմնվում է վստահության և համագործակցության վրա, այլ ոչ թե միայն վերահսկողության: Եվ վերջապես՝ հաղորդակցությունն առավել արդյունավետ է այն

---

[13] Տե՛ս Bullock, K., Citizen, Community and Crime Control, Cullompton: Willan Publishing, 2010, էջ 85–110.

[14] Տե՛ս Van der Laan, P. H., Crime Prevention in the Netherlands: Policy and Practice, European Journal on Criminal Policy and Research, Vol. 19(2), 2013, էջ 121–138.

[15] Տե՛ս Quah, J. S. T., Curbing Corruption in Singapore: The Importance of Political Will, Expert Systems and Mass Media, Asian Education and Development Studies, Vol. 4(2), 2015, pp. 188–203.

դեպքում, երբ այն ինտեգրված է պետական քաղաքականության այլ բաղադրիչներին՝ կրթական, սոցիալական և իրավական ոլորտներում:

Այսպիսով՝ տարբեր երկրների փորձը հաստատում է, որ հանրային հաղորդակցությունը կարող է հանդես գալ որպես հանցավորության կանխարգելման արդյունավետ և ինքնուրույն գործիք՝ պայմանով, որ այն կիրառվում է ռազմավարական և գիտականորեն հիմնավորված ձևով:

Հանրային հաղորդակցության ինստիտուցիոնալացումը որպես հանցավորության կանխարգելման գործիք Հայաստանի Հանրապետությունում:

Հայաստանի Հանրապետությունում հանրային հաղորդակցության դերը պետական կառավարման համակարգում վերջին տարիներին աստիճանաբար արժևորվում է, սակայն այն դեռևս ամբողջությամբ չի ձևավորվել որպես հանցավորության կանխարգելման համակարգված և ռազմավարական գործիք: Չնայած առկա են որոշ նախաձեռնություններ՝ ուղղված հանրային իրազեկմանը և տեղեկատվության տարածմանը, դրանց մեծ մասը կրում է հատվածական և իրավիճակային բնույթ՝ զուրկ լինելով միասնական մոտեցումից:

Առաջին խնդիրներից մեկը վերաբերում է հաղորդակցության ռազմավարական պլանավորման բացակայությանը: Շատ դեպքերում հաղորդակցությունը սահմանափակվում է տեղեկատվության փոխանցմամբ՝ արձագանքելով արդեն տեղի ունեցած իրադարձություններին, այլ ոչ թե ուղղված լինելով դրանց կանխարգելմանը: Արդյունքում՝ հանրային հաղորդակցությունը չի կատարում իր կանխարգելիչ գործառույթը, այլ մնում է հիմնականում ռեակտիվ գործիք:

Երկրորդ կարևոր խնդիրը պետական ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակին է վերաբերում: Թեև վերջին տարիներին իրականացվում են թափանցիկության բարձրացմանն ուղղված քայլեր, այնուամենայնիվ, հանրային վստահությունը դեռևս լիարժեք չի ապահովում քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունն իրավախախտումների կանխարգելման գործընթացում: Այս պայմաններում հաղորդակցությունը հաճախ չի հասնում իր նպատակին՝ չկարողանալով ձևավորել համագործակցային միջավայր:

Երրորդ հիմնախնդիրը վերաբերում է թվային միջավայրում հաղորդակցության կառավարմանը: Սոցիալական մեդիայի ակտիվ զարգացումն ստեղծել է նոր հնարավորություններ, սակայն միաժամանակ առաջացրել է ապատեղեկատվության տարածման ռիսկեր: Շատ դեպքերում պետական հաղորդագրությունները չեն մրցակցում ոչ պաշտոնական աղբյուրների հետ՝ թե՛ արագության, թե՛ ազդեցության տեսանկյունից, ինչը կարող է հանգեցնել հանրային ընկալումների խեղաթյուրման:

Միաժամանակ, առկա է նաև թիրախային հաղորդակցության պակաս: Հաղորդագրությունները հաճախ ուղղված են ընդհանուր լսարանին՝ առանց հաշվի առնելու տարբեր սոցիալական խմբերի առանձնահատկությունները: Սա նվազեցնում է հաղորդակցության արդյունավետությունը, քանի որ տարբեր խմբեր պահանջում են տարբեր մոտեցումներ և լեզու:

Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ ՀՀ-ում առկա են նաև դրական միտումներ: Վերջին տարիներին նկատվում է պետական մարմինների կողմից հաղորդակցության գործիքների ակտիվ կիրառություն, հատկապես՝ սոցիալական մեդիայի հարթակներում: Սա ավելի ինտերակտիվ և հասցեական հաղորդակցություն զարգացնելու հնարավորություն է ստեղծում, որը կարող է դառնալ կանխարգելիչ քաղաքականության կարևոր բաղադրիչ:

Այսպիսով՝ ՀՀ-ում հանրային հաղորդակցությունը դեռևս ձևավորման փուլում է՝ ունենալով ինչպես զարգացման ներուժ, այնպես էլ համակարգային խնդիրներ: Դրա արդյունավետ կիրառումը պահանջում է ռազմավարական մոտեցում, ինստիտուցիոնալ ամրապնդում և գիտականորեն հիմնավորված մեթոդների կիրառում:

Առաջարկություններ

Հայաստանի Հանրապետությունում հանրային հաղորդակցության արդյունավետության բարձրացման և այն որպես հանցավորության կանխարգելման գործիք լիարժեք կիրառելու համար անհրաժեշտ է իրականացնել համակարգային և բազմաշերտ բարեփոխումներ՝ ընդգրկելով ինստիտուցիոնալ, մեթոդաբանական և գործնական մակարդակները:

Առաջին հերթին անհրաժեշտ է մշակել և ներդնել հանրային հաղորդակցության միասնական ռազմավարություն, որը կդիտարկի հաղորդակցությունը ոչ թե որպես օժանդակ գործառույթ, այլ որպես պետական քաղաքականության բաղկացուցիչ մաս: Այս ռազմավարությունը պետք է ներառի հստակ նպատակներ, թիրախային խմբեր, հաղորդակցման գործիքներ և արդյունավետության գնահատման չափորոշիչներ: Առանց նման համակարգված մոտեցման՝ հաղորդակցությունը կմնա հատվածական և իրավիճակային:

Երկրորդ կարևոր ուղղությունն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումն է: Պետական մարմիններում անհրաժեշտ է ձևավորել մասնագիտացված ստորաբաժանումներ կամ ուժեղացնել արդեն առկա կառույցները՝ ապահովելով համապատասխան մասնագիտական կարողություններ: Հանրային հաղորդակցությունը պահանջում է ոչ միայն տեղեկատվության տարածում, այլև ռազմավարական մտածողություն, վարքագծային գիտության իմացություն և ճգնաժամային հաղորդակցության հմտություններ:

Երրորդ՝ պետք է ապահովել թիրախային և տարբերակված հաղորդակցություն: Տարբեր սոցիալական խմբերի համար անհրաժեշտ է մշակել տարբեր հաղորդագրություններ՝ հաշվի առնելով նրանց սոցիալական, մշակութային և հոգեբանական առանձնահատկությունները: Հատկապես կարևոր է երիտասարդության հետ աշխատանքը, քանի որ հենց այս խմբում են ձևավորվում վարքագծային հիմքերը:

Չորրորդ՝ անհրաժեշտ է զարգացնել թվային հաղորդակցության կառավարման մեխանիզմները: Պետական մարմինները պետք է կարողանան ոչ միայն արձագանքել տեղեկատվական հոսքերին, այլև կանխել ապատեղեկատվության տարածումը՝ ապահովելով արագ, ճշգրիտ և վստահելի հաղորդակցություն: Սա պահանջում է ինչպես

տեխնոլոգիական լուծումներ, այնպես էլ մասնագիտական կարողությունների զարգացում:

Հինգերորդ՝ կարևոր է ապահովել հանրության ակտիվ ներգրավվածությունը հաղորդակցական գործընթացներում: Հանրային հաղորդակցությունը պետք է լինի երկկողմանի, որտեղ քաղաքացիները ոչ միայն տեղեկատվություն ստացող են, այլև ակտիվ մասնակից: Սա կարող է իրականացվել հանրային քննարկումների, հարցումների և հետադարձ կապի մեխանիզմների միջոցով:

Վերջապես, անհրաժեշտ է ներդնել արդյունավետության գնահատման համակարգեր, որոնք թույլ կտան չափել հաղորդակցության ազդեցությունը վարքագծի և հանցավորության մակարդակի վրա: Առանց չափելի արդյունքների անհնար է գնահատել իրականացվող քաղաքականության արդյունավետությունը և կատարել անհրաժեշտ ճշգրտումներ:

Այսպիսով՝ առաջարկվող միջոցառումները միտված են հանրային հաղորդակցության համակարգային վերաիմաստավորմանը՝ այն դարձնելով հանցավորության կանխարգելման քաղաքականության առանցքային գործիք:

Եզրակացություն

Հանրային հաղորդակցությունը ժամանակակից պետական կառավարման համակարգում ձեռք է բերում նոր որակ՝ վերածվելով ոչ միայն տեղեկատվական, այլև կանխարգելիչ և կարգավորիչ գործիքի: Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ հաղորդակցությունը ճիշտ և ռազմավարական կիրառման դեպքում կարող է էական ազդեցություն ունենալ հասարակական վարքագծի ձևավորման, իրավագիտակցության բարձրացման և սոցիալական նորմերի ամրապնդման վրա:

Վերլուծությունը ցույց տվեց, որ հանցավորության կանխարգելումը չի կարող հիմնվել բացառապես իրավապահ մեխանիզմների վրա: Այն պահանջում է համալիր մոտեցում, որտեղ հանրային հաղորդակցությունը հանդես է գալիս որպես առանցքային բաղադրիչ: Միջազգային փորձը հաստատում է, որ համակարգված և նպատակային հաղորդակցությունը կարող է նվազեցնել հանցավորության մակարդակը՝ միաժամանակ բարձրացնելով հանրային վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ:

Միևնույն ժամանակ, ՀՀ-ում հանրային հաղորդակցությունը դեռևս չի իրացվում իր ամբողջ ներուժով: Առկա են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ մեթոդաբանական խնդիրներ, որոնք սահմանափակում են դրա արդյունավետ կիրառումը: Սակայն առկա են նաև զարգացման լուրջ հնարավորություններ, որոնք ճիշտ քաղաքականության դեպքում կարող են բերել էական արդյունքների:

Եզրափակելով՝ կարելի է արձանագրել, որ հանրային հաղորդակցությունը պետք է դիտարկվի որպես հանցավորության կանխարգելման քաղաքականության համակարգաստեղծ տարր: Դրա արդյունավետ կիրառումը կարող է ապահովել ոչ միայն իրավախախտումների նվազեցում, այլև ավելի կայուն, անվտանգ և վստահելի հասարակական միջավայրի ձևավորում:

ПУБЛИЧНАЯ КОММУНИКАЦИЯ КАК ИНСТРУМЕНТ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ

САРГСЯН НАРЕК
Пресс-секретарь Министра внутренних дел Республики Армения,
Начальник управления общественных коммуникаций и информирования
Министерства внутренних дел

ПОГОСЯН ЛЕОНАРД
Главный специалист отдела международного сотрудничества и
связям с общественностью Образовательного комплекса МВД РА,
по совместительству преподаватель английского языка кафедры общих гуманитарных
и социально-экономических дисциплин Образовательного комплекса МВД РА

Аннотация. Настоящая статья посвящена изучению роли и функций публичной коммуникации как эффективного инструмента предупреждения преступности в современной системе государственного управления. В работе анализируется содержательный, институциональный и стратегический потенциал публичной коммуникации, подчёркивается её влияние на формирование общественного поведения, повышение уровня правосознания и укрепление социальных норм.

Исследование основано на идее о том, что предупреждение преступности не может ограничиваться исключительно карательными мерами и правоохранительными механизмами, а требует комплексного подхода, включающего профилактические, образовательные и коммуникационные инструменты. В этом контексте публичная коммуникация рассматривается как ключевая площадка взаимодействия государства и общества, позволяющая не только распространять информацию, но и формировать доверие, предсказуемость и правомерное поведение.

В статье выделяются основные инструменты публичной коммуникации: информационно-просветительские кампании, взаимодействие со средствами массовой информации, цифровые платформы и социальные сети, а также анализируются условия их эффективного применения. Рассматривается влияние языка коммуникации, правильного выбора целевой аудитории и структуры сообщений на общественное восприятие и изменение поведенческих моделей. Особое внимание уделяется взаимосвязи профилактической коммуникации и коммуникации рисков как факторов снижения уровня преступного поведения.

В работе также представлены сравнительные наблюдения на основе международного опыта, свидетельствующие о том, что системная и стратегически выстроенная коммуникация может способствовать снижению уровня преступности, укреплению общественного доверия к правоохранительным органам и активизации участия граждан в формировании безопасной среды.

В заключение обосновывается необходимость рассматривать публичную коммуникацию не как вспомогательную функцию, а как самостоятельный системообразующий компонент политики предупреждения преступности. Предлагается разработать чёткие институциональные и методологические механизмы, обеспечивающие интеграцию коммуникационной политики в стратегические рамки национальной безопасности и охраны правопорядка.

Ключевые слова: публичная коммуникация, предупреждение преступности, правосознание, поведенческое воздействие, общественное доверие, взаимодействие государства и общества.

PUBLIC COMMUNICATION AS A PREVENTIVE TOOL FOR REDUCING CRIME

SARGSYAN NAREK
Press Secretary to the Minister of Internal Affairs of the Republic of Armenia,
Head of the Public Communication and Information Department
of the Ministry of Internal Affairs

POGHOSYAN LEONARD
Chief Specialist at the Division of International Cooperation and Public Relations,
Lecturer on a Concurrent Basis at the Chair of General Humanities
and Socio-Economic Disciplines,
Rescue Service and Crisis Management Training Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

---

Abstract. This article examines public communication as a preventive instrument in reducing crime within the framework of modern public governance. Moving beyond the traditional understanding of communication as a tool for information dissemination, the study conceptualizes public communication as a strategic mechanism capable of influencing social behavior, shaping public perceptions, and strengthening normative frameworks that support law-abiding conduct.

The research is grounded in an interdisciplinary approach, integrating insights from communication theory, behavioral science, and criminology. It analyzes the key mechanisms through which public communication contributes to crime prevention, including the enhancement of legal awareness, the formation of behavioral norms, the development of public trust in state institutions, and the effective communication of risks. Particular attention is paid to the role of targeted messaging, media engagement, and digital communication platforms in shaping individual and collective behavior.

The article also explores international practices, highlighting how strategic communication has been successfully employed in various countries as part of broader crime prevention policies. These cases demonstrate that systematic, transparent, and audience-oriented communication can significantly contribute to reducing crime rates and fostering cooperative relationships between citizens and law enforcement bodies.

In the context of the Republic of Armenia, the study identifies key challenges, including the lack of a unified communication strategy, insufficient institutionalization of communication practices, and limited use of behavior-oriented approaches. At the same time, it emphasizes existing opportunities for developing a more integrated and preventive communication model.

The article concludes that public communication should be recognized as an independent and system-forming component of crime prevention policy. It argues for the development of institutional, methodological, and strategic frameworks that would enable the effective integration of communication into national security and public safety policies.

Key words: public communication, crime prevention, legal awareness, behavioral influence, public trust, state–society interaction.

Օգտագործված գրականության ցանկ

1. Bullock, K., Citizen, Community and Crime Control, Cullompton: Willan Publishing, 2010, էջ 85–110.

2. Cialdini, R. B., Crafting Normative Messages to Protect the Environment, Current Directions in Psychological Science, Vol. 12(4), 2003, էջ 105–109.

3. Habermas, J., The Structural Transformation of the Public Sphere, Cambridge: Polity Press, 1989, էջ 1–30.

4. Livingstone, S., Media Literacy and the Challenge of New Information and Communication Technologies, The Communication Review, Vol. 7(1), 2004, pp. 3–14.

5. McQuail, D., McQuail's Mass Communication Theory, London: Sage Publications, 2010, էջ 70–95.

6. Quah, J. S. T., Curbing Corruption in Singapore: The Importance of Political Will, Expert Systems and Mass Media, Asian Education and Development Studies, Vol. 4(2), 2015, pp. 188–203.

7. Tyler, T. R., Why People Obey the Law, Princeton: Princeton University Press, 2006, էջ 3–25.

8. Tyler, T. R., Why People Obey the Law, Princeton: Princeton University Press, 2006, էջ 3–25.

9. Van der Laan, P. H., Crime Prevention in the Netherlands: Policy and Practice, European Journal on Criminal Policy and Research, Vol. 19(2), 2013, էջ 121–138.

10. Welsh, B. C., Farrington, D. P., Science, Politics, and Crime Prevention: Toward a New Crime Policy, Journal of Criminal Justice, Vol. 40(2), 2012, էջ 128–133.

11. Witte, K., Allen, M., A Meta-Analysis of Fear Appeals: Implications for Effective Public Health Campaigns, Health Education & Behavior, Vol. 27(5), 2000, էջ 591–615.

12. Witte, K., Allen, M., A Meta-Analysis of Fear Appeals: Implications for Effective Public Health Campaigns, Health Education & Behavior, Vol. 27(5), 2000, էջ 591–615.

13. Հարությունյան Ա., «Հանրային կապերը պետական կառավարման համակարգում», Երևան, «Պետություն և իրավունք» գիտական հանդես, №2, 2021, էջ 45–56:

14. Մանասյան Գ., «Հանրային հաղորդակցության դերը հանրային կառավարման արդյունավետության բարձրացման գործում», Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքականագիտություն» հանդես, №3 (36), 2022, էջ 78–89:

15. Մելքոնյան, Ա., Հանրային հաղորդակցության հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի», №2, 2020, էջ 45–52:

Հոդվածը գրախոսվել է 16.07.2026թ.
երկայացվել է տպագրության 27.07.2026թ.

«ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՕՏԱՐՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ
DOI: 10.63925/18294847-2026.blj22-11

Ամփոփագիր: Հոդվածում լուսաբանվում է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց՝ փոխհատուցման չափի վիճարկման վերաբերյալ հատուկ հայցային վարույթի գործերի դատավարական առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարությունում:

Նշված ինստիտուտը ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներդրվել է 2026 թվականին և առաջին անգամ գիտական ուսումնասիրության առարկա դարձել հեղինակի կողմից ներկայացվող վերլուծության մեջ:

Հոդվածում անդրադարձ է կատարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ ՀՀ կառավարության որոշումը չկասեցնելու իրավակարգավորմանը՝ եզրահանգելով, որ փոխհատուցման չափի վերաբերյալ վեճի լուծումը չունի որևէ դերակատարում օտարման գործընթացում, մինչդեռ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու օրենսդրական պահանջի նախատեսումը կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող փոխհատուցման չափի բարեխղճության՝ նկատի ունենալով վերջիններիս շահագրգռվածությունը վեճի արագ լուծման և գործողությունների կասեցման սահմանափակումն արագ վերացնելուն, որպիսի պայմաններում առաջարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.21-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ սահմանելով հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարման, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցման կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու դատավարական ընթացակարգ:

Բանալի բառեր: Հատուկ հայցային վարույթ, գերակա շահ, փոխհատուցման չափ, սեփականություն, օտարում:

Ներածություն

ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերի քննության հայցային վարույթն իրականացվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված երկու ընթացակարգերով՝ հայցային և հատուկ հայցային: Օրենսդրական զարգացումների արդյունքում՝ հատուկ հայցային վարույթը լրացվեց նոր տեսակի քաղաքացիական գործերով 10 :

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.4-րդ գլուխը նվիրված է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման չափի վիճարկման վերաբերյալ գործերին՝ որպես հատուկ հայցային վարույթի, որոնք ներպետական օրենսդրությամբ ամրագրվել են միայն 2026 թվականի փետրվարի 11-ին:

Նշված օրենսդրական փոփոխության արդյունքում հստակեցվել է հանրության գերակա շահ ճանաչելու հետևանքով օտարվող սեփականության փոխհատուցման չափի վիճարկման դատավարական ընթացակարգը՝ սահմանելով գործի քննության սեղմ ժամկետներ:

Հիմնական հետազոտություն

Հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հատուցելիության վերաբերյալ հիմնական իրավադրույթն ամրագրված է ՀՀ Սահմանադրության[1] 60-րդ հոդվածի 5-րդ մասում, ինչն ուղղակիորեն պաշտպանում է այն անձանց իրավունքները, որոնց սեփականությունը ճանաչվել է հանրության գերակա շահ:

Հատկանշական է, որ հանրության գերակա շահ ճանաչված սեփականության օտարման դիմաց փոխհատուցումը և փոխհատուցման չափն այն երաշխիքն է, որն անձանց տրված է ՀՀ օրենսդրությամբ, քանի որ սեփականատերերն իրենց կամքից անկախ հանգամանքներում զրկվում են սեփականությունից, որն օբյեկտիվ պատճառներով համարվում է գերակա շահ, որպիսի պայմաններում օտարված սեփականության դիմաց տրվող հատուցումը պետք է անհրաժեշտ և բավարար լինի համարժեք սեփականություն ձեռք բերելու համար, հետևաբար, փոխհատուցման չափի վերաբերյալ վեճերն առանձին դատավարական իրավակարգավորմամբ նախատեսելն արդարացված է և բխում է նաև միջազգային չափորոշիչներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[2] 234.20-րդ հոդվածի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման չափի վիճարկման վերաբերյալ գործերով հայցի

---

[1]Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21 /Հատուկ թողարկում:

[2] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ:

առարկան կարող է լինել միայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որոշված համարժեք փոխհատուցման չափի վիճարկումը: Սույն գլխով նախատեսված գործերով դատարանի քննության առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի համարժեքության հարցը:

Վերոգրյալ քաղաքացիադատավարական նորմի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ օրենդրությամբ հատուկ հայցային վարույթի շրջանակներում վեճի առարկա կարող է լինել բացառապես օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման չափը, որի համարժեք լինելու կամ չլինելու հանագամանքը հաստատում է իրավասու դատարանը, ինչն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է անձանց գույքային իրավունքների պաշտպանությանը, և որը բխում է միջազգային չափորոշիչներից, քանի որ Հայաստանի Հանրապետության դեմ կայացված ՄԻԵԴ մի շարք վճիռներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է «նախնական և համարժեք փոխհատուցման» պահանջի իրավունքի խախտումներ, որոնք հանգեցրել են կամայական և անօրինական միջամտության:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներով արձանագրվել է, որ սեփականատերերին տրամադրված փոխհատուցումը, որը ներառել է շուկայական արժեքից 15 տոկոս ավել գումար, համաչափ չի եղել, քանի որ հաշվի չեն առնվել այն վնասները, որոնք կապված են եղել (ի թիվս այլոց) այդ սեփականության՝ որպես ապրուստի միջոց հանդիսանալու հետ:

Այսպես.

Շնող և Թեղուտ գյուղերում բնակիչների գյուղատնտեսական հողերը հասարակության և պետության կարիքների համար օտարվել են հանքարդյունաբերության նպատակներով, մինչդեռ օտարվող սեփականությունը եղել է գյուղացիների եկամտի միակ աղբյուրը[3]:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ տվյալ անշարժ գույքի շուկայական գինն արտահայտող փոխհատուցումը՝ նույնիսկ օրենքով սահմանված լրացուցիչ տոկոսի ավելացմամբ, չհամարվի բավարար գույքից զրկելու դիմաց: Նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ անձը զրկվում է իր եկամտի հիմնական, եթե ոչ միակ աղբյուրից, և առաջարկվող փոխհատուցումը չի համապատասխանում այդ կորստին[4]:

Եվրոպական մի շարք երկրների սեփականության օտարմանը վերաբերող ներպետական օրենսդրություններում օտարման դեպքում սեփականատերերի փոխհատուցումն իր մեջ ներառում է նաև օտարման արդյունքում պատճառված այլ

---

[3] Տե՛ս ՄԻԵԴ «Ռամազյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 54769/10, 14.02.2019 թ., «Լևոն Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4168/10, 14.03.2019թ., «Փարսադանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 5444/10, 14.02.2019 թ., «Վարդանյանը և Հախվերդյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4178/10, 14.02.2019 թ., «Մաշինյանը և Ռամազյանն ընդդեմ Հայաստանի»վճիռ, թիվ 65124/09, 14.02.2019 թ., «Միեր Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ,թիվ 4413/10,14.02.2019 թ.:

[4] Տե՛ս ՄԻԵԴ «Օսմանյանը և Ամիրաղյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 71306/11, 11.10.2018 թ.:

վնասները: Օրինակ՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում փոխհատուցումը նախատեսված է այնպիսի չափով, որ հնարավորություն ընձեռի սեփականատիրոջը ձեռք բերել նույնպիսի տեսակի և որակի գույք, ինչպես նաև ներառի սեփականատիրոջ բոլոր հավելյալ ծախսերը, որոնք նա կատարել է միանման այլ գույք ձեռք բերելիս, իսկ Շվեդիայի «Օտարման մասին» օրենքը նախատեսում է որպես փոխհատուցում սեփականության շուկայական արժեքին գումարած 25 տոկոս, ինչպես նաև սեփականատիրոջը պատճառած բոլոր վնասները[5]:

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ է փաստել, որ փոխհատուցման չափն առանձին դատական քննության առարկա դարձնելու հանգամանքն առանցքային գործիքակազմ է՝ սեփականատիրոջ իրավունքների երաշխավորվածությունն ապահովելու համար:

Միաժամանակ հարկ է փաստել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.21-րդ հոդվածում ամրագրված իրավակարգավորումը չի բխում հանրության գերակա շահ ճանաչված գույքի սեփականատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքից այն հիմնավորմամբ, որ գույքի օտարման գործընթացում կարծես սեփականատիրոջ կամաարտահայտությունը որևէ նշանակություն չունի, քանի որ, անկախ սեփականատիրոջ համաձայնությունից, այն ենթակա է օտարման:

Օրենսդիրը նախատեսել է ՀՀ կառավարության որոշումը չկասեցնելու իրավակարգավորում, որն ամրագրված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[6] 234.21-րդ հոդվածով, ինչը նշանակում է, որ փոխհատուցման չափի վերաբերյալ վեճի լուծումը չունի որևէ դերակատարում օտարման գործընթացում, մինչդեռ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու օրենսդրական պահանջի նախատեսումը կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող փոխհատուցման չափի բարեխղճության՝ նկատի ունենալով վերջիններիս շահագրգռվածությունը վեճի արագ լուծման և գործողությունների կասեցման սահմանափակումն արագ վերացնելուն, հետևաբար, առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[7] 234.21-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ՝ «Հանրության գերակա շահ ճանաչելու որոշման և գույքի օտարման հետ առնչվող որևէ այլ հայց ներկայացնելը կասեցնում է հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները, հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմք հանդիսացող գործունեությունը՝ մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

---

[5] Տե՛ս Winrich Voss, Compulsory Purchase in Poland, Norway and Germany, 2010, Thomas Kalbro, Compensation Rights for Reduction in Property Values Due to Planning Decisions in Sweden, Washington University Global Studies Law Review, 027 (2007).

[6] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ:

[7] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ նման իրավակարգավորումը ողջամտորեն չի հանգեցնի բացասական կամ անդառնալի հետևանքների՝ նկատի ունենալով ՀՀ օրենսդրությամբ ամրագրված հատուկ հայցային վարույթի քննարկվող տեսակի դատավարական սեղմ ժամկետները:

Անդրադառնալով նշված հատուկ հայցային վարույթի հաջորդ դատավարական առանձնահատկությանը՝ հարկ է նշել, որ նույն օրենքի 234.19-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ նախատեսվել է, որ փորձագետ կարող է ներգրավվել միայն «Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով որպես գնահատող հանդես գալու իրավունք ունեցող անձը՝ բացառությամբ օտարվող արժեթղթերի, որոնց դեպքում որպես փորձագետ կարող է ներգրավվել միայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ անկախ գնահատողը, սակայն ՀՀ օրենսդրությամբ չի հստակեցվել փորձաքննություն նշանակելու դատավարական ընթացակարգը, մասնավորապես, սույն քաղաքացիական գործերով փորձաքննություն նշանակվում է հայցվորի միջնորդության հիման վրա, թե դատարանի նախաձեռնությամբ, որպիսի պայմաններում առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացնել այն բովանդակությամբ, որ իրավասու դատարանին վերապահվի պարտականություն իր նախաձեռնությամբ նշանակել փորձաքննություն՝ միաժամանակ որոշմամբ սահմանելով փորձաքննության կատարման ժամկետը, ինչը կկանխի փորձաքննության ձգձգման հետևանքով դատավարական ժամկետների ձգձգումը և արդար դատաքննության իրավունքի իրացման առնչությամբ կդառնա արդյունավետ երաշխիք դատավարության բոլոր կողմերի համար:

Եզրակացություն

Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց որպես հատուկ հայցային վարույթի ներդրումը ՀՀ իրավական համակարգ ունի էական նշանակություն և ուղղված է հանրության գերակա շահ ճանաչված գույքի սեփականատերերի իրավունքների և օրինական շահերի նվազագույն պաշտպանությանը:

Առաջարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.21-րդ հոդվածի խմբագրման արդյունքում հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու դատավարական ընթացակարգ, ինչը լրացուցիչ երաշխիք կլինի սեփականատերերի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար:

ПРОЦЕССУАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ РАССМОТРЕНИЯ ДЕЛ ОСОБОГО ИСКОВОГО ПРОИЗВОДСТВА ОБ ОСПАРИВАНИИ РАЗМЕРА КОМПЕНСАЦИИ ЗА ОТЧУЖДЕННОЕ ИМУЩЕСТВО ПО ЗАКОНУ РА «ОБ ОТЧУЖДЕНИИ ИМУЩЕСТВА В ЦЕЛЯХ ОБЕСПЕЧЕНИЯ ПРИОРИТЕТНЫХ ИНТЕРЕСОВ ОБЩЕСТВА» В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ РА

ПЕТРОСЯН САМИНЕ
Соискатель кафедры гражданского и
гражданско-процессуального права
Российско-Армянского (Славянского) Университета

Аннотация. В статье освещаются процессуальные особенности специального искового производства по оспариванию размера компенсации за отчуждаемое имущество, установленной законом Республики Армения «Об отчуждении имущества в целях обеспечения приоритетных общественных интересов» в гражданском судопроизводстве РА.

Указанный институт был введен в Гражданский процессуальный кодекс РА в 2026 году и впервые стал предметом научного исследования в анализе, представленном автором.

В статье говорится о закрепленном в Гражданском процессуальном кодексе РА правовом регулировании решения правительства РА не приостанавливать действие решения, заключив, что разрешение спора о размере компенсации не играет никакой роли в процессе отчуждения, в то время как выполнение решения правительства о признании приоритетного общественного интереса, предусмотрение законодательного требования о приостановлении регистрации права собственности приобретателя или вытекающих из нее других действий приведет к добросовестности размера компенсации, предлагаемой хозяйствующими субъектами, с учетом заинтересованности последних в быстром разрешении спора и быстрой отмене ограничения на приостановление действий. При таких условиях было предложено внести изменение в статью 234.21 Гражданского процессуального кодекса РА, определяющее выполнение решения правительства о признании приоритетного общественного интереса, регистрации права собственности приобретателя или приостановления других действий, вытекающих из этого.

Ключевые слова: конкретное исковое производство, преимущественная выгода, размер компенсации, собственность, отчуждение

PROCEDURAL FEATURES OF SPECIAL CLAIM PROCEEDINGS CONCERNING DISPUTES OVER THE AMOUNT OF COMPENSATION FOR ALIENATED PROPERTY UNDER THE LAW OF THE REPUBLIC OF ARMENIA "ON ALIENATION OF PROPERTY FOR THE PURPOSE OF ENSURING THE OVERRIDING PUBLIC INTEREST"

PETROSYAN SAMINE
Applicant at the Chair of Civil Law and Civil Procedure Law,
Russian-Armenian (Slavonic) University

Abstract. The article examines the procedural features of special claim proceedings concerning disputes over the amount of compensation for property subject to alienation under the Law of the Republic of Armenia "On Alienation of Property for the Purpose of Ensuring the Overriding Public Interest," under the civil procedure of the Republic of Armenia.

This legal institution was introduced into the Civil Procedure Code of the Republic of Armenia in 2026, and the present article constitutes its first scientific research.

The article covers the legal framework established by the Civil Procedure Code of the Republic of Armenia, under which the Government's decision is not subject to suspension. The article concludes that the resolution of disputes concerning the amount of compensation has no bearing on the alienation process itself. At the same time, establishing a statutory requirement to suspend the implementation of the Government's decision recognizing the overriding public interest, the registration of the acquirer's ownership right, or other actions arising therefrom would encourage business entities to offer compensation in good faith, given their interest in the rapid resolution of disputes and the swift lifting of restrictions on such actions.

In light of these considerations, the article proposes amending Article 234.21 of the Civil Procedure Code of the Republic of Armenia to establish a procedural mechanism for suspending the implementation of the Government's decision recognizing the overriding public interest, the registration of the acquirer's ownership right, or other actions arising therefrom.

Key words: special claim proceedings, overriding public interest, amount of compensation, property, alienation.

Օգտագործված գրականության ցանկ.

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ.:
2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ:
3. ՄԻԵԴ «Ռամազ յանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 54769/10, 14.02.2019թ.:
4. ՄԻԵԴ «Լևոն Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4168/10, 14.03.2019թ.:
5. ՄԻԵԴ «Փարսադանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 5444/10, 14.02.2019թ.:
6. ՄԻԵԴ «Վարդանյանը և Հախվերդյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4178/10, 14.02.2019 թ.:
7. ՄԻԵԴ «Մաշինյանը և Ռամազ յանն ընդդեմ Հայաստանի»վճիռ, թիվ 65124/09, 14.02.2019թ.:
8. ՄԻԵԴ «Միեր Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ,թիվ 4413/10,14.02.2019 թ.:
9. ՄԻԵԴ «Օսմանյանը և Ամիրաղ յանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 71306/11, 11.10.2018 թ.:
10. Ա. Դավթյան, Քաղաքացիական դատավարություն, արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները, Երևան, 2024թ.:
11. Карпова А.А., Процессуальные особенности рассмотрения дел о признании сделок недействительными и применении последствий недействительности сделок в цивилистическом процессе, М. 2024.
12. Winrich Voss, Compulsory Purchase in Poland, Norway and Germany, 2010.
13. Thomas Kalbro, Compensation Rights for Reduction in Property Values Due to Planning Decisions in Sweden, Washington University Global Studies Law Review, 027 (2007).

Հոդվածը գրախոսվել է 15.06.2026թ.
Ներկայացվել է տպագրության 19.06.2026թ.

«ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՈՒ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՊՈՂՈՍՅԱՆ
Փաստաբան, Բոննի համալսարանի ասպիրանտ
DOI: 10.63925/18294847-2026.blj22-12

Ներածություն.

Սահմանադրական դատարանի հետ առնչվող իրավաբանները հաճախ են բախվում Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննությունը մերժելուն, ինչը Սահմանադրական դատարանը շատ դեպքերում հիմնավորում է հետևյալ արտահայտությամբ.

*«Միաժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը, համաձայն որի, ի թիվս այլնի, դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել, և ինչ **անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու պատճառահետևանքային կապը վիճարկվող օրինադրույթների և ենթադրյալ խախտման փաստի միջև բավարար հիմնավորումներ:** Ուստի՝ այն հանգամանքով պայմանավորված, որ վերոնշյալ պահանջները սույն դիմումում պահպանված չեն, Սահմանադրական դատարանի գնահատմամբ սույն դիմումը վերոնշյալ հիմնավորումներով **ակնհայտ անհիմն է:**»*[1] (մզեցումներն ըստ Սահմանադրական դատարանի):

Սույն վերլուծության առջև դրված խնդիրն է բացահայտել «անմիջական պատճառահետևանքային կապ» բառակապակցության բովանդակությունը, որի շրջանակներում պետք է մասամբ անդրադարձ կատարվի նաև Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումի թույլատրելիության ու հիմնավորվածության չափանիշներին: Արդյունքում ցույց կտրվի, որ նորմատիվ մակարդակում «պատճառահետևանքային կապ»[2] հասկացությունը տեղ չունի և կառաջարկվի անհատական դիմումի թույլատրելիության վերաբերելի, ավելի կիրառական ու դոգմատիկ առումով համոզիչ մոտեցում:

---

[1] Տե՛ս օրինակ՝ Սահմանադրական դատարանի 12.07.2022 թ. ՍԴԱՈ – 125 աշխատակարգային որոշումը: Այս չափանիշն առաջին անգամ սահմանվել է ՍԴՈ – 839 որոշմամբ, որին առանձին անդրադարձ կկատարվի ստորև՝ բաժին II.:

[2] «Նորմատիվային մակարդակում պատճառահետևանքային կապ» ասելով նկատի ունենք երկու կամ ավելի նորմերի միջև (օրինակ՝ Սահմանադրություն, սահմանադրական օրենք, օրենք, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ) պատճառահետևանքային կապը [որի գոյությունը սույն հոդվածում, սկզբունքորեն, հերքվում է]:

Հիմնական հետազոտություն.

«Անմիջական պատճառահետևանքային կապ» հասկացությունը

Նախևառաջ փորձենք հասկանալ, թե ինչ իմաստ ունեն «պատճառահետևանքային կապ» և «անմիջական» եզրույթները: «Պատճառահետևանքային» եզրույթը՝ որպես ածական, ըստ Է. Աղայանի, արտահայտում է «Պատճառի և հետևանքի փոխադարձ կապ՝ պայմանավորվածություն ցույց տվող՝ արտահայտող» [1, էջ 1192] իմաստը: Այս առումով, երբ Սահմանադրական դատարանը խոսում է «օրինադրույթի հակասահմանադրականության և հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի» մասին, առաջին հայացքից կարող ենք ենթադրել, որ Սահմանադրական դատարանը նկատի ունի այն հանգամանքը, որ օրենքի հակասահմանադրականությունը *պատճառ է* անձի հիմնական իրավունքի խախտման՝ որպես *հետևանքի* համար: Այսինքն՝ եթե անձի հիմնական իրավունքը խախտվել է (հետևանքը վրա է հասել) ոչ թե օրենքի հակասահմանադրականության պատճառով (պատճառ), այլ ուրիշ հանգամանքներով (պատճառներով) պայմանավորված, ապա Սահմանադրական դատարանն անհատական դիմումով գործի քննությունը կմերժի՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու պատճառով: Այդ դեպքում օրենքի հակասահմանադրականությունն «անմիջական» պատճառ չի լինի հիմնական իրավունքի խախտման (հետևանքի) համար: «Անմիջական» տերմինը, ըստ Է. Աղայանի, արտահայտում է «առանց միջնորդավորության, ուղղակի» իմաստը [1, էջ 72]:

Առաջին հայացքից տրամաբանական թվացող այս մոտեցումը, սակայն, առաջ է բերում որոշ խնդիրներ և, ինչպես ցույց կտրվի ստորև, պրակտիկայում կարող է հանգեցնել նրան, որ Սահմանադրական դատարանը գործերը քննի ոչ թե Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով կանխորոշված թույլատրելիության չափանիշների հիման վրա, այլ ըստ ցանկության: Հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանը պահանջում է նաև *անմիջական* պատճառահետևանքային կապի առկայություն, ինչպես նաև՝ պատճառահետևանքային կապի առկայության բավարար չափով իրավաբանորեն հիմնավորում դիմող կողմից, խնդիրն ավելի է սրվում:

Մինչև (սահմանադրական) դատավարության իրավունքում «(անմիջական) պատճառահետևանքային կապ» հասկացությանն անդրադառնալն արդարացված կլինի հակիրճ անդրադարձ կատարել այդ հասկացության՝ փիլիսոփայության, ֆիզիկայի ոլորտներում և այնուհետ իրավունքի տարբեր այլ ճյուղերում գործածությանը և դրա սահմանմանը, որին կհաջորդի սահմանադրական իրավունքում դրա կիրառելիության նպատակահարմարության հարցի քննարկումը: Այս մոտեցման արդարացվածությունն այն է, որ, ըստ էության, պատճառահետևանքային կապի մասին խոսել են դեռևս հին հունական փիլիսոփայությունում, այնուհետ՝ դասական ֆիզիկայում, ինչպես նաև՝ իրավագիտությունում: Ուստի որոշակի պատմական-խրոնոլոգիական մոտեցումը թեմայի ըմբռնման համար իմաստալից կլինի:

Պատճառահետևանքային կապը փիլիսոփայությունում

Արիստոտելը պնդում է, որ ինչ-որ բան հասկանալ մենք ի վիճակի ենք միայն այն դեպքում, երբ հասկանում ենք դրա «պատճառը». «մենք չենք պնդում, որ ինչ-որ բան գիտենք, քանի դեռ չենք հասկացել դրա ինչուն»:[3] Նա տարբերակում է «պատճառի» չորս տեսակ.[4] նյութական պատճառ (causa materialis), ձևական պատճառ (causa formalis), ազդեցության պատճառ (causa efficiens) և նպատակի պատճառ (causa finalis): «Նյութական պատճառ» ասելով Արիստոտելը հասկանում է արդեն իսկ գոյություն ունեցող նյութը՝ որպես նոր ստեղծվող իրի *պատճառ* (օրինակ՝ կավը՝ պատկերասյունի համար, արծաթը՝ գավաթի համար):[5] «Ձևական պատճառի» ներքո Արիստոտելը հասկանում է իրի էությունը, որը պատասխանում է «ինչը» հարցին:[6] Այլ կերպ ասած՝ ի՞նչն է իրը դարձնում այնպիսին, ինչպիսին որ այն կա, և ինչո՞վ է այն տարբերվում այլ իրերից: Որպես օրինակ՝ Արիստոտելը նշում է 2 և 3 թվերի հարաբերակցությունն օկտավաների համար:[7] Կարելի է ավելի պարզ օրինակ բերել բրոնզե մարդու կերպարանքով արձանի վերաբերյալ: Դրա նյութական պատճառը բրոնզն է, իսկ ձևի պատճառը՝ մարդը, որի կերպարանքով վարպետն ստեղծել է արձանը: Արձանն իր այդ «ձևական պատճառով» է տարբերվում այլ բրոնզե բեկորներից:

Ազդեցության պատճառն այն է, ինչն առաջինն է ազդում իրի վրա, օրինակ՝ արձանի համար «ազդեցության պատճառ» է քանդակագործը, ով քանդակում է արձանը: Նպատակի պատճառը հե՛նց այն նպատակի մեջ է, որի համար տեղի է ունենում ինչ-որ բան: Օրինակ՝ երբ անձը զբոսնում է, մենք հարցնում ենք՝ ինչի՞ համար, որին նա կարող է պատասխանել՝ առողջության: Այսինքն՝ զբոսանքը (նպատակային) պատճառ է առողջության համար:[8]

Նախասոկրատեսյան փիլիսոփաներից Հերակլիտի հետևյալ պնդումը Հանս Քելզենին հիմք է տվել ենթադրելու, որ այն պատճառահետևանքային կապի օրենքի առաջին ձևակերպումներից մեկն է [13, էջ 328].

«Եթե արևը չպահպանի իր համար կանխորոշված ուղղությունը, ապա Էրինիաները՝ արդարության օգնականների օգնականները, նրան ճիշտ ուղի կվերադարձնեն»:[9]

Ըստ Քելզենի՝ պատճառահետևանքային կապի վերաբերյալ այս նախադասությունը, սակայն, նկարագրում է ոչ թե բնագիտական իմաստով անհրաժեշտություն, այլ իրավական իմաստով այն, որ եթե արևը դուրս գա սահմանված ուղեծրից (խախտի

---

[3] Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel. Գիրքն ամբողջությամբ կարելի է կարդալ՝ բացելով հետևյալ հղումը http://www.zeno.org/Philosophie/M/Aristoteles/Physik/2.+Buch/3.+Capitel (վերջին մուտք՝ 29.05.2024թ.)

[4] Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel.

[5] Օրինակները՝ ըստ Արիստոտելի, տե՛ս Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel.

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Օրինակը՝ ըստ Արիստոտելի, տե՛ս Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel.

[9] Այս մեջբերումը վերցվել է Հանս Քելզենի Kausalität und Zurechnung, in: Archiv für Rechts- und Sozialphilosophie, հոդվածից: Այլ աղբյուրում, մասնավորապես՝ *Gammelli Marciano Laura-ի* „Die Vorsokratiker. Band 1: Thales, Anaximander, Anaximenes, Pythagoras und die pythagoreer, Xenophanes, Heraklit“ աշխատանքում, Հերակլիտի համապատասխան պնդումն ունի հետևյալ շարադրանքը. «Արևն իր չափերը չի անցնի, այլապես Էրինիաները՝ արդարության [հեղ. իրավունքի] օգնականները, կգտնեն նրան», տե՛ս նույն աշխատանքում, էջ 315:

օրենքը), ապա Էրինիաները նրան կբռնեն ու կարգի կբերեն [13, էջ 241-242]:

Էմանուել Կանտը պնդում է, որ մեր գիտակցությունը կարողանում է զուտ ժամանակի մեջ որոշել մի իրադարձության նախորդելը կամ հաջորդելը մեկ այլ իրադարձությանը [12, էջ 241-242]: Եթե դիտարկենք չոր և թաց փողոցները, ապա առանձին-առանձին վերցրած՝ մենք չենք կարող միանշանակ պնդել, թե որ վիճակն է նախորդել կամ հաջորդել մյուսին: Որպեսզի մենք կարողանանք հասկանալ այս երկու վիճակների հաջորդականությունը ժամանակի մեջ, մեզ անհրաժեշտ է պարզել, թե որ իրավիճակն է անհրաժեշտաբար նախորդել մյուսին:[10]

Այսպիսով՝ պատճառահետևանքային կապի սկզբունքի միջոցով է միայն հնարավոր հասկանալ այդ երկու իրավիճակների փոխհարաբերակցությունը և, առհասարակ, մի իրավիճակից մյուս իրավիճակի փոփոխությունը:[11]

Դեվիդ Հյումը պատճառահետևանքային կապը սահմանում է որպես *«իր, որին հաջորդում է այլ իր, ընդ որում՝ բոլոր իրերին, որոնք առաջինին նման են, հաջորդում են իրեր, որոնք նման են երկրորդին, կամ եթե առաջինը գոյություն չունենար, երկրորդը երբևէ ի հայտ չէր գա»*[12] *[10, էջ 87]:* Հյումը պնդում է, որ ռացիոնալ կերպով առհասարակ հնարավոր չէ հիմնավորել որևէ պատճառահետևանքային կապի առկայություն, քանի որ պատճառահետևանքային կապի գոյությունը **պայմանավորված է զուտ մեր (կյանքի) փորձով** [10, էջ 116]:

Վերոնշյալը Հյումը հիմնավորում է հետևյալով.

«Մենք ասում ենք, օրինակ, որ լարի այսպիսի տատանումը պատճառ է այս տոնի առաջացման համար: Բայց ի՞նչ նկատի ունենք այս պնդմամբ: Կա՛մ դրանով մենք նկատի ունենք, որ հե՛նց այդ տատանմանը հաջորդում է այդ տոնը, ու որ բոլոր նման տատանումներին հաջորդել են նման տոներ, կա՛մ էլ նկատի ունենք, որ այս տատանմանը հաջորդում է այս տոնը, և որ առաջինի [տատանման] ի հայտ գալու պես մարդու միտքն առաջ է ընկնում ու ուղղակիորեն պատկերացում կազմում երկրորդի [տոնի] մասին [10, էջ 88]»:

Այս օրինակով Հյումը փորձում է ցույց տալ, որ պատճառի և հետևանքի (ազդեցության) վերաբերյալ պատկերացումները հիմնված են զուտ էմպիրիկ փորձի վրա, բայց այն (պատճառահետևանքային կապը), ըստ էության, հնարավոր չէ ռացիոնալ կերպով, զուտ տրամաբանորեն բացատրել: Այն, որ անցյալում տեղի ունեցած մի իրադարձության միշտ հաջորդել է որոշակի այլ իրադարձություն, տրամաբանության կանոնների շրջանակներում դեռ մեզ թույլ չի տալիս ենթադրել, որ ապագայում

---

[10] Նույն աշխատանքում (B 234):

[11] Մոտավոր այս իմաստով է Կանտի՝ պատճառահետևանքային կապի սկզբունքն ամփոփում է Otfired Höffe-ն, Immanuel Kant, 8. Auflage 2014, էջ 134:

[12] Տե՛ս David Hume, Eine Untersuchung über den menschlichen Verstand, Felix Meiner Verlag Hamburg, 2., korrigierte Auflage, էջ 87; Համեմատել նաև անգլերեն տեքստը՝ Tom L. Beauchamp, David Fate Norton, M. A. Stewart (General Editors): David Hume, A Treatise of Human Nature, Volume 1,The Clarendon Edition of the Works of David Hume, Oxford 2006, էջ 114 (կողակետ 31). *"An object precedent and contiguous to another, and where all the objects resembling the former are placed in like relations of precedency and contiguity to those objects, that resemble the latter."*

ևս նման իրադարձությանն *անհրաժեշտաբար* կհաջորդի այդպիսի իրադարձություն:

Ըստ էության, Հյումը առհասարակ կասկածի տակ է դնում պատճառահետևանքային կապի առկայության ռացիոնալ հիմնավորումը, որը, կարելի է ասել, ժամանակակից քվանտային ֆիզիկայում հաստատվել է:

Պատճառահետևանքային կապը քվանտային ֆիզիկայում

Ինչպես տեսանք վերոգրյալում, պատճառահետևանքային կապի սկզբունքը ենթադրում է, որ մի վիճակին անհրաժեշտաբար նախորդել է մեկ այլ վիճակ, որից առաջացել է երկրորդը: Այլ կերպ ասած՝ եթե առկա է x վիճակը, դրան անհրաժեշտաբար հաջորդելու է y վիճակը: Այդ «անհրաժեշտությունը» հե՛նց պատճառահետևանքային կապ կոչվածն է: Այս կոնցեպտը համահունչ է դասական ֆիզիկայի մոտեցումներին:

Վերը նկարագրված իրավիճակը կտրուկ փոխվում է քվանտային ֆիզիկայում, որով առավելապես բացատրվում են (ի տարբերություն դասական ֆիզիկայի, որը գործ ունի մակրո[13] աշխարհի հետ) միկրո[14] աշխարհի երևույթները: Ժամանակակից քվանտային ֆիզիկան բացահայտել է, որ որևէ ֆիզիկական մեծություն չափելիս մենք չենք կարող կանխատեսել ստացվող արդյունքը, այլ առավելագույնը մենք կարող ենք խոսել, թե ինչ *հավանականությամբ* ինչ արժեքներ են ստացվում [7, էջ 15-16]: Նշվածի կոնտեքստում հետաքրքրաշարժ է, որ միկրոմասնիկի *վիճակը* հստակ ֆիզիկական արժեքներ ունեցող վիճակների վերադրումն է («superposition») [18, էջ 300]: Այսինքն՝ քվանտային ֆիզիկայում մասնիկը կարող է **միաժամանակ** գտնվել տարբեր վիճակներում: Նման պայմաններում անմիջական պատճառահետևանքային կապի առկայության մասին խոսելը ճիշտ չէ: Ֆիզիկական վիճակի իմացությունը չի կանխորոշում ֆիզիկական մեծության չափման արդյունքը: Ստացվում է, որ քվանտային ֆիզիկայի աշխարհում մեզ դասական ֆիզիկայից հայտնի պատճառահետևանքային կապի սկզբունքը չի գործում: Ըստ այդմ՝ քվանտային ֆիզիկայում խոսքն այլևս ոչ թե դասական իմաստով պատճառահետևանքային կապերի մասին է, այլ՝ հավանականությունների [17, էջ 290]:

20-րդ դարի սկզբների այս բացահայտումը, կարելի է ասել, գլխիվայր շրջել է նաև փիլիսոփայության շրջանակներում քննարկվող «պատճառահետևանքային կապի» սկզբունքը, քանի որ եթե մինչ այդ բոլորի պատկերացումներում հստակ էր, որ եթե կա հետևանք, կա նաև պատճառը և՝ հակառակը, ապա այժմ այլևս հնարավոր չէ նման պնդում անել: Սա ամենևին չի նշանակում, որ մակրո աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները հնարավոր չէ բացատրել պատճառահետևանքային կապի կոնցեպտով, բայց մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ այն այլևս բացարձակ չէ, և առնվազն միկրո մակարդակում, որը մակրո մակարդակի մաս է կազմում, այս սկզբունքն այլևս չի գործում:

---

[13] «Մակրո» ասելիս նկատի ունենք խոշոր առարկաների՝ մեծությունների հետ կապված (համեմատի՝ Է. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», էջ 956, Երևան 1976):

[14] «Միկրո» ասելիս, ի հակադրություն «մակրո» եզրույթի, նկատի ունենք շատ փոքր մեծություններ, օրինակ՝ էլեկտրոններ:

«Պատճառահետևանքային կապի» սահմանումն իրավունքի տարբեր ճյուղերում

ա. Քրեական իրավունք

Իրավագիտության մեջ ավելի տարածված է պատճառահետևանքային կապի մասին խոսել քրեական և քաղաքացիական իրավունքում: Քրեական իրավունքի շրջանակներում, որպես կանոն, քննարկվում է ակտիվ գործողության ու վրա հասած հետևանքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը: Քրեական իրավունքի շրջանակներում քննարկվում են պատճառահետևանքային կապի՝ համապատասխանության տեսությունը («condition-sine-qua-non» = պայման, առանց որի), ադեկվատության տեսությունը,[15] կարևորության տեսությունը[16] [20, էջ 475-476, կողակետ 43] և օրինաչափ պայմանի ուսմունքը[17] [6, էջ 77, կողակետ 226, 221]:

Համապատասխանության տեսությունը սահմանում է, որ հանցակազմի համար նշանակություն ունեցող ցանկացած գործողություն վրա հասած արդյունքի համար պատճառական է, եթե առանց այդ գործողության կատարման (պայման) արդյունքը վրա չէր հասնի [5, էջ 19 (մասնավորապես՝ էջ 20)]: Ըստ այդմ՝ եթե Ա.-ն կրակում է Բ.-ի վրա, և վերջինս մահանում է կրակոցից, ապա միանշանակ կարելի է պնդել, որի Ա.-ի կրակոցի (պայման) և Բ.-ի մահվան (արդյունք) միջև առկա է պատճառահետևանքային կապ: Վերացական ասած՝ համապատասխանության տեսության շրջանակներում արդյունքի համար պատճառական է ցանկացած պայման, առանց որի հնարավոր չէր լինի, որ այդ կոնկրետ արդյունքը վրա հասներ [6, էջ 78, կողակետ 222]:

Հաշվի առնելով, որ վերոգրյալ բոլոր տեսությունները քննարկվում են քրեական իրավունքում, այստեղ նպատակահարմար չենք գտնում անդրադարձ կատարել բոլոր տեսություններին առանձին ու մանրամասն կերպով: Սույն վերլուծության շրջանակներում առանցքային է, սակայն, այն փաստի արձանագրումը, որ վերոգրյալ բոլոր տեսություններն առաջադրվում են, որպեսզի հնարավոր լինի պարզել՝ *արդյո՞ք **իրական աշխարհում** կատարված գործողությունը/ցուցաբերված անգործությունը գտնվում է պատճառահետևանքային կապի մեջ վրա հասած արդյունքի հետ, թե՝ ոչ:* Այսինքն՝ պատճառահետևանքային կապ հասկացությունը քրեական իրավունքում կիրառվում է, որպեսզի բացահայտվի մակրո աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների միջև փոխադարձ կապը:

---

[15] Այս տեսությունը ենթադրում է, որ ոչ բոլոր գործողություններն են պատճառական արդյունքի համար, այլ միայն նրանք, որոնց պարագայում որոշակի իրատեսական հավանականություն կա, որ արդյունքը վրա կհասնի. Տե՛ս *Rudolf Rengier*, Strafrecht Allgemeiner Teil, 14. Auflage 2022, էջ 76-77, կողակետ 9 (օրինակ՝ եթե Ա.-ն Բ.-ին համոզում է զբոսնել անտառում՝ հույսով, որ կայծակը կհարվածի և կսպանի Բ.-ին, ապա նույնիսկ հենց այդ սցենարը տեղի ունենալու դեպքում ադեկվատության տեսությունը կբացառի պատճառահետևանքային կապը, քանի որ իրատեսական հավանականություն առկա չէ, որ անձը անտառում զբոսնելիս կշանթահարվի):

[16] Այս տեսությունը, որն ըստ էության լուծում է արարքի վերագրելի լինելու խնդիրը, ի լրում ադեկվատության տեսության, պահանջում է, որպեսզի ամեն հանցակազմ լույսի ներքո դիտարկվի կոնկրետ գործողությունը, և միայն դրա նպատակային մեկնաբանության միջոցով պարզվի, որքանով էր կարևոր գործողությունը հանցակազմի իրականացման համար:

[17] Այս տեսությունը ելնում է այն գաղափարից, որ գործողության և արդյունքի միջև պետք է բնագիտական կանոններին համահունչ որոշակի օրինաչափ կապ առկա լինի: Պայմանը և հետևանքը պետք է, ըստ այս տեսության, անհրաժեշտաբար միմյանց կապակցված լինեն:

բ. Քաղաքացիական իրավունք

Քաղաքացիական իրավունքում ևս պարբերաբար կիրառվում է պատճառահետևանքային կապի ինստիտուտը՝ հատկապես դելիտկային իրավունքում, որտեղ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք գործողության/անգործության (պայման) և հասցված վնասի (արդյունքի) միջև առկա է պատճառահետևանքային կապ, թե՝ ոչ: Այստեղ ևս կիրառվում են տարբեր տեսություններ, որոնց միջոցով փորձ է արվում սահմանել պատճառահետևանքային կապ հասկացությունը, բայց միաժամանակ նաև՝ սահմանափակել այն: Սույն վերլուծության շրջանակներում կրկին կարևոր են ոչ թե առանձին տեսությունները և դրանց դրական կամ բացասական կողմերը, այլ այն, որ քաղաքացիական իրավունքում ևս խոսքը *մակրո աշխարհում* տեղի ունեցող փաստական հանգամանքների մասին է, որոնց հարաբերակցությունը պետք է պարզել:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական իրավունքում պատճառահետևանքային կապի մասին խոսելիս մենք պատկերացնում ենք իրական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների միջև փոխադարձ կապը:

Վերոգրյալի հիման վրա՝ կարելի է արդեն անդրադարձ կատարել «նորմատիվ մակարդակում» պատճառահետևանքային կապին, որն ինքնին խնդրահարույց է և, ինչպես ցույց կտրվի ստորև, ավելորդ մտախաղ է ու հանգեցնում է բացասական հետևանքների՝ հատկապես Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի թույլատրելիությունն ստուգելիս:

Պատճառահետևանքային կապը նորմատիվ մակարդակում

Ինչպես ցույց տրվեց վերոգրյալում, թե՛ փիլիսոփայությունում, թե՛ ֆիզիկայում և թե՛ իրավունքի որոշ ճյուղերում երբ խոսվում է պատճառահետևանքային կապերի մասին, նկատի է առնվում մակրո աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների միջև փոխադարձ կապը: Նշվածի լույսի ներքո հարց է առաջանում՝ որքանո՞վ է մակրո աշխարհի ֆենոմենների միջև կապը բնութագրող այս կոնցեպցիան կիրառելի նորմատիվ մակարդակում, օրինակ՝ օրենքի և Սահմանադրության հարաբերակցության շրջանակներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը դեռևս 2009 թվականի նոյեմբերի 24-ի իր ՍԴՈ-839 որոշմամբ, հղում կատարելով այն ժամանակ գործող «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասին, որպես անհատական դիմումով գործի թույլատրելիության չափանիշ սահմանել է, որ « ... դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ **անմիջական պատճառահետևանքային կապ** է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև»[18] (ընդգծումը՝ հեղինակային):

---

[18] Հատկանշական է, որ այդ գործի շրջանակներում, ըստ էության, Սահմանադրական դատարանը կարճել է գործի վարույթը, քանի որ գտել է, որ դիմողը վիճարկում է ոչ թե օրենքի սահմանադրականությունը, այլ՝ վարչական ակտի: Միաժամանակ, սակայն, Սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել, որ թե՛ վարչական մարմինը, թե՛ դատական ատյանները սխալ են գործել, երբ ելել են նրանից, որ վստահության իրավունքը ծագել է վարչական ակտից, այլ ոչ թե դատական ակտից:

Վերոնշյալ որոշումն աչքի է ընկնում նրանով, որ Սահմանադրական դատարանն անհատական դիմումը վարույթ է ընդունել և անցել դատաքննության, բայց վերջինիս ժամանակ բացահայտել է, որ բավարար չափով իրավաբանորեն չի հիմնավորվել անմիջական պատճառահետևանքային կապը վիճարկվող օրինադրույթի և հիմնական իրավունքի խախտման փաստի միջև:

Դատավարական իրավունքի տեսանկյունից նման գործելաոճը համոզիչ չէ, քանի որ ստացվում է, որ Սահմանադրական դատարանն ընդունում է, որ իր դատական կազմը սխալ է գործել, երբ անհատական դիմումով գործն ընդունել է վարույթ: Թեև Սահմանադրական դատարանն իրավասու է դատաքննության ցանկացած փուլում կարճելու գործը, **եթե ի հայտ են եկել *նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ***, բայց տվյալ դեպքում նոր կամ նոր երևան եկած հանգամանքների ի հայտ գալու մասին խոսելը բացառվում է: Ասվածը փորձենք ավելի մանրամասն հիմնավորել ստորև.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝

գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝

1) եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին.

2) եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան.

3) եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում.

4) եթե դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն.

5) եթե վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողությունը դադարել է, և այն չի կիրառվել կամ ենթակա չէ կիրառման.

6) սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:»

Վերոնշյալ հոդվածի 1-ից 5-րդ կետերով սահմանված դեպքերը Սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթը կարճելու հարցի տեսանկյունից դիտարկելիս կարող ենք արձանագրել, որ դժվար է պատկերացնել մի դեպք, երբ Սահմանադրական դատարանն անհատական դիմումով գործը վարույթ ընդունելիս ելնի, օրինակ, նրանից, որ դիմողն իրավասու է դիմել Սահմանադրական դատարան (2-րդ կետ), այնուհետ գործի դատաքննության ընթացքում «բացահայտի», որ դիմողն իրականում իրավասու չի եղել դիմելու Սահմանադրական դատարան: Նման դեպքում պետք է ելնել այն կանխավարկածից, որ կա՛մ Սահմանադրական դատարանի 3 դատավորից բաղկացած

կազմը, որը քննում է անհատական դիմումի թույլատրելիության չափանիշների առկա լինել/չլինելը, թույլ է տվել սխալ և սխալ է գնահատել դիմողի՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունենալու հարցը, կա՛մ գործի դատաքննության ընթացքում Սահմանադրական դատարանը (արդեն ամբողջ կազմով) բացահայտել է *նոր կամ նոր երևան եկած հանգամանք*[19] (ինչը դատավորների կազմին հայտնի չէր դիմումը վարույթ ընդունելիս), որի հիման վրա նա իրավասու կլինի կարճելու գործի վարույթը: Ուստի կարծում ենք, որ Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը («*բացահայտել է*») և 29-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանելիս պետք է առաջին հերթին նկատի ունենալ այն դեպքերը, երբ գործի դատաքննության ընթացքում է միայն ի հայտ գալիս այն (նոր) հանգամանքը, որի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը կկարճի գործի վարույթը:

Իսկ ինչ վերաբերում է գործի դատաքննության փուլում իրավաբանորեն բավարար չափով անմիջական պատճառահետևանքային կապը հիմնավորած չլինելու պատճառով գործի վարույթը կարճելուն (Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մաս, ի համակցում 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին և 69-րդ հոդվածի 5-րդ մասին), ապա այն առավել անհասկանալի մոտեցում է, քանի որ պատճառահետևանքային կապ կա՛մ ի սկզբանե առկա է, կա՛մ՝ ոչ: Այն չի կարող անհատական դիմումը վարույթ ընդունելիս առկա լինել, բայց գործի դատաքննության ժամանակ՝ ոչ: Ինչ վերաբերում է «բավարար չափով իրավաբանորեն» հիմնավորելուն, ապա կրկին անհասկանալի է, թե ինչ չափանիշներով պետք է այդ հարցը գնահատվի: Կարծում ենք, որ եթե Սահմանադրական դատարանի դատավորների կազմը գտել է, որ դիմումում բավարար չափով հիմնավորվել է անմիջական պատճառահետևանքային կապը, ապա հետագայում դրան չի կարող դատարանի մնացած անդամների կողմից տրվի այլ գնահատական, ու գործը կարճվի (հատկապես հաշվի առնելով անձի՝ իրավական պետությունից բխող վստահության իրավունքը):

Վերոգրյալ խնդիրը, սակայն, էությամբ զուտ դատավարական բնույթ ունի: Էապես կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե ի վերջո ինչ է Սահմանադրական դատարանը հասկանում սույն կոնտեքստում «անմիջական պատճառահետևանքային կապ» ասելիս: Պատասխանը, ցավոք, Սահմանադրական դատարանի որևէ որոշման մեջ ապարդյուն է փնտրելը[20]: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ արդարացված կլինի

---

[19] Օրինակ՝ Սահմանադրական դատարան դիմելիս անձը եղել է օտարերկրյա քաղաքացի, բայց դատարան է ներկայացրել ՀՀ քաղաքացու կեղծ անձնագիր, որը դատարանի կազմին հայտնի չի եղել, բայց դատաքննության ընթացքում բացահայտվել է:

[20] Սահմանադրական դատարանն իր 12 հուլիսի 2022 թվականի ՍԴԱՈ-126 որոշման մեջ փորձել է զարգացնել «պատճառահետևանքային կապ» հասկացությունը, որի շրջանակներում այն նկարագրել է հետևյալ կերպ. «Այլ կերպ ասած՝ **վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման**:» (ընդգծումն ըստ Սահմանադրական դատարանի): Նշվածը, սակայն, ոչ թե *սահմանում է* «անմիջական» և «պատճառահետևանքային կապ» հասկացությունների բովանդակությունը, այլ զուտ փոխարինում է այն հոմանիշով («անմիջական» և «ուղղակի»), այդպիսով կրկին բաց թողնելով այն հարցը, թե ի վերջո ինչ պետք է դրա բովանդակության ներքո հասկանալ (տե ս նաև սույն հոդվածի 21-րդ էջը):

ցույց տալ, թե գիտության մեջ ինչ մոտեցումներ կան այսպես կոչված «նորմատիվ մակարդակում պատճառահետևանքային կապերի» վերաբերյալ, որից հետո վերջինիս լույսի ներքո կդիտարկվի Սահմանադրական դատարանի համապատասխան մոտեցումն ու կքննարկվի դրա պիտանիությունը:

Պատճառահետևանքային կապն ըստ Հանս Քելզենի

Ավստրիացի նշանավոր իրավաբան Հանս Քելզենը դեռևս 1960 թվականին իր «Պատճառականություն և վերագրելիություն» [13, էջ 321-333] հոդվածում քննարկել է սոցիալական (հումանիտար) գիտություններում պատճառական կապի գոյության հիմնախնդիրը: Քելզենը ցույց է տալիս, որ նախնադարում պրիմիտիվ մարդիկ աշխարհը չեն ընկալել ժամանակակից բնագիտության կանոններով, այն է՝ պատճառի և հետևանքի հարաբերակցությամբ, այլ ընկալել են ըստ երևույթների վերագրելիության [13, էջ 325]: Ըստ Քելզենի՝

«Երբ մի իրադարձություն է տեղի ունենում, որը նախնադարյան մարդու գիտակցությունը փորձում է բացատրել (և դա միայն այնպիսի իրադարձություն է, որն անմիջականորեն շոշափում է իր շահերը), ապա վերջինս չի հարցնում՝ ո՞րն է դրա պատճառը, այլ՝ ո՞վ է դրա համար պատասխանատու: Դա բնության ոչ թե պատճառահետևանքային, այլ նորմատիվ մեկնություն է...» [13, էջ 326]:

«Ոգեպաշտության [Animismus] *էությունը անձնային է. ասվածը, սակայն, բնության սոցիալ-նորմատիվային մեկնություն է, այսինքն՝ մեկնության մի ձև, որը տեղի է ունենում ոչ թե պատճառահետևանքային կապի օրենքով, այլ՝ վերագրելիության սկզբունքի միջոցով» [13, էջ 327]:*

Քելզենը վերագրելիության օրենքը սահմանում է որպես որոշակի վարքագծին, այն է՝ անիրավությանը, որոշակի հետևանքի կապակցմանը [13, էջ 325]: Ըստ նրա՝ հետևանքը վերագրվում է ոչ իրավաչափ վարքագծին, բայց ոչ իրավաչափ վարքագիծը, բնագիտության մեջ օգտագործվող տերմինի իմաստով, *պատճառ չէ* հետևանքի համար: Նա ավելի քան հավանական է համարում, որ պատճառահետևանքային կապի օրենքն առաջացել է հատուցման նորմից [13, էջ 326, 328]: Ըստ նրա՝ պատճառահետևանքային կապի սկզբունքն առաջացել է վերագրելիության սկզբունքի (վերջինիս հիմքում դրված է հատուցման օրենքը) ձևափոխման արդյունքում: «Պատճառ» բառի հունարենը՝ «α τία», նախկինում ունեցել է «մեղավորություն» իմաստը: «Պատճառը մեղավոր է հետևանքի առաջացման համար, պատասխանատու է հետևանքի համար, հետևանքը պատճառին այնպես է վերագրվում, ինչպես պատիժը՝ անիրավությանը»:

Որոշիչ քայլը դեպի պատճառահետևանքային կապի ժամանակակից հասկացությունն այն է, որ մարդիկ սկսել են հասկանալ, որ որոշ իրադարձություններ **անհրաժեշտաբար են տեղի ունենում**՝ առանց որևէ անձի կամ վերին ուժի միջամտության:

Ըստ Քելզենի՝ պատճառահետևանքային կապի և վերագրելիության սկզբունքը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. պատճառահետևանքային սկզբունքը ենթադրում

է, որ եթե Ա., ապա անհրաժեշտաբար լինելու է Բ., մինչդեռ վերագրելիության սկզբունքն ասում է, որ եթե Ա., ապա պետք է լինի Բ. (բայց այնպես չէ, որ այն անհրաժեշտաբար լինելու է):[21]

Քելզենն ամփոփում է՝ եզրակացնելով, որ «վերագրելիությունը նորմատիվ հասարակական գիտությունների ոլորտում իրականացնում է այն ֆունկցիան, ինչ պատճառահետևանքային կապը՝ բնական գիտություններում» [13, էջ 326]:

Վերոգրյալի հիման վրա կարելի է ասել, որ իրավունքի տեսությունում (համենայն դեպս՝ պոզիտիվ իրավունքում, ի տարբերություն բնական, օրինակ՝ աստվածային իրավունքի) նորմատիվային մակարդակում պատճառահետևանքային կապի մասին խոսելը ճիշտ չէ: Խոսքը տարբեր աշխարհների մասին է, ու պետք չէ փորձել բնագիտական տերմինաբանությունը կիրառել նորմատիվ-հասարակական գիտություններում:

Նորմատիվային պատճառական կապն ըստ Ստանիսլավ Էրլիխի.

Ստանիսլավ Էրլիխը, ով, որքան որ թերևս տեսանելի է, այն քիչ հեղինակներից է, որ գրել է նորմատիվային պատճառահետևանքային կապերի մասին [19, էջեր 32-52], որոշ առումներով համամիտ չէ Քելզենի մոտեցմանը[22] [4, էջ 44], սակայն, մյուս կողմից, ընդունում է, որ բնագիտական իմաստով «պատճառահետևանքային կապ» կատեգորիան չի կարելի առանց որևէ հավելումների կիրառել հասարակական ֆենոմենների վրա [4, էջ 50]:

Ստանիսլավ Էրլիխը, ցավոք, թեև մի կողմից անձամբ պնդում է, որ անհրաժեշտ է հստակ սահմանել, թե ինչ պետք է հասկանալ «նորմատիվային պատճառահետևանքային կապ» հասկացության ներքո [4, էջ 45], մյուս կողմից, սակայն, հստակ սահմանում չի տալիս, այլ քննարկում է պատճառահետևանքային կապերի տարբեր պրոցեսներ, որոնք են իրավունքի ստեղծման բնագավառում պատճառահետևանքային կապը (causation in law) և պատճառահետևանքային կապը դատավորի կողմից նորմատիվ-իրավական պնդումների շրջանակներում: Դրանց է ավելանում նաև պատճառահետևանքային կապը դատավորական նախադեպային իրավունքում, որտեղ մի կողմից դատավորը կիրառում է իրավունքը, մյուս կողմից՝ ստեղծում: Նկարագրված բոլոր դեպքում, իհարկե, կարելի է քննարկել այս կամ այն **գործողության** պատճառահետևանքային կապն արդյունքի նկատմամբ (օրինակ՝ դատավորի վճիռը և մեղադրյալի ազատազրկումը): Դրանով,

---

[21] Օրինակ՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով: Քրեական օրենսգրքի սույն հոդվածից պատճառահետևանքային կապի իմաստով անհրաժեշտաբար չի հետևում, որ եթե Ա.-ն սպանեց Բ.-ին, ապա Ա.-ն անհրաժեշտաբար պատժվում է (պատկերացնենք Ա.-ն դրանից հետո հաջողությամբ, առանց որևէ հետք թողնելու փախչում է երկրից և նրան այլևս չեն գտնում), այն զուտ այն, որ Ա.-ն **պետք է պատժվի**:

[22] Տե՛ս *Stanislaw Ehrlich*, նույն տեղում, էջ 44, որտեղ նրա խնդիրը Քելզենի հետ այն է, որ ըստ Էրլիխի՝ առանց պատճառահետևանքային սկզբունքի դժվար է պատկերացնել թե՛ իրավունքի ձևավորումը (օրինակ՝ օրենքի ընդունումը), թե՛ դրա կիրառումը (օրինակ՝ դատական ակտի կայացումը): Նշվածի շրջանակներում թե որքանով կարելի է պատգամավորի քվեարկությունը դիտարկել պատճառահետևանքային՝ օրենքի ընդունման համար, կարելի է այստեղ բաց թողնել:

սակայն, մենք կգանք կրկին փաստական հանգամանքների դաշտ, որտեղ կրկին խոսքը բնագիտական իմաստով պատճառահետևանքային կապի մասին է [4, էջ 45]: Այդպիսով՝ բաց է մնում այն հարցը, թե, առհասարակ, արդյո՞ք երկու իրավական նորմերի միջև հնարավոր է հիմնավորել (անմիջական) պատճառահետևանքային կապ: Այս հարցը ստորև կքննարկվի հե՛նց Սահմանադրական դատարանի կողմից սահմանված անհատական դիմումների թույլատրելիության համար չափանիշ հանդիսացող «վիճարկվող օրինադրույթի և հիմնական իրավունքի խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի» շրջանակներում:

Օրենքի և Սահմանադրության միջև անմիջական պատճառահետևանքային կապ.

Ինչպես ցույց տրվեց վերոգրյալում, պատճառահետևանքային կապ հասկացությունն ինքնին բավականին խնդրահարույց է, երբ փորձ է արվում դրանով հիմնավորել նորմատիվային պրոցեսներ: Սահմանադրական դատարանը ևս առատորեն օգտվում է հիմնավորման այս մեխանիզմից՝ առանց սահմանելու, թե ինչ պետք է հասկանալ «անմիջական պատճառահետևանքային կապ» հասկացության ներքո:

Սահմանադրական դատարանը, որպես կանոն, սահմանափակվում է հետևյալ, կարելի է ասել, շաբլոնային տեքստով.

*«... անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և **հիմնավորի** վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության **անմիջական պատճառահետևանքային կապը**: Այլ կերպ ասած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է **ուղղակիորեն** հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման:*

*Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ **առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթների և ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ բավարար հիմնավորումներ**:»*[23] (մգացումներն ըստ հեղինակի):

[23] Տե՛ս 12 հուլիսի 2022 թվականի ՍԴԱՈ-126

Սահմանադրական դատարանի վերոնշյալ պրակտիկան սահմանադրական իրավունքի և սահմանադրական դատավարական իրավունքի տեսանկյունից խիստ խնդրահարույց է ու այդպիսով՝ համոզիչ չէ: Նախ և առաջ պարզ չէ, թե ինչ է նշանակում «հիմնավորի ... անմիջական պատճառահետևանքային կապը»: Երկու նորմերի միջև, որոնք գտնվում են նորմերի աստիճանակարգությունում տարբեր հարթությունների վրա, չեն կարող գոյություն ունենալ պատճառահետևանքային կապեր:[24] Առավելագույնը, որի մասին կարելի է այս կոնտեքստում խոսել, դա երկու նորմերի միջև բովանդակային հակասությունն է: [25]

Բացի վերոնշյալից՝ անհասկանալի է նաև, թե ինչ է նշանակում «անմիջական» եզրույթն այս կոնտեքստում: Գոյություն ունի կարծիք՝ ըստ որի «անմիջական» եզրույթն ընկալվում է այն իմաստով, որ օրենքն ինքնին պետք է հանգեցնի հիմնական իրավունքի խախտման՝ առանց որևէ այլ իրավական ակտով կոնկրետացվելու, որի արդյունքում կստացվի, որ որևէ անհատական դիմում թույլատրելի չի լինի, քանի որ օրենքը պետք է ինչ-որ ձև կիրառված լինի անձի նկատմամբ, որպեսզի վերջինս էլ սպառի ներպետական դատական ատյանները և դիմի Սահմանադրական դատարան [9, էջ 150-151]:

Հատկապես հաշվի առնելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման փաստական հանգամանքները՝ չենք կարծում, որ Սահմանադրական դատարանն այդ իմաստով նկատի ունի «անմիջական» եզրույթը, ինչպես այն ընկալում և քննադատվում է վերը ներկայացված կարծիքում: Միևնույն ժամանակ, այնուամենայնիվ, բաց է մնում այն հարցը, թե ինչպես պետք է հասկանալ «անմիջական» եզրույթը: Հաշվի առնելով ՍԴՈ-839 որոշումը՝ կարելի է ենթադրել, որ Սահմանադրական դատարանի խնդիրն այն ժամանակ եղել է արձանագրել, որ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննության առարկա կարող է լինել բացառապես օրենքը, բայց ոչ անհատական բնույթի իրավական ակտը (ինչպիսին են տվյալ գործում խնդրահարույց վարչական ու դատական ակտերը): Այսինքն՝ ենթադրաբար, Սահմանադրական դատարանը զուտ նկատի է ունեցել, որ օրենքը կոնկրետացնող անհատական իրավական ակտերը չեն կարող լինել Սահմանադրական դատարանում քննության առարկա: Այդ դեպքում, սակայն, «անմիջական պատճառահետևանքային կապի» մտավարժանքն ավելորդ է: Կարելի է զուտ արձանագրել, որ դիմումում ոչ թե

---

[24] Որպես միակ բացառություն՝ թերևս կարելի է դիտարկել այն դեպքը, երբ մի նորմը հրահանգում է մեկ այլ նորմի իրավաբանական ուժը կորցնելը: Այդ դեպքում կարելի է խոսել հրահանգող նորմի և իրավաբանական ուժը կորցնող նորմի միջև անմիջական պատճառահետևանքային կապի մասին, բայց, այնուամենայնիվ, այդ մոտեցման «ավելացած արժեքը» տեսանելի չէ:

[25] Օրինակ՝ x օրենքի 1-ին հոդվածում ամրագրվում է, որ «Հանրային իշխանության գործողությունները քննադատող բոլոր հավաքներն արգելվում են»: Ակնհայտ է, որ նման օրենքը սահմանափակում է անձանց հավաքների ազատությունը և այդպիսով միջամտում դրանով պաշտպանվող բարիքին: Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Այս երկու նորմերը, (արգելվում է հավաք անցկացնել vs. թույլատրվում է հավաք անցկացնել) լեզվական ու տրամաբանական կանոնների համաձայն, հակադրվում են միմյանց, որի արդյունքում առաջանում է հակասություն, որն իրավունքում պետք է լուծվի lex superiori կանոնի հիման վրա (ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմը վերացնում է ավելի ցածրը), բայց այդ հակասությունը **չի ստեղծում պատճառահետևանքային կապեր**:

օրենքի սահմանադրականության, այլ անհատական իրավական ակտի հարց է առաջադրվում, ինչը դուրս է Սահմանադրական դատարանի վերահսկողությունից (անհատական դիմումի հիման վրա քննվող գործի շրջանակներում):

Վերոգրյալից զատ, ինչ վերաբերում է «անմիջական պատճառահետևանքային կապը բավարար չափով իրավաբանորեն հիմնավորելուն», ապա էլ ավելի անհասկանալի է նման պնդումը, քանի որ տրամաբանորեն անմիջական պատճառահետևանքային կապ կա՛մ առկա է, կա՛մ առկա չէ: Այն հնարավոր չէ «բավարար չափով իրավաբանորեն հիմնավորել»: Այստեղ ևս, ենթադրաբար, Սահմանադրական դատարանը նկատի ունի, որ անհատական դիմումում պետք է բերվեն բավարար հիմնավորումներ, այն է՝ ներկայացնել, թե ինչ է տեղի ունեցել, ինչ նորմատիվ իրավական ակտ է անձի նկատմամբ կիրառվել, հիմնական իրավունքներով երաշխավորված ինչ բարիքներ[26] են խաթարվել այդ նորմատիվ իրավական ակտով, ներկայացնել հիմնական իրավունքի բովանդակությունը, դրա սահմանափակումը[27]:

Սահմանադրական դատարանի պրակտիկան[28] գնացել է այն ուղղությամբ, որ, անկախ նրանից, թե դիմող կողմն ինչ հիմնավորումներ է ներկայացնում անհատական

---

[26] «Հիմնական իրավունքի սահմանափակում» և «հիմնական իրավունքով երաշխավորված բարիքի սահմանափակում» եզրույթների միջև տարբերությունների վերաբերյալ մանրամասն տե՛ս Պողոսյան Ա. Հիմնական իրավունքները, պաշտպանության ոլորտները և սահմանափակումները // Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Երևան, 2024, էջ 22, ենթագլուխ 1.3.2: Գերմանական գրականությունից տե՛ս Jürgen Schwabe, Probleme der Grundrechtsdogmatik, 1977, էջ 73: Փորձենք հակիրճ ներկայացնել «հիմնական իրավունքի սահմանափակում» եզրույթի սահմանադրա-դոգմատիկ հիմնախնդիրը: Հիմնական իրավունքներ ասելիս հասկանում ենք ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված մի շարք նորմատիվ դրույթներ: Այդ դրույթները պաշտպանում են որոշակի բարիքներ, օրինակ՝ կարծիքի ազատ արտահայտումը կամ բնակարանի անձեռնմխելիությունը: «Բարիք» եզրույթն օգտագործվում է փաստացի երևույթներ նկարագրելու համար: Օրինակ՝ երբ Ա.-ն սոցիալական ցանցում հրապարակում է կարծիք, որով պնդում է, որ «Հայաստանին արտաքին վտանգ է սպառնում», ապա Ա.-ի այդ պնդումը, որպես փաստացի կատարված գործողություն, այն ***բարիքն*** է, որը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով: Նշվածի հաշվառմամբ, եթե դիտարկում ենք «հիմնական իրավունքի սահմանափակում» հասկացությունը, ապա պարզ է դառնում, որ սահմանափակվում է ոչ թե հիմնական իրավունքը՝ որպես **նորմատիվ դրույթ**, այլ դրանով պաշտպանվող բարիքը: Այնուամենայնիվ, լեզվական առումով և Սահմանադրության տեքստի հաշվառմամբ ավելի պրակտիկ է խոսել «հիմնական իրավունքի սահմանափակման» մասին, բայց *սահմանադրական իրավունքի դոգմատիկայի տեսանկյունից* ընկալել այն որպես «հիմնական իրավունքով երաշխավորված բարիքի սահմանափակում»:

[27] Կարծում ենք, որ սահմանափակման արդարացված **չլինելու** հիմնավորումներ անձը պարտավոր չէ բերել: Սահմանադրական դատարանը, երբ եզրահանգում է, որ հիմնական իրավունք է սահմանափակվել և գործն ընդունում է քննության, ապա նա ex officio պարտավոր է պարզել, թե արդյոք սահմանափակումն արդարացված է, թե՝ ոչ: Անձի վրա չի կարող դրվել բեռ՝ ապացուցելու, որ իր հիմնական իրավունքի նկատմամբ տեղի ունեցած սահմանափակումն արդարացված չէ: պնդումը, որ իր հիմնական իրավունքը սահմանափակվել է և դրա արդյունքում խախտվել է հիմնական իրավունքը, բավարար է:

[28] Տե՛ս 17.05.2009 թ. **ՍԴԱՈ-21**, 08.12.2020 թ. **ՍԴԱՈ-242**, 29.12.2020 թ. **ՍԴԱՈ-244**, 29.12.2020 թ. **ՍԴԱՈ-248**, 16.04.2021 թ. **ՍԴԱՈ-79**, 14.05.2021 թ. **ՍԴԱՈ-100** (ՍԴԱՈ-100 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նույնիսկ պնդում է հետևյալը. «Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումը, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ թեև դրանում առաջադրված հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումը բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորված չէ:»), 02.09.2021 թ. **ՍԴԱՈ-181**, 02.09.2021 թ. **ՍԴԱՈ-182**, 28.09.2021 թ. **ՍԴԱՈ-199,** 15.10.2021 թ. **ՍԴԱՈ-204**, 15.02.2022 թ. **ՍԴԱՈ-28**, 07.06.2022 թ. **ՍԴԱՈ-97**, 27.06.2023 թ. **ՍԴԱՈ-71** (մասնավորապես՝ էջ 21 և հաջորդող էջեր), 27.06.2023 թ. **ՍԴԱՈ-70,** 01.08.2023 թ. **ՍԴԱՈ-87,** 05.03.2024 թ. **ՍԴԱՈ-40**, 21.05.2024 թ. **ՍԴԱՈ-88,** 31.05.2024 թ. **ՍԴԱՈ-89**, 18.06.2024 թ. **ՍԴԱՈ-101,** 01.10.2024 թ. **ՍԴԱՈ-146**, 05.11.2024 թ. **ՍԴԱՈ-171**, 10.12.2024 թ. **ՍԴԱՈ-188,** 10.12.2024 թ. **ՍԴԱՈ-186**, 17.12.2024 թ. **ՍԴԱՈ-192**: Նշված բոլոր աշխատակարգային որոշումներով Սահմանադրական դատարանի կազմը սկզբից անհատական դիմումով գործն ընդունել է քննության (ենթադրաբար դիմումը բավարար չափով իրավաբանորեն հիմնավորված համարելով), իսկ դատաքննության ժամանակ Սահմանադրական դատարանը «բացահայտել է», որ բավարար չափով իրավաբանորեն հիմնավորումներ չեն ներկայացվել վիճարկվող օրինադրույթի և դիմողի իրավունքների խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

դիմումում, Սահմանադրական դատարանը մշտապես կարող է զուտ արձանագրել, որ չի տեսնում անմիջական պատճառահետևանքային կապը հիմնական իրավունքի խախտման փաստի և վիճարկվող օրինադրույթի հակասահմանադրականության միջև, կամ արձանագրել, որ դիմող կողմը «բավարար չափով իրավաբանորեն» չի հիմնավորել հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի և օրինադրույթի հակասահմանադրականության միջև անմիջական պատճառահետևանքային կապը:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ, առհասարակ, նորմատիվ մակարդակում (այդ թվում՝ օրենք և Սահմանադրություն հարաբերություններում) պատճառահետևանքային կապերի մասին խոսելը տեղին չէ: Պետք չէ բնագիտության տերմիններն օգտագործել նորմատիվ կապակցվածություններ բացատրելու համար: Սահմանադրական իրավունքի դոգմատիկան ունի բավարար գործիքակազմ, որով հնարավոր է սահմանել անհատական դիմումով գործը վարույթ ընդունելու թույլատրելիության հստակ չափանիշներ:

Առաջարկվող լուծում

Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի թույլատրելիությունն ստուգելիս «Անմիջական պատճառահետևանքային կապ» հասկացությունից պետք է հրաժարվել: Դրա փոխարեն առաջարկվում է կիրառել հե՛նց Սահմանադրության մեջ օգտագործվող տերմինը՝ փոքր-ինչ լրացմամբ, այն է՝ «հիմնական իրավունքի հնարավոր խախտում» բառակապակցությունը: Արդյո՞ք հիմնական իրավունքի հնարավոր խախտում առկա է, թե՝ ոչ, կարելի է պարզել միայն նրանով, երբ ստուգվի՝ արդյո՞ք հիմնական իրավունքի խախտումն ի սկզբանե բացառված է[29] [16, էջ 46]: Այսինքն՝ վիճարկվող նորմի հակասահմանադրականության պարագայում պետք է բացառված չլինի հիմնական իրավունքի խախտման **հնարավորությունը** [16, էջ 46-47]:

Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննության թույլատրելիության չափանիշ հանդիսացող «անմիջական պատճառահետևանքային կապ» անորոշ բառակապակցությունը, ըստ էության, թույլ է տալիս Սահմանադրական դատարանին ցանկացած անհատական դիմումի պարագայում կա՛մ պնդել, որ չի տեսնում այդ կապը, կա՛մ պնդել, որ դիմող կողմը «բավարար չափով» իրավաբանորեն չի հիմնավորել վերջինիս առկայությունը: Երկու դեպքում էլ տուժում է սահմա-

---

[29] Որպես «ակնհայտ բացառված» լինելու պատկերավոր օրինակ՝ քննարկենք հետևյալ դեպքը. Ա.-ն զբոսնում է երևանյան փողոցներով: Թումանյան/Ամիրյան խաչմերուկում նա պատահաբար հայտնվում է դադարեցված և արդեն ուժի կիրառման միջոցով ցրվող հավաքում: Ուժ է կիրառվում նաև Ա.-ի նկատմամբ: Ակնհայտ է, որ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը, որը լիազորում է Ոստիկանությանն անհրաժեշտության դեպքում կիրառելու նաև ուժ, չի սահմանափակում տվյալ դեպքում Ա.-ի՝ Սահմանադրության 44-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատության իրավունքը, քանի որ Ա.-ն հավաքի մասնակից չէ: Կարելի է քննարկել տվյալ դեպքում Ա.-ի՝ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտման հարցը, բայց ոչ՝ հավաքների: Ուստի, եթե Ա.-ն, ներպետական ատյանները սպառելուց հետո դիմեր Սահմանադրական դատարան և վիճարկեր «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթը, ապա Սահմանադրական դատարանն իրավացիորեն կարող էր մերժել գործի քննությունը, քանի որ ի սկզբանե բացառված է, որ Ա.-ի՝ Սահմանադրության 44-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատությունը կարող է սահմանափակված լինել:

նադրական արդարադատություն որոնող անձը: Ուստի անհրաժեշտ է սահմանադրական դատավարության դոգմատիկայի տեսանկյունից վերանայել այս մոտեցումը և սահմանել այնպիսի չափանիշներ, որոնց հիման վրա անձն ի վիճակի կլինի քիչ թե շատ վստահություն ունենալ, որ իր կողմից Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումը կընդունվի վարույթ:

3. Եզրակացություն.

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ «պատճառահետևանքային կապ» հասկացությունը նորմատիվ մակարդակում տեղ չունի: Այս սկզբունքը կիրառվում է մակրո աշխարհում իրավիճակների միջև փոխկապակցվածությունը նկարագրելու համար, որը, սակայն, ինքնին աքսիոմատիկ չէ և գիտության տարբեր ճյուղերում ենթարկվել և ենթարկվում է խիստ քննադատության (տե՛ս, օրինակ, Հյումի մոտեցումը I. 1. ներքո կամ քվանտային ֆիզիկայում առհասարակ պատճառահետևանքային կապերի հերքումը I. 2. ներքո):

Սահմանադրական դատարանի կողմից մշակված անհատական դիմումով գործերի թույլատրելիության համար չափանիշ հանդիսացող դոգմատիկ այս ֆիգուրը համոզիչ չէ և կարիք ունի հիմնային վերանայման: Անհատական դիմումի թույլատրելիությունն ստուգելիս Սահմանադրական դատարանը, ի թիվ այլնի, սույն հոդվածի շրջանակներում քննարկվող հարցի տեսանկյունից պետք է ստուգի՝ արդյո՞ք բացառված չէ դիմողի հիմնական իրավունքի խախտված լինելը: Եթե Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ խախտումը բացառված չէ, ապա դիմումը պետք է ընդունել վարույթ և կայացնել ըստ էության որոշում: Սահմանադրական դատարանի ներկայիս պրակտիկան համոզիչ չէ և կարող է դիտարկվել չափազանց սուբյեկտիվ-հայեցողական, որի արդյունքում տուժում է սահմանադրական արդարադատություն որոնող անձը:

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործը վարույթ ընդունելու ժամանակ կիրառվող «անմիջական պատճառահետևանքային կապ» ինստիտուտը, որի շրջանակներում առանձին անդրադարձ է կատարվում «պատճառահետևանքային կապ» հասկացության պատմական զարգացմանը, այդ թվում՝ փիլիսոփայության, ֆիզիկայի և իրավունքի ոլորտներում: Որպես հիմնական թեզ՝ ներկայացվում է այն մոտեցումը, որ տարբեր նորմատիվային մակարդակներում գտնվող նորմերի պարագայում «(անմիջական) պատճառահետևանքային կապերի» մասին խոսելը համոզիչ չէ: Նորմերի միջև, որպես այդպիսին, պատճառահետևանքային կապեր չեն լինում: Հետևաբար, համոզիչ չէ Սահմանադրական դատարանի կողմից առաջադրված այն պահանջը, որ պետք է դիմողը բավարար չափով իրավաբանորեն հիմնավորի հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի և վիճարկվող օրինադրույթի միջև անմիջական պատճառահետևանքային կապը: Բացի այդ, չափազանց խնդրահարույց է Սահմանադրական դատարանի պրակտիկան առ այն,

որ անհատական դիմումով գործն սկզբից ընդունում է քննության, իսկ հետո՝ դատաքննության փուլում, գործի վարույթը կարճում՝ պատճառաբանելով, որ «բացահայտել է», որ դիմողը բավարար չափով իրավաբանորեն չի հիմնավորել հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի և վիճարկվող օրինադրույթի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը:

Առաջարկվում է այն փոխարինել հիմնական իրավունքի խախտման բացառման դոգմատիկ ֆիգուրով, որի շրջանակներում Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնա այն հարցին, թե արդյոք հիմնական իրավունքով պաշտպանվող բարիքն առերևույթ սահմանափակվել է, թե՝ ոչ:

Հիմնաբառեր՝ Սահմանադրական դատարան, անմիջական պատճառահետևանքային կապ, հիմնական իրավունքներ, անհատական գանգատ, նորմատիվ մակարդակ, նորմատիվային պատճառահետևանքային կապ, հիմնական իրավունքի առերևույթ սահմանափակում:

ПОНЯТИЕ «НЕПОСРЕДСТВЕННОЙ ПРИЧИННО-СЛЕДСТВЕННОЙ СВЯЗИ» В ПРАКТИКЕ КОНСТИТУЦИОННОГО СУДА И СВЯЗАННЫЕ С НИМ ПРОБЛЕМЫ

ПОГОСЯН АШОТ
Адвокат, аспирант Боннского университета

Аннотация. В статье обсуждается институт «непосредственной причинно-следственной связи», применяемый Конституционным судом РА при принятии дела к производству по индивидуальному заявлению, в рамках которого отдельно рассматривается историческое развитие понятия «причинно-следственная связь», в том числе в сферах философии, физики и права. В качестве основного тезиса представлен подход, согласно которому в случае норм, находящихся на разных нормативных уровнях, говорить о «(прямых) причинно-следственных связях» неубедительно. Причинно-следственных связей как таковых между нормами не существует, кроме того, крайне проблематична практика Конституционного суда в отношении того, что по индивидуальному заявлению дело сначала принимается к рассмотрению, а затем, на этапе судебного разбирательства, прекращается производство по делу на том основании, что оно «выявило» непосредственную причинно-следственную связь между предполагаемым фактом нарушения основного права и оспариваемым законом, что Заявитель недостаточно юридически обосновал наличие прямой причинно-следственной связи между предполагаемым фактом нарушения основного права и оспариваемым законопроектом.

Предлагается заменить его догматической фигурой исключения нарушения основного права, в рамках которой Конституционный суд должен рассмотреть вопрос о том, было ли ограничено благо, защищаемое основным правом, или нет.

Ключевые слова: Конституционный суд, прямая причинно-следственная связь, основные права, индивидуальная жалоба, нормативный уровень, нормативно-причинная связь, кажущееся ограничение основного права.

THE CONCEPT OF "DIRECT CAUSAL LINK" IN THE PRACTICE OF THE CONSTITUTIONAL COURT AND THE ISSUES ASSOCIATED WITH IT

POGHOSYAN ASHOT
Attorney-at-Law, PhD Candidate at the University of Bonn

Abstract. The article discusses the **"direct causal link"** doctrine applied by the Constitutional Court of Armenia when admitting cases based on individual applications. Within this framework, particular attention is given to the **historical development** of the concept of **causality**, including its evolution in **philosophy, physics, and law**.

The main thesis presented is that when dealing with norms situated at different **normative levels**, the notion of **"(direct) causal links"** is unconvincing. There are no causal relationships between legal norms as such. Therefore, the requirement put forward by the Constitutional Court that the applicant must sufficiently substantiate in legal terms the existence of a direct causal link between the alleged violation of a fundamental right and the contested legal provision is unconvincing. Moreover, the Court's practice is particularly problematic when it accepts a case for examination based on an individual application, but later discontinues the proceedings at the adjudication stage, justifying this by stating that it has "revealed" the applicant failed to sufficiently substantiate in legal terms the existence of a direct causal connection between the alleged fundamental rights violation and the contested provision.

Instead, the article proposes replacing this approach with the **dogmatic figure of fundamental rights infringement exclusion**. Under this framework, the Constitutional Court should focus on determining whether the **good protected by a fundamental right has been prima facie restricted or not**.

Keywords: Constitutional Court, direct causal link, fundamental rights, individual complaint, normative level, normative causality, prima facie restriction of a fundamental right.

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան, Էդուարդ, «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան 1976, 1618 էջ.

2.Aristoteles, Physik, Berliner Ausgabe, Holzinger Verlag 2013, http://www.zeno.org/Philosophie/M/Aristoteles/Physik/2.+Buch/3.+Capitel (վերջին մուտք՝ 05.06.2026թ.) 231 էջ.

3. Beauchamp, Tom L.; Norton, David Fate; Stewart, M. A. (General Editors): David Hume, A Treatise of Human Nature, Volume 1, The Clarendon Edition of the Works of David Hume, Oxford 2006, 431 էջ.

4. Ehrlich, Stanislaw, Von der normativen Kausalität in: Archiv für Rechts- und Sozialphilosophie, 1986, Vol 72 No. 1 (1986), էջեր 32-52.

5. Frisch, Wolfgang, Objektive Zurechnung des Erfolgs - Entwicklung, Grundlinien und offene Fragen der Lehre von der Erfolgszurechnung, Juristische Schulung (ամսագիր) 2011, էջեր 19-24.

6. Heinrich, Bernd, Strafrecht Allgemeiner Teil, 7. Auflage, Kohlhammer Verlag 2022, 749 էջ.

7. Heisenberg, W. (1930). The Physical Principles of the Quantum Theory. University of Chicago Press, 198 էջ.

8. Höffe, Otfried, Immanuel Kant, 8. Auflage, C. H. Beck Verlag 2014, 341 էջ.

9. Hovhannisyan, Gor, Vergleich zwischen der deutschen Verfassungsbeschwerde und dem armenischen Individualantrag: Eine rechtsvergleichende Analyse unter besonderer Berücksichtigung der Zulässigkeitsvoraussetzungen und Entscheidungswirkungen, 334 էջ.

10. Hume, David, Eine Untersuchung über den menschlichen Verstand, Felix Meiner Verlag Hamburg, 2., korrigierte Auflage, 202 էջ.

11. Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Երևան, 2024, 492 էջ.

12. Kant, Immanuel, Kritik der reinen Vernunft, 1967, Unveränderter Neudruck der von Raymund Schmidt besorgten Ausgabe (nach der zweiten durchgesehenen Auflage von 1930), Felix Meiner Verlag, 766 էջ.

13. Kelsen, Hans, Kausalität und Zurechnung, in: Archiv für Rechts- und Sozialphilosophie, 1960, Vol. 46, No. 3 (1960), էջեր 321-333.

14. Marciano, Laura, „Die Vorsokratiker. Band 1: Thales, Anaximander, Anaximenes, Pythagoras und die pythagoreer, Xenophanes, Heraklit“, Artemis & Winkler Verlag 2007, 480 էջ.

15. Oreshkov, O.; Costa, F.; Brukner, Č., Quantum correlations with no causal order. Nat Commun 3, 1092 (2012), link: https://www.nature.com/articles/ncomms2076, (վերջին մուտք՝ 29.05.2024թ.).

16. Պողոսյան, Վարդան; Սարգսյան, Նորա; Օդաբաշյան, Հովհաննես, Անհատական զանգատ (գիտագործնական ձեռնարկ), Երևան 2023, 174 էջ.

17. Prechtl, Peter; Burkard, Franz-Peter (Hrsg.), Metzler Lexikon Philosophie, 3. Auflage, J.B. Metzler Verlag 2008, 616 էջ.

18. Quantenmechanik für Naturwissenschaftler: Ein Lehr- und Übungsbuch mit zahlreichen Aufgaben und Lösungen 2. Auflage, Springer Spektrum Verlag 2022 (Martin O. Steinhauser), 692 էջ.

19. Rengier, Rudolf, Strafrecht Allgemeiner Teil, 14. Auflage, C. H. Beck Verlag 2022, 654 էջ.

21. Roxin, Claus; Greco, Luis, Strafrecht Allgemeiner Teil, 5. Auflage, C. H. Beck Verlag 2020, 1249 էջ.

22. Schwabe, Jürgen, Probleme der Grundrechtsdogmatik, Darmstadt 1977, 482 էջ.

Հոդվածը գրախոսվել է 12.06.2026թ.
Ներկայացվել է տպագրության 26.06.2026թ.

ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐԺՈՒՄ, ԹԵ՞ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՏԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՐՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ
DOI: 10.63925/18294847-2026.blj22-13

Ամփոփագիր: Հոդվածում ուսումնասիրվել են ապաքաղաքականացվածություն երաշխավորելու գործընթացների, միջոցների բազմազանությունը, բնորոշման առանձնահատկությունները և հիշյալ սկզբունքով սահմանափակված հանրային ծառայողների վարքագծի հնարավոր դրսևորումները: Ընտրված թեմայի համատեքստում հեղինակն անդրադարձել է «քաղաքական զսպվածություն» և «քաղաքական չեզոքություն» եզրույթների տեսահիրավական մեկնաբանությանը, հատկապես՝ վերջիններիս տարբերակմանն իրավապահ գործունեություն իրականացնող պաշտոնատար անձանց շրջանակում: Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է քաղաքականությամբ զբաղվելու արգելքի սկզբունքի երկակի, հաճախ իրարամերժ որակումներով և կանխատեսելի գիտական չափանիշներ և կիրառում ապահովելու անհրաժեշտությամբ: Այս թեմայի հետազոտության նպատակն է բացահայտել հանրային պաշտոնյայի քաղաքական չեզոքության և քաղաքական զսպվածության հակասական ընկալումների խորքային պատճառները, համալիր անդրադառնալ իրավական կարգավորումների տրամաբանությանը, ինչպես նաև լուծել հանրային ծառայության սահմանափակումների և անձի քաղաքական իրավունքների խելամիտ ներդաշնակեցման հիմնախնդիրը: Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական, դեդուկտիվ, ինդուկտիվ, ինչպես նաև վերլուծության և վերացականության մեթոդները:

Ներածություն

Կարծիքի արտահայտման ազատության ու տեղեկատվության ազատության իրավունքները՝ որպես ժողովրդավարության ամրապնդման կարևոր հենասյուներ, լրջագույն նախապայմաններ են հանրային կառավարման ոլորտում թափանցիկության համար և երաշխավորվում են Սահմանադրությամբ, օրենքներով ու միջազգային իրավական փաստաթղթերով: Ներկայումս կարևորվում է կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ հանրության իրազեկվածության, կարողությունների զարգացմանն ու այդ համատեքստում հանդուրժողականության մթնոլորտի ձևավորման աշխատանքները՝ ուղղված հանրության բոլոր դերակատարներին, այդ թվում՝ քաղաքական և հանրային գործիչներին:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) արձանագրում է, որ. «Եվրոպական երկրների օրենսդրական և

սահմանադրական դրույթները, ինչպես նաև համապատասխան նախադեպային իրավունքը, ցույց են տալիս, որ խոսքի ազատության երաշխիքները տարածվում են նաև քաղաքացիական ծառայողների վրա[1]:

Ընդ որում՝ ժողովրդավարական հասարակությունում խոսքի ազատությունը հանրային մասնակցության և քաղաքական գործընթացների հիմնաքարային գործիքն է: Պետական ծառայողները, ինչպես հասարակության մյուս անդամները, ունեն քաղաքական իրավունքներ, սակայն դրանց իրացման շրջանակները չեն կարող նույնացվել և պայմանավորված են շահերի բախման հնարավոր կառավարման պարտականությամբ, այլ կերպ ասած՝ ապաքաղաքականացմամբ[2]:

Բանալի բառեր: Ապաքաղաքականացում, հանրային ծառայող, քաղաքական զսպվածություն, քաղաքական չեզոքություն, իրավական որոշակիություն, հրապարակայնություն:

Հիմնական հետազոտությունը

Ապաքաղաքականացման գործընթացները բազմազան են և ունեն որոշակի բովանդակություն՝ ըստ սոցիալ-քաղաքական ոլորտների: Է. Ֆոստերի դիտարկմամբ այսօր ապաքաղաքականացումը զարգացած հասարակություններում կառավարման ժամանակակից մեթոդները հասկանալու ամենակարևոր գործիքներից մեկն է[3]: Իսկ Մ. Վուդը և Մ. Ֆինդերսն առաջարկում են ապաքաղաքականացումը դիտարկել կառավարական, հանրային և մասնավոր ոլորտներում: Կառավարական (Governmental) xlx€ x,t aza„ara„aoav x,th նշանակում է ընտրված քաղաքական գործիչների կողմից որոշումների ընդունման գործընթացի տեղափոխումն անկախ փորձագետների, գործակալությունների, հանձնաժողովների, առանձին դեպքերում նաև դատարանների դաշտ՝ նվազեցնելով ուղղակի հաշվետվողականությունը: Հանրային (Public) ոլորտում ապաքաղաքականացումը քաղաքացիների «ակնկալիքների կառավարումն է», որն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից և արտահայտվում առանձին հարցերի դուրսմղմամբ հանրային քննարկման ոլորտից: Մասնավոր (Private) ոլորտում ապաքաղաքականացումն արտահայտվում է հասարակական խնդիրների լուծման բեռն անհատի ուսերին տեղափոխելով: Չնայած այն հանգամանքին, որ ապաքաղաքականացման ինստիտուտի վերաբերյալ ուսումնասիրությունների առաջին փուլը բովանդակում է նեոլիբերալիզմի ապաքաղաքականացված ազդեցությունը պետական կառավարման և քաղաքականության վրա, հաջորդ փուլերում հիմնախնդրի ուսումնասիրումն ընդգրկում է նաև զարգացման գործընթացների հետազոտության,

---

[1] Տե՛ս COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES, Strasbourg, 12 July, 2019 CDL-PI(2018)008, 80 p. էջ 32:

[2] Հասանելի աղբյուրը՝ https://www.publicservice.govt.nz/guidance/principles-guidance/politically-neutral/political-neutrality-for-public-servants-as-individuals (16.02.2026 14:40):

[3] Տե՛ս **Foster E. A.**, **Kerr P.**, **Byrne C.** Rolling Back to Roll Forward: Depoliticization and the Extension of Government. Policy and Politics, 2014, 42 (2), 225-241:

միջազգային քաղաքականության, սոցիոլոգիայի, կուսակցությունների քաղաքական գործունեության ոլորտները[4]:

Ըստ Ե. Վ. Ուշակովի՝ ապաքաղաքականացումը գործընթացների և գործողությունների ամբողջություն է, որոնք ուղղված են այս կամ այն թեմաների (հիմնախնդիրներ, օրակարգեր, քննարկման ոլորտներ և այլն) քաղաքականությունից դուրս գտնվելու կարգավիճակների փոփոխմանը: Այսպիսով՝ ապաքաղաքականացումը՝ որպես բազմազան երևույթների ամբողջություն, ունի ընդհանուր վեկտոր, որն ուղղված է քաղաքական ոլորտի այս կամ այն բաղադրիչների համար ոչ քաղաքական կարգավիճակ «ձևավորելուն» և ըստ էության՝ անկախ գործելու երաշխիք, քանզի այս սկզբունքը ոչ միայն թույլ չի տալիս, որ քաղաքականության նկատմամբ ազդեցություն ունենան քաղաքականության հետ անմիջական առնչություն չունեցող ազդեցիկ բարձրաստիճան պաշտոնյաները, պետական հատուկ ծառայողները, այլև իրենք հնարավորինս դուրս մնան քաղաքական հնարավոր ներգործությունից: Ոչ պակաս կարևոր է այն, որ հենց այստեղ է կազմավորվում «քաղաքականի» և «ոչ քաղաքականի» միջև առկա դինամիկ, փոփոխական տարբերությունը: «Ոչ քաղաքական» կարգավիճակի սահմանումը կարող է իրականացվել տարբեր ձևերով՝ սկսած հիմնավորված, արդարացված (ապաքաղաքականացված) քննարկումներից, մինչև հատուկ ծրագրերի՝ բարեփոխումների իրականացումը, ինստիտուցիոնալ փոփոխությունների ներդնումը, կառավարության որոշումների ընդունումը (չընդունումը) և այլն[5]:

Այսինքն՝ ապաքաղաքականացվածության սկզբունքը մի կողմից նպաստում է պաշտոնական դիրքի չարաշահմամբ քաղաքական գործընթացների վրա ապօրինի ազդեցությունները բացառելուն, մյուս կողմից՝ զրկում է հիրավի պահանջված քաղաքական ու մասնագիտական փորձ ունեցող պաշտոնյաների ներուժը հանրային շահերին ծառայեցնելու կարևոր հնարավորությունից: Ըստ էության՝ հիշյալ սկզբունքն առանձնանում է երկակի, հաճախ իրարամերժ որակներով, որոնց ներդաշնակեցման անհրաժեշտությունը ձեռք է բերել խիստ արդիական նշանակություն: Ընդ որում՝ այս հատվածի նկատմամբ քաղաքական ուժերի վերաբերմունքը ևս միասնական չէ՝ իշխող քաղաքական ուժը հակված է քողարկված եղանակներով օգտվելու ապաքաղաքականացվածության սկզբունքով սահմանափակված հանրային պաշտոնյաների ծառայությունից, մինչդեռ, նույն այդ փաստի հաշվառմամբ, ընդդիմադիր քաղաքական ուժերը ձգտում են բացահայտել այդպիսի դրսևորումները և հնարավորինս բացառել համագործակցությունը[6]:

Հանրային ծառայողները, զրկված լինելով քաղաքական ուժերի հանիրավի թիրախավորմանը համարժեք արձագանքելու հնարավորությունից, փորձում են

---

[4] Տե՛ս **Wood M., Flinders M.** Rethinking Depoliticization: Beyond the Governmental, Policy and Politics, 2014, vol. 42, N 2, 151-170:

[5] Տե՛ս **Ушаков Е. В.** Процессы деполитизации в решении общественных проблем: аспекты критики парадигмы неолиберализма. 2023, N 12 ст. 149 -150:

[6] Տե՛ս **Simon Baddeley and Kim James**, From Political Neutrality to Political Wisdom, Politics (1987)7(2), 30, էջ 39:

այլընտրանքային գործիքների դիմել, սակայն անխուսափելիորեն բախվում են դեռևս հստակ չուրվագծված քաղաքական չեզոքության արգելքի հետ, իսկ նշված ոլորտում իրավական որոշակիության բացակայությունն էլ ավելի է վատթարացնում պետական համակարգի բնականոն գործունեության ընդհանուր վիճակը՝ գործ ունենալով ժողովրդավարության ու բյուրոկրատիայի բախման միանգամայն նոր դրսևորումների հետ, որոնք թերևս հանգեցնում են ժողովրդավարության սկզբունքների խոցելիությանը:

Այս առնչությամբ հետաքրքիր է կառավարման հիմունքների գերմանացի տեսաբան, փիլիսոփա Մաքս Վեբերի դիտարկումը, որ, ըստ էության, ժողովրդավորությունը, գոնե ձևական հարթությամբ, ունի բյուրոկրատիայի աջակցության կարիքը, մինչդեռ բյուրոկրատիան չունի ժողովրդավարության կարիքը[7]:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը ևս հստակ չի սահմանազատում «քաղաքական գործունեությամբ զբաղվելը» «քաղաքական զսպվածությունից» և «քաղաքական չեզոքությունից», ուստի ելակետ է ընդունել այն, որ քննարկվող դեպքում քաղաքական զսպվածությունը և քաղաքական չեզոքությունը քաղաքական գործունեության բաղադրատարրեր են: Մյուս կողմից՝ այսպիսի մոտեցումը խնդրահարույց է, քանի որ այլ պաշտոնյաների վերաբերյալ սահմանադրական նորմերի բովանդակությունը ցույց է տալիս, որ Սահմանադրությունը քաղաքական գործունեությամբ զբաղվելը հստակ տարանջատում է քաղաքական զսպվածությունից և քաղաքական չեզոքությունից՝ դրանք ամրագրելով որպես վարքագծի ինքնուրույն դրսևորումներ:

Այնուամենայնիվ, առանձնահատկություններին անդրադառնալիս «քաղաքական զսպվածության» պարագայում կարող ենք ընդգծել վերը նշված վավերապայմաններին համահունչ արտահայտություններից, իսկ «քաղաքական չեզոքության» պարագայում՝ գործունեությունից զերծ մնալը: Այսպես օրինակ՝ «քաղաքական զսպվածության» արգելքի խախտում կարող է դիտարկվել դատավորի կողմից հնչած այնպիսի արտահայտությունը, որով վերջինս մասնագիտական քննարկումների ժամանակ, քննադատելով որևէ իրավական ակտի նախագիծ, դրա ենթադրյալ թերությունները փոխկապակցում է նախագծի հեղինակ քաղաքական ուժի գաղափարների և կարողությունների հետ: «Քաղաքական չեզոքության» օրինակ կարող է լինել այն, երբ դատախազը դե ֆակտո քաղաքական հետապնդումներ է նախաձեռնում որևէ քաղաքական ուժի ներկայացուցիչների նկատմամբ՝ արտաքուստ ժխտելով այդպիսի ընտրանքային գործելաոճի իրական շարժառիթները:

«Քաղաքական զսպվածություն» և «քաղաքական չեզոքություն» եզրույթները բովանդակային կտրվածքով գրեթե նույնական են: Ընդհանուրը թերևս այն է, որ վերջիններս որևէ կերպ չեն կարող առնչվել վերը նշված մեկնաբանությամբ՝ քաղաքական գործունեության հետ: Կարծում ենք՝ օրենսդիրն առանձնապես չի անդրադարձել այս եզրույթների բովանդակությունն առավել որոշակի ամրագրելուն, ուստի, որպես կանոն, բավարարվել է «ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում» ընդհանուր

---

[7] Տե՛ս **Weber M.,** (1947), The Theory of Social and Economic Organization (New York: Oxford University Press). էջ 341:

եզրույթով (օրինակ՝ համաձայն «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական քննարկումները կամ եզրակացությունները, դատական իշխանության գործունեության վերաբերյալ քննարկումների ժամանակ արտահայտած կարծիքները և հայտարարությունները, այդ թվում՝ հրապարակային, ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում չեն համարվում)[8]: Կարծում ենք, որ «ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում» հասկացությունն այնքան էլ արդարացված չէ, քանզի այն ակնհայտ համընդհանուր բովանդակություն ունի և հավասարապես կարող է կիրառվել բոլոր երեք սահմանափակումների վրա, այդ թվում՝ քաղաքական գործունեության[9]:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք դատավորի արտահայտման ազատության սահմանափակումը համապատասխանում է «սոցիալական անհրաժեշտության» և «օրինաչափ նպատակի համաչափության» չափանիշներին, ՄԻԵԴ-ն իր դատավարական պրակտիկայում հարցը քննարկում է կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո: ՄԻԵԴ-ի դատավարական պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ են դառնում այն գործոնները, որոնք առավել կարևորություն ունեն կոնվենցիայի խախտման առկայությունը կամ բացակայությունն արձանագրելիս. ա) դատավորի պաշտոնը, բ) խնդրո առարկա հայտարարության բովանդակությունը, գ) համատեքստը, որում հայտարարությունն արվել է, դ) դատավորի նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների բնույթը և խստությունը[10]:

Իրավական որոշակիության բացակայության համատեքստում անդրադառնանք նաև «Հավաքների ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմպերատիվ պահանջի (դատախազները, քննիչները, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողները հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ցուցաբերեն) և 3-րդ մասի (դատավորները, դատախազները, քննիչները, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողներն իրավունք չունեն հավաքին մասնակցելու ծառայողական

---

[8] Տե՛ս «ՀՀ Դատական օրենսգիրք» 2018թ. փետրվարի 7-ի ՀՀ սահմանադրական օրենքը, հոդված 4 (Տե՛ս ՀՀՊՏ 2018.02.12/10 (1368) Հոդ. 143):

[9] Տե՛ս **Գևորգ Դանիելյան** «Քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը» «Բանբեր Երևանի Համալսարանի Իրավագիտություն» Երևան 2022 № 2 (37) էջ 17:

[10] Տե՛ս Application no 20261/12, Baka v. Hungary Judgment of 23 June, 2016 Para. 162 (Հասանելի աղբյուրը՝ https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-163113%22]} 21.02.2026), Application no 29492/05 Kudeshkina v. Russia Judgment 26 Febuary 2009 Para 82 (Հասանելի աղբյուրը՝ https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-91501%22]} 21.02.2026):

համազգեստով)[11] ոչ հստակ ձևակերպմանը: Ըստ ամենայնի՝ դժվար է մեկնաբանել քաղաքական զսպվածության ցուցաբերումը՝ առանց համազգեսի հավաքներին մասնակցելով: Ի վերջո, միայն համազգեստը չկրելն ինքնին բավարար չէ պաշտոնատար անձանց քաղաքական հայացքները չեզոք արտահայտելու համար:

Քննարկվող հարցադրման շրջանակներում թերևս տեղին է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության փորձագետների կողմից պատրաստված «Հավաքների ազատության ղեկավար սկզբունքների վերաբերյալ» ուղեցույցում նշված այն դիտարկումը, որ չեզոքությունը չպետք է մեկնաբանվի կարծիք ունենալու կամ արտահայտելու ազատության անհարկի սահմանափակմամբ: Հետևաբար, օրենսդրությունը չպետք է սահմանափակի ոստիկանական կամ զինվորական անձնակազմի հավաքների ազատությունը, եթե սահմանափակման պատճառներն անմիջապես կապված են նրանց ծառայողական պարտականությունների հետ, կամ պետք է սահմանափակվի այն չափով, որը բացարձակապես անհրաժեշտ է մասնագիտական պարտականությունների տեսանկյունից: Սահմանափակումները պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ հավաքի մասնակցությունը կվիճարկեր ոստիկանական կամ զինվորական անձնակազմի՝ հասարակության բոլոր հատվածներին ծառայելու չեզոքությունը[12]:

Եզրակացություն

Մեր դիտարկմամբ՝ համարժեք ու համալիր իրավական կարգավորումների արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է քաղաքական չեզոքության ցուցաբերման և առանց համազգեստի հավաքների մասնակցելու հետ կապված իրավական անորոշության խնդիրը լուծել՝ երաշխավորելով հանրային ծառայության սահմանափակումների և անձի քաղաքական իրավունքների խելամիտ ներդաշնակեցման հիմնախնդիրը:

Իրավական անորոշության խնդիրը հնարավոր է վերացնել հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող իրավաստեղծ գործունեության կատարելագործման և օրենսդրական տեխնիկայի կանոնների համալիր կիրառման միջոցով, ինչն էլ իր հերթին կնպաստի իրավունքի գերակայության և իրավական անվտանգության ապահովմանը, ինչպես նաև պետության նկատմամբ քաղաքացու վստահության բարձրացմանը: Հարկ է նկատել, որ իրավաստեղծ գործունեության որակը կարևոր ցուցիչ է՝ տվյալ հասարակության ժողովրդավարության, քաղաքակրթության, ինչպես նաև իրավական մշակույթի կայացվածության առնչությամբ: Որքան բարձր է հասարակությունում ժողովրդավարության, քաղաքակրթության և ամբողջությամբ վերցրած իրավական մշակույթի կայացվածության աստիճանը, այնքան մեծ է որակյալ

---

[11] Տե՛ս «Հավաքների ազատության մասին» ՀՀ 2011թ. ապրիլի 14-ի օրենքը, հոդված 8 (Տե՛ս ՀՀՊՏ 2011.04.22/23(826), Հոդ. 452):

[12] Տե՛ս Խաղաղ հավաքների ուղեցույց, ԵԱՀԿ, ԺՀՄԻԳ 2009, կետ 44 (Հասանելի աղբյուրը՝ https://www.osce.org/ru/odihr/83237?download=true 22.02.2026 16:49):

իրավաստեղծ գործունեության հավանականությունը: Իր հերթին իրավաստեղծ գործունեությունը ժողովրդավարության ինստիտուտների զարգացման կարևոր երաշխիք է:

Մեր գնահատմամբ՝ այս համատեքստում մեծ է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի առանձին դրույթների նշանակությունը, որոնք կանոնակարգում են հավասար իրավաբանական ուժի դեպքում այս կամ այն իրավական ակտին նախապատվություն տալուն առնչվող հարցերը, ինչպես նաև իրավական ակտերի կոլիզիաների լուծման կանոնները, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը: Թերևս օրենսդրական տեխնիկայի շրջանակներում կարևորվում է նաև «հատուկ» և «ընդհանուր» նորմերի հարաբերակցության հստակեցումը, ինչի արդյունքում կարող է ամրագրվել իրավակարգավորում, ըստ որի՝ հանրային ծառայողների քաղաքական իրավունքների սահմանափակումները նախատեսող նորմերը չպարունակեն ավելի լայն սահմանափակումներ, քան նախատեսված է «Հանրային ծառայության մասին օրենքով»:

Կարևոր ենք համարում նաև նկատել, որ քաղաքական զսպվածությունը չպետք է ինքնին խոցելի դարձնի այդ սկզբունքով սահմանափակված պաշտոնյաների բնականոն գործունեությունը: Բոլոր դեպքերում, հարկ է զերծ մնալ այնպիսի իրավիճակներից, երբ քաղաքական զսպվածության սկզբունքով կաշկանդված հանրային ծառայողները զրկված են լինում անգամ նվազագույն չափով պաշտպանել իրենց անձը և գործունեությունը: Այս տեսանկյունից, խիստ նպատակահարմար ենք համարում, որպեսզի հնարավորինս որոշակիացվի այդ պաշտոնյաների անկախությունը երաշխավորելու համար պատասխանատու մարմինների կարգավիճակը և իրենց հոգածության տակ գտնվող պաշտոնյաներին տարաբնույթ հանրային մեղադրանքներից պաշտպանելու խնդիրներն ու գործառույթները: Մասնավորապես, այդ քննադատություններին ու մեղադրանքներին արձագանքելը չպետք է թողնել այնպիսի մարմինների հայեցողությանը կամ սահմանել այնպիսի ընթացակարգեր, որին վերջիններս արձագանքում են միայն այն դեպքում, երբ իրենց դիմում է համապատասխան պաշտոնյան: Նկատի ունենք պատասխանատու մարմինների (օրինակ՝ ԲԴԽ, էթիկայի հանձնաժողովներ) այնպիսի գործառույթների պոզիտիվացում, որը հնարավորություն կընձեռի նրանց որոշակի սեղմ ժամանակն անց (24 ժամ կամ 48 ժամ) պաշտոնապես տարածել հերքում կամ պարզաբանում՝ պաշտոնյայի կողմից ենթադրյալ հանցագործության կամ կարգապահական խախտման, պաշտոնյայի անձնական, ընտանեկան կյանքին վերաբերող վարկաբեկող տեղեկության վերաբերյալ:

Ամփոփելով՝ նշենք, որ քաղաքական զսպվածության հիմնախնդիրն ազատությունների և հանրային ծառայության հատուկ պարտավորությունների «բախման» դրսևորում է: Մեր կարծիքով՝ պետական պաշտոնյայի պարտականությունն է զերծ մնալ այնպիսի քաղաքական վարքագծից, որը կարող է վտանգել պետության կամ պետական մարմնի քաղաքական չեզոքության ընկալումը, քանի որ ժողովրդավարական իրավական պետությունում այս հակասությունը լուծվում է քաղաքական չեզոքության գերա-

կայության սկզբունքով՝ ընդունելով, որ պետական պաշտոնյայի որոշ իրավունքներ կարող են օրինական սահմանափակվել հանրային շահի պաշտպանության նպատակով: Այսպիսով՝ քաղաքական չեզոքությունը հանդես է գալիս ոչ թե որպես ազատությունների մերժում, այլ որպես ժողովրդավարության և պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության պահպանման անհրաժեշտ պայման: Իսկ իրավական անորոշության խնդիրը հնարավոր է վերացնել իրավաստեղծ գործունեության և իրավաբանական տեխնիկայի կատարելագործման միջոցով, ինչն էլ իր հերթին իրավունքների և ազատությունների կրողներին և հասցեատերերին հնարավորություն կընձեռի դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ДЕПОЛИТИЗАЦИЯ: ОТКАЗ ОТ СВОБОД ИЛИ НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ДЛЯ ПОДДЕРЖАНИЯ ОБЩЕСТВЕННОГО ДОВЕРИЯ

САФАРЯН АМАЛИЯ
Начальник кафедры общеправовых дисциплин
Учебного полицейского подразделения
Образовательного комплекса МВД РА

Аннотация. В статье исследуется разнообразие процессов и средств обеспечения деполитизации, особенности их определения, а также возможные проявления поведения государственных служащих, ограниченного данным принципом. В контексте выбранной темы автор обращается к теоретико-правовому толкованию понятий «политическая сдержанность» и «политический нейтралитет», в частности, к их разграничению в среде должностных лиц, осуществляющих правоохранительную деятельность. Одновременно был проведен анализ позиций экспертов Европейского суда по правам человека и Организации по безопасности и сотрудничеству в Европе. Актуальность выбранной темы обусловлена двойственной, зачастую противоречивой, трактовкой принципа запрета на занятие политической деятельностью, а также необходимостью выработки предсказуемых научных критериев и обеспечения их применения. Целью исследования является выявление глубинных причин противоречивого восприятия политического нейтралитета и политической сдержанности публичного должностного лица, комплексное рассмотрение логики правового регулирования, а также решение проблемы разумного согласования ограничений публичной службы и политических прав личности. При изучении выбранной темы в статье использованы сравнительно-правовой, дедуктивный, индуктивный методы, а также методы анализа и абстрагирования.

Ключевые слова: деполитизация, государственный служащий, политическая сдержанность, политический нейтралитет, правовая определенность, публичность.

DEPOLITICIZATION: RESTRICTION OF FREEDOMS OR A NECESSARY CONDITION FOR MAINTAINING PUBLIC TRUST?

SAFARYAN AMALYA
Head of the Chair of General Legal Disciplines of the Police Training Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

Abstract. The article examines diverse processes of depoliticization, their characteristics, and the possible forms of civil servants' conduct restricted by the principle of depoliticization. In this context, the author analyzes the concepts of "political restraint" and "political neutrality," as well as the differences between them in relation to officials engaged in law enforcement activities. Meanwhile, the article analyzes the viewpoints of experts from the European Court of Human Rights and the Organization for Security and Co-operation in Europe.

The relevance of the chosen topic is determined by the dual, often contradictory interpretations of the principle prohibiting political engagement, as well as the need to ensure consistent academic standards and practical application.

The purpose of this study is to examine conflicting interpretations of political neutrality and political restraint in public administration, to analyze the rationale of legal norms, and to address the issue of recalibrating restrictions imposed on civil servants with their individual political rights.

The study draws on national legislation and regulatory frameworks established by international legal instruments. In this respect, the jurisprudence of the European Court of Human Rights has been examined alongside national legal practice in order to reveal the essence, the role, and the significance of the principle of depoliticization in public sector. The study employs comparative, deductive, inductive, analytical, and abstraction methods.

Keywords: depoliticization, civil servant, political restraint, political neutrality, legal certainty, publicity.

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ Դատական օրենսգիրք» 2018թ. փետրվարի 7-ի ՀՀ սահմանադրական օրենքը, հոդված 4 (Տե՛ս ՀՀՊՏ 2018.02.12/10 (1368) Հոդ. 143):

2. «Հավաքների ազատության մասին» ՀՀ 2011թ. ապրիլի 14-ի օրենքը, հոդված 8 (Տե՛ս ՀՀՊՏ 2011.04.22/23(826), Հոդ. 452):

3. Գևորգ Դանիելյան «Քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը» «Բանբեր Երևանի Համալսարանի Իրավագիտություն» Երևան 2022 № 2 (37):

4. COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES, Strasbourg, 12 July 2019 CDL-PI(2018)008,p.80:

5. Խաղաղ հավաքների ուղեցույց, ԵԱՀԿ, ԺՀՄԻԳ 2009: https://u.to/3tZ3Ig (Հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը 22.02.2026):

6. Ушаков Е. В. Процессы деполитизации в решении общественных проблем: аспекты критики парадигмы неолиберализма. 2023, N 12, 200:

7. Application no 20261/12, Baka v. Hungary Judgment of 23 June 2016 Para. 162 (Հասանելի աղբյուրը՝ https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-163113%22]} 21.02.2026), Application no 29492/05 Kudeshkina v. Russia Judgment 26 Febuary 2009:

8. Foster E. A., Kerr P., Byrne C. Rolling back to roll forward:depoliticisation and the extension of government. Policy and Politics, 2014, 42 (2), 250:

9. Simon Baddeley and Kim James, From political neutrality to political wisdom, Politics (1987)7(2), 30:

10. Weber M., (1947), The Theory of Social and Economic Organisation (New York: Oxford University Press):

11. Wood M., Flinders M. Rethinking depoliticisation: beyond the governmental, Policy and Politics, 2014, vol 42, N 2, 151-170: Simon Baddeley and Kim James, From political neutrality to political wisdom, Politics (1987)7(2), 30:

12. https://u.to/tdZ3Ig (Հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը 16.02.2026).

Հոդվածը գրախոսվել է 16.07.2026թ.
Ներկայացվել է տպագրության 27.07.2026թ.

ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾԱԳՈՂ ՎԵՃԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՅԿ
«ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄՊԸ փոխտնօրեն, ՀՀ արդարադատության ակադեմիայի վարչական մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների հավակնորդ, փաստաբանների պալատի փաստաբան
DOI: 10.63925/18294847-2026.blj22-14

Ամփոփագիր

Նպատակ: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում հանրային իշխանական լիազորությունների պատվիրակման պայմաններում ծագող իրավահարաբերությունների բնույթը, վարչական և քաղաքացիական արդարադատության միջև առարկայական ընդդատության սահմանազատման հիմնախնդիրները, դրանց ազդեցությունն արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման վրա, ինչպես նաև գնահատել «Single Door to Justice» հայեցակարգի կիրառելիությունը՝ որպես առկա խնդիրների համակարգային լուծման միջոց:

Մեթոդներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են իրավադոգմատիկ, համակարգային, համեմատական-իրավական և նախադեպային իրավունքի վերլուծության մեթոդները: Ուսումնասիրվել են ՀՀ Սահմանադրության, վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի, ոլորտային օրենսդրության կարգավորումները, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, ինչպես նաև եվրոպական մի շարք պետությունների փորձը՝ հանրային գործառույթներ իրականացնող ոչ պետական կառույցների նկատմամբ վարչական արդարադատության վերահսկողության շրջանակներում:

Արդյունքներ: Հետազոտությունը ցույց է տվել, որ հանրային իշխանական լիազորությունների իրականացումը պետք է գնահատվի ոչ թե սուբյեկտի կազմակերպաիրավական ձևի, այլ իրականացվող գործառույթի բնույթի հիման վրա: Հիմնավորվել է, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինքնակառավարվող մարմինների և օրենքով ստեղծված այլ իրավաբանական անձանց կողմից պատվիրակված հանրային լիազորությունների իրականացումը կարող է առաջացնել հանրային իրավահարաբերություններ, որոնցից բխող վեճերը պետք է քննվեն վարչական արդարադատության շրջանակներում: Բացահայտվել է նաև, որ վարչական և քաղաքացիական դատարանների տարբեր մոտեցումները նույն իրավահարաբերությունների գնահատման հարցում հանգեցնում են գործերի վերահասցեագրման, դատավարական ձգձգումների և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման ռիսկերի:

Եզրահանգումներ

Հեղինակը եզրակացնում է, որ գործող կարգավորումները և դատական պրակտիկան ամբողջությամբ չեն ապահովում դատական պաշտպանության արդյունավետությունն ու մատչելիությունը: Առաջարկվում է ներդնել «Single Door to Justice» սկզբունքը, որի պայմաններում անձը դիմում է միասնական դատական մուտքի կետ, իսկ գործի մասնագիտացված բաշխումն իրականացվում է դատական համակարգի ներսում: Նման մոտեցումը կնվազեցնի ընդդատության վերաբերյալ վեճերը, կբացառի սխալ դատարան ընտրելու ռիսկը և կնպաստի արդարադատության մատչելիության, արագության և արդյունավետության բարձրացմանը:

Հիմնաբառեր: Հանրային իրավունք, մասնավոր իրավունք, վարչական արդարադատություն, առարկայական ընդդատություն, հանրային իշխանական լիազորությունների պատվիրակում, արդյունավետ դատական պաշտպանություն, դատական վերահասցեագրում, Single Door to Justice:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն իրավական պետության հիմնարար արժեքներից և մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է:

Այդ իրավունքի լիարժեք իրացումը ենթադրում է ոչ միայն դատարան դիմելու ձևական հնարավորություն, այլև անձի համար իր խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության արդյունավետ և մատչելի մեխանիզմների առկայություն: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում դատական համակարգում գործերի առարկայական ընդդատության և ենթակայության հստակ սահմանազատումը, քանի որ անձի կողմից ընտրված դատավարական ճանապարհն անմիջականորեն պայմանավորում է նրա դատական պաշտպանության արդյունավետության աստիճանը:

Հայաստանի Հանրապետությունում գործող դատական համակարգը կառուցված է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման սկզբունքի վրա, որի արդյունքում ձևավորվել են վարչական և քաղաքացիական արդարադատության համեմատաբար ինքնուրույն համակարգեր: Տվյալ մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ հանրային իշխանության իրականացման ոլորտում ծագող վեճերը և մասնավոր անձանց միջև հարաբերություններից բխող վեճերը պահանջում են իրավական պաշտպանության տարբեր մեխանիզմներ և դատավարական տարբեր գործիքակազմ:

Մասնավորապես, վարչական արդարադատությունն ուղղված է հանրային իշխանության նկատմամբ դատական վերահսկողության ապահովմանը և իշխանության ու անհատի միջև առկա անհավասարակշռության հաղթահարմանը, մինչդեռ քաղաքացիական արդարադատությունը հիմնականում հիմնված է իրավահավասար սուբյեկտների մրցակցային դատավարության սկզբունքի վրա:

Միևնույն ժամանակ, հանրային կառավարման ժամանակակից զարգացումները ցույց են տալիս, որ հանրային իշխանական գործառույթների իրականացումը վաղուց այլևս բացառապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մենաշնորհը չէ:

Պետությունները increasingly դիմում են հանրային գործառույթների պատվիրակման տարբեր ձևերի՝ ստեղծելով կամ լիազորելով այնպիսի կազմակերպություններ, որոնք, պահպանելով մասնավոր կամ ինքնակառավարվող կազմակերպության կարգավիճակ, իրականացնում են հանրային նշանակության գործառույթներ և օժտվում են իշխանական լիազորություններով: Նման պայմաններում առավել դժվար է դառնում տվյալ իրավահարաբերության հանրային կամ մասնավոր բնույթի որոշումը և, հետևաբար, համապատասխան դատարանի ընտրությունը:

Հատկապես խնդրահարույց են այն դեպքերը, երբ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, ինքնակառավարվող մասնագիտական կազմակերպությունները կամ օրենքով ստեղծված այլ իրավաբանական անձինք իրականացնում են պետության կողմից պատվիրակված հանրային գործառույթներ:

Թեև սահմանադրական և վճռաբեկ դատական պրակտիկան աստիճանաբար ձևավորել է գործառութային մոտեցում՝ ըստ որի որոշիչ նշանակություն պետք է ունենա ոչ թե սուբյեկտի կազմակերպաիրավական ձևը, այլ նրա կողմից իրականացվող գործառույթի բնույթը, այդուհանդերձ, դատական պրակտիկայում դեռևս առկա են տարբեր մեկնաբանություններ, որոնք առաջացնում են գործերի վերահասցեագրման, ենթակայության շուրջ վեճերի և դատավարական ձգձգումների խնդիրներ:

Նման երևույթները կարող են բացասաբար անդրադառնալ ոչ միայն արդարադատության արդյունավետության, այլև դատական պաշտպանության մատչելիության վրա՝ ստեղծելով իրավիճակ, երբ անձի իրավունքների պաշտպանությունը կախված է դառնում ճիշտ մասնագիտացված դատարան ընտրելու կարողությունից: Հետևաբար, արդիական է դառնում գնահատել գործող կարգավորումների համապատասխանությունն արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական և միջազգային չափանիշներին, ինչպես նաև ուսումնասիրել այնպիսի այլընտրանքային մոտեցումների կիրառման հնարավորությունը, որոնք կնվազեցնեն դատավարական ձևականությունների ազդեցությունն իրավունքների պաշտպանության վրա:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել հանրային իշխանական լիազորությունների պատվիրակման պայմաններում ծագող վեճերի իրավական բնույթը, վերլուծել դրանց առարկայական ընդդատության և ենթակայության որոշման վերաբերյալ ՀՀ օրենսդրական և նախադեպային կարգավորումները, բացահայտել առկա գործնական խնդիրները և համեմատական իրավական վերլուծության հիման վրա գնահատել «Single Door to Justice» հայեցակարգի կիրառելիությունը՝ որպես դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման հնարավոր միջոց:

Սույն ուսումնասիրության գիտական նորույթն այն է, որ հանրային իշխանական լիազորությունների պատվիրակման և դատական ենթակայության որոշման խնդիր-

ները դիտարկվում են ոչ միայն հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման դասական տեսության, այլև արդյունավետ դատական պաշտպանության և «Single Door to Justice» սկզբունքի համատեքստում՝ առաջարկելով Հայաստանի Հանրապետության դատական համակարգի համար համակարգային բարեփոխումների հնարավոր ուղղություններ:

1. Հանրային իշխանական լիազորությունների պատվիրակումը. Հայաստանի Հանրապետությունում հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման շնորհիվ առանձնացվում է հանրային և մասնավոր իրավունքը, իսկ այդ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է համապատասխանաբար վարչական և քաղաքացիական դատավարությունների կարգով (որոշակի բացառությունների հաշվառմամբ):

Իրավունքների դատավարական տարանջատման մասին ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[1] արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

Այսինքն՝ դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթով. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Կարևոր է անդրադառնալ այն հանգամանքին, որ, ի տարբերություն քաղաքացիական արդարադատությունում հավասար մրցակցային ընթացակարգերի, վարչական արդարադատության պայմաններում հավասար մրցակցության ապահովման համար ակտիվ դերակատարություն ունի դատարանը, քանի որ հանրային իրավահարաբերություններում դատավարական մի կողմը մշտապես օժտված է հանրային իշխանական լիազորությամբ, և ինչը հարթելու, դատավարական իրավունքները և պատկանությունները հավասարեցնելու, հանրային իշխանական լիազորությունը հաղթահարելու համար վարչական դատարանները լիազորված են գործին ի պաշտոնե:

Ի պաշտոնե գործելու ՀՀ վարչական դատարանի պարտականությունը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[2] արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության

---

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշում:
[2] ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշում:

իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վարչական դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի մասնավոր դրսևորումներից մեկն այն է, որ վարչական դատարանը պարտավոր է նախ և առաջ ապահովել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“ex officio”) պարզելու սկզբունքը, որը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը[3]:

Այսպես՝

Վարչական դատավարության առարկայական ընդդատության մասին կարգավորումը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ 10-րդ հոդվածով, որի բավանդակության համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը:

Այդ պահանջից բացառություն են կազմում ՀՀ սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարմանն առնչվող գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, **եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի** վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները ներառյալ:

Նորմի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ, բացի իրավահարաբերության հանրային բնույթից, անձի վարչական դատավարության կարգով իրավունքների դատական պաշտպանությունը կապվում է վերջինիս հանրային իրավահարաբերության բնագավառում այն իրավունքների խախտման հետ, որոնք դրսևորվել են **պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի** վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ:

---

[3] Տե՛ս նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի թիվ ՎԴ/10561/05/13 և 2025 թվականի թիվ ՎԴ/0324/05/23 որոշումները:

ՀՀ-ում՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի կարգավորումների պայմաններում, հանրային իշխանության բնագավառում գործելու որոշակի լիազորություններ պատվիրակվել են մի դեպքում պետական ոչ առևտրային կազմակերպություններին, մեկ այլ դեպքում՝ իրավաբանական անձանց:

Օրինակ՝

1) «Հավատարմագրման մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային մարմինն ստեղծվում է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն, որին վերապահվում է հավատարմագրման ոլորտում միանձնյա իրականացնել կազմակերպությունների հավատարմագրում, այդ թվում՝ իր որոշմամբ կասեցնել, ընդհուպ՝ դադարեցնել որևէ կազմակերպության հավատարմագրումը, իրականացնել հերթական և արտահերթ ստուգումներ հավատարմագրված կազմակերպություններում և այլն:

2) «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, և պետական գրանցման պահից ունի իրավաբանական անձի կարգավիճակ, ավելին՝ նույն օրենքի հիման վրա պալատն է իրականացնում ՀՀ-ում փաստաբանների արտոնագրման գործընթացը (այդ թվում՝ արտոնագրի դադարեցման) և այլն:

3) իրավիճակը նմանատիպ է նաև ինքնակառավարվող կազմակերպություն հանդիսացող նոտարական պալատի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, կադաստրային գրանցման գործառույթ իրականացնող կազմակերպությունների և որոշ այլ ինքնակառավարվող կազմակերպությունների մասով:

ՀՀ սահմանադրական դատարանը և ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց որոշումներով բազմիցս հայտնել են այն իրավական դիրքորոշումը, որ հանրային իշխանական լիազորությունը ոչ պետական մարմնին պատվիրակելու դեպքում այդ կազմակերպությունը համարվում է հանրային իշխանական լիազորություններ իրականացնող, և որ վերջիններիս կայացրած որոշումները, գործողություններն ու անգործությունները ենթակա են քննության ՀՀ վարչական դատավարության կարգով:

Օրինակ՝

1) ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[4] բացահայտել է «վարչարարություն» և «վարչական մարմին» հասկացությունների բովանդակությունը՝ ընդգծելով, որ որոշիչը ոչ թե կազմակերպական-իրավական ձևն է, այլ հանրային իշխանական գործառույթի իրականացումը:

2) ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[5] արձանագրել է, պետական

---

[4] ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի թիվ ՍԴՈ-630 որոշում:
[5] ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի թիվ ՍԴՈ-1026 որոշում:

իշխանության պատվիրակված լիազորության իրականացումը կարող է անձին կամ կազմակերպությանը դարձնել վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտ:

3) ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներով[6] քննարկել է ինքնակառավարվող մարմին հանդիսացող ՀՀ փաստաբանների պալատի որոշումների դեմ վեճերը և հանգել է այն եզրակացությանը, որ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական և արտոնագրման լիազորությունները մասնավոր բնույթ չունեն և կրում են հանրային-իրավական տարրեր:

Ավելին, ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ[7] նշում է, որ **հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք**:

Հանրային իշխանական լիազորությունների պատվիրակումը ժամանակակից հանրային կառավարման անբաժանելի տարրերից է: Պետությունը, ձգտելով ապահովել կառավարման արդյունավետություն, մասնագիտական անկախություն և վարչարարական ճկունություն, որոշ ոլորտներում հրաժարվում է գործառույթների անմիջական իրականացումից և դրանք վերապահում է առանձին կազմակերպությունների կամ ինքնակառավարվող մարմինների:

Սակայն նման պատվիրակումը չի հանգեցնում համապատասխան գործառույթի իրավաբանական բնույթի փոփոխության: Եթե տվյալ կազմակերպությունն իրականացնում է պետության անունից կամ պետության լիազորմամբ հանրային նշանակության գործառույթ, ընդունում է պարտադիր իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ կամ սահմանափակում է անձանց իրավունքները, ապա վերջինիս գործունեությունը շարունակում է կրել հանրային բնույթ՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից:

Հակառակ մոտեցումը կարող է ստեղծել մի իրավիճակ, երբ նույն բովանդակությամբ իշխանական գործունեությունը տարբեր դատավարական ռեժիմների ենթարկվի միայն այն պատճառաբանությամբ, որ այն իրականացվել է ոչ թե պետական մարմնի, այլ օրենքով ստեղծված կամ լիազորված այլ սուբյեկտի կողմից: Նման մոտեցումը կհակասեր ոչ միայն իրավական որոշակիության սկզբունքին, այլև վարչական արդարադատության հիմնական նպատակին՝ ապահովել հանրային իշխանության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողություն:

Հետևաբար, պատվիրակված լիազորությունների պայմաններում **որոշիչ պետք է համարվի ոչ թե սուբյեկտային, այլ գործառութային չափանիշը**: Այլ կերպ ասած՝ եթե կազմակերպությունը տվյալ իրավահարաբերությունում գործել է որպես հանրային իշխանության կրող, ապա այդ գործունեությունից բխող վեճերը նույնպես պետք է

---

[6] ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի թիվ ԵԴ/38635/02/19 և ԵԴ/3478/02/20 գործերով որոշումներ:
[7] ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի թիվ ԵԴ/38635/02/19 որոշում:

դիտարկվեն որպես հանրային իրավահարաբերություններից ծագող վեճեր:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ կարելի է պնդել, որ անձի իրավունքների դատական պաշտպանությունը վարչական կամ քաղաքացիական դատավարության կարգով իրականացման համար պետք է առաջնահերթությամբ գնահատել, թե արդյոք որոշում կայացրած, գործողություն կատարած կամ անգործություն դրսևորած մարմինն իր գործունեությամբ գործել է որպես **հանրային իշխանության կրող, թե՝ ոչ**:

2. Ընդդատության հիմնախնդիրները. Հարկ է անդրադառնալ նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերահասցեագրման ինստիտուտին, քանի որ օրենսգրքով ՀՀ վարչական դատարանին հնարավորություն է տրված հայցը վարույթ ընդունելու կամ գործի քննության ցանկացած փուլում գործը վերահասցեագրել ըստ ընդդատության, եթե պարզում է, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն:

Ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վերահասցեագրման հնարավորություն չի նախատեսում, այսինքն՝ հայցի վարույթի ընդունելության փոլում և գործի քննության այլ փուլերում առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական մասնագիտացված դատարանը (այսուհետ՝ քաղաքացիական դատարան) օժտված չէ գործն ըստ առարկայական ենթակայությամբ վերահասցեագրելու իրավասությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության միակ կարգավորումը, որով օրենսդիրը փորձել է հավասարեցնել ՀՀ վարչական և քաղաքացիական դատարանների՝ առարկայական ընդդատության-ենթակայության լիազորությունները, արտահայտվել է 26-րդ հոդվածով, այն էլ միայն այն մասով, երբ քաղաքացիական դատարանում ստացվում է ՀՀ վարչական դատարանից ըստ ընդդատության վերահասցեագրված գործ:

Այնուամենայնիվ, օրենսդիրն այս մասով քաղաքացիական դատարանին օժտել է միայն գործի առարկայական ընդդատության-ենթակայության հարցի անհամաձայնության դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանին դիմելու իրավասությամբ, այսինքն՝ քաղաքացիական դատարանի դատավորի գնահատմամբ վերահասցեագրված վեճն ամեն դեպքում հանրային վեճ լինելու պատճառաբանության պայմաններում ՀՀ վարչական դատարանին վերահասցեագրելու ուղիղ լիազորությամբ չօժտելը, ենթադրաբար հիմնավորվել է գործերի շրջապտույտից և արդյունավետ դատական պաշտպանության ապահովման սահմանադրական երաշխիքի համատեքստով:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ վարչական դատարանից գործի վերահասցեագրման պայմաններում քաղաքացիական դատարանը համարում է, որ վեճը ենթակա է լուծման վարչական դատավարության կարգով, պետք քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով մերժի հայցի ընդունումը, ինչը կարող է անձի դատական պաշտպանության մատչելիության սպառնալիք հանդիսանալ, քանի որ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության օրենսդրության, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հայցի ընդունման մերժման հիմք է համարում բացառապես այն իրավիճակը, երբ վեճը ենթակա չէ քննության **ՀՀ որևէ այլ դատարանում**, իսկ վեճի ՀՀ որևէ դատարանի

քննության ենթակայության դեպքում այն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ և 81-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, ենթակա է վերահասցեագրման՝ ըստ առարկայական ընդդատության:

